ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ó×Å Í ÛÅ ÇÀ Ï ÈÑÊÈ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

ՊՐԱԿ 2 **ТОМ** 2 VOLUME 2
2022
ê ï »÷ ³ Ý ³ Ï»ñ ï

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ðñ³ï³ñ³Ï³íáõÙ ¿ 1998Ã-*þg.*
ä³ñµ»ñ³Ï³ÝáõÃÛáõÝÁ` ï³ñ»Ï³Ý»ñÏáõ ³Ý·³Ù
Èçäàåòñÿ ñ 1998ã. *Периодичность – дважды в год*
Issued since 1998. Frequency – twice a year
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.
ÊÙµ³·ñ³Ï³Ý ËáñÑñ¹Ç Ý³Ë³·³Ñ` *Բ.գ.Ã. Սարգսյան Ս.Յու.*
Ïðåäñåäàòåëü *p*åäàêöèîííîõãî ñîâåòà: *ê.ô.í. СаргсянА.Ю.*
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.
¶ÉË³íáñ ËÙµ³·Çñª å.·.¹. ²í³Ý»ëÛ³Ý ì.Ø.
Главный редактор: *д.и.н. Аванесян В.М.*
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

ÊÙµ³·ñ³Ï³Ý ÏáÉ»·Ç³
Ðåäàêöèîííàÿ êîëëåãèÿ
Editorial board
Հասարակական գիտություններ
1. êáõí³ñÛ³Ý Úáõ.Ø., տ.·.¹., ÐÐ¶²²³Ï³¹»ÙÇÏáë –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
2. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ÐÐ¶²²³Ï³¹»ÙÇÏáë – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA
3. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ., պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
4. Մանգասարյան Ռ.Յա, տ.գ.թ. – Мангасярян Р.Я., к.э.н. –Mangasaryan R.Ya., Ph.D. in Economics
5.Բալայան Վ.Ռ., պ.գ.դ.- Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., µ.·.Ã. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. ºÝ·áÛ³Ý²ö., ù.·.¹.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն., բ.·.¹., Арутюнян В.Н., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. Ê³ÝÛ³Ý ê.², µ.·.¹.- Ханян С.А., д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Տեր-Մաթոսյան Պ., բ.գ.դ. (ԱՄՆ) –Тер-Матосян П. д.ф.н. (США) -Ter-Matosyan P., Doctor of Science (USA)
11. Տեր-Մկրտչյան Բ., բ.գ.դ. (ԱՄՆ) – Тер-Мкртчян Б. д.ф.н. (США) - Ter-Mkrtchyan B., Doctor of Science (USA)
12. Տանշինա Ն.Պ., պ.գ.դ. (ՌԴ) – Таньшина Н.П. д.и.н. (РФ) – Tanshina N.P., Doctor of History (RF)
13. Î³ñ³å»ïÛ³Ý Æ.Î., Ù.·.¹.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
14. Î³ñ³å»ïÛ³Ý ì.ê., Ñ.·.¹., åñáý»ëáñ –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
15. ÐáíÑ³ÝÝÇëÛ³Ý È.Þ., µ.·.¹., ÐÐ¶²²ÃÕÃ³ÏÇó³Ý¹³Ù – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.

16. Ø ³ Ý ³ ëÛ ³ Ý ² .ê., ÷.·.¹., ÐÐ ¶ ² ² ÃÕÃ ³ ÏÇó ³ Ý ¹ ³ Ù – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
17. Ø ³ ñ · ³ ñÛ ³ Ý L.¶., ÿ.·.Ã.– Маргарян Л. Г., к.ф.н.– Margaryan L.G., Ph. D. in Philology, Scientific Secretary of ASU.
18. ØËÇÃ ³ ñÛ ³ Ý ² .Ø., h.q.թ. – Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psycology.
19. Յարամիշյան Վ.Բ., h.q.թ. – Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psycology.
20. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia
21. Հակոբյան Ե.U., մ.գ.դ. – Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
22. Թադևոսյան Հ.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա.ՄԱՐԳՍՅԱՆ, Լ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 8

Հ.ՂԱԶԱՐՅԱՆ, Շ.ՄԻՆԱՍՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ..... 22

Մ.ՔՈՒՄՈՒՆՑ
-ՏԻ || -ԴԻ ԱԾԱՆՑՈՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ..... 32

Ա.ԱԹԱՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԻ ՆՈՐ ՎԵՐԱԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄ..... 43

Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Մ.ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ – ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆ – ԳԵՒՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՀՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆ..... 54

Մ. ԲԱԼԱՅԱՆ
ՍՏԱԾՈՒՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ Ռ. ՀԱՏՏԵՃՅԱՆԻ «ԱՌԱՍՏԱՂ» ԵՎ «ԱՌԱՍՏԱՂԻՆ ՄԻՒՍ ԿՈՂՄԸ» ՎԵՊԵՐՈՒՄ..... 70

Ն. ՄԱՐԳՍՅԱՆ
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ..... 82

Է. ԱԼԹՈՒՆՅԱՆ
ԺԱՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ..... 98

Ա.ՕՀԱՆՅԱՆ
ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾ ԳԵՂԱԳԵՏԸ..... 108

Մ.ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ..... 118

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՖՐԱՆԿՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՈՐՈՇ ԱՄՊԵԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1848-1851)..... 126

Տ.ՀԱԿՈԲՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ (1991-1992թթ.)..... 131
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ: ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻՆ..... 148
Ի.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄՆ ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ 2000-2007թթ..... 159
Ա.ՄԱՆԱՍՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԲԱՑԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 171
Մ.ՄԱՐԳԱՐՅԱՆ, Գ.ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐԴԻ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏՈՒԹՅԱՆ «ԲԻՈՔԱՂԱՔԱԿԱՆ» ԵՎ «ԲԻՈԿՐԹԱԿԱՆ» ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱՊԱԳԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ..... 185
Ա.ԲԱԴԱԼՅԱՆ
ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ..... 197
Ա.ՇԱՀԻՆՅԱՆ
ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ. ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՁԵՎԵՐԸ ՀՀ-ՈՒՄ..... 210
Կ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918-1921թթ..... 223

ԻՐԱՎՈՒՆՔ

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
ԼԻԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 238
Մ. ԶԱՔԱՐՅԱՆ
ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ... 258
Ն.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ..... 276

ՌԱԶՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.ԴԱՎԹՅԱՆ, Ա.ՔԱՄԱԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՕՐԵՆՍԴՐԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ..... 289

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Բ.ԵՐԻԲԵԿՅԱՆ
2020 թ. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ..... 302

Վ.ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ-ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՍԹՐԵՍԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 315

Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՆ..... . 323

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վ.ՄԱՐՋԱՆՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆՈՒԹԱԳՐԵՐԸ.... 329

Ա.ՖԻՐՅԱՆ, Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 339

Ա.ՖԻՐՅԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 345

Ա. ՖԻՐՅԱՆ, Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ռ,ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՈՒՇԱՅԱԾ ԱՊՐՈՒՄՆԵՐ, ԿԱՄ ԴԵՌ ՓՈՔՐ ԵՄ. ՀԵՏՈ ԿՀԱՄԿԱՆԱՄ 356

Լ.ՍԱՐԳՍՅԱՆ, Լ. ԼԱՀԻՆՅԱՆ, Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 363

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռ.ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
ԱՀ-ՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ..... 375

Խ.ԲԱԲՈՅԱՆ 395

ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՅՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ .....
ՅԱ.Լ.ԱԼԱՅԱՆ
ԱՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 423
Գ.ՄԱՐԳՍՅԱՆ
ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ..... 434
Գ.ՄԱՐԳՍՅԱՆ
ՀԱՇՎԵԿՇՌԻ ԻՐԱՅՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ..... 444
Ի.. ԻՇԽԱՆՅԱՆ, Գ. ԻՇԽԱՆՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ և ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ..... 452
Մ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՊՂՆՁԻ ԴԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 494
Մ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ..... 501
Թ.ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 508

ՀՏԴ 398

Բանահյուսություն

Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
E-mail: armen.sarkisyan.68@mail.ru

Լիանա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում հեղինակը ներկայացնում է Ղարաբաղի բարբառին նվիրված և առնչվող լեզվաբանական աշխատությունները, որոնք հրատարակվել են 19-րդ դարի 60-ական թվականների վերջից առ այսօր: Անդրադարձ է կատարվում դրանց կառուցվածքին, բովանդակությանը, դրանցում արծարծված հարցերին:

Բանալի բառեր՝ *բարբառ, գրաբար, լեզվաբան, բառ, աշխատություն, մենագրություն, բառարան, հնչյունաբանություն, քերականություն, բառապաշար*

А. Саркисян, Л. Айрапетян

ЛИНГВИСТИЧЕСКИЕ РАБОТЫ, ОТНОСЯЩИЕСЯ И ПОСВЯЩЁННЫЕ КАРАБАХСКОМУ ДИАЛЕКТУ

В статье представляются лингвистические работы, посвящённые и относящиеся карабахскому диалекту, которые были опубликованы с конца 60-х годов XIX века до наших дней. Автор ссылается на их структуры, содержания и рассматривающиеся в них вопросы.

Ключевые слова: *диалект, грабар, лингвист, слово, работа, монография, словарь, фонетика, грамматика, лексика*

A. Sargsyan, L. Hayrapetyan

THE LINGUISTIC WORKS, DEDICATED AND RELATED TO THE KARABAKH DIALECT

The author presents the linguistic works, dedicated and related to the Karabakh dialect, which were published from the end of 60s of the 19th century to the present day. The author refers to their structures, contents and issues considered in them.

Key words: *dialect, Grabar, linguist, word, work, monograph, dictionary, phonetics, grammar, lexicon.*

Ղարաբաղի բարբառը հայերենի ամենատարածված, կենսունակ ու բազմակողմանի ուսումնասիրված բարբառներից է, որի մասին ժամանակի ընթացքում տպագրվել են հարյուրավոր գիտական աշխատանքներ: Դրանց մեջ առանձին կարևորություն ունեն լեզվաբանական առանձին աշխատությունները:

Իր 1869թ. հրատարակած աշխատության մեջ Քերովբե Պատկանյանը հայ բարբառների դասակարգմանը և որոշ բարբառների նկարագրությանը զուգընթաց ներկայացնում է Ղարաբաղի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը[1]՝ քննելով հնչյունական՝ որոշ ձայնավորների ու բաղաձայնների քմային արտասանություն, հնչյունափոխություն, ձայնավորով սկսվող միավանկ բառերի սկզբից *h*-ի ավելացում, բառապաշարային՝ գրաբարում չվկայված, ինչպես նաև գրաբարյան իմաստներից տարբեր իմաստ ունեցող բառերի առկայություն, քերականական՝ անվանական և դերանվանական հոլովում, խոնարհում, մի շարք առանձնահատկություններ: Միաժամանակ, խոսելով Խոյի բարբառի մասին, նա հավաստում է, որ այդ բարբառը խոսվում է Խոյում, Սալմատում, ինչպես նաև Ղարաբաղի մի քանի տեղերում՝ Շուշիի շրջակայքում՝ Ավետարանոցում և այլուր, և որ այն շատ կողմերով թեև նման է Ղարաբաղի բարբառին, սակայն ունի մի շարք տարբերություններ, ինչպես՝ *ի*-ն *է* դարձնելու հակում, բայական ներգոյականի *ս*-ով կազմություն՝ *ում, ըմ, ման*-ի փոխարեն, *ու*-ի փոխարեն *ական*-ով ապառնի դերբայի կազմություն[2]:

Բարբառի ուսումնասիրության մեջ մեծ է Հրաչյա Աճառյանի դերը: 1899-1901 թթ. *«Արարատ»* ամսագրում տպագրվում է նրա *«Քննութիւն Ղարաբաղի բարբառին»* ուսումնասիրությունը[3], որը 1901թ. հրատարակվում է առանձին

---

[1] ***Патканов К.,*** *Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869, էջ 55-73*

[2] *Նույնը, էջ 74-76*

[3] ***Աճառեան Հր.,*** *Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան Գ. Քննութիւն Ղարաբաղի բարբառին, <<Արարատ», Վաղարշապատ,1899, համար իններորդ, էջ 394-399, համար Ժ. և ԺԱ. –րդ, էջ 453-459, 1900, թիւ Ա., էջ 26-28, թիւ Բ., էջ 73-76, թիւ Դ., էջ 190-193, թիւ*

գրքով[1]: Այստեղ հանգամանորեն ներկայացվում են բարբառի հնչյունախոսությունը, հնչյունափոխության դեպքերը, անվանական և դերանվանական հոլովումները, որոշյալ և ստացական հոդերը, ածականի համեմատության աստիճանները, թվականների տեսակները, բայի խոնարհումը, անփոփոխելի բառերը (նախադրություններ, մակբայներ, շաղկապներ, ձայնարկություններ), շեշտադրության ծագումը և բարդ բառերը: Աշխատության մեջ Աճառյանը ընդհանուր առմամբ համեմատության ելակետ է ընդունում գրաբարը՝ այս կամ այն լեզվական օրինաչափությունը ներկայացնելիս հաճախ համեմատության եզրեր անցկացնելով այլ բարբառներում առկա համապատասխան երևույթների հետ, մի հանգամանք, որ հատուկ է նրա բարբառագիտական բոլոր աշխատություններին: *«Քննութիւն Ղարաբաղի բարբառին»* ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Պատահական չէ, որ ֆրանսիացի մեծ հայագետ Անտուան Մեյեն հանդես եկավ ընդարձակ գրախոսականով[2]՝ ըստ արժանվույն գնահատելով այն, միաժամանակ նշելով որոշ թերություններ, ինչպես նաև Ղարաբաղի բարբառի հնչյունական որոշ օրինաչափությունների՝ հատկապես բաղաձայնական և ձայնավորական համակարգերի զարգացման, քմայնացման, տարաբնույթ հնչյունափոխությունների վերաբերյալ կատարելով կարևոր դիտողություններ:

Ուսումնասիրության արդյունքները Աճառյանը ամփոփել է իր *<<Հայ բարբառագիտութիւն. ուրվագիծ և դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)>>*[3] աշխատության մեջ՝ բարբառը դասելով *<<ում>>* ճյուղի բարբառների շարքին: Նշանավոր լեզվաբանը բարբառին հաճախ է անդրադարձել նաև *«Հայոց լեզվի պատմություն»*[4] ու *<<Լիակատար քերականություն հայոց լեզվի>>* ուսումնասիրություններում[5]: Բարբառի բառապաշարը հավաքագրելու և կորստից փրկելու տեսանկյունից լուրջ

Ը.և Թ., էջ 411-415, թիւ ԺԱ., էջ 529-533, թիւ ԺԲ., էջ 612-616, 1901, թիւ Դ., էջ 236-239, թիւ Ե. և Զ., էջ 310-312, թիվ Է. և Ը, էջ 368--375

[1] ***Աճառեան Հր.**, Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան. Գ. Քննութիւն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901, 199 էջ*

[2] ***Մեյե Ա., Հ. Աճառյան** - Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության. Գ. Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901, Գ- -198 էջ, <<Journal Asiatique>>, 1902, էջ 561-571, <<Հայագիտական հետազոտություններ>>, Երեւան, 1978, էջ 433-440*

[3] ***Աճառեան Հր.**, Հայ բարբառագիտութիւն. ուրվագիծ և դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով), <<Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911*

[4] ***Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951*

[5] ***Աճառեան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների), Ներածություն, հհ I- VII, Երևան, 1955-2005*

նշանակություն ունի նրա *<<Հայերէն գաւառական բառարանը>>*[1], որն ընդգրկում է հին մատենագրությամբ չավանդված 30000 գավառական բառ և դարձված: Բառարանի շուրջ 8000 բառ ու դարձվածային միավոր, որոնց գերակշիռ մասը Աճառյանը վերցրել է շուշեցի նշանավոր մանկավարժ Ավետիս Բահաթրյանի կազմած *<<Ղարաբաղու գավառական բառգիրք>>* ձեռագիր բառարանից[2], վերագրվում են Ղարաբաղի բարբառին:

Բարբառի հարյուրավոր բառեր են ընդգրկված նաև Աճառյանի այլ բառարաններում[3]:

Ոչ պակաս կարևոր է Սահակ Ամատունու *<<Հայոց բառ ու բան>>* բառարանը[4], որը գրված է գրական հայերենի տառադարձությամբ և ընդգրկում է հայերենի բարբառներում գործածական շուրջ 16000 բառ ու դարձվածային միավոր, որից շուրջ 4000-ը գործածական է Ղարաբաղի բարբառում, չնայած դրանցից շատերի դիմաց Ղարաբաղը նշված չէ:

Հետևելով բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքին՝ Արարատ Ղարիբյանը իր *<<Հայերեն բարբառների մի նոր ճյուղ>> աշխատության մեջ*[5] *<<ել>>* ճյուղը վերանվանում է *<<լ>>* և առանձնացնում *<<ս>>* ճյուղը՝ վերջինիս մեջ ներառելով նաև Լեռնային Ղարաբաղում խոսվող Շաղախի և Հադրութի խոսվածքները: Ուսումնասիրության մեջ մյուս բարբառներին զուգահեռ առանձին բաժիններով ներկայացվում են Շաղախի (էջ 50-58) ու Հադրութի (էջ 107-127) բարբառների (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներ) հնչյունաձևաբանական հիմնական առանձնահատկությունների քննությունը և դրանցով գրառված նյութեր: Նույն հարցին հեղինակն անդրադարձել է *<<Հայ բարբառագիտություն>>* ուսումնասիրության մեջ[6]՝ միաժամանակ առաջ քաշելով հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը և առաջին տեղաշարժի ենթարկված (որոնց մեջ գրաբարյան ձայնեղները խլացել են) բարբառների շարքին դասելով նաև Ղարաբաղի,

---

[1] ***Աճառեան Հր.***, , *Հայերէն գաւառական բառարան, <<Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Թ.,Թիֆլիս, 1913*

[2] ***Բահաթրյան Ա.***, *Ղարաբաղու գաւառական բառգիրք, Շուշի, 19-րդ դարի վերջեր, Երեւանի պետական համալսարանի գրադարան*

[3] ***Աճառեան Հր.***, *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ և թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մեջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն, <<Էմինեան ազգագրական ժողովածու>>, հ.Գ., Մոսկուա-Վաղարշապատ, 1902, Հայերեն արմատական բառարան, հհ.1-7, Երևան, 1926-1935, հհ.Ա-Դ, Երևան, 1971-1979, Եւրոպական լեզուներից փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Վիեննա, 1951*

[4] ***Ամատունի Ս.***, *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912*

[5] ***Ղարիբյան Ա.***, *Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, <<Երեւանի պետական համալսարանի գիտական աշխատություններ>>, հ.11, Երեւան, 1939, էջ 24-188*

[6] ***Ղարիբյան Ա.***, *Հայ բարբառագիտություն (Ձեռնարկ բուհերի ուսանողության համար), Երեւան, 1947*

Հադրութի և Շաղախի բարբառները: Նշված հարցերն առավել հանգամանորեն ու գիտական տեսանկյունով Ղարիբյանը քննել է 1953թ. Լույս ընծայած աշխատության մեջ[1]՝ նաև առանձին ենթաբաժին (էջ 230-242) նվիրելով Ղարաբաղի բարբառի հնչյունաքերականական, հատկապես հնչյունափոխության, հոլովման, խոնարհման առանձնահատկությունների նկարագրությանը:

<<Հայ բարբառագիտության դասընթաց>> բուհական դասագրքում[2] Ահարոն Գրիգորյանը առանձին ենթաբաժիններ է նվիրել Ղարաբաղի (էջ 251-284) և Հադրութի (էջ 474-494) բարբառների նկարագրությանը՝ անդրադառնալով վերջիններիս տարածման սահմաններին, հնչյունախոսությանը, հնչյունափոխությանը, խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսևորումներին, շարահյուսական մի շարք առանձնահատկությունների ևն, ընդգրկել համապատասխան բարբառներով գրառված նյութեր:

Ուշագրավ է Արմենակ Պողոսյանի *<<Հադրութի բարբառը>>* մենագրությունը[3]: որտեղ ներկայացվում է Արցախի Հադրութի շրջանի բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Հադրութի բարբառի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) համաժամանակյա հանգամանալից քննությունը: Ներածական մասում (էջ 5-9) տեղեկություններ տալով շրջանի գյուղերի տնտեսությունների թվի *(ըստ 1895 և 1958 թվականների)*, բարբառի և Ղարաբաղի բարբառի ու Ղարադաղի գավառից գաղթածների (ըստ հեղինակի՝ *Շաղախ-Խծաբերդյան խումբ)* խոսվածքների *(Խծաբերդ, Դոլանլար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ)* փոխազդեցության, բարբառի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մասին՝ հեղինակն առանձին բաժիններով և ենթաբաժիններով քննության է առնում բարբառի հնչյունախոսությունը, ձայնավորների, բաղաձայնների և երկբարբառների հնչյունափոխության դեպքերը, շեշտի ու հարցականի դրսևորումները, բոլոր խոսքի մասերը և նրանց քերականական կարգերը, բառապաշարի շերտերը, գրաբարից ավանդված որոշ բառերի իմաստափոխությունը, բառակազմական միջոցները, իսկ հավելվածային մասում ներկայացնում բարբառային նմուշներ շրջանի տասնյակ բնակավայրերի խոսվածքներով և պարզաբանումներ մենագրությանը կցված բարբառագիտական 8 քարտեզների վերաբերյալ:

Ա. Պողոսյանը Ղարաբաղի բարբառի հակիրճ նկարագրությունն է ներկայացրել նաև *«Հայ բարբառագիտություն»* բուհական դասագրքում[4]:

---

[1] ***Ղարիբյան Ա.***, *Հայ բարբառագիտություն, Երևան, 1953*

[2] ***Գրիգորյան Ա.***, *Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957*

[3] ***Պողոսյան Ա.,*** *Հադրութի բարբառը, Երևան, 1965*

[4] ***Պողոսյան Ա.***, *Հայ բարբառագիտություն, Երեւան, 1996, էջ 181-205*

Անգնահատելի է Կարո Դավթյանի *«Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը»* մենագրությունը[1]: Ի տարբերություն իր նախորդների՝ հեղինակն ընտրել է ուսումնասիրության ուրույն մեթոդ՝ ելնելով լեզվաբանական աշխարհագրության արդիական պահանջներից: Աշխատությունը բաղկացած է ներածությունից և հինգ բաժիններից: Ներածական մասում (էջ 5-13) ներկայացվում են աշխատության ստեղծման նախադրյալները, նպատակը, կառուցվածքը, Ղարաբաղի տարածքի բարբառների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների և բարբառով գրված աշխատանքների ցանկը, անհրաժեշտության դեպքում արվում որոշակի դիտողություններ: *«Բնակավայրերի անունները»* ենթաբաժնում համարակալված են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ բոլոր 221 գյուղերը: Հետագայում տեղի խնայողության և գործը համեմատաբար հեշտացնելու նպատակով լեզվական յուրաքանչյուր երևույթ քննելիս հղումները կատարվում են այդ համարներին, ինչը հնարավորություն է տալիս վերլուծության ենթարկել բոլոր գյուղերի խոսվածքները՝ վեր հանելով դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները: *«Հնչունաբանություն»* բաժնում (էջ 15-85) Կ. Դավթյանը, հիմք ընդունելով Հր. Աճառյանի, Ա. Ղարիբյանի և Է. Աղայանի գործածած տառադարձությունները, ներկայացնում է Ղարաբաղի տարածքի բոլոր խոսվածքներում եղած ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոնք բացակայում են գրական հայերենում: Առանձին սյունակներով տրվում են այդ հնչյունների տառադարձությունը, իբրև ինչ արտասանվելը, տվյալ հնչյունը ընդգրկող բառերի օրինակներ և արտասանության վայրը: Ընդհանուր առմամբ նա տարածքի բարբառներին հատուկ է համարում 13 ձայնավոր, 39 բաղաձայն, երկու կիսաձայն հնչյուններ, 7 երկբարբառ և 15 երկհնչյուն՝ առանձին աղյուսակում ամփոփելով դրանք ըստ բարբառների: Առավել մանրամասնությամբ են ներկայացվում հնչյունների փոփոխությունները բոլոր գյուղերի խոսվածքներում: Յուրաքանչյուր հնչյունի փոփոխությունները վերլուծվում են առանձին, ընդ որում՝ տարբերակվում են տվյալ հնչյունի հնարավոր ընդհանրական և միևնույն բառերում եղած փոփոխություններն ըստ գյուղերի: Միաժամանակ քննության են առնվում հնչյունափոխական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հնչյունների անկումը և հավելումը, կրկնությունը, բառամասերի կրճատումը, դրափոխությունը, ձայնավորների ներդաշնակությունը, ինչպես նաև շեշտի դրսևորման յուրահատկությունները: Հարուստ փաստական նյութով և գիտական խոր վերլուծություններով է կազմված *«Հնչաբանություն»* բաժինը (էջ 86-223): Հեղինակը մեկ առ մեկ քննում է բոլոր խոսքի մասերը՝ իրենց քերականական կարգերով, երևան հանում յուրաքանչյուր գյուղի խոսվածքում դրանց դրսևորման առանձնահատ-

[1] ***Կարո Դավթյան***, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966*

կությունները, անհրաժեշտության դեպքում կատարում համեմատություններ այլ բարբառների և գրաբարի հետ: Առանձնակի խորությամբ են ուսումնասիրված գոյականի հոգնակիի կազմությունը և հոլովումը, դերանունների տեսակները, դերբայները, բայի եղանակները և ժամանակային ձևերը, անկանոն և պակասավոր բայերը, երկրորդական բաղադրյալ ժամանակները: Բաժնի վերջում հեղինակը առանձին ենթաբաժիններով ներկայացնում է խնդրո առարկա խոսվածքների ածանցման, բառաբարդման և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ: *«Բարբառային ազդեցությունների մասին»* բաժնում (էջ 224-235) Կ. Դավթյանը ուշադրություն է դարձնում այլ բարբառային միջավայրերից եկած և Լեռնային Ղարաբաղում ամբողջական գյուղերով և տեղական գյուղերում վերաբնակվածների վրա բարբառային նոր միջավայրերի ազդեցության, տեղական *«ում»* և *«ա»* ճյուղերի բարբառների փոխազդեցությունների հարցերին՝ իրավամբ բացահայտելով, որ տեղական խոսվածքների ազդեցությունը չափազանց մեծ է եկվորների վրա, որի արդյունքում վերջիններս իրենց բարբառային ձևերով տեղի են տվել տեղականներին՝ աստիճանաբար յուրացնելով նրանց հնչյունական և քերականական օրինաչափությունները: Նմանապես *«ա»* ճյուղի Հադրութի բարբառային միջավայրի բարբառախոսները, հատկապես երիտասարդները, ենթարկվել են *«ում»* ճյուղի Ղարաբաղի բարբառի ազդեցությանը: Աշխատության չորրորդ՝ *«Բարբառային խմբավորումներ և նմուշներ»* բաժնում (էջ 236-296), իբրև ուսումնասիրությունների ամփոփում, խմբավորվում են Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցող բարբառային ձևերը՝ ըստ բարբառաճյուղերի, բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների՝ հիմնականում հիմք ընդունելով մեծահասակ բնակչության խոսակցությանը: Առանձնացվում են տարածքում առկա վեց բարբառներ, որոնցից երկուսը՝ Ղարաբաղի և Մեհտիշենի՝ *«ում»* ճյուղի, երեքը՝ *Հադրութի*, *Շաղախ-Խծաբերդի* և *Չայլվի* կամ *Ուրմիայի*՝ *«ա»* ճյուղի, մեկը՝ Մարաղայի՝ *«լ»* ճյուղի: Ղարաբաղի բարբառը հեղինակը բաժանում է երկու խմբի՝ Ղարաբաղի բուն բարբառ /128 խոսվածքով/ և Ղարաբաղի բարբառի ենթաբարբառային խոսվածքներ /9 ենթաբարբառ՝ 20 խոսվածքով/, Հադրութի բարբառը բաժանում է երեք ենթախմբի՝ բուն բարբառ /34 խոսվածքով/ , Տումու խոսվածք և Շուշիքենդի ու Քարին տակի խոսվածքներ, Շաղախ-Խծաբերդի բարբառում ընդգրկում է 8 խոսվածք և Ջանյաթաղի առանձին խոսվածքը, Չայլվի կամ Ուրմիայի բարբառում՝ Ներքին ե Վերին Չայլուների խոսվածքները, իսկ Մեհտիշեն և Մարաղա գյուղերի խոսվածքները առանձնացնում՝ որպես առանձին բարբառներ: Բարբառների, ենթաբարբառների և խոսվածքների դիմաց առանձին սյունակներում տրվում են նրանց հիմնական հատկանիշները և առանձնահատկությունները, Լեռնային Ղարաբաղից դուրս այլ խոսվածքների

հետ նմանությունները, անհրաժեշտության դեպքում՝ որոշ ծանոթություններ: Բերվում են նաև Ղարաբաղի տարածքի 40 գյուղերի խոսվածքներով գրառված նմուշներ: Դրանց կողքին հեղինակը նմուշներ է գետեղել Գորիսի շրջանի Տեղ, Եվլախի շրջանի Նամեթաբաղ և Միր Բաշիրի շրջանի Բեգում Սարով գյուղերի խոսվածքներով: Վերջին՝ *«Համադրական բառարան»* բաժնում (էջ 297-503), գրաբարի համեմատությամբ տրվում են տարածքի բոլոր վեց բարբառների համապատասխան բառային համարժեքները: Մենագրությանը կցված են նաև բարբառագիտական քարտեզներ, որոնց թիվը դժբախտաբար տեխնիկական-տպագրական որոշ պատճառներով խիստ կրճատվել է: Ցավով պետք է նշել, որ հրատարակչության մեղքով ուսումնասիրության մեջ սպրդել են մի շարք քերականական և տեխնիկական սխալներ[1]:

1972թ. հրատարակվում է Գևորգ Ջահուկյանի *«Հայ բարբառագիտության ներածություն»* մեծարժեք ուսումնասիրությունը[2], որի առաջին մասում (էջ 13-156) քննվում են համաժամանակյա բարբառագիտության հարցեր: Այստեղ, ի տարբերություն նախորդ՝ միահատկանիշ դասակարգումների՝ մաթեմատիկական ճշգրիտ մեթոդների կիրառմամբ հարյուր տարբերակիչ հատկանիշի հիման վրա ներկայացվում է հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումը: Դասակարգման ենթակա 120 բարբառախոս վայրերից 11-ը *(Շուշի, Հաթերք, Հարավ, Կաղարծի, Շահումյանովսկ, Ջանյաթաղ, Հադրութ, Շուշիքենդ, Տումի, Շաղախ, Մեհտիշեն)* հեղինակն ընտրել է Լեռնային Ղարաբաղի տարածքից՝ դրանց համար համեմատության եզր (բարբառային կենտրոն) սահմանելով դարեր առաջ Արցախից գաղթած հայերի կողմից Վրաստանում հիմնադրված Բոլնիս Խաչեն գյուղի խոսվածքը, որը լեզվական օտար միջավայրում առավել անփոփոխ է պահել Ղարաբաղի բարբառի յուրահատկությունները: Արդյունքում, ըստ սահմանված մակարդակային միավորների տարբերակիչ հատկանիշների քանակի, բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ առանձնացվում են Ղարաբաղի և Մեհտիշենի բարբառները, իսկ մյուսները, ինչպես նաև Գորիսը և Խանագահը (Ղարադաղ) համարվում են Ղարաբաղի բարբառի խոսվածքներ: Բացի դրանից, բարբառին և նրա նշված խոսվածքներին լուրջ ուշադրություն է դարձվում աշխատության երկրորդ մասում (էջ159-333), որտեղ քննվում են տարաժամանակյա բարբառագիտության մի շարք հարցեր՝ 5-րդ դարի բարբառային վիճակը, ժամանակակից հայ բարբառների ժամանակագրական

---

[1] ***Կարո Դավթյան***, *Նամակ խմբագրությանը, <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, Երևան, 1967, N4, էջ 89-92*

[2] ***Ջահուկյան Գ.***, *Հայ բարբառագիտության ներածություն (Վիճակագրական բարբառագիտություն), Երեւան, 1972*

փոխհարաբերությունը, բարբառային հնագույն տարբերությունների հետքերը գրաբարում, բարբառների հնչյունաբառաքերականական հնաբանությունները ևն:

1975թ. Ալեքսանդր Մարգարյանը հրատարակում է *«Գորիսի բարբառը»* մենագրությունը[1]՝ ներկայացնելով Գորիսի շրջանի բոլոր և Սիսիանի ու Ղափանի շրջանների սահմանամերձ որոշ բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Գորիսի բարբառի (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ) հնչյունական համակարգը, շեշտի դրսևորումները, ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների համաժամանակյա ու տարաժամանակյա հնչյունափոխությունները, հնչյունների անկման, հավելման, կրկնության, դրափոխության դեպքերը, խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսևորումները, բառապաշարի շերտերը, իմաստափոխությունն ու բառակազմությունը: Մենագրության վերջում տրվում են բարբառային նմուշներ մի շարք բնակավայրերի խոսվածքներով և գրաբարից ավանդված, բարբառային, արևելյան լեզուներից ու ռուսերենից փոխառյալ բառերի բառացանկեր (շուրջ 10000 միավոր):

2009թ. լույս է տեսնում Արմեն Սարգսյանի *<<Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում>>* ուսումնասիրությունը[2], որտեղ համաժամանկյա և տարաժամանակյա մոտեցումներով քննվում են Շաղախի ենթաբարբառի՝ Արցախի Հադրութի շրջանի Խծաբերդ, Դոլանլար (Արևշատ), Շաղախ (Սարեն շեն), Մելիքջանլու (Մելիքաշեն), Խրմանջուղ (Ծաղկավանք), Ալբուլաղ (Ակնաղբյուր) գյուղերի (որոնց բնակիչների նախնիները 1828-1830թթ. այդ գյուղերն են գաղթել Պարսկաստանի Ղարադաղի գավառից) խոսվածքների հնչյունաբառաքերականական օրինաչափությունները: Ամբողջ քննությունը կատարվում է Ղարաբաղի բարբառի Հադրութի ենթաբարբառի համեմատությամբ և հին ու նոր սերունդների խոսվածքների հակադրությամբ: Արդյունքում հեղինակը Գ. Ջահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման ակզբունքների և տարբերակիչ հատկանիշների համաձայն ներկայացնում է Շաղախի ենթաբարբառի հին ու նոր խոսվածքների և Հադրութի ենթաբարբառի համեմատական նկարագիրը՝ հիմնավորելով, որ Շաղախի հին սերնդի խոսվածքը Հադրութի ենթաբարբառից ունի բավական տարբերակիչ հատկանիշներ և ներկայանում է որպես առանձին ենթաբարբառ, մինչդեռ նոր սերնդի խոսվածքը, Հադրութի ենթաբարբառից տարբերվելով ընդամենը մի քանի տարբերակիչ հատկանիշով, դասվում է վերջինիս խոսվածքների շարքին:

---

[1] ***Մարգարյան Ալ.***, *Գորիսի բարբառը, Երևան, 1975*

[2] ***Մարգսյան Ա.***, *Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009*

2013թ. հրատարակվում է նույն հեղինակի *<<Ղարաբաղի բարբառի բառարան>>* աշխատությունը[1], որի ներածության մեջ (էջ5-26) առանձին բաժիններով ու ենթաբաժիններով ներկայացվում են բարբառի համառոտ նկարագրությունը, բառարանի կազմման սկզբունքներն ու վկայված օրինակների աղբյուրների և ծագումնաբանական, լեզվառճական, քերականական բնութագրումների համառոտագրությունների ցանկերը, իսկ բուն բառարանը (էջ 27-834) իրականում ունի բացատրական, դարձվածաբանական ու ծագումնաբանական բնույթ և ընդգրկում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող շուրջ 40000 բառ ու դարձված (այդ թվում՝ դրանց տարբերակներ): Յուրաքանչյուր բառահոդված կազմված է հինգ մասից՝ *ա) գլխաբառ, բ) ծագումնաբանական նշումներ, գ) լեզվառճական և քերականական նշումներ, դ) իմաստաբանություն, ե) օրինակներ և դրանց աղբյուրների վկայություն*: Գլխաբառերը ներկայացվում են մեծատառերով և նուրբ այբբենական կարգով: Գլխաբառից հետո բերվում են տարբեր խոսվածքներում գործածվող հնչյունափոխված տարբերակները, ծագումնաբանական *(հնդեվրոպական հիմք լեզու, գրաբար, արաբերեն, պարսկերեն, թյուրքական լեզուներ, ռուսերեն* ևն*)*, լեզվառճական (*ծածկաբանություն, մանկական, անարգական, արհամարհական, ծաղրական, հեգնական)*, ու քերականական *(գոյական, ածական, ներգործական բայ ևն)* նշումները, ներկայացվում են բառերի ուղղակի և փոխաբերական բոլոր նշանակությունները, տպագիր ու ձեռագիր աղբյուրներից և բանավոր խոսքից քաղված օրինակները և դրանց աղբյուրները: Բառարանում խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության (ավանդական) սկզբունքները:

Արմեն Սարգսյանը (Շողեր մինասյանի համահեղինակությամբ) հրատարակել է նաև *<<Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան>>* բառարանը[2], որն ընդգրկում է 10000ից ավելի դարձվածային միավոր ու տարբերակ՝ համապատասխան նշանակություններով և վկայված օրինակներով, իսկ ներածական մասում տրվում են Ղարաբաղի բարբառի դարձվածների քննությունը, բառարանի կազմման սկզբունքները և վկայված օրինակների աղբյուրների համառոտագրությունների ցանկը:

Բարբառի բառապաշարի մի մասն է ընդգրկված Գուրգեն Բաղդասարյանի *<<Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան>>* երիատորյակում[3]:

---

[1] ***Սարգսյան Ա.***, *Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013*

[2] ***Սարգսյան Ա., Մինասյան Շ.***, *Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Երևան, 2017*

[3] ***Բաղդասարյան Գ.***, *Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան, հ.Ա, Ստեփանակերտ, 2008, 436 էջ, հ.Բ, Ստեփանակերտ, 2010*

Սակայն հարկ է նշել, որ իրականում հեղինակը բառարանում հիմնականում սահմանափակվել է Ալ. Մարգարյանի *<<Գորիսի բարբառը>>*, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած *<<Հայոց լեզվի բարբառային բառարան>>*, Ստ. Մալխասյանի *<<Հայերէն բացատրական բառարան>>* և որոշ այլ աշխատություններից քաղված բառերով ու դարձվածներով: Բացի դրանից, այստեղ չափազանց մեծ է այն միավորների թիվը, որոնք ընդհանրապես չեն գործածվում Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ *բուլիտ* (հոկեյի մեջ հակառակորդի դարպասին նշանակված տուգանային հարված), *գիշեր-ցերեկ* (տորթի տեսակ), *դարչենա* (թխվածքի տեսակ), *եվրոակցիա* (եվրո բաժնետոմս), *ժոնգլեր* (աճպարար), *կանփորկա* (ինքնաեռի գլխանոց), *կանոնավոր զորք* (մշտական զորք), *կանաչ լոբու պահածո* (պահածոյի տեսակ), *պլանտատոր* (պլանտացիայի տեր), *ցեխաջրաբուժություն* (հանքային ցեխաջրով բուժվելը) ևն:

Ղարաբաղի բարբառի դարձվածների ամբողջական ու բազմակողմանի քննությունն է ներկայացնում Շողեր Շինասյանի *«Ղարաբաղի բարբառի դարձվածները»* մենագրությունը.[1]: Աշխատության սկզբում առանձին բաժիններով համապատասխանաբար անդրադարձ է կատարվում նյութի ընտրությանը, հարցին առնչվող գրավոր աղբյուրներին, օտար և հայ լեզվաբանության մեջ դարձվածի ըմբռնման և դասակարգման վերաբերյալ եղած կարծիքներին, օգտագործված գրավոր աղբյուրների լեզվին ու տառադարձությանը: Բուն աշխատանքը կազմված է երեք մասից: Առաջին մասում՝ *<<Դարձվածների դասակարգումը>>* (էջ 21-77), անդրադառնալով տարբեր լեզվաբանների կողմից կատարված դասակարգումներին՝ հեղինակը, ըստ հաղորդակցական արժեքի, ներկայացնում է Ղարաբաղի բարբառի դարձվածային միավորների դասակարգումը (անվանական դարձվածային միավորներ, հաղորդակցական դարձվածային միավորներ)՝ առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննելով գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող դարձվածային միավորները և հաղորդակցական դարձվածները, դարձվածային թերի նախադասությունները, բարդ կառուցվածք ունցող դարձվածային նախադասությունները, դրանց կառուցվածքային տիպերը: Երկրորդ մասում՝ *<<Բառիմաստային մի շարք երևույթների դրսևորումը Ղարաբաղի բարբառի դարձվածներում>>* (էջ 78-99), քննության են առնվում բազմիմաստության, համանունության, հոմանիշության, հականիշության դրսևորումները խնդրո առարկա դարձվածներում, ինչպես նաև միայն դարձվածներում պահպանված բառերն ու բառաձևերը: Երրորդ մասը՝ *<<Լեզվաարտահայտչական միջոցների դրսևորումը դարձվածներում>>* (էջ 100-115), նվիրված է բարբառի

[1] ***Մինասյան Շ.***,*Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007*

դարձվածներում լեզվաարտահայտչական միջոցների (փոխաբերություն, փոխանունություն, խորհրդանշան, համեմատություն, շրջասություն, չափազանցություն և նվազասույթ, հեգնանք, բազմաշաղկապություն և անշաղկապություն, դիմառնություն, զեղչում) ու դրանց տարատեսակների քննությանը: Աշխատությանը կցված են նաև ծանոթագրություններ (էջ116-119) և օգտագործված գրականության, աղբյուրների, բառարանների ցանկ (էջ 120-124):

Իր ուսումնասիրության[1] մեջ Զուխրա Երվանդյանը, ծագումնաբանական, իմաստային և կառուցվածքային մասնակի դիտարկումներով քննում է հայագիտական տարբեր, հատկապես Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ուսումնասիրություններում քննարկված, սակայն Ղարաբաղի բարբառում հնչյունակազմական և իմաստային որոշ յուրահատկություններով գործածվող մի շարք հնագույն արմատական ձևեր՝ *կընձկօնձալ, կ'օճի//գօճի, կռօճ, հանգ, շօռ կ'ալ, ճըռաքել, պօսպօս անել, ռէքնակ, նօթի, պուլ, կ'էնալ, խըէխտ, խլխլալ, ծամ, ծրէն,* հին հայերենին (որոշները՝ նաև ընդհանուր հայերենին) հատուկ հիմքերի տարբերակներ՝ *կ'ուլ, կ'աղէլ//կ'էղէլ, կաղաղ, պըէծ, հէտի, մօլ, գ'ուրգ, վէրթիմ//ուրթումնը, օխտը, թա, լպռտել, ծիծիլինգ//ծուծուլուկ, լըբաստրակ, լէնգ/լինգ, կօզնի/կուզնիսրէռ//սէռ, յէր, օշափ//օշէփ, տանդ, ճախ, քոյր, պացրու//պէցուր//պէցրու*), բառասկզբում ձայնավորից առաջ նախաձայն *h* հնչյունի կիրառական հնարավորությունները նն:

Ուշագրավ է Մելադա Աղաբեկյանի *<<Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն>>* ուսումնասիրությունը[2], որտեղ պատմահամեմատական մեթոդով ներկայացվում է Արցախ-Սյունիքի տարածքի Ղարաբաղի *(Բոլնիս-Խաչենի, Շուշիի, Հաթերքի, Հարավի, Կաղարծիի, Շահումյանովսկի, Գորիսի, Ջանյաթաղի, Հադրութի, Շուշիքենդի, Տումիի, Շաղախի, Խանազահի խոսվածքներով)*, Կոզենի, Հավարիկի, Շամախիի *(Շամախիի, Քյարքյանջի խոսվածքներով)*, Մեհտիշենի, Մեղրու *(Գուդեմնիսի, Վարհավարի, Կարճևանի, Մեղրու խոսվածքներով)*, Բուրդուրի բարբառների, Ղազախ-Կիրովաբադի միջբարբառի *(Թովուզի, Ղազախի, Կիրովաբադի խոսվածքներով)*՝ ակնհայտ նմանություններ ցուցաբերող բարբառային հնչյունական համակարգերի քննությունը, բացահայտվում են դրանցում եղած հնչյունական փոփոխությունների օօրինաչափություններն ու հարաբերական ժամանակագրությունը, տվյալ համակարգերի տարածքային կապերն ու ծագումնաբանական ընդհանրությունները:

---

[1] ***Երվանդյան Զ.***, *Ղարաբաղի բարբառի բառային կազմի հաստատման գործընթացը, Երեւան, 2007*

[2] ***Աղաբեկյան Մ.***, *Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, <<Հայերենի բարբառագիտական ատլաս>>, պրակ 3, Երեւան, 2010, էջ 54-165*

Լուսինե Մարգարյանի՝ 2011թ. հրատարակված ուսումնասիրության[1] մեջ քննության են առնվում Ղարաբաղի բարբառի և բանահյուսության հնչյունական համակարգերի տարբերություններն ու դրանք պայմանավորող պատճառները, բանահյուսության բառապաշարի շերտերը, բառիմաստային առանձնահատկությունները, հոմանիշության դրսևորումները խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսևորումները և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ, վեր են հանվում տարբեր ժանրերի *(հանելուկ, առած-ասացվածք, խաղիկ, հեքիաթ)* ոճական առանձնահատկությունները, առանձնակի ուշադրություն է դարձվում դրանցում ոճական հնարանքների դրսևորումներին, բանահյուսության մեջ գրականացման երևույթին, բացահայտվում են գրականացման գործընթացը խթանող գործոնները, պայմաններն ու պատճառները:

Կապանի տարածաշրջանի խոսվածքների քննությանն է նվիրված Սվետլանա Մանուչարյանի ուսումնասիրությունը[2], որտեղ առանձին գլուխներով ներկայացվում են նշված խոսվածքների հնչյունաբանությունը (էջ 14-98), բառագիտությունը (էջ 99-118), ձևաբանությունը (էջ 119-181), շարահյուսությունը (էջ 182- 190), խոսվածքների համեմատական նկարագիրը (էջ 196-202), նմուշներ ու բանահյուսական նշխարներ (էջ 203-217), բարբառային բառարան (226-271), իսկ ներածական մասում (էջ 3-13) տեղեկություններ են տրվում տարածաշրջանի և նրա բնակավայրերի մասին, անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմությանը, աշխատության կառուցվածքին նև :

Որոշ աշխատություններ էլ դեռևս գտնվում են ձեռագիր վիճակում[3]:

Սրանցով չեն սպառվում Ղարաբաղի բարբառին վերաբերող ուսումնասիրությունները:

Բարբառին մեծապես առնչվում են նաև հայերենի բարբառների տարբեր օրինաչափությունների նվիրված ընդհանուր ուսումնասիրություններ[4],

---

[1] ***Մարգարյան Լ.***, *Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011*

[2] ***Մանուչարյան Ս.***, *Կապանի տարածաշրջանի խոսվածքները, Երևան, 2020*

[3] ***Գրիգորյան Մ.***, *Ղարաբաղի բարբառը եւ Շուշվա ենթաբարբառը, Բաքու, 1948-1958թթ., 220 էջ, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան, Վարդապետյան Ն., Սյունյաց բարբառ, Երևան, 1961, 439 էջ ՀՀ ԳԱԱ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան, Բաբայան Ա., Ղարաբաղի Վարանդայի բարբառը, Երևան, 1967, 387 էջ, Ա. Բաբայանի անձնական արխիվ (ք. Երևան), Մեժունց Բ., Շաղախի ենթաբարբառը, Երևան, 1975, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան*

[4] ***Աբրահամյան Ա.***, *Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Երևան, 2013,* ***Բառնասյան Ջ.***, *Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Երևան, 2009, Գևորգյան Գ., Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը, Երևան, 2013,* ***Խաչատրյան Հ.,*** *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Երևան, 2009,*

բառարաններ[1], Արցախի բանահյուսական և բարբառագիր ժողովածուներ[2], այլ աշխատանքներ[3] և տասնյակ հոդվածներ ու գիտական զեկուցումներ[4]:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը:

Մեսրոպյան Հ., *Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Երևան, 2010,* ***Մեսրոպյան Հ.,*** *Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Երևան, 2016 ևն*

[1] ***Բեղիրյան Պ.***, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա-Է, Երևան, 2001-2012,* ***Պետրոսյան Հ.,*** *Հայերենագիտական բառարան, Երեւան, 1987*

[2] ***Բարխուդարեանց Մ.,*** *Պըլը -Պուղի, Թիֆլիս, 1883,* ***Դաղյան Ա.,*** *Վարանդայի բանաւոր գրականութիւնից, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները* ***Մ. Գրիգորյան****-Ս-պանդարյանի), Երեւան, 1971,* ***Ծատուրյան Ա.****, Գորիսապատում, գիրք Բ, Գորիս, 2011, Հայ ժողովրդական հեքիաթներ , հհ. V- VII, Երեւան, 1966-1979,* ***Հարությունյան Լ.****, Նշխարներ Արցախի բանահյուսության, հհ.1-5, Երևան-Ստեփանակերտ, 1991-2011,* ***Ղազիյան Ա.****, Արցախ, <<Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ>>, Երեւան, 1983, հ.15,* ***Ղահրամանյան Կ.****, Օջախի գիրք. Նշխարներ, Երեւան, 2002,* ***Մելիք-Շահնազարեանց Կ.****, Զուռնա-Տմբլա, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908, Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝* ***Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան)****, Երեւան, 1978,* ***Շերմազանեան Գ.****, Ասրի բէգ եւ Գիքի, <<Կռունկ Հայոց աշխարհին>>, Թիֆլիս, 1862, թիւ ԺԲ, էջ 896-930, 1863, թիւ Բ, էջ 113-137 ,* ***Մարգսյան Ա.,*** *Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015 ևն*

[3] ***Լիսիցյան Ստ.****, Լեռնային Ղարաբաղի հայերը, <<Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ>>, Երեւան, 1981, հ.12,* ***Հայրապետյան Թ.****, Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). Կյանքն ու գործը, <<Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ>>, Երեւան, 2007, հ.24,* ***Ղազարյան Հ.****, Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը, Ստեփանակերտ, 2007,* ***Մինասյան Ս.****, Արցախյան արձակագիրների լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ, Ստեփանակերտ, 1997,* ***Միրզոյան Ե.****, Տմբլաչի Խաչանի <<Զուռնա-Տմբլայի>> լեզվական արվեստը, Ստեփանակերտ, 2007 ևն*

[4] *Ամբողջական ցանկը տես* ***Մարգսյան Ա.,*** *Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության, Երևան, 2019, էջ 46-152*

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: Shoger.minasyan@mail.ru

Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: ghazaryan.hasmik@mail.ru

ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում առկա այն անկանոնություններն ու շեղումները, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, նախադասության անդամների դրսևորման առանձնահատկություններով:

Բանալի բառեր՝ *անկանոնություն, բացառություն, շեղում, նորմ, համաձայնություն, խնդրառություն, առդրություն, շարադասություն, նախադասություն, նախադասության անդամ, հնչերանգ, կապակցման եղանակներ:*

А. Газарян, Ш. Минасян

НАРУШЕНИЯ СИНТАКСИЧЕСКИХ НОРМ В ПРОСТОМ ПРЕДЛОЖЕНИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

В статье представлены неправильные виды синтаксической связи – согласования, управления и

примыкания, в современном армянском, которые обусловлены синтаксисом и отличительными особенностями членов предложения.

Ключевые слова: *неправильные, исключения, отклонение, норма, соглсование, управление, примыкание, предложение, член предложения, интонация, виды связи.*

H.Ghazaryan Sh. Minasjan

SYNTACTIC IRREGULARITIES IN SIMPLE SENTENCE OF MODERN ARMENIAN

This article outlines the irregularities and deviations in sentence member binding, namely collocation, verb government and agreement in Modern Armenian. This is accounted for by syntactic and functional features of sentence members.

Key words: *irregularity, exception, deviation, norm, agreement, verbal government, collocation, syntax, sentence, sentence member, intonation, binding.*

Յուրաքանչյուր գրական լեզու, այն կրող ժողովրդի լեզվամտածողությամբ պայմանավորված, ունի իր որոշակի կանոններն ու օրինաչափությունները, որոնցով էլ ուրվագծվում են լեզվական նորմի սահմանները: Լեզվական նորմը լեզվի զարգացման տվյալ փուլում սահմանված, հասարակայնորեն ընդունված և գործող լեզվական միջոցների համակարգն է, որը պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար: Այն պատմական է, ավանդական, հարաբերականորեն կայուն և անփոփոխ՝ ամրապնդված տրամաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ:

Լեզվական նորմը, ի տարբերություն համակարգի, իր մեջ կարող է ընդգրկել անկանոնություններ ու բացառություններ: Համակարգային կանոնական ձևերի կողքին գրական լեզվի նորմով կարող են հաստատվել այնպիսի ձևեր, որոնք հակասում են լեզվական համակարգին, այսինքն՝ հակահամակարգային են:

Հայ լեզվաբանության մեջ առաջիններից մեկը Է. Աղայանն էր, որ լեզվի՝ որպես համակարգի բնութագրման մեջ պատշաճ տեղ հատկացրեց հակահամակարգերին: Նա լեզուն համարում է համակարգերի և հակահամակարգերի մի ամբողջություն և նշում. <<Գործածելով հակահամակարգային տերմինը լեզվի նկատմամբ՝ մենք դրանով

հասկանում ենք այն բոլոր ենթահամակարգերը, մասնահամակարգերը և առանձնակի իրողությունները, որոնք <<հակասում>> կամ հակադրվում են լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր և միասնական բնույթ ունեցող համակարգերին, ենթահամակարգերին ու մասնահամակարգերին>>:[1] Լեզվական հակահամակարգային իրողությունների պատճառները տարբեր են լինում՝ լեզվի նախորդ շրջաններից պատմականորեն փոխանցումն ու պահպանումը, բարբառներից ու այլ լեզուներից՝ երկարատև շփման ու ազդեցությունների հետևանքով մուտք գործելը, լեզվի տվյալ փուլում առաջացող, բայց դեռևս կանոնական մակարդակի չհասած և համընդհանուր չդարձած իրողությունների առկայությունը, քերականական համաբանությունը և այլն:

Լեզվական նորմից դուրս գտնվող լեզվաձևը, եթե անգամ համակարգային է, չի կարող ընդունելի լինել, և ընդհակառակը, նույնիսկ լեզվի համակարգին հակասող լեզվաձևը ի վերջո ընդունելի կարող է դառնալ, եթե լեզվում նրա գոյությունն արդեն իսկ անժխտելի փաստ է դարձել համատարած կիրառության պատճառով: Լեզվական անկանոնություններն ու բացառությունները վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ հնչյունական, բառային, քերականական:

Սույն ուսումնասիրության սահմաններում մեզ հետաքրքրում են ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում (պարզ նախադասություն) առկա օրինաչափ ձևերից շեղվող, բայց լեզվական նորմով ընդունված անկանոնությունները, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, որոշ տիպի նախադասությունների, դրանց կապակցման միջոցների, նախադասության անդամների դրսևորման առանձնահատկությունների հետ: Ստորև կփորձենք դրանց քննությունը կատարել առանձին-առանձին:

1. **<<Առդրությունը նախադասության անդամների կապակցման եղանակներից մեկն է, որի դեպքում կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը>>:**[2] Այդպես են կապակցվում որոշիչն ու որոշյալը, մակբայական պարագան ու ստորոգյալը, համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները: Բայց կա առդրության մի տարատեսակ, երբ լրացումն իր լրացյալին

---

[1] ***Աղայան Է.***, *Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ192:*

[2] ***Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան***, *Շարահյուսություն, Երևան, 2009, էջ 11:*

պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է **թվային կախում**: Այսպես՝ հոգնակի որոշյալներ են պահանջվում՝

Ա) երբ ածականով կամ գոյականով արտահայտված որոշիչները կրկնվում են (**մեծ-մեծ խոստումներ** , **մանր-մունր հարցեր** , **սուտ ու մուտ բաներ**, **լայն-լայն փողոցներ**, **շարան-շարան մարգարիտներ**, **թել-թել նյարդեր**):

բ) երբ որոշիչները բազմազանություն են ցույց տալիս (**անթիվ մարդիկ**, **բազմաթիվ երեխաներ**, **անհամար առաջադրանքներ**, **այլազան հարցեր**, **բազում ծաղիկներ**):

գ) երբ բազմակի որոշիչները վերաբերում են տարբեր որոշյալների (**կարմիր ու սպիտակ մեխակներ**, **լայն ու ընդարձակ սենյակներ**, **խելոք ու բանիմաց ուսանողներ**, **կարճ ու երկար խողովակներ**):

Ցանկացած ածականը և մի շարք դերանուններ էլ՝ **յուրաքանչյուր**, **ամբողջ**, **որևէ**, **որևիցէ**, **ամեն**, **ամեն մի**, **մի,** պահանջում են եզակի թվով որոշյալ (**ամբողջ աշխարհը**, **որևէ դեպք**, **յուրաքանչյուր մասնակից**, **ցանկացած գործ**, **մի մարդ**):

2. **<<Համաձայնությունը կապակցման եղանակ է, որի դեպքում կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանավորում են միմյանց քերականական ձևը>>:**[1] Այդպես են կապակցվում նախադասության անդամներից ենթական և ստորոգյալը, բացահայտիչը և բացահայտյալը:

Ենթական և **ստորոգյալը** համաձայնում են թվով և դեմքով: Համաձայն օրինաչափության՝ եզակի ենթական պահանջում է եզակի ստորոգյալ, հոգնակի կամ բազմակի ենթական՝ հոգնակի ստորոգյալ: Օրինակ՝ **Ծառը ծաղկեց: Ծառերը ծաղկեցին: Ծառ ու ծաղիկ ծաղկեցին:** Դիմանիշ դերանուններով արտահայտված ենթակաների դեպքում համաձայնում են նաև դեմքով: Օրինակ՝ Մի հավք **զարկի ես** մի օր: Մի հավք **զարկեցիր դու** մի օր: Մի հավք **զարկեց նա** մի օր:

Օրինաչափությունից կան շեղումներ՝

ա)եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ հոգնակի (Փողոցով **սլանում էին երկու մեքենա**: Գետնին **ընկած էին մի քանի գերան**), և՛ եզակի (Ընդամենը **հինգ զորամաս է մասնակցում** զորավարժություններին: Քո աշխատանքում **հայտնաբերվել է երկու թերություն**):

բ)եթե բազմակի ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ Գարնանային **վար ու ցանքը** եռուզեռի **մեջ է**:

---

[1] *Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Եր., 2009, էջ 11:*

գ)եթե բազմակի ենթականերն ունեն **յուրաքանչյուր**, **ամեն**, **ամեն մի**, **ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ **Յուրաքանչյուր փողոց ու նրբանցք պետք է բարեկարգվի ու մաքրվի:**

դ)եթե նույն դեմքով բազմակի ենթականները կապված են **կամ**, **կա՛մ...կա՛մ** շաղկապներով, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝**Կասմունքի Անուշը կամ Արմինեն:**

ե)եթե բազմակի ենթականերից մեկը նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին, այն դրվում է եզակի թվով: Օրինակ՝Այդ ամենից ջինջ **հիշողություն է մնացել և** մի **կսկիծ:**

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով, օր.՝ **Արամն ու Անուշը** մեր դասարանի **առաջավորներն են**: Բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

ա) ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է: Օրինակ՝ **Դուք** մեր առաջին **ուսուցիչն եք եղել**:

բ)ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է: Օրինակ՝ **Երեխաները** մեր երկրի **ապագան են**:

գ)ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով: Օրինակ՝ **Սրանք** դեռ **երեխա են**:

Յուրաքանչյուրը, ամեն մեկը, ոչ մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի երրորդ դեմքով՝ **Յուրաքանչյուրն** իր գործն **է անում**: Զարդաքանդակներից **ոչ մեկը** մյուսին **չի կրկնում**: Դիմային անհամաձայնությամբ՝ **յուրաքանչյուրս, ամեն մեկս, ոչ մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ, ոչ մեկդ** դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դրվում է երրորդ դեմքով, օրինակ՝ **Ոչ մեկս** դա չպետք **է մոռանա**: **Ամեն մեկդ** մի բան **է ասում**: Նշված դերանունների դեպքում ստորոգյալը կարող է դրվել առաջին կամ երկրորդ դեմքով, եթե հոգնակի թվով է: Օրինակ՝ **Յուրաքանչյուրս** մի առանձին գործ **ենք անում**: **Ամեն մեկդ** ձեր անելիքն **իմացեք**:

Համաձայնությամբ կապակցվում են նաև բացահայտիչն ու բացահայտյալը: Համաձայնությունը սովորաբար լինում է դեմքով, թվով, հոլովով և առումով: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օրինակ՝ **Ձեզ՝ այլախոհներիդ**, շատերը հանդուրժել չեն կարող: **Ես՝** երկրի **զինվորս,** պատրաստ եմ պայքարել հանուն Արցախի ապանվտանգության:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

ա)թվով՝ Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին**՝ մեր երկրի **ապագային**: Զրկվեցինք մեր ամենամեծ

արժեքից՝ մեր նախնիների ժառանգած **տարածքներից**: Ահա մեր **գերազանցիկները՝ Անին** ու **Հայկը**:

ա)հոլովով՝ Հյուրասենյակները կահավորված են թանկարժեք **կահկարասիով՝ բազմոցներ, սեղաններ, սպասքապահարան, գրապահարան:** Մեր ընտանիքը բաղկացած է **չորս հոգուց՝ ես, մայրս, հայրս ու եղբայրս**, և ապրում է երկսենյականոց բնակարանում: Առաջարկեցի երեք թատերախաղերից՝ «Վենետիկի վաճառականը», «Տիմոն Աթենացի» և «Օթելլո», որևէ մեկն ընտրել:

գ)դեմքով՝ **Ես՝** իմ ընտանիքի **գլխավորը**, չէի կարող անտարբեր մնալ՝ տեսնելով այդ ամենը: **Գերազանցիկներդ՝** մեր **հույս ու ապավենը**, հանկարծ մեզ խայտառակ չանեք:

դ)առումով՝ Ադամ, ահա քեզ **ընկեր՝** գեղեցիկ **Լիլիթը:** Դաշտ էր գնացել ամբողջ **գյուղը՝ տղամարդ ու կին, ծեր ու ջահել, աշխատող ու թոշակառու**: Այցելեցինք Սյունիքի **քաղաքները՝ Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան:**

3.<<Շարադասությունը բառերի, նախադասության անդամների, բառակապակցության անդամների, բարդ նախադասության բաղադրիչների շարակարգային՝ գծային որոշակի հաջորդականություն է, որը հնարավորություն է տալիս ձևավորելու խոսքը, նրա միավորների դիրքը և հաջորդականությունը>>:[1] Նախադասության անդամների շարադասությունը կարող է լինել սովորական և շրջուն:

Ա.Սովորական շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին: Օրինակ՝ **Արևը մայր է մտել: Դու** հետաքրքիր մտքեր **ունես:** Կան կառույցներ, սակայն, որոնցում ենթական ուղիղ շարադասությամբ հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը: Օրնակ՝ Սրտիս վրա **իջնում է անդորը**:

Այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն, օր.՝ **Անդորը է իջնում** սրտիս վրա:

Բ.Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է՝ գոյական որոշիչ - դերբայ որոշիչ- ածականական դերանուն որոշիչ-հարաբերական ածական որոշիչ - թվական(կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ - որակական ածական որոշիչ-որոշյալ:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

ա. հետադաս բազմակի որոշչի դեպքում: Օրինակ՝ **Դա մի փոքրամարմին կին էր՝ տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված,**

[1] ***Հ. Զ. Պետրոսյան***, *Հայրենագիտական բառարան, Եր., 1987, էջ 491:*

անհրապույր տեսքով և շատախոս: Այսպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով:

բ. այն դեպքում, երբ առկա է որոշիչ-որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**ելից մատյան, մարած փոխաբերություն, խոսքի մաս, սեղանի թենիս** և այլն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով: Օրինակ՝ Վերլուծենք **մի քանի հետաքրքիր մարած** փոխաբերություն: **Այս բոլոր սպասարկու խոսքի** մասերն արդեն ուսումնասիրել ենք:

գ. այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին: Օրինակ՝ Գրքում տեղ են գտել **բազմաթիվ** դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր:

4.**Խնդրառությունը շարահյուսական ստորադասական կապակցության այն եղանակն է, որի դեպքում լրացումը գերադաս անդամի թելադրանքով դրվում է որևէ հոլովով կամ ձևավորվում է կապերի միջոցով:**[1] Խնդրառությունը լինում է ուժեղ և թույլ: Ուժեղ խնդրառությամբ են պայմանավորված ներգործական սեռի բայերը: Նրանց՝ ուղիղ խնդիր պահանջելը ընդհանուր կանոն է:

ա.**Ուղիղ խնդիրը** ժամանակակից հայերենում արտահայտվում է ուղղական հոլովով՝ իրի դեպքում և տրական հոլովով՝ անձի դեպում: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են **հաղթել, խաբել** և **ունեմ, ունենալ** բայերը: **Հաղթել և խաբել** բայերի մոտ ուղիղ խնդիրը թե՛ անձի, թե՛ իրի դեպքում դրվում է միայն տրական հոլովով՝ **հաղթել թշնամուն** և **հաղթել ցավին**, **խաբել ընկերոջը և խաբել կազմակերպությանը**: **Ունեմ** և **ունենալ** բայերը անձ ցույց տվող գոյականների դեպքում պահանջում են ուղղականաձև ուղիղ խնդիր, ինչպես՝ **Ես ունեմ հայր, մայր,եղբայր:** Սրանց կողքին անձնանիշ դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրը լինում է տրականաձև, ինչպես՝ **Ես քեզ իմ սրտում ունեմ: Մայրս ինձ ունեցել է քսան տարեկանում:**

Ուղիղ խնդիրը երբեմն լինում է բացառական հոլովով՝ կոչվելով **մասնական ուղիղ խնդիր**: Օրինակ՝Ծորակի **ջրից** չեմ խմում: Հաղորդեցին Կոմիտասի **երգերից**:

բ.Հանգման խնդիրը սովորաբար լրացնում է չեզոք սեռի բայերին, մի շարք բաղադրյալ ստորոգյալների: Երբեմն, որպես անկանոնություն,

---

[1] *Տե՛ս **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 30:*

լրացնում է զգացական ձայնարկություններին (**ամոթ**, **վայ**, **թու** և այլն), որոշ վերաբերականների (**երանի**, **ափսոս**, **ավաղ**). **Ամոթ** քեզ նման գոված **իգիթին**: **Երանի** հոգով **աղքատներին**:

Անկանոնություն պետք է համարել նաև հանգման խնդրի՝ բացառական հոլովով արտահայտվելը **կառչել, կպչել, դիպչել** բայերի դեպքում: Օրինակ՝ Նա **կառչեց** այդ **մտքին/մտքից**:

գ.Ներգործող խնդիր ունեցող նախադասության ստորոգյալը արտահայտվում է կրավորական սեռի բայով: Սակավ դեպքերում, սակայն, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, այն, որպես անկանոնություն, կարող է արտահայտվել չեզոք սեռի բայով: Այդպիսի բայերից են՝ **ամաչել, գոհանալ, վախենալ, նեղանալ, սարսափել, սոսկալ** և այլն: Օրինակ՝ Նա **վախեցավ օձից**: Նա **սարսափեց թշնամուց**: Ըստ Ս. Աբրահամյանի՝ կրավորական և չեզոք սեռերի բայերի ներգործող խնդիրների հարաբերակցության և ընդհանրության մասին է խոսում այն իրողությունը, որ հաճախ միևնույն ներգործող խնդիրը կարող է գործածվել թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի բայերի հետ՝ պահպանելով միևնույն քերականական իմաստը: Հմմտ. Զեկուցողի **ելույթը** միահամուռ հավանության արժանացավ նիստի բոլոր **մասնակիցների կողմից**: Զեկուցողի ելույթը հավանությամբ ընդունվեց նիստի բոլոր **մասնակիցների կողմից**: [1]

5. Բազմակի տարադաս որոշիչները նախադաս դիրքում չեն կապվում **և**, **ու**, **կամ**, **թե** շաղկապներով և ստորակետով չեն տրոհվում: Այս օրինաչափությանը չեն ենթարկվում բազմակի հետադաս որոշիչները, որոնք, անկախ իրենց արտահայտության ձևից, միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով: Օրինակ՝ Հեծյալները՝ **կիսամերկ**, **կմախքացած**, **դեմքի մշուշոտ արտահայտությամբ և լուռումունջ**, օրորվում էին թամբերի վրա:

6.Անվանական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով:[2] Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ: Օրինակ՝ **Վայ** մեզ՝ մոլորյալներիս: **Ո՛չ** ինքնակոչ նախագահին: **Երանի** հոգով աղքատներին: **Ա՛յ** քեզ բան... **Ահա** և ես: **Ահավասիկ** իմ ներդրումը: **Ափսո՜ս**, **հազա՜ր ափսոս** մեր Թլոլ Դավթին:

7.Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի համակարգում որպես յուրահատկություն կարելի նշել **երանի, երնեկ**, **ափսոս**

---

[1] *Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 2004, էջ44:*

[2] *Տե՛ս **Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան**, Շարահյուսություն, Ե., 2009, էջ 111:*

վերաբերականների՝ գլխավոր նախադասության դերով հանդես գալը: Օրինակ՝ **Երանի** նրան, ում հոգին խաղաղ է ընդմիշտ: **Ափսոս,** որ մենք երբևէ լավ իշխանություն չենք ունեցել:

8.Նախադասության անդամների կապակցման տեսանկյունից անկանոնություն պետք է համարել բուն բացահայտիչ-բացահայտյալի կապակցումը **այսինքն, այն է** ստորադասական շաղկապներով: Օրինակ՝ Նա որոշեց շարունակել հոր մասնագիտությունը, **այն է՝** դարբնություն: Այստեղ **դարբնություն** բառով բացահայտվում է, թե որն է մասնագիտությունը: Նույնպիսի յուրահատկությամբ բնորոշվում են նաև զուգադրական կազմությամբ ստորադասական մի շարք շաղկապներ, ինչպես՝**չնայած…բայց, թեկուզ …սակայն, թեպետ… այնուամենայնիվ** և այլն: Կապակցելով նախադասության անդամներ՝ նրանք արտահայտում են այնպիսի հարաբերություն, որն ավելի մոտ է համադասությանը, քան ստորադասությանը: Օրինակ՝ **Թեպետ ընդունակ, բայց ծույլ** այդ մարդուց ոչինչ չէր ակնկալում:

9.Հնչերանգով պայմանավորված՝ որոշ կառույցներում դրական խոնարհման ստորոգյալը արտահայտում է ժխտական իմաստ, իսկ ժխտականը՝ դրական իմաստ: Այսպես՝

-Տղադ ի՞նչ արեց, աշխատանք ճարե՞ց:

-Բա ի՞նչ արեց, ճարեց(այսինքն՝ չճարեց):

Ու՞ր է այստեղ ծաղիկ, որ հավաքենք(այսինքն՝ ծաղիկ չկա):

Ո՞վ է դաս սովորել, որ ես սովորեմ (Ոչ ոք չի սովորել, ես էլ չեմ սովորել):

Բա ես քո մայրը չե՞մ (այսինքն՝ մայրն եմ):

10. Բայական ստորոգյալներին տրվում են հետևյալ հարցերը՝ **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է անելու(լինելու), ի՞նչ է արել(եղել), ի՞նչ արեց(ինչ եղավ), ի՞նչ պիտի անի(լինի)** և այլն: Անվանաբայական ստորոգյալներին տրվող հարցը վերաբերում է ստորոգելիին՝ **ո՞վ է, ի՞նչ է, ովքե՞ր են, ինչե՞ր են, ովքե՞ր կլինեն, ի՞նչ դարձավ, ի՞նչ եղավ, որտե՞ղ է, ե՞րբ էր, ո՞րերորդն է, որքա՞ն է, ինչպիսի՞ն է** և այլն:

Կամ, գիտեմ, ունեմ պակասավոր բայերով արտահայտված ստորոգյալները ոչ մի հարց չեն ընդունում: Օրինակ՝ Այդ գործում ես **չկամ**, պարո՛ն: Մայրս **ուներ** ձեռքեր բարակ: Անտառը ծանոթ եր նրան, **գիտեր,** թե որտեղ է սիրում բույն դնել միրհավը:

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենի շարահյուսական համակարգում՝ պարզ նախադասության սահմաններում, առկա լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, անկանոնություններն ու բացառությունները, որոնք կենդանի լեզվի

փոփոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արդյունք են, համակարգային կանոնական ձևերի կողքին գործում են որպես հակահամակարգային ձևեր:

Գրականություն

1. Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976:
2. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975
3. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
4. Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:
5. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր բ, Եր., 1964:
6. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2009:
7. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
8. Պետրոսյան Հ., Հայրենագիտական բառարան, Եր., 1987:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը:

Միհեր ՔՈՒՄՈՒՆՑ
Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավար,
ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող,
բ.գ.թ., դոցենտ
e-mail: mherkumunts@gmail.com

-ՏԻ || -ԴԻ ԱԾԱՆՑՈՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարը բավականին հարուստ է և հիմնականում արտացոլում է ընդհանուր հայերենի բառային կազմը: Սակայն կան բառեր, որոնք ծագմամբ հին են և հանդիպում են այս տարածքի բարբառներում, խոսվածքներում: Այդ բառերից են ***բուլդի, շբլդի, դբլդի****, որոնցում, կարծում ենք,* ***-դի****-ն ածանց է:*

Հավանական է, որ ***բուլ-****ը հնդեվրոպական* ****kʷol*** *- արմատի հունական* ***πόλος*** *«շրջանաձև շարժում» ձևից անցած հին փոխառություն է, որ պահպանվել է բարբառային տարածքում: Եթե* ****kʷol- > հol*** *անցման հնչյունական տեղաշարժերը այս ձևակերպմամբ հասկանալի են դառնում, ապա հարց է մնում նույն հիմքից սերող* ***հոլ-բուլ*** *հիմքերի* ***հ > բ*** *փոփոխությունը: Կարծում ենք՝ այստեղ գործ ունենք ոչ թե ընդհանուրհայերենյան հնչյունափոխական երևույթի հետ, որովհետև բառը առկա է արևելյան բարբառային տարածքներում, այլ բարբառային: Այստեղից պարզ է դառնում, որ* ***բուլ*** *արմատը անմիջական չի բխում հ.-ե. ձևից, բայց և չի զատվում* ***հոլ*** *արմատի իմաստային և հնչյունական համապատասխանությունից:*

-Դի *ածանց ունի նաև բարբառի* ***շիլ*** *արմատը՝* ***շիլ-դի*** *«1. շեղված, ծուռ, 2. ծուռ աչք ունեցող», որի նախաձևն է* ****skhel- || *skel-****:*

*Ըստ բարբառային տվյալների, կարծում ենք, նույն ածանցը դրսևորվել է **խտիղ** բառի բարբառային տարբերակում՝ **ղըլ-ղի** «խուտուտ»*

*Եվ այսքանից կարելի է եզրակացնել, որ **-ղի** ածանցը առաջ է եկել բարբառախմբում տարածում գտած **-օտ//-ուտ+ի** ածանցից՝ **-օտի//-ուտի > -տի // -ղի**՝ «1. մի բան կրելու, 2. մի բանով օժտված լինելու» իմաստներով, որ պահպանվել է բարբառային հնաբանություններում:*

Բանալի բառեր՝ *Սյունիք-Արցախ բարբառային տարածք, բառապաշար, հնդեվրոպական արմատ, հին փոխառություն, բուլղի «1. հոլի տեսակ, 2. շարժուն անձ, երեխա», շիլղի «շեղված, ծուռ, 2. թեք աչք ունեցող», գլղի «խտիղ»:*

М. Кумунц

ИЗУЧЕНИЕ НЕСКОЛЬКИХ ДИАЛЕКТНЫХ СЛОВ С СУФФИКСОМ -ТИ И -ДИ

*Лексика Сюникско-Арцахского диалектного ареала достаточно богата и в основном отражает лексику армянского языка в целом. Но есть слова которые являются старыми по происхождению и встречаются в диалектах и разговорных выражениях этой области. Среди этих слов **булди, плди, глди (բուլղի, շըլղի, ղըլղի)**, в которых, как нам кажется, **-ди (-ղի)** является суффиксом. Вероятно, что **бул (“բուլ”)** – это старое заимствование от индоевропейского корня ***kwol-** греческого **πόλος** «круговое движение», которое сохранилось в диалектной области. Если фонетические сдвиги перехода *kwol- > хол **(հոլ)** становятся понятными с этой формулировкой, тогда остается вопрос о замене **хол-бул (հոլ-բուլ)** корней из той же базы **х > б (հ > բ)**. Нам кажется, что здесь мы имеем дело не с общеармянским фонетическим явлением, поскольку слово существует в восточных диалектных ареалах, а с диалектом. Отсюда становится ясно, что корень **бул (բուլ)** не происходит непосредственно от индоевропейской формы, но и не отделяется от семантического и фонетического соответствия всего корня.*

*Диалектный корень "**шил" («շիլ»)** также имеет суффикс **-ди (-դի)**: **шил-ди (շիլ-դի)** "1. криво, криво, 2. кривоглазо", чей образец ***skhel- || *skel-**.*

*По диалектным данным, мы думаем, такое же происхождение появилось в диалектной версии слова **хтиг (խտիդ)**: "охапка, щекотка" **гл-ди (գլլ-դի)**."*

*И из этого можно сделать вывод, что суффикс **-ди** предшествовал распространенному в диалектной группе суффиксу **-от ||-ут + и (- օտ||-ուտ+ի): -оти| | -ути > -ти || -ди (-օտի || -ուտի > -տի || -դի)**: «1. нести что-то, 2. быть чем-то наделенным» в значениях, сохранившихся в диалектной археологии.*

Ключевые слова: *Сюникско-арцахский диалектный ареал, запас слов, индоевропейский корень, старое заимствование, булди "1. тип холи, 2. подвижный человек, ребенок", шилди "отклонившийся, кривой, 2. имеющий косой глаз", глди "охапка, щекотка".*

M. Kumunts

STUDY OF SEVERAL DİALECT WORDS WİTH SUFFİX -TI || -DI

*The dialectic area of Syunik-Artsakh vocabulary is quite rich and mainly reflects the word structure of general Armenian. However, there are words that have ancient origins and are mostly found in the dialects and speeches in this area. Among these words are **buldi, shldi, ghldi** (բուլդի, շլդի, ղլդի) in which we think **"-di" (-դի)** is a suffix.*

*It is possible that **"bul" ("բուլ")** is an old loanword from the Indo-European root ***kʷol** - Greek πόλος "circular motion" that survived in the dialect area. If the phonetic shifts of ***kʷol- > hol (հոլ)** transition become understandable with this wording, then the change **h > b (հ > բ)** remains a question. We think that here we have a deal not with a common Armenian phonetic phenomenon, but with dialect, because the word exists in eastern dialect areas. From this it becomes clear that the root **"bul" ("բուլ")** does not directly derive from h.-e. form, but does not differ from the semantic and phonetic correspondence of the root **"hol" («հոլ»).***

*The root **"shil" («շիլ»)** from dialect also has the suffix **"-di" («-դի»)**: **shl-di (շիլ-դի)** «1. grooked, 2. having crooked eye», the prototype of which is ***skhel- || *skel-.***
*According to the dialectal data, we think that the same derivation was manifested in the dialectal version of the word khtigh **(խտիղ)** " tickling, titillation: delectation" ghl-di **(ղըլ-դի)**.*
*And from this it can be concluded that the suffix **-di (-դի)** came from the suffix **-ot || -ut+i (-օտ||-ուտ+ի)** which is widespread in the dialect: **-oti || -uti > -ti || -di (-օտի || -ուտի > -տի || -դի)** with the meanings" 1. to carry something, 2. to be endowed with something" preserved in dialectal archeology.*
Key words: *Syunik-Artsakh dialect area, vocabulary, Indo-European root, old borrowing, buldi "1. holi type, 2. mobile person, child", schildi "deviant, crooked, 2. having a slanting eye", gldi "armful, ticklish".*

Մուտք

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում առկա են բառեր, որոնք բնորոշ են միայն այս տարածաշրջանին ածանցական տարբեր յուրահատկությունների շնորհիվ: Նշված հատկանիշով են դրսևորվում **բուլդի, շըլդի, ղըլդի** բառերը, որոնցում, կարծում ենք, **-դի**-ն ածանց է: Փորձենք նշված բառերի ստուգաբանությամբ պարզել նաև վերջադիր հնչյունախմբի նշանակությունը:

Բուլդի: Վկայություններ

Բուլ[դ]ի > բուլդիի || բուլդու բառը Սյունիք-Արցախ բարբառախմբում[1] գործածվում է հիմնականում երկու իմաստով՝ «1. հոլի տեսակ, 2. փոխ.՝ շարժուն մարդ, երեխա»: Նրանով կազմված հարադրություններն են՝ **բուլդի-բուլդի անել, բուլդի կ'ա՛յլ, բուլդի ինել** «1. արագ շարժվել, 2. թպրտալ, 3. անհանգիստ լինել, 4. դեսուդեն ընկնել, 5. պոչը խոյաձև պտտել», **բուլդի կըտըրել, բուլդի տալ** «1. անընդհատ շարժման մեջ լինել, 2. փոխ.՝ ցավից գալարվել», **բուլդի կըտըրցընել** «անհանգիստ պահել», **բուլդի քիցել** «հոլ խաղալ», տարածված է նաև մականուններում՝ **Բուլդի** «շարժուն լինելուց առաջացած մականուն», **Բուլդի** Ղազար «անհանգիստ, անընդհատ շարժման մեջ եղող մարդ»[2], «Ինչ անուններ ասես չկան՝ **Բուլդի**, Սենալ ու Չամանով»[3], հավանական է նաև «շարժուն»

---

[1] *Նկատի ունենք Սյունիքի և Արցախի բարբառային միավորները:*

[2] ***Մարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի պետական համալսարան, Երևան, 2013, էջ 97 (այսուհետև՝ **ՂԲԲ**):*

[3] ***Մահյան Հ.**, Բանաստեղծություններ, մաս 1 (օգտվել ենք http://eanc.net կայքից. այսուհետև՝ **ԱՐԵՎԱԿ**):*

իմաստով՝ «Գարադա-**բուլդի** Մուխանի ձեռքով միսն ուղարկեցինք Հաստ Ներսես բեյի տունը ոչ այն դիտումով»[1], «Ես հիշում եմ մեջքը գոտիկ- / Նանագուլենց Սապետ Աքոր./ Հարևան էր նա մեզ մոտիկ, / Մարդու անունն՝ «**Բուլդի** Յազոր»[2]: Համադրական ձևերում կան՝ **ղըլդիբուլդի** «իրարանցում» **ղըլդիբուլդի անել (անել)** «իրարանցում (գցել)» և այլն: Կարծում ենք՝ այս արմատի ձևերից բարբառախումբն ունի նաև կապակցության մեջ գործածվող **բոլթա (բոլթա տալ)** «1. տեղում անընդհատ շարժվել, 2. փոխ.՝ թրիվ գալ»:

«Հոլի նման խաղալիք՝ առանց թելի, որ պտտեցնում են բթամատով և ցուցամատով» իմաստով **բուլդի** բառը վկայվում է հիմնականում Սյունիք-Արցախում: Հայերենի մյուս բարբառներում՝ Ար. Ուրմ. Մղր. Հվր. Ղրդ. և այլն, գործածական է նաև հարադրությամբ՝ **բուլդի-բուլդի** «1. պոչ, 2. պոչի այս ու այն կողմ շարժելը»: Այս հիմնական իմաստից որոշ բարբառներում նրբերանգներ են ձևավորվել՝ «փոխ.՝ շողոքորթել», Հվր. «ձկների՝ ջրում ճարպիկ շարժվելը»[3] և այլն: Հայերենի գրական տարբերակներում բառը չի հանդիպում: Գեղարվեստական գրականության մեջ հիմնականում երկու իմաստով է հանդիպում. Սյունիք-Արցախ բարբառակիր հեղինակները գործածում են «հոլի պես պտտվել», ինչպես՝ «-Ա՛յ Աշիկ, բավական չի՞ քեզ, ի՞նչ ես **բուլդի** կտրել,- ասաց նա ու հանկարծ զարմացած նայեք ձեռքերը օդի մեջ խաղացնող որդուն»[4], «Գիշերը քունը չտարավ, աչքերը բաց, **բուլդի** կտրեց անկողնում»[5], և «պտտել, խոյաձև շարժել»՝ «-Մի խոսքով՝ ասա մեր Սամսոնի շունն է, որ լավ հագնվածների առաջ պոչը **բուլդի-բուլդի** է անում, իսկ մուրացկանների և խեղճ հագնվածների երեսներն է ուզում ծվատել»[6] իմաստներով: Ս. Ամատունին «Բուլդի» բառահոդվածի ներքո բառը վկայում է Կապանում՝ տալով նշված խաղալիքի տարբերակները բարբառներում՝ «պժժան, պիլիլիկ, վզզան, վժժան, Ֆռռիկ, շոնչան»[7]:

Մատենագիտական տեղեկություններ չեն հանդիպում, բառարանային տվյալները սահմանափակվում են վերոնշյալներով[8]:

---

[1] ***Բակունց Ա.,*** *Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 376:*

[2] ***Հակոբյան Հ.****, Սապետ-Աքիրը (**ԱՐԵՎԱԿ**):*

[3] *Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հատ. I, Երևան, 2010, էջ 219:*

[4] ***Բեսս Գ.,*** *Նովելներ, մաս 1 (**ԱՐԵՎԱԿ**):*

[5] ***Բեսս Գ.,*** *Նովելներ, մաս 2 (**ԱՐԵՎԱԿ**):*

[6] ***Պռոշյան Պ.,*** *Պատմվածքներ (**ԱՐԵՎԱԿ**):*

[7] ***Ամատունի Ս.****, Հայոց բառ ու բան, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1912, էջ 116:*

[8] *Սյունիք-Արցախ բարբառներին վերաբերող բառարաններում բառը ընդգրկվում է բարբառայինների շարքում (օրինակ՝ տե՛ս՝ **Մարգարյան Ա.,** Գորիսի բարբառը, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1975, էջ 378): Այնուամենայնիվ, բառարմատի ընդհանրությունները ստուգեցինք արևելյան լեզուներում, մասնավորապես թյուրքական. այս*

Բառը աղերսվում է հ.-ե. ***bhel-||*bho/ō/l-** արմատի հետ, որը, ինչպես նկատել են հեղինակները, հայերենում իմաստային և հնչյունական տարբեր զարգացումներ է ունեցել[1]: **Բուլ-դի** արմատի ծագումը որոշելու նպատակադրումով քննենք հ.-ե. ***bhel- || bho/ō/l-** նախաձևի դրսևորումները հայերենում և նրա հնարավոր ընդհանրությունները **բուլ-դի** բառի հետ:

Ստուգաբանական աղերսներ և կանխավարկածներ

Բուլ || պոնլ արմատով Սյունիք-Արցախում հանդիպում են «1. խմորի գունդ, 2. թումբ» բառը և նրանով ձևավորված բազմաթիվ կազմություններ: Հ. Աճառյանը նշում է, որ ***bhōl-** ձևից հայերենն ունի **բուլ**, որ արտահայտված է **բոլոր**, այլև **բոդ, բոդբոջ**՝ «ուռչել» իմաստով[2]: Է. Աղայանը այս արմատից ածանցված է համարում **բեղուն, բեղմն, բեղմնավոր, բոլ-որ, բլուր, բուլ**, ինպես և՝ **պալար, պղպջակ**[3]՝ հետևելով Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ստուգաբանություններին: Գ. Ջահուկյանը բառային որոշ տարբերակների ստուգաբանության առնչությամբ ենթադրում է ***bhēldhio-, *bhōldhio-, *bhuldhio-**,***bhildhio-** տիպի մի նախաձև[4]: Ընդ որում՝ ***bhel- || *bhol-** արմատի համար

բառին մոտ բոլոր արմատները առանձնացնենք թյուրքական բառային և բառարանային պաշարներից: Այսպես՝ ձևով մոտ են՝ ***bulamak*** *«փլցնել, քանդել, 2. շուրջը պատել, 3. քսուքել, բոլորածեփել»,* ***bulanmak*** *«պղտորվել, 2. քսվելով կեղտոտել»,* ***bulmak*** *«1. գտնել, 2. հայտնագործել, 3. հասնել, 4. հանդիպել» և այլն (Օգտվել ենք հետևյալ բառարաններից՝ Турецко-Русский словарь, Государственное издательство иностранных и национальных словорей, Москва, 1945, Türkçe-Rusça sözlük, Академия наук СССП Институт востоковедения, Москва, Издательство «Русский язык» 1977,* ***Ղազարյան Ս. Ղ.****, Թուրքերեն-հայերեն բառարան, «Միտք» հրատ., Երևան, 2003,* ***Պօհճալեան Ա.****, Թրքերէնէ-Հայերէն առձեռն բառարան, Ուսուցչաց հիմնարկի «Յակոբ Աբէղեան» տպարան, Իսթանպուլ, 1981,* ***Կարապետեան Պ. Զ.****, Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Տպագրութիւն Արշակ Կարօեան, Կ. Պոլիս, 1912): Մենք ստուգեցինք նաև այլ բառարաններ նման արմատ-բառ գտնելու ակնկալիքով, ինչպես՝ տեղանունների բառարանում նման արմատներ գտանք* ***Բուլդախեթ, Բուլդուլօլան, Բուլդուր (Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.****, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986, հատ. 1, էջ 752), «Բուլդյան» բառահոդվածի տակ նշվում է երկու բացատրություն՝ 1. պուլտի, բուլդի թուրք. «շարժուն, աշխույժ» բառից, 2. բուլդանդար (Բուլդադարյան)>Բուլդո>Բուլդոյան>Բուլդյան (****Ավետիսյան Տ.****, Հայոց ազգանունների բառարան, հեղինակային հրատ., Երևան, 2010, էջ 62):*

[1] ***Աղայան Է.****, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 47-48:*

[2] ***Աճառյան Հ.****, Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., հատ. I, Երևան, 1926, էջ 455 (այսուհետև՝* ***ՀԱԲ****):*

[3] ***Աղայան Է.****, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 48:*

[4] ***Ջահուկյան Գ.****, Ստուգաբանություններ, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, Երևան, 1965, էջ 252:*

նոստրատիկ հիմք են համարվում «փայլուն, պսպղուն»[1] իմաստները, որոնց դիմաց Սյունիք-Արցախ բարբառախումբն ունի **պօղ** «կրակից թռած կտոր, մարմրող մոխիր» բառը[2]: Եթե **բուլ-դի** բառի հիմքում նույնպես ընկած լիներ հ.-ե. ***bhōl-** արմատը, ապա թերևս պետք է արձանագրվեր **բ > պ** փոփոխությամբ, ինչպես **բուլ || պոնլ** բառում, և **բուլ-դի** իմաստին հարող տարբերակներում: Կարող է կարծիք լինել, որ ***bhōl-** արմատը բարբառախմբում իմաստային ընդլայնմամբ բառային տարբերակներ է առաջ բերել. ա/ բառեր, որոնք բառասկզբում ունեն և՛ խուլ, և՛ ձայնեղ տարբերակները՝ **բոլոր-պիլ՝ր, բոլորել-պիլ՝րել, բլուր-պիլոնր, բողկ-պէխկը**[3], բ/ բառեր, որոնք գրաբարի դիմաց ունեն հնչյունական տարբերություններ՝ **բողկուկ-բըխկուկ, բողբոջ-բօղբօջ || բըղբօջ**: Բարբառախմբում, կարծում ենք, այս արմատից **ղ>խ** փոփոխությամբ պահպանվել է **բօխ || պ՝ծխ** բառը[4]՝ «բողբոջապատ շիվը, որ կեր են օգտագործում անասունների համար», այստեղից՝ **բօխել || պ՝ծխել** «բողբոջել, ծլապտկել», որին զուգահեռ գրաբարն ունի **բուղխ** «պտղի բողբոջը կամ ազոխը»[5]: Ինչպես նկատվում է ***bhōl-** արմատի քննությունից, **բուլ-դի** «1. հոլի տեսակ, 2. փոխ.՝ շարժուն մարդ, երեխա» բառը քիչ հավանական է՝ բխի նրանից (**բօխ || պ՝ծխ**), առավել ևս, որ **բուլ-դի** բառը չի գալիս հայերենի հիմնական շերտի միջոցով և չի ենթարկվում հայերենի ընդհանուր օրինաչափություններին[6], ինչպես **բող-ջ** արմատի դեպքում[7], այլ արձանագրվում է սահմանափակ բարբառներում:

Փաստորեն՝ հնչյունական և իմաստային առումով **բուլ** արմատը, որը գրաբարում վկայված չէ, քիչ հավանական է բխեցնել ***bhel-, *bhlē-** «փչել, ուռչել, բխել» նախաձևից: Բարբառախմբին անցած այս արմատի տարբերակները հավաստում են, որ **բուլ-դի** բառը կարող է նույնանշական աղերսներ ունենալ

---

[1] ***Bomhard A., Kerns J.,*** *The Nostratic Macrofamily, Berlin-New York, 1994, pp. 205, 207, 210.*

[2] *Այս մասին կարելի է տեսնել՝* ***Աղայան Է.,*** *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 130-131:*

[3] *Հավանաբար գրական ձևի նմանությամբ են տարածվել ձայնեղներով տարբերակները:*

[4] *«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն նույն արմատով նշում է բույս՝* ***բողիկ****, որից Սյունիք-Արցախն ունի* ***պէքի (Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ.,*** *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. I, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, էջ 168-169):*

[5] *Գ. Ջահուկյանը գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների կամ արմատական ձևերի մեջ է ընդգրկում քննվող բառին աղերսվող «հ.-ե.* ***b(h)(e)u-*** *փչել, ուռչել» իմաստով արմատը և այս շարքում «թերևս» դնում Սյունիք-Արցախում գործածվող* ***պուպու*** *բառը (****Ջահուկյան Գ.,*** *Հայ բարբառագիտության ներածություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 283 (այսուհետև՝****Ջահուկյան*** *1972)):*

[6] ***Ջահուկյան*** *1972, էջ 283:*

[7] *Սեբ.* ***բուլդ /*bhlō-dh-/*** *«բղուդ», այլն՝* ***քղի բլտիկ *bhl-ōd-*** *«մի տեսակ մեծ կճուճ», Չրս.* ***բղբունջ *bhel-/bhōl-*** *«ուռածություն», ՆԲգ.* ***բխբուճ*** *«ուռած-բարձրացած», Վան* ***բղող *bhōl-*** *«խունկի մեծ կտոր», Տիգր.* ***բողջոց *bholdhio-*** *«վերք», Գաբ. բռ.* ***բոյթ *bheu-t-*** *«դռան վրայի գնդաձև բռնակ», Եր. Ղզ.* ***բութ bhu-t-*** *«կուզ, սապատ», Ազուլ. Ջուղ. Արց.-Սյուն.* ***բուլ *bhu-l-*** *«խմորի գունդ» (այս մասին տե՛ս՝****Ջահուկյան*** *1972, էջ 283-284):*

հ.-ե. ***bhōl-** «կլոր, շրջանակաձև» արմատի հետ, բայց նրանից բխել չի կարող[1]: Բացի այդ՝ իմաստային նրբերանգով **բուլդի**-ն հարանվանական կապ ունի **հոլ** բառի հետ. **բուլդի** անվանվում է ձեռքով պտտեցվող իրը, **հոլը**՝ թելով: Արցախն ունի **զըկըռբուլդի** «*զկեռից պատրաստած հոլ*»:

Բուլդի և **հոլ** «հոլ խաղալիքը» բառերը նախ և առաջ ընդհանրանում են «պտտվել» գործողության իմաստներով: Սյունիք-Արցախ բարբառախմբում **հոլ** արմատից են՝ ***անըմը հոլօվէլ*** *«մեկի մասին շատ խոսել, բամբասել»*, ***հուլուլ // հոլօլ*** «1. գլանաձև անիվ, որով լծկանները հաճար են կալսում, 2. *բեռնակիր սայլակ հատկապես գոմաղբը տեղափոխելու համար, 3. խաղալիք, որ պատրաստվում էր փայտից կամ մետաղալարից*»[2]: Կարելի է ենթադրել նաև, որ **բուլդի** բառի իմաստը կարող է բխել **պոչ** բառիմաստից, քանի որ այդ խաղալիքը այսպես ասած «պոչ» ունի, որից բռնում և պտտեցնում են:

Հայերենի լեզվաբանական բնույթի ուսումնասիրություններում **բուլ** արմատով «հոլ» նշանակությամբ բառ ուսումնասիրված չէ[3]: Հետևելով **հոլ>հոլօվ**[4] արմատի ստուգաբանությանը՝ նկատում ենք, որ բառի հիմքում ընկած հ.-ե. ***kʷol**-ը[5]: Գ. Ջահուկյանը չի կիսում այս տեսակետը և **հոլ-ով** բառի համար հիմք է համարում հ.-ե. ***pol-**[6] արմատը՝ «հրելով կամ խփելով շարժման

---

[1] *Քիչ հավանական ենք համարում նաև այդ բառի նոր փոխառյալ լինելը ռուսերենից կամ մի այլ լեզվից.* ****bultas>*bhel-d-*** *արմատը ռուսերենին և նրան շրջակա լեզուներին հավանաբար ուշ շրջանում անցել է գերմ.* ***bolt(e)*** *կամ իռլ.* ***bout*** *ձևից՝ հին անգլ.* ***bolt*** *անգլ.* ***bolt,*** *գերմ.* ***bolzen,*** *հին բալկ.* ***bolti,*** *հուն.* ***βίδα,*** *լատ.* ***fulmen,*** *իտալ.* ***bullone, bolt*** *(բոլորում էլ առկա է «պտտել>պտուտակ» իմաստը): Այս մասին կարելի է տեսնել՝* ***Фасмер М.,*** *Этимологический словарь русского языка, том I (перевод с немецкого О.Н. Трубачева, с дополнениями. Под ред. и с предисловием проф. Б. А. Ларина), "Прогресс", Москва, 1986, с. 190:*

[2] ***Կալ, -ոյ,*** *«կալսելը» և* ***հոլ*** *առնչություններ է արձանագրում Գ. Ջահուկյանը: Այս մասին կարելի է տեսնել՝* ***Джаукян Г. Б.,*** *Очерки по истории дописьменного периода армянского языка, «Издательство академии наук», Ер., 1967, с. 137 (այսուհետև՝* ***Джаукян*** *1967):* ***Կրհուկ // կրհոլ // կօհոլ // կուհոլ*** *տարբերակներով Սյունիք-Արցախում գործածվում են «1. հողի տակ կառուցված ամբար, 2. խուց, 3. խրճիթ, 4. փոս» իմաստները: Այս գոյականից է կազմված* ***կրհոլ տալ, կրհոլ անէլ*** *«1. շրջանը քերելով փոս փորել, 2. գետնափոր խուց պատրաստել»: Կարծում ենք՝ բառը կազմված է համանիշ* ***կալ*** *և* ***հոլ*** *բառերի բաղարկությունից՝* ***կալհոլ > կրհոլ****, որտեղ ետընթաց* ***լ****-ի ազդեցությամբ դուրս է ընկել առաջին* ***լ****-ն, իսկ* ***ա****-ն շեշտակորույս դիրքում վերածվել է* ***ը****-ի (նաև* ***ա՝i)*** *կամ բարեհնչունությամբ՝* ***օ*** *կամ* ***ու*** *հնչյունների:*

[3] ***«Բուլ»*** *բառահոդվածով նշվում է երկու բառ, որ դժվար թե ուղիղ կապ ունենան այս արմատի հետ՝ 1. «պապական կոնդակ», որ ծագում է լատ.* ***bulla*** *«կնիք, կնքեալ վաւերագիր, վկայագիր» 2. «եբրայական ութերորդ ամիսը»* ***(ՀԱԲ****, էջ 197):*

[4] *Այն իմաստային առնչություններ չունի* ***հոլ*** *«հոլանի, մերկ» բառի հետ:*

[5] *ՀԱԲ, էջ 109-110:*

[6] ***Ջահուկյան Գ.,*** *Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 464 (այսուհետև՝* ***ՀՍԲ****):*

մեջ դնելը»[1]: ***kʷol > hol,** այլն՝ **hol-բուլ,** բառերը իմաստային ընդհանրությունների դիմաց, սակայն, ունեն հնչյունական ոչ հարթ ձևեր: Հ. Աճառյանը ***kʷol > hol** բացատրում է հ.-ե. ***kʷ > h** վերածվելու, ապա ընկնելու երևույթներով՝ ***kʷo>n̥, n̥վ, *kʷi > n̥ւր,** այլն՝ **հոլով,** «որոնց մեջ ***kʷ** նախ դարձել է **h** և ապա բոլորովին ընկել»[2]: Եթե ***kʷol- > hol** անցման հնչյունական տեղաշարժերը այս ձևակերպմամբ հասկանալի են դառնում, ապա հարց է մնում **h > բ** փոփոխությունը: Կարծում ենք՝ այստեղ գործ ունենք ոչ թե ընդհանուրհայերենյան հնչյունափոխական երևույթի հետ, որովհետև բառը առկա է արևելյան բարբառային տարածքներում, այլ բարբառային: Այստեղից պարզ է դառնում, որ **բուլ** արմատը անմիջական չի բխում հ.-ե. ձևից, բայց և չի զատվում **հոլ** արմատի իմաստային և հնչյունական համապատասխանությունից:

Ստուգաբանական փորձ

Հնդեվրոպական ցեղակից լեզուներում ***kʷol** - արմատից են սանս. **kár-i-tave** «շարժել, քայլել», ավես. **čaraiti** «դառնալ», **čaĥra** «ճախարակ», չեխ. **kolo**, հրսլ. **kolo** «անիվ», հուն. **πόλος,** հին բալկ. **bolti «**շրջանաձև շարժում**»,** անգլ. **wheel** «անիվ», լատ. **colus/-ūs, colus/-ī** «անիվ, պտտվող անիվ» և այլն:

Հավանական է, որ հ.-ե. ***kʷol** - արմատի հունական **πόλος** ձևից անցած հին փոխառություն է **բուլ** բառը, որ պահպանվել է բարբառային տարածքում: Եթե հ.-ե. ***kʷ** հայերենում մեծամասամբ տվել է **ք**, ապա հունարենում տվել է **π**: Հ.-ե. ***kʷol-** բառից հուն. առկա են **πέλω** (>πέλον, έπελον, έπλόμην) «շարժվելը, արագ սլանալը, ուղղվելը, ձգտելը, 2. հայտնվել» իմաստներով[3] բառերը: Այս տարբերակներից հայերենին անցած է **πόλος-πε΄λομαι**[4] բառը՝ «1. եզր, ծայր, 2. շրջանաձև շարժում, շրջապտույտ»[5] իմաստներով, որ հնչյունական և իմաստային առումով համապատասխանում է բարբառախմբի **բուլ-ի > բուլ-դի** ձևերին: Հնարավոր է, որ հունարեն բառի **π**-ն բարբառախմբում **բ** է դարձել ձայնեղացված **դ (<տ)** ետընթաց ազդեցությամբ: Թերևս պարզ է դառնում, որ Ար. Հվր. Ղրդ. Ուր. բարբառներում առկա **բուլի**, որ Սյունիք-Արցախում նշանակում

---

[1] *«Очерки по истории дописьменного периода армянского языка» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը նշում է ***kʷol** - արմատը՝ հղելով Հ. Պեդերսենին (**Джаукян 1967**, с. 107): Այս արմատին են զուգահեռվում նաև հայերենի **եղանիմ > լինել, եղանակ** բառերը:*

[2] ***Աճառյան Հ.,** Լիակատար քերականություն հայոց լեզվի: Համեմատությամբ 562 լեզուների, հատ. VI, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 528:*

[3] *Древнегреческо-русский словарь (Составил **Дворецкий И. Х.**), том II, Москва, 1958, с. 1278.*

[4] ***Frisk Hjalmar,** Griechisches etymologisches Wörterbuch, band 2, Carl Winter, Heidelberg, 1970, s. 577.*

[5] *Հունարենում առկա են նաև «առանցք, երկնակամար, հերկված դաշտ» իմաստները (Древнегреческо-русский словарь (Составил **Дворецкий И. Х.**), том II, м-ft, Москва, 1958, с. 1342):*

է «պոչ», բառի հիմքում նույնպես ընկած է **բուլ** արմատը, այստեղից՝ **բուլ/դ/ի-բուլ/դ/ի անել** գործածվում է «պոչը շրջանակաձև շարժել» իմաստով, ինչպես և՝ «2. խլրտալ, վխտալ, 3. շողոքորթել»: Դժվար է որոշել **πόλος-ωδης** ածանցված տարբերակով անցած լինելը, քանի որ հունարենի **-ω΄δης** (<հ.-ե. ***-od-es**) հայերենում առանձնակի դրսևորումներ է ունեցել՝ **-ուտ, -ուտիկ**[1]: Այնուամենայնիվ, ամրապնդվում է այն տեսակետը, որ **բուլ-դի** բառում **-դի-**ն ածանց է:

Շլդի

Բարբառախմբում **շիլ** և **շեղ (շաղվել || շեղվել)** արմատական տարբերաները առկա են՝ **շիլ** «1. շեղված, ծուռ, 2. ծուռ աչք ունեցող», այստեղից՝ ***շշիլ ըղնել/ինել*** *«1. սխալվել, շփոթվել»,* ***շիլ ը/ինգաւծ*** *«պատահաբար, սխալմամբ»,* **շիլ քիցիլ** «շփոթել, շփոփեցնել», **շիլդի** «ծուռ աչք ունեցող», դարձույթներ՝ **շիլդին քօռան լաւ ա** «պակասավոր, թերի բան ունենալը գերադասելի է չունենալուց»[2], **շիլդի շը/իլօր** «ծաղր.՝ ծուռ աչք ունեցող», **շիլդի շըփօթ** «շիլաշփոթ», **շիլդի/ըբուղի**[3] «իրարանցում, խառնակություն»:

Բնիկ հայերեն այս բառը՝ ***skhel- || *skel-** հ.ե. արմատից[4], փաստորեն, նույնպես կրում է **-դի** ածանցը, որից առաջ է եկել՝ **շըլդըբըլդը/ի (կըտըրել)** «1. անկանոն, անհանգիստ, 2. անընդհատ անկանոն» (անհանգիստ ու անընդհատ պտտվել, շարժումներ անել):

Ղլդի

Ըստ բարբառային տվյալների, կարծում ենք, նույն ածանցը դրսևորվել է **խտիղ** բառի բարբառային տարբերակում՝ **ղըլ-դի** «խուտուտ»[5], այստեղից՝ ***ղըլդի-ղուլդի անել*** *«1. անընդհատ խտղտացնել, 2. շարժման մեջ պահել»,* ***ղըրդըբըրդը քիցիլ, ղըլդըբուլդի քիցել*** *«իրարանցում ստեղծել»: Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ* ***խտիղ*** *բառի հնդեվրոպական նախաձևը* ****kued-*** *«խայթել, ծակել, սրել, մղել»*[6] *արմատն է, որտեղ, ինչպես նկատում ենք,* ***դ[ի]-***ն *արմատի մաս է: Սակայն կարծում ենք՝* ***խտիղ - ղըլդի*** *բառերի նույն հիմքից առաջացած լինելու և նրանցում* ***-տի || -դի*** *ածանցի առկայության օգտին է հայերենի բարբառներում վկայվող* ***խըլվըլալ*** *«անդադար շարժվել» բառը՝* ***խըլ-խըլ-ալ > խըլ-վըլ-ալ****: Այս ամենը ի մի բերելով՝ կարելի է եզրակացնել՝ ա.* ***խտիղ – ղըլդի*** *տարբերակներից մեկը կրել է դրափոխական հնչյունափոխություն՝ հավանական է՝* ***խտիղ > խղտի*** *՝ «մարմաջ, ցանկության գրգիռ», այլև «խտուտ», հմմտ.՝ «Գեղեցկութիւն*

---

[1] *ՀՍԲ, էջ 813:*

[2] *ՂԲԲ, էջ 577:*

[3] *Կարծում ենք՝* ***շիլդըբուղի*** *բառի* ***բուղի*** *արմատը նույն* ***բուլ-դի*** *բառն է. հմմտ.՝* ***շիլդըբալդի կըտրել*** *և* ***բուլդի կտրել*** *հարադրությունները՝ «տեղում պտտվել»:*

[4] *ՀԱԲ, էջ 516-517, ՀՍԲ էջ 587:*

[5] ***Խտիղ-ղլդի*** *բառերի նույն հիմքից լինելու մասին տե՛ս՝ ՀԱԲ II, էջ 428:*

[6] *ՀՍԲ, էջ 353:*

սպիտակութեան նորա խտղտէ զաչս»[1], *բ.* ***խտիղ – ղըլդի*** *բառերի ընդհանուր հիմքը* ****kil-*** *«մղել, քշել, շարժման մեջ դնել» արմատն է, որից հ.-ե. լեզուներում վկայվում են՝ լատ.* ***celer*** *«արագ» և այլն*[2]*:*

Ավարտ

Եվ այսքանից կարելի է եզրակացնել, որ **-դի** ածանցը առաջ է եկել բարբառամբում տարածում գտած **-օտ||-ուտ+ի** ածանցից՝ **-օտի||-ուտի > -տի || -դի**՝ «1. մի բան կրելու, 2. մի բանով օժտված լինելու» իմաստներով, որ պահպանվել է բարբառային հնաբանություններում: Նույն ածանցի գործածությանն ենք հանդիպում **կըլտի || կիլտի** «թլվատ, կակազող, բառը դժվարությամբ արտաբերող» բառում, որտեղ, սակայն, **տ**-ն չի հնչյունափոխվել: **-Ուտի ||-ու > 0 > դ+ի** տարբերակվածությունը, կարծում ենք, ոչ թե հնչյունական ազդեցության արդյունք է, այլ գործ ունենք նախահայերենյան շրջանում առկա բարբառային արխաիկ ձևի հետ[3]: Օրինաչափություն չէ **լ**-ի ազդեցությամբ **տ**-ի ձայնեղացումը, բայց երևույթը, ինչպես նատեցինք, հանդիպում է նաև **ղըլդի, շըլդի** բառերում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Է.Գ.Մարգարյանը:

---

[1] *Աստվածաշունչ Սր 43[20]:*

[2] *Հ.-ե. լեզուներում առկա զուգահեռները կարելի է տեսնել՝* ***Pokorny J.,*** *Indogermanisches etymologisches Wörterbuch, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959, f. 548.*

[3] *Հնարավոր է կարծել, որ արմատական ձայնեղի նախընթաց ազդեցությունից է* ***տ***-*ն դարձել* ***դ****, սակայն նույն դեպքը չի գործում* ***շըլդի*** *բառում:*

ՀՏԴ 82.09

Գրականություն

Անահիտ ԱԹԱՅԱՆ
ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն, բ.գ.թ., պրոֆեսոր
E-mail:

ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԻ ՆՈՐ ՎԵՐԱԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄ

«Վ. Օվյանի վաստակի նոր վերաարժեքավորումը» հոդվածը վերաբերում է բ.գ.թ., դոցենտ Ս.Խաչատրյանի վերջերս հրատարակված «Վազգեն Օվյանի քնարերգությունը» գրքի գնահատմանը: Գիրքը Օվյանի գրական վաստակի գնահատության ու արժեքավորման հետաքրքիր փորձ է, որը վերաբերում է թե՝ Օվյանի անձնավորության, թե՝ գրական վաստակի գնահատմանը: Բանաստեղծական մի շարք ժողովածուների, Օվյանի մասին եղած հոդվածների քննությամբ Ս.Խաչատրյանը բացահայտում է Օվյան բանաստեղծի, երգիծաբանի դերը արցախյան գրականության մեջ:
Հեղինակը ներկայացվում է նրա անձի, անվան ու վաստակի շուրջ ժամանակի անհեթեթ ու անթույլատրելի պայքարի թոհուբոհում, բացահայտվում նրա ազնիվ ու արժանապատիվ կեցվածքն ու մարդկային նկարագիրը: Գիրքը նոր խոսք է օվյանագիտության բնագավառում, հետաքրքիր ու դաստիարակիչ երևույթ՝ գրական հարցերով զբաղվող հանրության համար:
Բանալի բառեր՝ *վերաարժեքավորում, գրական արժեքներ, ազգային զգացումներ, պատմական հայացք, մենագրություն, «Այս Ղարաբաղն է», Արցախի գրական ընտանիք, երգիծաբան, ժամանակակիցներ, պոեզիայի արժեք, անվան ու վաստակի դեմ, գնահատումներ, մնայուն արժեք, գրականագիտական վերլուծություն:*

А. Атаян

НОВАЯ ПЕРЕОЦЕНКА ЗАСЛУГ В. ОВЯНА

Статья «Новая переоценка заслуг В. Овяна» обращена к недавно изданной книге к.ф.н. доцента, С. Хачатряна «Лирика Вазгена Овяна». Книга представляет собой интересный эксперимент по оценке и переосмыслении литературных заслуг Овяна, изучению как личности Овяна, так и его литературных заслуг. Рассматривая ряд поэтических сборников и статей об Овяне, С. Хачатрян раскрывает роль поэта-сатирика Овяна в арцахской литературе.

Автор представлен в гуще нелепой и недопустимой борьбы, связанной с шумихой вокруг его личности, имени и заслуг в свое время, раскрываются его честная, достойная позиция и человеческий облик. Книга - новое слово в области овяноведения, интересное и познавательное явление для литературоведов.

Ключевые слова: *переоценка, литературные ценности, национальные чувства, исторический взгляд, монография, «Это Карабах», литературная семья Арцаха, сатирик, современники, ценность поэзии, против имени и заслуги, оценки, вечные ценности, литературный анализ.*

A. Atayan

A NEW REASSESSMENT OF V. OVYAN'S MERITS

The article "A new reassessment of V. Ovyan's merits" refers to a recently published book by Ph.D. Associate Professor, S. Khachatryan "Vazgen Ovyan's Lyrics". The book is an interesting experiment in evaluating and rethinking Ovyan's literary merits, evaluating both Ovyan's personality and his literary merits. Considering a number of poetry collections and articles about Ovyan, S. Khachatryan reveals the role of the satirical poet Ovyan in Artsakh literature.

The author is presented in the midst of the time absurd and unacceptable struggle linked to his personality, name and merits, his honest, worthy position and human appearance are revealed. The book is a new word in the field of Ovyan's

literature studies, an interesting and informative phenomenon for literary critics.
Key words: *Revaluation, literary values, national feelings, historical view, monograph, "This is Karabakh", literary family of Artsakh, satirist, contemporaries, value of poetry, against name and merit, evaluations, residual value, literary analysis.*

Լույս է տեսել բ.գ.թ., դոցենտ Ս. Խաչատրյանի «Վազգեն Օվյանի քնարերգությունը» գիրքը, որն ազգային անմար զգացումներ և բռնաճնշումից ազատագրվելու հույսեր փայփայող Օվյան մտավորականի պոետական աշխարհի քննությունն է, միաժամանակ նաև հոգու պարտք ու նոր ուսումնասիրություն հայ գրականությամբ հետաքրքրվող դասախոսների, ուսանողների, գրական հանրության համար:

Օվյանի ստեղծագործությունները նոր ժամանակների տեսանկյունից դիտելու անհրաժեշտությունը Ս. Խաչատրյանին ուղղորդեց դեպի հայրենասեր մտավորականի, բանաստեղծի, արձակագրի ստեղծագործության քննությանը (դեռևս ոչ ամբողջական):

Գրքի գրախոս և խմբագիր գրականագետ Դավիթ Գասպարյանը գրում է, որ վերջին տարիներին Արցախի մամուլում լայն բանավեճ ծավալվեց Վ. Օվյանի գրական ժառանգության վերաարժեքավորման ուղղությամբ: Բանավեճը սրվեց: Տպագրվեցին նաև գրողի դեմ ուղղված քննադատական կարծիքներ…

Ս. Խաչատրյանի կատարած աշխատանքը վկայում է Օվյան գրողի, մտավորականի վաստակի գնահատման պատիվն ու արժապատվությունը բացահայտելու նրա նպատակն ու հավատամքը:

Ս. Խաչատրյանի՝ Վ. Օվյանի պոեզիայի քննությանը նվիրված գրքում բազմաթիվ փակագծեր բացող վկայություններ են Օվյանի անձնավորության, քաղաքացիական կեցվածքի, գրական վաստակի, պատվի ու պատասխանատվության, հայրենասեր կերպարի մասին:

Քննելով նաև Օվյանի դեմ միտումնավոր գրոհների ակունքներն ու պատճառները՝ մի շարք էջերում հեղինակը բնութագրում է Օվյան մտավորականին, դիտում նրա վաստակը՝ համոզված, որ գրողին գնահատելու լավագույն ձևը նրան ճիշտ ներկայացնելն է: Գրականագիտական պատասխանատվությամբ է Ս. Խաչատրյանը քննում

Օվյանի պոեզիան: Բնականաբար ճիշտ է գրականագետ Դ. Գասպարյանը. «Մենագրությունն ավելի կշահի, եթե Օվյանը երևա իր գրական ու պատմական ժամանակի մեջ, նաև՝ ժամանակի հայ գրականության անդրադարձներով (Հովի. Շիրազ, Հ. Սահյան, Պ. Սևակ և ուրիշներ…)[1]»: Պարտավորեցնող պահանջ՝ առաջիկայում լրացնելու համար օվյանական ուսումնասիրությունները, որոնք խիստ արդիական են ու անհրաժեշտ ծանր կացության մեջ գտնվող մեր ժողովրդին, այսօրվա երիտասարդությանը. «Այսօրվա ժամանակը, նաև գրականությունը, ընդհանրապես արվեստին նոր պահանջներ է ներկայացնում՝ ինքնուրույն երկիրը նաև աշխարհին տալու բան պիտի ունենա և ոչ թե, ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում, բավարարվի իր տեղական սնափառությամբ»: Գնահատելով Ս. Խաչատրյանի կատարած աշխատանքը՝ գրականագետը նշում է. «Ոսկին հանքաքարից զատելու գործընթացի ճանապարհի հաջող քայլերից մեկը, ահա, Ս. Խաչատրյանի «Վազգեն Օվյանի քնարերգությունը» մենագրությունն է»: Վ.Օվյանի պայծառ հիշատակը այսօր պիտի խնկարկվի, իսկ նրա ստեղծած գեղարվեստական արժեքները պիտի ավանդվեն սերնդեսերունդ: Ս. Խաչատրյանը հենց Օվյանի անունը խնկարկողներից է, քանզի բազմաժանր հեղինակն այն գրողներից է, որի ոչ միայն երկերով, այլ կենսագրությամբ, մարդկային վսեմ նկարագրով սերունդներ են դաստիարակվում: Գրականագիտությունը, հիրավի պարտք է Օվյան: Նրա թողած հարուստ գրական ժառանգության թերևս խորքային բացահայտման առաջին փորձն է Ս. Խաչատրյանի աշխատությունը:

Գիրքը հետաքրքիր ուսումնասիրություն է՝ բացահայտելու արցախյան գրականության այսպես կոչված՝ «փակ էջերից մեկը»: Աշխատությունը դեռևս շարունակվելու կարիք ունի, քանի որ յուրաքանչյուր վերնագիր ունի կախման կետեր, ասել է թե՝ չբացահայտված տողեր, նոր ասելիք՝ համահունչ դարի և ժամանակի պահանջներին:

Ակնարկային բնույթ ունի հեղինակի՝ Վ. Օվյանի կենսագրության մասին Ս. Խաչատրյանի բազմախոս բնութագիրը, ուր տեսնում ենք Օվյան հեղինակի բանաստեղծական, հրապարակախոսական, երգիծական անուրանալի քանքարը, մարդ կոչման արժանապատիվ կրողի քաղաքացիական դիրքորոշումը: Ս. Խաչատրյանի բնութագրումներում Օվյանը նախանձելի եռանդով, պատասխանատվությամբ օժտված արհեստավարժ հեղինակ է, Արցախի գրական անդաստանի այն հազվագյուտ անդամներից, ով չերկնչելով ժամանակի ակնհայտ ճնշող կապանքներից ու լռեցնող մտրակներից, կարողացավ գրականությունը

---

[1] ***Խաչատարյան Ս.***, *Վազգեն Օվյանի քնարերգությունը , ԱրՊՀ, 2022, էջ 5:*
Բոլոր մեջբերումները քաղված են նշված գրքից (հղումները հաջորդիվ տեսնել տեքստում):

ծառայեցնել ժողովրդին՝ երբեք չհաճոյանալով ժամանակի «հզորներին» ու տիրողներին: «Իսկական ընտրյալ, ում «դեպի ընթերցողի սիրտը տանող ճանապարհը ազնվությունն է, նրա կերտած տողի շիտակությունը»» (էջ 27),- գրում է Ս. Խաչատրյանը:

Կենսագրական համառոտ ակնարկից հետո Ս. Խաչատրյանը վերլուծում է Օվյանի «Լեռների լեգենդը», «Այս Ղարաբաղն է», «Կապույտ հուշեր» շարքերը՝ ընդգծելով Օվյան բանաստեղծի բանարվեստի ստեղծագործական հմայքը, հայրենի եզերքի հանդեպ ունեցած սերն ու նվիրվածությունը: Մեր, որ գալիս է արցախցի տատ ու պապից, թթենու հրաշք ծառից, նրա անմահական պտուղներից, Մռավ սարից, Թարթառ գետից, բազում պատմական հուշարձաններից: Հայրենիքի, ժողովրդի պատմությունն է կերտում Օվյանը՝ կենտրոնում տեսնելով մայր հայրենիքից զատված Արցախը՝ «սուրբ նշխարը շան բերանում»:

Հետաքրքիր ընդհանրացումներով է գրականագետը վերլուծում բանաստեղծական շարքերը, բացահայտում Օվյան բանաստեղծի սերն Արցախի հանդեպ, ինչպես նաև նրա ահազանգը՝ հայրենի հողի վրա ապրելու, գոյատևելու խորհուրդն ու պատգամը: «Այս Ղարաբաղն է» ստեղծագործությունը Ս. Խաչատրյանը իրավացիորեն համարում է Արցախի «Ես իմ անուշ Հայաստանին», որը կարելի է նաև վեպ անվանել, որում խտացված են Արցախի պատմության հերոսական դրվագները: «Այս անզուգական քերթվածքի յուրաքանչյուր տողը մի սպառազեն զինվոր է և հայրենիքը շենացնող պատվախնդիր արհեստավոր, հոգևոր գանձեր երկնող ոսկեդարի գրիչ, չքնաղ եզերքով սքանչացած տաղանդաշատ նկարիչ, «վասն քծնանքի» տաղեր թխող խղճուկ ոտանավորչիներին խարազանող արվեստագետ և դարավոր թշնամու նենգության մասին աղաղկող Ձենով Օհան»,- գրում է Ս. Խաչատրյանը: Հեղինակը երկը դիտում է 1979 թվականի ազատագրական պայքարի նախերգանքի ժամանակաշրջանում, համազգային շարժումից 10 տարի առաջ, երբ իր սերնդակիցները հաճոյանում են Բաքվի դրածոների առաջ և աչք փակում իրականացվող հակահայկական հրեշավոր քաղաքականության ու գործողությունների հանդեպ: Երկը հեղինակը դիտում է որպես նվիրյալ որդու ծնրադիր սիրո ծես, որպես կեղեքող վշտի ճիչ, որպես բողոքի ու ցասման ոգեղեն լավա և որ ամենակարևորն է՝ զգաստության կոչող զանգ, «որի ղողանջները թեև խորհրդային գրաքննության պատճառով լռեցվել են գրողի ապրած ժամանակաշրջանում, սակայն այսօր հնչում են բարձր ու խրոխտ՝ տարածվելով հայրենի եզերքում և նրանից դուրս՝ ազգային արժանապատվության և հայրենասիրության սրբազան հուրը բորբոքելով թե՛ ներսում, և թե՛ դրսում (էջ 30)»:

Մանրամասն վերլուծելով երկը՝ հեղինակը «Այս Ղարաբաղն է» տողը վերնագիր է համարում յուրաքանչյուր գլխի համար, քանի որ երկը կարելի է ըստ արծարծվող խնդիրների բաժանել մասերի ու ներկայացնել որպես առանձին բանաստեղծություն: Հետաքրքիր վերլուծությունները, տեղին զուգահեռները վկայում են հեղինակի՝ պոեզիայի զգացողությունը, պատմական ժամանակաշրջանի էության ճշմարտացի դիտումը, պատմության և արդիականության կապի վերհանումը: «Այս Ղարաբաղն է» ասքը բարձրաթռիչ ստեղծագործություն է և կատարում է իր ազգաշահ առաքելությունը»» (էջ 34),- գրում է Ս. Խաչատրյանը՝ գաղափարագեղարվեստական արժանի վերլուծության ենթարկելով ստեղծագործությունը, այն համարելով արցախյան գրականության մեջ նմանը գոյություն չունեցող ասք: «Երբ բանաստեղծական խոսքն անկեղծ է և հուզառատ, հստակ է և համարձակ, անվրեպ հասնում է լսարանին և կատարում իր առաքելությունը՝ հայրենասիրության և ազգային արժանապատվության գիտակցության փրկարար լույսը վառում մարդկանց աչքերում» (էջ 34), - կարդում ենք Ս. Խաչատրյանի գրքում: «Կապույտ հուշեր» շարքի վերլուծությունն ապացուցում է Օվյանի բանաստեղծական քանքարի կարևոր առանձնահատկություններից մեկը՝ դասական պոեզիային առաջադրվող պահանջները բավարարելու հատկանիշը: Այս շարքի վերլուծությունները բացահայտում են Վ. Օվյանի պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունը, նրա բառաստեղծման արվեստը: «Ցուցադրական ու արհեստական անհոգի տող չունի Վ. Օվյանը»,- հավաստում է գրականագետը՝ բերելով համապատասխան ապացույց-տողեր:

Շարքի բանաստեղծություններում Օվյանը նզովում է միջուկային աղետը, թանձր գույնով վրձնում որդեկորույս մայրերի, անայր մնացած կանանց, որբացած մանուկների մորմոքը: Որոշակի խոսք կա նաև գյուղը պատկերող տողերի մասին, ուր հեղինակը բացահայտում է Հ. Սահյան- Վ. Օվյան միջտողայնությունը:

Հետաքրքիր ընդհանրացում ունի «Սիրո տարիներ» շարքի վերլուծությունը՝ որպես արցախյան ավանդապահությամբ, դարերով սրբագործված հայկական բարոյական վսեմ արժանիքներով՝ առաքինությամբ ու պարկեշտությամբ ընթերցողին հմայող սիրային ստեղծագործություններ:

«Հավատարմությունն է բանաստեղծի ուզածը, որը մեծ սիրո առաջին ու միակ երաշխիքն է»: Հաջորդ՝ «Հասուն տարի» շարքի վերլուծություններում Օվյան՝ կես դարը բոլորած հասուն այրն է, որն անտարբեր չէ դարի տարուբերումներին, հայրենի եզերքի ցավին: Դա է ճշմարիտ գրողի կոչումը,

մարդու խիղճը հանգիստ է, երբ հայրենիքին պարտք ունի տալու: Ճշմարիտ մտավորականն իր բանաստեղծական կեցվածքով կատարում է իր պարտքը: Ս. Խաչատրյանը բերում է տողեր, որտեղ տեսնում ենք հայրենի եզերքի ճակատագրով մտահոգ քաղաքացուն, որն իր սուր գրչով ծաղրել է «սուտ ճամարտակողներին»:

Հեշտ չէր հոսանքին հակառակ գնալը: «Հայրենադավ իշխողների ստրկամիտ պահվածքի պատճառով հարազատ բնաշխարհից վտարվեցին նույն այդ բնաշխարհի ճակատագրի համար այրվող մտավորականները՝ Բագրատ Ուլուբաբյանը, Ժան Անդրյանը, Բոգդան Ջանյանը և ուրիշներ»:

Օվյանի գրիչը չէր կարող կաշառվել. «Ազնվազարմ բանաստեղծը, անխաթար պահելով իր մարդկային նկարագիրը, փորձում է ծիծաղի զգաստացնող հաբով կասեցնել մարդկայինի կորուստը, որը հավասարազոր է բարոյականության կորստին»,- գրում է Խաչատրյանը (էջ 46): Որպես ապացույց՝ թռուցիկ վերլուծված են 18 ութնյակներ, որոնց մեջ փիլիսոփայական խտացումներ կան: Հրաշալի մեկնաբանություններ են «Պատմության դասին», «Մենախոսություններ» շարքի վերլուծությունները: Հետաքրքիր ընդհանրացումներով Ս. Խաչատրյանը վեր է հանում Օվյանի գրականագիտական հայացքները, որոնք շերտ առ շերտ բացվում են շարքի «Բանաստեղծները» գործում: Ո՞վ է բանաստեղծը, որն է նրա վսեմագույն կոչումը: «Տաղանդները «ծառեր են՝ կանգնած մայր հողի վրա»: Ճշմարիտ բանաստեղծը Հովհաննես Թումանյանն է, որը ծնվում է յուրաքանչյուր սերնդի հետ: Ներքին մի հյուսվածք կա Թումանյան-Օվյան կապի բացահայտման մեջ: Նրբահյուս, պայծառ երգեր գրելու կոչ է անում Օվյանը գրչընկերներին՝ հիշեցնելով.

Մեծությունը չափվում է ոչ թե սոսկ ապրած կյանքով,
Այլ՝ ապրած կյանքի վսեմ խոյանքով:

Բանաստեղծը կոչված է խոսքի ուժով պայքարելու ընդդեմ կեղծիքի ու մորթապաշտության,- ընդհանրացնում է գրականագետը և մի շարք բանաստեղծությունների վերլուծությամբ բացահայտում Օվյանի գրական բարձր ճաշակը՝ քննելով 70 տարիների ընթացքում Ադրբեջանի կազմի մեջ գտնվող Արցախի ողբերգական պատմությունը՝ շեշտելով բանաստեղծի քնարական հերոսի և Օվյան մարդու մարդկային նկարագրի միջև անկրկնելի ներդաշնակությունը:

Վերլուծված են շարքի «Լեգենդ Ադամի մասին», «Լեգենդ խանդի մասին» բանաստեղծությունները, որոնք հեղինակի համար աշխարհայացքային, սյուժետային գործեր են, որոնց կարելի է անդրադառնալ հետագայում՝ որպես խոհափիլիսոփայական երկեր:

«Լեռների լեգենդը» գրքի «Մենախոսություններ» շարքը հայ ժողովրդի պատմությունն է՝ ձևի ու բովանդակության ներդաշնակությամբ փայլող պատմական թեմատիկային առնչվող երկեր: Հետաքրքիր զուգահեռներով (Օվյան-Շիրազ) Ս. Խաչատրյանը շեշտում է հեղինակի շիրազասիրությունը, Շիրազ մարդուն և բանաստեղծին ճիշտ գնահատումը: «Ինքն էլ Հայաստանից հանիրավի խլված պատմական Հայաստանի 10-րդ նահանգի՝ Արցախի Շիրազն է, ում երգը երբեք չկարողացան կաշառել» (էջ 61),- գրում է գրականագետը:

Մարկոսի կերպարը ունի մեկ կարևոր եզրահանգում. մարդու մասին չի կարելի դատել ըստ երեսանց ասած մի քանի խոսքերի կամ պատահական արարքների: Իրականում հոգու ավազանի խորքերում կարող են պահվել այնպիսի զգացմունքներ ու ալեկոծումներ, որոնք դրսևորվում են միայն այն ժամանակ, երբ մարդը հասնում է «ամենաբարձր վայրկյանին», որը, ըստ Հատտեճյանի, ծայրահեղ իրավիճակն է: Այս պարագայում է Մարկոսը մարդկայնորեն զգում անդամալույծ մարդու տառապանքը՝ չքայլելու, հիվանդանոցը երբեք չլքելու անխուսափելի ճակատագիրի ծանրությունը. Մարկոսը պարզապես մարդկայնորեն ապրումակցում է ծերունուն, ասում այն, ինչ սրտանց ցանկանում է՝ միաժամանակ գիտակցելով, որ դա անհնար է. «Դուն ալ Աստուծմով ժամ առաջ կ՚ելլես, ախպա՛ր»[2]:

Ինչպես տեսանք, Ռ. Հատտեճյանի արձակի գեղագիտական առանձնահատկություններից է ժամանակային տարբեր հարթակներում կատարված կամ կատարվող իրադարձությունների ներհյուսումը, նրանց միջև ընդհանրությունների որոնումն ու հոգեբանական մանրամասնություններով վերլուծելն ու մեկնաբանելը:

Իրականությունն ու վերհուշը փոխկապակցելու նույն մտահղացմամբ է պատկերված Արամիկի և տիկին Ալիսի՝ ծերունու հիվանդասենյակում հայտնվելու դրվագը: Օտար կնոջ ներկայությունը, մանավանդ նույն սենյակում գիշերելը ծերունուն դրդում են վերհիշելու իր կնոջը՝ Վերժինին, նրա հետ անցկացրած երանելի օրերը, վերապրելու նրան կորցնելու անդառնալի ցավն ու ափսոսանքը:

---

[1] ***Հատտէճեան Ռ.,*** *Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006, էջ 58:*

[2] ***Հատտէճեան Ռ.****., Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006 , էջ 72:*

Ռ. Հատտեճյանը՝ որպես հոգեբան գրող, քննության է առնում սեռային զգացողությունների և տանջող հուշերի միախառնումից ծնված տղամարդու թաքուն տագնապները, հոգեկան հակասություններն ու համակերպումները:

«Ռոպէր Հատտէճեանի գլխաւոր ցանկութիւնը հաշմուած, ֆիզիկապէս խեղուած անձնաւորութեան մէջ մարդկային լիարժէք յոյզերի ամբողջութիւնը պաշտպանելն է»[1],- նկատել է Ս. Դանիելյանը:

Բնական ու հոգեբանորեն իրատեսական են ծերունու՝ տիկին Ալիսի կողմից ուշադրության արժանանալու ձգտումը, միայնակ կնոջը արժանապատվորեն օգտակար լինելու, նրան ինչ-որ ձևով սփոփելու տղամարդկային կեցվածքը: Սակայն ծերունի-տիկին Ալիս փոխհարաբերության մեջ նույնքան իրատեսական է, որ կնոջ վերաբերմունքը խղճահարությունից այն կողմ չի անցնում. տիկին Ալիսի անհանգստությունները կապված են միմիայն իր որդու առողջության մասին մտածմունքներին: Նա չի էլ նկատում տղամարդու գնահատող հայացքը և չի մտածում, որ ինքը կարող է հուզել ու հետաքրքրել նրան:

Դիպվածային պահերին առնչվող հույզերի, մտածումների արտահայտությունները, սեռի փիլիսոփայության եզրահանգումները, անցյալի պատկերների և իրական դեպքերի համադրումը հոգեբան գրողի գրչի տակ ձեռք են բերել յուրօրինակ գունավորում, որը լրացնում-ամբողջացնում է հերոսներից յուրաքանչյուրի ապրումը:

«Առաստաղին միւս կողմը» հատորում Ռ. Հատտեճյանը Սաթենիկի մտածումների սահմաններում դարձյալ անդրադառնում է սեռերի փոխհարաբերությունների խնդրին, սակայն այս անգամ՝ լրիվ տարբեր տեսանկյունից: Այս անգամ կնոջ վիրավորված ինքնասիրության ընդվզումն ու բողոքն է, որ հեղինակը քննում է անձի անհատական հոգեբանության, բարոյականության և ինքնագնահատման տեսանկյունից:

Որպես էկզիստենցիալիստ գրող՝ Ռ. Հատտեճյանը թերևս առաջնորդվում է այն սկզբունքով, որ ծայրահեղ իրավիճակներում է մարդն իրեն դրսևորում իր էությունից բխող ամենաճիշտ պահվածքով ու երևույթով: Այս դեպքում ծայրահեղը լքված լինելու զգացողությունն է, այդքան տարիների նվիրումի արհամարհվելը, հասարակական դիրքի ու արժանապատվության վտանգումը և, ամենացավալին, կանացի խոցված ինքնասիրությունը: Սաթենիկը մտածության տագնապներով անցնում է անքուն գիշերների, արցունքների, տառապանքի ու մենության միջով: Մարդկային հոգու ծալքերը կատարելապես ճանաչող գրողի անփոփոխ տեսակետն այն է, որ յուրաքանչյուր անհատ ինքնուրույն պետք է դժվար իրավիճակից լուծում ու

---

[1] ***Դանիէլեան Ս.*** *, Ռոպէր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996, էջ 119:*

ելք գտնի՝ ապավինելով միմիայն իր վերլուծումներին ու եզրահանգումներին:

Ամուսնու՝ Հակոբի դավաճանությունն ու արհամարհանքը չհանդուրժելու և իրենց միջև խզումը հաղթահարելու անվերապահ որոշումը Սաթենիկի համար արժանապատվության ու ինքնահաստատման հարց էր, և այդ ժամանակահատվածում մենության ու տառապանքի մեջ, մտածումի բավիղներում հեղինակային մտահղացման ինքնատիպ հոգեբանական հնարանքով Սաթենիկը ինքնիրեն առաջադրում է բազում հարցեր, որոնց պատասխանները երբեք միակողմանի, վերջնական ու հաստատուն չէին կարող լինել: Այդ հարցերը վերաբերում են իր՝Սաթենիկի կնոջական հմայքին ու հրապույրներին, տղամարդկանց գրավելու արտաքին շնորհներին ու գեղեցկությանը, մանավանդ ցանկալի դիտվելու ու մատչելի լինելու տարբերությանը: «Իրականութիւնն այն էր, թէ ոչ մէկը փորձեց մօտենալ ինձի: Եւ ասիկա կրնար տառապեցնել զիս, եթէ չգիտնայի, որ այրերուն կողմէ ցուցաբերուած այդ անտարբերութեան պատճառը ես էի...Ես ամէն ինչովս արդէն կը պոռայի՝ «Ինձի չէք կրնար մօտենալ, չըլլայ, որ փորձէք»»[1],- խորհում է Սաթենիկը:

Կնոջ մտածողության մեջ սա մի յուրօրինակ խաղ է, ինքնագնահատման ու ինքնարժեզրման վարժանք. «Եվ այս նպատակիս մէջ բնաւ յետին միտք չկար: Ես պարզապէս կ՝ուզէի հայելի մը տեսնել այրերուն աչքերուն մէջ: Այս հայելին նայիլ ու հասկնալ՝ գեղեցիկ եմ, թէ ոչ, ցանկալի՞, թէ ոչ»[2]:

Ռ. Հատտեճյանը պեղում է կնոջ հոգու ամենանվիրական խորքերը՝ ի հայտ բերելով սեռի զգացողության և բարոյականության ծայրահեղ բևեռների միջև տատանվող երկմտանքը, ինքնաճանաչման ու ինքնադրսևորման կարելիություններն ու հնարավորությունները:

Ի մի բերելով կնոջական երջանկության բոլոր անհրաժեշտությունները՝ Հատտեճյանը հանգում է ամենակարևորին. «Միայն սէ՛րն է, որ կնոջը պիտի օգնէ, որպէսզի ան ինքզինքը լաւ զգայ, ինքզինքը զգայ որպէս գեղեցիկ սեռի ներկայացուցիչ: Սէրը, որ կուգայ դիմացէն ու կը տաքցնէ սիրտը»[3]:

Ռ. Հատտեճյանի խորաթափանց հայացքը չէր կարող անտեսել մարդկային և հասարակական հարաբերություններում բարոյահոգեբանական խնդիրների կարևորությունը:

Ծերունու հարաբերությունները իր հոր և դստեր՝ Սաթենիկի հետ նույն հոգեբանական գծերով են բնորոշվում, տարբերությունը միայն ձևի և ներապրումի նկարագրության մեջ է: Քննության առնենք հրաժեշտի

---

[1] ***Հատտէճեան Ռ.,*** *Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006, էջ 350:*

[2] *Նույն տեղում, էջ 350:*

[3] *Նույն տեղում, էջ 202:*

պահերը, երբ մահացավ հայրը, և երբ Կանադա էր մեկնում Սաթենիկը: Երկու դեպքում էլ նա՝ ծերունին, մերժեց հրաժեշտի պահի տառապանքը, չուզեց տեսնել ու հիշել հատկապես այդ երկու բաժանումները սիրելի մարդկանցից:

«Երբ հասկացայ, որ հայրս մեռած էր, սենեակէն դուրս ելայ եւ անգամ մըն ալ քովը չգացի...Չէի՞ կրնար շոյել մազերը, քանի մը խօսք ընել միտքէս՝ ուղղակի նայելով անոր հանդարտ դէմքին եւ զայն քանդակելով երեւակայութեանս մէջ ամբողջ մանրամասնութեամբ: Չկրցա՛յ»[1],- վերհիշում է ծերունին իր հրաժեշտը հորը, որը հանգավ որպես գավառից մնացած միակ լապտեր:

«...Գլուխը դէպի պատը դարձուց՝ առանց սպասելու, որ մենք սենեակէն դուրս ելլենք.... ու չտեսաւ սենեակէն մեր դուրս ելլելը: Չուզեց տեսնել: Մերժեց տեսնել»,-այսպես է հիշում Սաթենիկը հորը հրաժեշտի պահին:

Ծերունին անցյալն ու ապագան կապող կամուրջն է, մարդկային լավատեսության խորհրդանիշը: Նա հավասարապես մերժում է և՛ անցյալի, և՛ ներկայի ցավոտ պահերը: Իր ամբողջ կյանքում նա կարևորում է ապրելը՝ անկախ հանգամանքներից: Ամենահուսահատ պահին անգամ խեղված ու բոլորից լքված՝ իր էության մեջ ուժ է գտնում և հույսով լի նայում առաջ՝ խոսելով ապրելո՛ւ դատապարտվածության մասին:

Անհուն երևակայությամբ, սիրով ու կամքով՝ հիվանդ ծերունին անձուկ ու տխուր հիվանդասենյակում տեղավորել էր մի ամբողջ աշխարհ՝ առաստաղին արտացոլվող սիրելի պատկերներով, մտածումներով ու նրանց հետ կապված անմոռանալի դեպքերով առլեցուն, և ձեռք բերել փոքրիկ մի երջանկություն, որ միայն իրենն էր և իր համար էր տեսանելի ու շոշափելի, քանզի իր երևակայության ու մտորումների արդյունքում էր ծնվել այդ երջանկությունը:

«Մեր դարը սպաննեց այդ երջանկությունը»[2],-ցավով արձանագրում է Ռ. Հատտեճյանը: Իրարահաջորդ ազգակործան աղետները՝ տեղահանությունն ու ջարդը, պատերազմն ու արտագաղթը, անխղճորեն խեղում են սերունդների ճակատագրերը, ու ավերում բոլոր երազանքները, խառնում ընտանեկան խմբանկարները, այն բոլոր փոքրիկ ու փխրուն ուրախությունները, որ ապրեցնում են մարդկանց:

Երջանկության հատտեճյանական ձևակերպումը պարունակում է ոչ միայն երևակայություն, կամք, սեր, պայքար, այլ նաև՝ հող, տարածություն, հայրենիք, որ պետք է սնուցի մյուս բոլոր անհրաժեշտությունները: Այս պարագայում անձնական «ես» այլևս չկա, կա ընդհանրական «ես»-ը, որը

---

[1] *Նույն տեղում, էջ 36:*

[2] *Նույն տեղում, էջ 267:*

խճանկարի պես է, գոյատևել չի կարող և ոչ մի իմաստ չի արտահայտում, քանի դեռ բոլոր խիճերը իրենց տեղերում չեն:

Ծերունու և Սաթենիկի կերպարները խորհրդանշում են դարի աղետներին դիմակայող ողջ մարդկությունը, որ փորձում է երջանիկ լինել, ինչքան էլ հաշմված ու տկար, լքված ու հուսահատ լինի: «Մենք դատապարտուած ենք ապրելու»»[1],- հոր սահմանած ապրելու բանաձևը հաստատում է Սաթենիկը:

Վիպական պատումի անցյալի և ներկայի ներթափանցումներում և մտածումի շերտերում աստիճանաբար ուրվագծվում է Սաթենիկի որդու՝ Ռուբիկի կերպարը՝ իբրև ապագայի մարմնացում: Նա ընդհանրացնում է Սփյուռքի այն սերունդը, որը դեռևս կապված է իր արմատներին հիշողությամբ ու պատասխանատվությամբ: Սակայն նրանից է սկսվում անդառնալի օտարացումը՝ «բանիւ եւ գործով»:

Ծերունու և Սաթենիկի գիծը շարունակողն է Ռուբիկը, որի մտապատկերում որպես մարդկային խղճի դեմ կատարված ամենամեծ հանցանք ընդմիշտ դրոշմվել էր «Կանադա» բառը, որ իր միամիտ երեխայական շուրթերից հնչեց ու ավերեց սիրով ու հույսով կառուցված մի ամբողջ աշխարհ: Եվ ծերունու համար փրկությունը դարձյալ առաստաղն էր, նրան փարված իր մտածումն ու երևակայությունը: Այս դեպքում հատտեճյանական աբսուրդը իր խորքում մարդասիրական է, և հույսի որոնումը առաստաղի խորքերում անգամ երբեք անարդյունք ու իզուր չէ, որովհետև, ըստ գրողի, մարդու միտքը կարող է շնչավորել շրջապատի սովորական առարկաները և նրանք վերածել ապրեցնող ու «զրուցող» պատվարների և պաստառների:

Գրականություն

1. **Հատտէճեան Ռ.**, Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006թ.:
2. **Հատտէճեան Ռ.**, Յուշատետր 47, Առագաստ դէպի բանաստեղծութիւն, Իսթանպուլ, 2000թ.:
3. **Հատտէճեան Ռ.**, Յուշատետր 39, Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ, Իսթանպուլ, 2000թ.:
4. **Հատտէճեան Ռ.** գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին, Իսթանպուլ, 1987թ.:
5. **Դանիէլեան Ս.** , Ռոպեր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996թ.:

[1] *Նույն տեղում, էջ 391:*

6. **Շառոյեան Լ.** Յաւերժօրէն սիրելի «Մերին Պոլիսը», Իսթանպուլ, 2003թ.:
7. **Այթմատով Չ.**, Եվ դարից երկար ձգվում է օրը, Երևան, 1983թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը։

ՀՏԴ 81`04

Հայոց լեզու

Նռանե ՍԱՐԳՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ
E-mail: nranesargsyan@gmail.com

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Հոդվածում քննվում են անցյալ կատարյալ ժամանակաձևի խոնարհման համակարգում միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի միջև եղած առնչությունները, կատարված փոփոխությունները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայերենում առկա իրողությունները հիմնականում վկայվում են միջին հայերենում: Նշվում է, որ միջին հայերենը պահպանել, ապա արևմտահայերենին է փոխանցել անցյալ կատարյալի հիմքի կազմության գրաբարյան սկզբունքները: Այս շրջանում փոփոխություններ են կատարվել բայահիմքի ածանցներում: Առաջացած նոր ձևերը փոխանցվել են արևմտահայերենին:

Միջին հայերենի շրջանում վերացել են ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակումները, կրավորական իմաստի արտահայտման համար առաջ է եկել ***ու/վ*** *մասնիկը: Փոխվել են նաև խոնարհման վերջավորությունները: Ներգործաձև խոնարհման բայերի եզակի երկրորդ դեմքի* ***–եր*** *վերջավորությունը դարձել է* ***–իր****, եզակի երրորդ դեմքի* ***–եաց*** *վերջավորությունը՝ եց: Հոգնակի առաջին դեմքի կրավորաձև և ներգործաձև խոնարհումների աք վերջավորությունը փոխվել է անք-ի կրավորաձև խոնարհման համար, և ինք-ի՝ ներգործաձև խոնարհման համար: Հոգնակի երկրորդ դեմքի համար ամրակայվել է –իք վերջավորությունը:*

Անցյալ կատարյալ ժամանակաձևը գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում իմաստային նույն դրսևորումներն ունի: Այն արտահայտում է առանց տևականության կատարված, ավարտված գործողություն, որին պատմողը ականատես է եղել: Իմաստային այս հատկանիշներով հակադրվում է ***անկատար անցյալ*** *և* ***վաղակատար անցյալ*** *ժամանակաձևերին:*

Բանալի բառեր՝ *անցյալ կատարյալ, բայահիմք, վերջավորություն, փոխանցումներ, խոնարհում, արևմտահայերեն, միջին հայերեն:*

Н.Саргсян

СВЯЗИ СРЕДНЕАРМЯНСКОГО И ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКОВ В СИСТЕМЕ ИЗЪЯВИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ: ПРОШЕДШЕЕ СОВЕРШЕННОЕ

В статье рассматриваются связи, а также изменения, внесенные между среднеармянской и западноармянской языковыми системами в системе склонения прошедшего совершенного времени. Исследование показывает, что событии западноармянского языка в основном совпадают со средним армянским. Отмечается, что средний армянский язык сохранил, а затем передал западноармянскому Грабарские принципы образованыи основы прошедшего совершенного. В этот период были внесены изменения в аффиксов глагола. Возникшие новые формы были переданы западноармянскому языку.

В среднеармянском языке различия между активной и пассивной формами спряжения исчезли, появилась частица ու/վ, выражающая пассивное значение. Окончания спряжения глаголов также были изменены. Окончание –եր для глаголов спряжения активной формы единственного числа второй формы становится–իր, для третьей формы окончание -է ազ становится –եց. Окончание глаголов множественного числа первой формы -աք для активных и пассивных форм спряжения становится –անք для пассивной формы и - ինք для активной формы. Окончание –իք исправлено для второй формы множественного числа для активного соединения.

Прошедшее совершенное время имеет одинаковые семантические проявления в грабарском, среднеармянском и западноармянском языках. Оно выражает совершенное, законченное действие без какой-либо продолжительности,

свидетелем которого был рассказчик. Эти семантические характеристики противопоставляют прошедшее совершенное прошедшему несовершенному и плюсквамперфекту.

Ключевые слова: *прошедшее совершенное, окончание, связи, наклонения, западноармянский язык, средний армянский язык.*

N.Sargsyan

MIDDLE ARMENIAN-WESTERN ARMENIAN TRANSITIONS IN INDICATIVE MODE: PAST PERFECT

The article discusses the connections, also changes made between the Middle Armenian and Western Armenian language systems in the conjigation system of the past perfect tense. The study shows that the facts of the Western Armenian language are mainly confirmed in the Middle Armenian. It is noted that the Middle Armenian language preserved and then transited to the Western Armenian the Grabar principles of composition bases of the past perfect. During this period, changes were made to the affixes of verbs. The new forms were transited to the Western Armenian language.

In the Middle Armenian language, the differences between the active and passive conjugation forms were extincted, the particle ու/վ appeared to express the passive meaning. The endings of verb conjugation also were changed. The ending –էր for active form conjugation verbs singular second form becomes –իր, for the third form the ending –էաց becomes –էց. The verbs plural first form ending –աք for active and passive conjugation forms becomes -անք for passive form and -ինք for active form. The ending –իք fixed for plural second form for active conjucation.

The past perfect tense has the same semantic manifestations in Grabar, Middle Armenian and Western Armenian. It expresses a perfect, finished action with out duration, which the narrator witnessed. These semantic characteristics contrast the past perfect to the past tenses.

Key words: *past perfect, ending, transitions, conjugation, Middle Armenian, Western Armenian.*

Անցյալ կատարյալ ժամանակաձևը հայերենի թերևս ամենաուսումնասիրված ժամանակաձևերից է՝ համաժամանակյա, այնպես էլ տարաժամանակյա հայեցակետերով: Դիտարկվել են անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սկզբունքներին, իմաստային առանձնահատկություններին, կրած փոփոխություններին առնչվող հարցեր:

Պետք է նշել, սակայն, որ լեզվի՝ *գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն* զարգացման համակարգում *միջին հայերեն-արևմտահայերեն* փոխանցումների դիտանկյունից անցյալ կատարյալ ժամանակաձևը կարոտ է նոր ուսումնասիրության: Հատկապես որ արևմտահայերենը շատ իրողություններ վերցրել է միջին հայերենից՝ դառնալով միջին հայերենի անմիջական ժառանգորդը:

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի քննությունը *միջին հայերեն-արևմտահայերեն* փոխանցումների համակարգում միտված է առկա ընդհանրությունների վերհանմանը:

Հիմքի կազմությունը: Արևմտահայերենում անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմվում է ցոյական կամ պարզ հիմքից՝ համապատասխան վերջավորությունների հավելմամբ:

Արևմտահայերենի անցյալ կատարյալ ժամանակաձևի հիմքի կազմության սկզբունքները ամբողջությամբ վկայվում են միջին հայերենում, որտեղ թեև պահպանվեցին հիմքի կազմության գրաբարյան սկզբունքները, սակայն որոշակի փոփոխություններ կատարվեցին բայահիմքի ածանցներում՝ առաջ բերելով նոր ձևեր:

Այսպես, գրաբարում պարզ կամ արմատական հիմք կարող էին ունենալ *է, ի* լծորդության ածանցավոր և *ու* լծորդության բայերը, օր.՝ *իջանել՝ էջ, բուսանել(իմ)՝ բոյս, զենուլ՝ զեն* և այլն: Միջին հայերենի շրջանում *է* և *ի* լծորդության ածանցավոր բայերը շարունակում էին խոնարհվել անցյալ կատարյալում արմատական հիմքով, սակայն շատ բայերի հիմքերում *–ան-* սոսկածանցը *ա* հնչյունի անկման հետևանքով փոխվել է *-ն*-ի, ինչպես՝ *մտանել-մտնել, հասանել-հասնել, մեռանիլ-մեռնիլ* և այլն[1]: Հետաքրքրական է, որ, օրինակ, *ելանել* բայում ոչ միայն տեղի է ունեցել *ան>ն* փոփոխությունը, այլ նաև մեկ քայլ առաջ գնալով՝ *ն* հնչյունը առնմանությամբ վերածվել է *լ*-ի՝ *ելնել-ելլել*՝ պայմանավորված հնչման դյուրինությամբ[2]: Ածանցների նման փոփոխությունները սկիզբ էին առել դեռևս գրաբարի շրջանում, որտեղ ածանցավոր բային զուգահեռ կիրառվում էին նաև պարզ ձևերը, օրինակ՝ *անիծանել-անիծել, անջատանել-անջատել, սուզանել-սուզել* և այլն: Սա փաստում է, որ բայական ածանցները «միշտ անորոշ չեն եղել, այլ հանդես գալով բայերի մեջ՝ նրանց մեջ դրսևորվող գործողությանը որոշ երանգ են հաղորդել (հավանաբար՝ տևականության երանգ), սակայն ժամանակի

---

[1]*Յ. Կարստի վկայությամբ՝ կիլիկյան հայերենի շրջանում հին ածանցավոր հիմքերի փոխարեն մեծ մասամբ գործածվել են պարզ հիմքեր՝ առանց ն բաղաձայնի, օրինակ՝ մտանել-մտել, լուծանել-լուծել և այլն, տե՛ս* ***Կարստ Յ.,*** *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 254:*

[2]*Տե՛ս* ***Այտընեան Ա.,*** *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Ե., 1987, էջ 64:*

ընթացքում կորցրել են իրենց նշանակության որոշակիությունը»[1]: Հաշվի առնելով այն, որ անցյալ կատարյալը ցույց է տալիս առանց տևականության գործողություն, որը սկսվում և վերջանում է անցյալ ժամանակակետում, կարելի է ենթադրել, որ իմաստային այդ առանձնահատկությունը ածանցների դուրս ընկնելու պատճառներից մեկն է: Հ. Աճառյանը այս երևույթը բացատրում է շեշտի դիրքով, քանի որ այդ բայերը, «**-եց-** միջնամասնիկը չունենալով, այլ միայն **ի** կամ **ա** վերջավորությունը, վերածվել են երկվանկի և բնականաբար շեշտն ընկել է առաջին վանկի վրա»[2]:

Գրաբարում սկսված գործընթացը միջին հայերենում տարածվում է, ընդհանրանում, ապա փոխանցվում արևմտահայերենին: Արդի արևմտահայերենում այժմ անգործածական են մեծ թվով բայերի ածանցավոր տարբերակները՝ *բուծանել-բուծել, թքանել-թքել, օծանել-օծել, փրթանիլ-փրթիլ*[3]: *Ի* լծորդության *ուսանիլ, ծնանիլ* բայերը թեև պահում են *–ան-* ածանցը, սակայն արդի փուլում գիտակցվում են իբրև պարզ բայեր և խոնարհվում են պարզ բայերի օրինակով[4]: Ինչ վերաբերում է *ու* լծորդության բայերին, ապա միջին հայերենի շրջանում այս լծորդության բայերի՝ գրաբարին բնորոշ կիրառական ակտիվությունը նվազել էր: Այս լծորդության բայերը սկսել էին կա՛մ փոխարինվել այլ բայերով, կա՛մ փոխել իրենց լծորդությունը, սակայն միջին հայերենի և՛ առաջին, և՛ երկրորդ ենթաշրջաններում հազվադեպ կիրառություններում պահպանում էին գրաբարին բնորոշ ձևերը: *Ու* լծորդության բայերի նման զարգացումը հանգեցրեց նրան, որ արդի արևմտահայերենում այդ բայերը վերածվել են հնաբանությունների և կիրառվում են խոսքի ոճավորման նպատակով: Արդի արևմտահայերենում վկայվող *երդնուլ, զեղուլ, զենուլ, հեղուլ, յենուլ, զգենուլ, զբօսնուլ* բայերը հանդես են գալիս *երդուիլ, զեղել, հեղել, յենիլ, զգենալ, զբօսնիլ* տարբերակներով: *Երդնուլ* բայը փոխարինվում է նաև *երդում ընել* կապակցությամբ, որն ունի անհամեմատ մեծ կիրառություն՝ ի տարբերություն *երդուիլ* ձևի[5]:

Ու լծորդության «ամենէն կենդանի ձեւերը ներկայ ժամանակներուն կը պատկանին»[6]՝ *կը երդնում, պիտի հեղուս* և այլն, մյուս ժամանակներով

---

[1] ***Աբրահամյան Ա.,*** *Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958, էջ 112:*

[2] ***Աճառյան Հ.,*** *Լիակատար քերականություն, հ. 6, Ե., 1971, էջ 605:*

[3] *Արդի արևմտահայերենում խոսակցական լեզվում* ***ե*** *լծորդության սոսկածանցավոր որոշ բայեր փոխել են իրենց լծորդությունը՝ դառնալով* ***ա*** *լծորդության բայեր, ինչպես՝ ելլել-ելլալ, մտնել-մտնալ, տեսնել-տեսնալ: Գրական լեզվում սրանք մերժելի ձևեր են: Տե՛ս* ***Չոլաքեան Յ.,*** *Արեւմտահայերէն (կանոնակարգ եւ խնդիրներ), Բ. գիրք, Ե., 2019, էջ 12:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 8-9:*

[5] *Մանրամասն տե՛ս* ***Չոլաքեան Յ.,*** *նշվ. աշխ., էջ 4-5:*

[6] *Նույն տեղում, էջ 4:*

խոնարհվելիս փոխարինվում են նոր ձևերով, միայն *թողուլ* բայն է, որ անցյալ կատարյալում պահում է լծորդությունը՝ *թողուցի, թողուցիր* և այլն: Սակայն այս բայն էլ և՛ գրական, և՛ խոսակցական լեզվում հիմնականում փոխարինվում է *ձգել* բայով՝ *ձգեցի, ձգեցիր* և այլն:

Հատկանշական է, որ *թողուլ* բայի համար որպես անցյալ կատարյալի խոնարհման ձև արևմտահայերենի դասական քերականության մեջ մեծ մասամբ նշվում է *թողուցի*՝ ցոյական հիմքով տարբերակը[1], մինչդեռ Ա. Այտընյանը նշում է ինչպես ցոյական, այնպես էլ արմատական հիմքով կազմությունը՝ *թողի և թողուցի*[2]:

Գրաբարում այս բայը խոնարհվել է *ու* լծորդության մյուս բայերի օրինակով՝ արմատական հիմքով՝ *թողի, թողեր* և այլն: Միջին հայերենում վկայվում են և՛ ցոյական, և՛ արմատական հիմքով կազմությունները: *Թողուցի* բայաձևի *թողուց* հիմքը գրաբարի *թողուլ* բայի պատճառական *թողուցանել* բայաձևի հիմքն է, որից էլ կազմվել են նշված ձևերը[3]: Հետաքրքրական է, որ հետագայում *թողուցի* և նման կազմությունների մեջ զարգացել է ոչ թե պատճառական, այլ ներգործական իմաստը: Ընդ որում՝ զուգահեռ կիրառվել են նաև պարզ հիմքով *թողի, թողեր* տարբերակները: Այս երևույթի հնարավոր բացատրություն կարող է լինել լծորդությունը շեշտելու միտումը: Արդի արևմտահայերենի համար նշվում է, թե անցյալ կատարյալը ներկայի ձևերի և հոգնակի հրամայականի հետ *թողուլ* բայի այն կազմություններից է, որտեղ արտահայտվում է խոնարհիչը[4], այսինքն՝ *-ուց* վերջավորությամբ կազմությունները ոչ թե գիտակցվում են որպես պատճառական ձևեր, այլ անցյալ կատարյալի *ու* լծորդությամբ խոնարհում[5]:

Ցոյական հիմք: Արևմտահայերենում ցոյական հիմքը կազմվում է *եց, աց, ց* մասնիկներով: *Եց* մասնիկն ունեն *ել* և *իլ* լծորդությունների պարզ բայերը, *ա* լծորդության *–են-* սոսկածանց ունեցող բայերը, օրինակ՝ *գրել-գրեց, վազել-վազեց, խօսիլ-խօսեց, աշխատիլ-աշխատեց, մօտենալ-մօտեց(այ)* և այլն, *աց՝ ալ* լծորդության պարզ և *-ան-* սոսկածանց ունեցող բայերը՝ *կարդալ-կարդաց,*

---

[1]*Տե՛ս* ***Գազանճեան Յ.****, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի. միջին դասընթացք, Կ. Պոլիս,*
1913, էջ 81: ***Սիմոնեան Ս., Պալեան Ս.****, Նոր քերականութիւն, Բեյրութ, 1980, էջ 103:*
Չոլաքեան Յ.*, նշվ. աշխ., էջ 5:*
[2]*Տե՛ս* ***Այտընեան Ա.****, նշվ. աշխ., էջ 65:*
[3]***Աբրահամյան Ա.****, նշվ. աշխ., էջ 195:*
[4]***Չոլաքեան Յ.****, նշվ. աշխ., էջ 5:*
[5]**Թողուլ բայի** *հետ կապված միջին հայերենում մի հետաքրքիր դրսևորում ևս նկատելի է: Այս շրջանում սկսում է ի հայտ գալ նաև* **թողնել** *տարբերակը, որը հավանաբար գրաբարում գործածվող* **թողանալ** *ձևից է առաջացել՝ ան>ն հնչյունափոխության և լծորդության փոփոխության արդյունքում: Այս բայաձևը ժառանգեց արևելահայերենը:*

խաղալ-խաղաց, հեռանալ-հեռաց(այ), և այլն, *ց* հիմքով՝ *ա* լծորդության *–ն-* սոսկածանց ունեցող բայերը՝ *մոռնալ-մոռց-, գիտնալ-գիտց-*:

Արևմտահայերենը անցյալ կատարյալի ցոյական հիմքի կազմության սկզբունքները նույնպես ժառանգել է միջին հայերենից, որտեղ ոչ միայն պահպանվեցին գրաբարյան ձևերը, այլև բայահիմքերի փոփոխությամբ *եց, աց* ձևերին զուգահեռ առաջ եկավ նոր՝ *ց* հիմքով կազմություն:

Գրաբարում բաղադրյալ կամ ցոյական հիմքը կազմվում էր երկու եղանակով.

Ա) բայարմատ + *աց* ածանց: Այսպես էին կազմվում *ա* լծորդության պարզ և *-ան-* ածանցավոր բայերը, օրինակ՝ *կարդալ-կարդաց, ստանալ-ստաց* և այլն:

Բ) բայարմատից և *-եաց* ածանցից: Այս կազմությամբ հանդես էին գալիս *է* լծորդության պարզ, *ա* լծորդության *–են-* ածանցն ունեցող բայերը՝ *առաքել-առաքեաց, մերձենալ-մերձեաց, սիրել-սիրեաց* և այլն:

Միջին հայերենում կազմության այս երկու ձևերն էլ առկա են, սակայն, ինչպես արդեն նշել ենք պարզ հիմքի կազմությունը քննելիս, հիմքերում ածանցների փոփոխությունը առաջ է բերել նոր ձևեր: Դեռևս միջին հայերենի վաղ շրջանում նկատվում են *–են-* և *-ան-* ածանցի անկմամբ *–ն-* ածանցով կազմություններ, որոնք անցյալ կատարյալում բայահիմքը կազմելիս *–աց-* և *-եց-* ձևերի փոխարեն ունենում են *–ց-*, այսինքն՝ կատարվում է *ն>ց* հերթագայություն, ինչպես՝ *մոռանալ-մոռնալ-մոռց-, գողանալ-գողնալ-գողց-, հասկանալ-հասկնալ-հասկց-, գիտենալ-գիտնալ-գիտց-, վախենալ-վախնալ-վախց-* և այլն: Կազմության այս ձևը դրսևորվում է *ա* լծորդության *–են-* և *-ան-* ածանցն ունեցող բայերում: Միջին հայերենում ձևավորված հիմքի կազմության այս տարբերակը նույնությամբ փոխանցվեց արևմտահայերենին:

Պատճառական բայերը ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում և արևմտահայերենում անցյալ կատարյալում խոնարհվում են *է* լծորդության ածանցավոր բայերի օրինակով և բայահիմքում ունեն *ուց* ձևույթը: Հատկանշական է, որ գրաբարում պատճառական բայերը կազմվում էին *-ուցան(ոյց+ան)-* ածանցով, որից *–ան-* ածանցի անկմամբ և *ոյց* մասնիկի շեշտմամբ անցյալ կատարյալում առկա էր *–ուց-* ձևը՝ *վազեցուցանել-վազեցուց, կարդացուցանել-կարդացուց, զարմացուցանել-զարմացուց:* Միջին դարերում կատարված *ուցան>ցն* անցումը Յ. Կարստը բացատրում է *ու* ձայնավորի անկումով և *ա>ը* թուլացումով[1]: Գրաբարի նման միջին հայերենում պատճառական բայերը եզակի երրորդ դեմքում ունենում էին *-ոյց* վերջավորությունը՝ *հասոյց, ուսոյց:* Սակայն միջին հայերենի վաղ շրջանից սկսած *ոյց* ձևը, *ոյ>ու* հնչյունափոխությանը ենթարկվելով, դարձավ *ուց:*

---

[1] *Տե՛ս* **Կարստ Յ.,** *նշվ. աշխ., էջ 257:*

Եթե անցյալ կատարյալում արևմտահայերենում *–ն-* ածանցը ընկնում է, և ավելանում է *-ուց* վերջավորությունը, ապա արևելահայերենում տեղի է ունենում *ն>ր* հերթագայությունը՝ հմմտ.՝ *վազեցնել-վազեցուցի-վազեցրի, խոսեցնել-խօսեցուցի-խոսեցրի* և այլն: Ս. Անթոսյանը սա բացատրում է հրամայական եղանակում *ր* հնչյունի ազդեցությամբ: Ըստ լեզվաբանի՝ *ր* հնչյունի հավելման երևույթը «հրամայականից թափանցելով անցյալի հիմքի մեջ, արևելահայ գրականում ձևացրեց –ցր .... հնչյունախմբով անցյալի հիմք»[1]: Ուստի կարող ենք ասել, որ միջին հայերենի առաջին ենթաշրջանում պատճառական բայերի *-ուր* վերջավորության ձևավորման և երկրորդ ենթաշրջանում ամրակայման գործընթացը ազդել է նաև այս բայերի անցյալ կատարյալի կազմության վրա, և արևելյան բարբառներում զարգանալով՝ վաղ աշխարհաբարի շրջանից ամրակայվել է արևելահայերենում: Հատկանշական է, որ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ նշվում է, որ միջին հայերենում, հատկապես երկրորդ ենթաշրջանում, տիրապետող են եղել *ուց* վերջավորությամբ ձևերը,[2] և որևէ անդրադարձ չկա *ցր* ձևով կազմություններին: Դա մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ միջին հայերենում գերիշխող և տարածված ձևը *-ուց* վերջավորությամբ կազմություններն էին, որոնք էլ փոխանցվել են արևմտահայերենին:

Գրաբարում կային նաև բայահիմքում *ի* թույլ բաղադրիչով բայեր: Այդ բայերում *ի* բաղադրիչը, ավելացվող վերջավորության *ա* ձայնավորին միանալով, հնչյունափոխվում էր *է*-ի, ինչպես՝ *երկնչիլ-երկեայ, այտնուլ-այտեայ, մածնուլ-մածեա*: *Ի* թույլ բաղադրիչ ունեին *ի* խոնարհման *–նչ-* և *-չ-*, *ու* խոնարհման *–ն-* ածանցն ունեցող բայերը: Միջին հայերենի առաջին ենթաշրջանում արդեն նկատելի են առանց *ի* թույլ բաղադրիչի կազմություններ: Երբեմն *ի* թույլ բաղադրիչով բայի խոնարհման ձևեր ևս կարելի է գտնել, սակայն դրանք աստիճանաբար վերածվում էին հնաբանությունների, և միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում *ի* թույլ բաղադրիչ ունեցող բայերում այդ բաղադրիչն այլևս չի դրսևորվում: *Ի* լծորդության *–նչ-* և *-չ-* սոսկածանցավոր բայերը խոնարհվում են *ի* լծորդության ածանցավոր բայերի նման, իսկ *ու* լծորդության բայերը, ինչպես արդեն նշել ենք, փոխում էին իրենց լծորդությունը կամ փոխարինվում այլ բայով՝ խոնարհվելով այդ լծորդությունների ածանցավոր բայերի օրինակով:

Ներգործաձև և կրավորաձև խոնարհումները, խոնարհման վերջավորությունները: Անցյալ կատարյալ ժամանակաձևը արևմտահայերենում կազմվում է ներկայացված հիմքերին *–ի, -իր, -, -ինք, -էք/իք, -ին* և *-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան* վերջավորությունների հավելմամբ:

---

[1] ***Անթոսյան Ս.,*** *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Ե., 1975, էջ 209-210:*

[2] *Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 388:*

Առաջին խմբի վերջավորություններ ստանում են *է, ա* լծորդության պարզ և *ու* լծորդության, ինչպես նաև պատճառական բայերը, երկրորդ խմբի վերջավորությունները՝ *է, ա* լծորդության սոսկածանցավոր, *ի* լծորդության և կրավորական սեռի բայերը: Հետաքրքրական է, որ գրաբարյան շրջանում վերջավորությունների ավելացումը նախ և առաջ պայմանավորված էր բայերի ներգործաձև կամ կրավորաձև խոնարհմամբ: Եթե բայը պատկանում էր ներգործաձև խոնարհման, ապա ստանում էր *–ի, -եր, -, -ինք, -էք/իք, -ին* վերջավորությունները, իսկ եթե կրավորաձև խոնարհման, ապա՝ *-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան:* Գրաբարում ներգործաձև խոնարհում ունեին *է* լծորդության բոլոր բայերը, *ա* և *ու* լծորդության պարզ բայերը: Կրավորաձև խոնարհվում էին *ի* լծորդության բոլոր բայերը, *ա* և *ու* լծորդության սոսկածանցավոր բայերը: Ընդ որում՝ *ի* լծորդության չեզոք սեռի բայերը «դրսևորման այլ հնարավորություն չունենալով, կրավորական ձևի մեջ արտահայտում էին չեզոք սեռի իմաստ»[1]: Պետք է նշել, որ գրաբարում կրավորական սեռի արտահայտման համար ներգործաձև խոնարհման բայերը կարող էին խոնարհվել նաև կրավորաձև: Դեռևս գրաբարում խոնարհման այս դասդասումը միանշանակ չէր. կային բայեր, որոնք դրսևորում էին շեղումներ ընդունված օրինաչափությունից, ինչպես նաև՝ կրավորաձև խոնարհման վերջավորությունները ազատորեն դրվում էին ներգործաձև խոնարհման բայերի վրա: Այս փոփոխությունները, որոնց սկիզբը նկատելի է Ե դարից, միջին հայերենում արդեն տարածվում և ընդհանրանում էին. «Վերջապէս թարգմանչաց ժամանակէն բաւական ետքը, առաւելապես Նախնեաց ռամկօրէնին գրութեամբ յերեւան ելլելուն մօտաւոր ատենները, կը գտնենք քանի մի շատ գործածական բայերուն այս կամ այն ժամանակին մէջ՝ գրաւորի սովորական հին կազմակերպութենէն օտար ձեւեր, որ կը տեսնուին՝ թէեւ ցանցառ՝ միջին դարուց գրաբար մատենագրութեանց մէջ եւ յետոյ՝ ըստ ժամանակին յառաջանալուն՝ շատ յաճախած են եւ Նախնեաց ռամկօրէնին մէջ սովորական եղած»[2]: Միջին հայերենում կրավորական սեռի արտահայտման համար առաջ է գալիս *ու/վ* մասնիկը: Սրա հետևանքով կրավորաձև խոնարհման վերջավորությունները կորցնում են կրավորականության իմաստ արտահայտելու հատկանիշը և կարող էին դրվել ներգործական և չեզոք սեռի բայերի վրա՝ առանց կրավորական իմաստ հաղորդելու: Սրանով էր պայմանավորված ներգործաձև և կրավորաձև խոնարհումների աստիճանական վերացումը

---

[1] ***Անթոսյան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 201:*

[2] ***Յովնանեան Ղ.,*** *Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ: Ուսումնասիրութիւնք եւ քաղուածքներ, Վիեննա, 1897, էջ 6:*

միջին հայերենի շրջանում[1]: Ընդ որում՝ միջին հայերենի առաջին ենթաշրջանում *ե* լծորդության բայերի՝ կրավորական իմաստի արտահայտման համար կրավորաձև խոնարհմամբ ձևեր արդեն չեն կիրառվում. դրանք կրավորականը կազմում էին *ու/վ* մասնիկով[2]:

Անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմող **վերջավորությունները** միջին հայերենի շրջանում ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Այսպես:

Փոխվեց ներգործաձև խոնարհման բայերի եզակի երկրորդ դեմքը՝ *-եր>իր:* Այս փոփոխությունը կարող է կատարված լինել առաջին դեմքի համաբանությամբ: Այն, որ միջին հայերենի առաջին ենթաշրջանում արդեն երկու տարբերակներն էլ գործածելի են եղել, ենթադրել է տալիս, որ փոփոխման գործընթացը սկսվել է նախամիջինհայերենյան շրջանում: Միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում *–իր* վերջավորությամբ բայաձևերը գերակշռող էին, իսկ *–եր*-ը հնաբանության արժեք էր ստացել և կիրառվում էր որպես գրաբարաբանություն[3]: *-Իր* վերջավորությունը ամրակայվեց միջին հայերենում և փոխանցվեց արևմտահայերենին:

Միջին հայերենում փոխվեց նաև ներգործաձև խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքը, և *եա* երկբարբառի պարզեցմամբ *եաց* ձևույթը դարձավ *եց:* Գրաբարում եզակի թվի երրորդ դեմքը վերջավորություն չէր ունենում: Հիմքը դառնում էր դիմավոր ձև և շեշտվում, իսկ շեշտի ազդեցությամբ հնչյունափոխված հիմքը վերածվում էր անհնչյունափոխ ձևի՝ *գրել-գրեաց, վազել-վազեաց:* Պետք է նշել նաև, որ միջին հայերենի առաջին ենթաշրջանում նոր ձևին զուգահեռ գրաբարյան *եաց* ձևը պահպանում էր իր գործածությունը, անգամ կիրառական հաճախականությամբ գերակշռում էր: Երկրորդ ենթաշրջանում *եաց* ձևույթով կազմությունները իրենց տեղը սկսում են զիջել նոր կազմություններին: Հաճախ միևնույն հեղինակի մոտ երկու տարբերակն էլ կարելի է գտնել, ինչպես՝ *Այն փողրն էր յարութեան զոր և* ***զոչեաց*** *առավոտին (Կ. Երզնկացի, Տաղ., էջ 146): Աստղրն պայծառ* ***ծագեց****, աւետաւոր երեկ լուսոյն (Կ. Երզնկացի, Տաղ., էջ 128):*

Գրաբարում երրորդ դեմքը կազմող հիմքերը միավանկ լինելու դեպքում բառասկզբում ստանում էին *է* կամ *ե* նախահավելվածը, եթե բայը չէր սկսվում նույն հնչյուններով: *Ե* հնչյունը ավելանում էր բաղաձայնով սկսվող բառերին, *է*-ն՝ ձայնավորով, ինչպես՝ *տես-ետես, գիտ-եգիտ, անկ-էանկ, առ-էառ* և այլն: Այսինքն՝ աճականի գործածության նպատակը եղել է չափազանց կարճ ձևերը

---

[1] *Հ. Աճառյանը սա համարում է ոչ թե «կրավորականից ներգործականի անցում, այլ լծորդության մասնակի փոփոխություն»:* ***Աճառյան Հ.,*** *նշվ. աշխ., հ. 4. Ա գիրք, էջ 405:*

[2] *Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, էջ 333:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 333, 387:*

երկարեցնելը[1]: Ս. Անթոյանը նշում է, որ աճականի գործածության պատճառներից մեկն էլ *է* ածանցավոր և *ու* պարզ խոնարհման բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի և եզակի հրամայականի նույնացումն էր՝ *բեկ-բե՛կ, հեղ-հե՛ղ* և այլն[2]:

Միջին հայերենում աճականը աչքի չի ընկնում գործածության այնպիսի կանոնիկությամբ ու ակտիվությամբ, որը բնորոշ էր գրաբարին. «Միջին հայերենում գրաբարյան *է/է* նախահավելվածը կամ աճականը հիմնականում պահպանվում է, բայց նրա գործածության համար չկան միասնական կանոններ»[3]: Պետք է նշել, որ Յ. Կարստի կարծիքով՝ աճականը գործածությունից դուրս է եկել միայն վաղ աշխարհաբարի շրջանում: Ըստ նրա՝ աճականը միջին հայերենում ոչ միայն պահպանվել է, այլ նույնիսկ ընդարձակվել է: Որպես հիմնավորում նա ներկայացնում էր *երեկ, երետ, երեղ* կազմությունների ձևավորումը, ապա հավելում է, որ «միջին հայերեն ձևերի տեղը գրավում են, ինչպես երևում է աղբյուրներից, արդեն վաղ հայերենի շրջանում *եկավ, դրավ, տուավ* նորակազմությունները....»[4]: Սա նշանակում է, որ աշխարհաբարի վաղ շրջանից արդեն աճականի գործածությունը դադարում էր, և թեկուզ բայերի առանց աճականի գործածության տարածման առումով աչքի է ընկնում աշխարհաբարը, սակայն գործընթացի հիմքերը միանշանակ միջին հայերենում են, որտեղ ձևավորվել և լայնորեն կիրառվում էին առանց աճականի նոր բայաձևերը: Միջին հայերենի շրջանում կրավորաձև և ներգործաձև խոնարհումների տարբերակման վերացման, ինչպես նաև աճականի գործածականության թուլացմանը զուգընթաց որոշ բայեր ներգործաձև խոնարհվելիս սկսեցին եզակի երրորդ դեմքում ստանալ *աւ* վերջավորությունը, օրինակ՝ *արի, արիր, արաւ*: Հ. Աճառյանը ներգործաձև խոնարհման եզակի երրորդ դեմքում այս մասնիկի առկայությունը կապում է աշխարհաբարի հետ. «Գրաբարում այս վերջավորությունը չկա և բայի արմատն է միայն դրվում, որ և շփոթվում է հրամայականի հետ: Գրաբարում այս շփոթը կարող էր վերանալ նախահավելված *է*-ի միջոցով: Աշխարհաբարում նախահավելվածը ջնջվելով, շփոթությունը անխուսափելի էր: Այս շփոթությունը վերացնելու համար, ահա, փոխ առին Բ լծորդության բ տիպարի **աւ** (*հատաւ, ուսաւ*) վերջավորությունը, որ գտնվում էր նաև Բ լծորդության ա տիպարում և Գ լծորդության բ տիպարում (*խօսեցաւ, մոռացաւ*)»[5]: Փաստորեն, Հ. Աճառյանը կատարված փոփոխությունները

---

[1]*Տե՛ս **Աճառյան Հ.,** նշվ. աշխ., հ. 4, Ա գիրք, էջ 308:*
[2]***Անթոյան Ս.,** նշվ. աշխ., էջ 219:*
[3]***Աբաջյան Ա.,** Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, Ե, 1997, էջ 71:*
[4]***Կարստ Յ.,** նշվ. աշխ., էջ 304-306:*
[5]***Աճառյան Հ.,** նշվ. աշխ., հ. 4, Բ գիրք, էջ 20:*

բնութագրական է համարում աշխարհաբարի համար, սակայն առկա բնագրային օրինակները հիմք են տալիս փաստելու, որ ներգործական և չեզոք բայերի *–աւ* վերջավորությամբ կազմություններ առկա են դեռևս միջին հայերենի շրջանում, ինչպես՝ *Ոնց որ ժամանակ* ***անցաւ****, զՏրդատ արքայն վերուցին (Նազար բասենցի, ՈւՄՀԲ, էջ 82)։ Երկնից* ***իջաւ*** *Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգին (Մարտիրոս Խորասարցի, ՈւՄՀԲ, էջ 151)։* Անցյալ կատարյալի կազմության այս սկզբունքը միջին հայերենից փոխանցվեց արևմտահայերենին, որտեղ մի քանի բայերի խոնարհման ժամանակ եզակի երրորդ դեմքում առկա է *–աւ* վերջավորությունը՝ *բերի, բերիր, բերաւ, ըսի, ըսիր, ըսաւ*[1]։ Սրանք համարվում են զարտուղի կամ անկանոն բայեր։

Միջին հայերենում նկատվում է նաև *աւ* հնչյունակապակցության *օ* հնչյունափոխությունը։ Այս երևույթը բայական համակարգում ևս առկա է. երրորդ դեմքի *–աւ* վերջավորությունը հանդես է գալիս *օ* հնչյունափոխ տարբերակով։ Այս փոփոխությամբ բայաձևի կիրառությունը վերագրվում է Վ. Այգեկցուն՝ որպես հեղինակային առանձնահատկություն, սակայն 13-րդ դարի հեղինակ Անանուն Սեբաստացու թողած ժամանակագրությունը քննելիս կարելի է գտնել նման կիրառության բազմաթիվ այլ օրինակներ, ինչպես՝ *Եւ խսարեաց զԱմիթ եւ ոչ ինչ կարաց առնուլ եւ կոտորեցաւ ի Հասան պակէն եւ յետս* ***դարձօ*** *(ՄԺ, էջ 152)։ Հասան պակն ժողովէ ԴՌ (4000) մարդ, զի այլ ոչ ունէր եւ* ***կռվեցօ*** *եւ յաղթեաց (ՄԺ, էջ 152)։* Սա նշանակում է, որ միջին հայերենի առաջին ենթաշրջանում *աւ>օ* հնչյունափոխությունը մուտք էր գործել նաև բայի խոնարհման համակարգ։ Երկրորդ ենթաշրջանում բայական համակարգում կիրառելի են անհնչյունափոխ ձևերը։

Փոխվեցին նաև անցյալ կատարյալ ժամանակաձևի խոնարհման հոգնակի առաջին դեմքի վերջավորությունները՝ *-աք>ինք*՝ ներգործաձև խոնարհում, *-աք>անք*՝ կրավորաձև խոնարհում։ Երկու դեպքում էլ առկա է *ն* ռնգայինի հավելումը՝ ներկա ժամանակի համաբանությամբ։ Կրավորաձև խոնարհման *-աք* վերջավորության *-անք* փոփոխությունը կատարվել է նաև հոգնակի երկրորդ դեմքի հետ շփոթից խուսափելու համար, քանի որ *–այք* ձևույթը *-այ* երկբարբառի պարզեցմամբ դարձել էր *–աք։ -Աք>ինք և -աք>անք* փոփոխությունները ավելի ուշ շրջանում կատարված իրողություններ են։ Միջին հայերենի շրջանում գործածական են եղել հոգնակի թվի *-աք* վերջավորությամբ բայաձևեր, օրինակ՝ ***Երանեցաք*** *իւր վաճառին // Ընդ ընկերոջն և կողակցին (Մ. Խորասարցի, ՈւՄՀԲ, էջ 153)։Ո՞ւր է որ* ***սիրեցաք*** *զիրար, դուն ինձ մեղր և ես քեզ շաքար (Ն. Քուչակ)*[2]։ Պետք է նշել, սակայն, որ նախ կատարվել է *ն* ռնգային հնչյունի հավելումը՝ *-աք>-անք>-ինք։* Սա երևում

---

[1] ***Սաքապետոյան Ռ.****, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 157։*
[2] *https://digilib.aua.am/book/2151/2601/20103/*

է այն բանից, որ Մ. Սեբաստացու՝ արևմտահայերենի քերականության առաջին դասագրքում բերված խոնարհման հարացույցում հոգնակի առաջին դեմքում ունենք *–անք* և ոչ թե *–ինք* տարբերակը՝ *վառեցի, վառեցիր, վառեց, վառեց**անք**, վառեցիք, վառեցին*[1]: Այսինքն՝ միջին հայերենի ուշ և աշխարհաբարի վաղ շրջաններում նախ կատարվել է ռնգային *ն* հնչյունի հավելում, ապա ձայնավորների միակերպության գործոնով պայմանավորված՝ *-անք*-ը դարձել է *–ինք:*

-Անք վերջավորությամբ բայաձևերի կիրառության օրինակներ պահպանվել են միջնադարյան ժողովրդական երգերի բնագրերում՝ *Սըրտերնիս կամեցաւ, ելանք, **գընացանք**// Եւ սուտ աստընտրիս տարտէրն իմացանք, // Ադուհացկեր մարդկաց կարօտ **մընացանք** (ՀՄԺԵ, էջ 255):*

Միջին հայերենում հոգնակի երկրորդ դեմքի համար ամրակայվեց *–իք* վերջավորությունը: Ներգործաձև խոնարհման հոգնակի երկրորդ դեմքում գրաբարի դասագրքերում *-էք* ձևին զուգահեռ ներկայացվում է նաև *-իք* ձևը[2], թեև Հ. Աճառյանը *–իք* վերջավորությունը համարում էր աշխարհաբարի ընդունած ձևը[3]: Գրաբարում *–էք* վերջավորությամբ բայաձևը նույնանում էր բուն հրամայականի՝ ներգործաձև խոնարհման հոգնակի թվի երկրորդ դեմքի հետ[4]: Միջին հայերենում բուն հրամայականի համար ամրակայվեց *–էք* վերջավորությունը, ուստի շփոթից խուսափելու համար առավել դյուրին և նպատակահարմար էր օգտագործել *–իք* ձևույթով կազմությունները, որոնք էլ հաստատվեցին անցյալ կատարյալի համար: *-Էք>իք* փոփոխությանը նպաստել է նաև երրորդ դեմքում *–ին* վերջավորության առկայությունը, որի ազդեցությամբ ու համաբանությամբ կատարվել է նշված անցումը:

Միջին հայերենի շրջանում խոնարհման վերջավորություններում կատարված փոփոխությունները ամբողջությամբ ժառանգեց արևմտահայերենը:

Ներկայացնենք բայական տարբեր վերջավորություններով բայաձևերի կիրառության բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

*Նա ես իր տամ նըշան՝ թէ այս շնորհիս որպէս **հասայ** (Կ. Երզնկացի, Տաղ., էջ 188): «Զաղէկըն դու **ստեղծեցիր**, ինձ է՞ր մեղք դընես թէ սիրեմ» (Ն. Քուչակ, ՀԲ, էջ 275): **Եկին** ու խապար բերին՝ Քո սիրած եարն ըզքեզ **մոռցավ** (Ն, Քուչակ,*

---

[1] *Տե՛ս **Սեբաստացի Մ.**, Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Վ., 1727, էջ 40:*
[2] *Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 150: **Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2007, էջ 28:*
[3] *Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., հ. 4, Ա գիրք, էջ 307:*
[4] *Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 166:*

*ՀԲ, էջ 192): Նոյ սի՛րով **ապրեցաւ** ի ջրհեղեղեն, // Տապանին զորինակն ասված ցուցաներ (Ֆրիկ, Ժող., էջ 173): Երբ **տեսայ**, երեսն էր ծածուկ // Յետ էբաց, կու նայեր գաղտուկ (Խն Կաֆայի, ՈւՄՀԲ, էջ 313): **Մտան** երեք դուռն այլ **ամրացուցին** (Ն. Ստամպոլցի, ՈւՄՀԲ, էջ 359): Մէնն ասէ. Մէջ վարդենուն, որ դուք **նստաք** // Յին ասէ.**Եղեր** ճուղքն հաստ ու բարակ Մարտիրոս խորասարցի, (ՈւՄՀԲ, էջ 161):*

Արևմտահայերեն

***Օտարացուցին** մեզ ի բնակութենէ մերմէ (Գ. Պըլտեան, Մանտր., էջ 617): Երբոր առաջին անգամ **տեսաւ** Սուրէնը, **հասկցաւ** որ վերջին տարիները կեանքին մէջ կերպով մը հաստատուած խախուտ անդորրը վերջացած էր (Ք. Բատիկեան)[1]: Ջուրը // **աճեցաւ** մինչեւ կոկորդ մը հուրէ // Ապրիլը կը բուրէ դիակ այրածի (Գ. Պըլտեան, Մանտր., էջ 600): Կը հոլովուի շուրջդ ինչ որ **մնաց** // անանուն // ինչ որ **գնաց** (Գ. Պըլտեան, Մանտր., էջ 602): Ժամերն **անցան** – գիշերը վրայ **հասաւ** // Տալամանի բանտին մէջ սէկեաի երգ մը // սէկեաի երգ մը **արձագանգեց** .... (Ի. Սարբասլան, ՍԳ, էջ 45):*

Կատարված փոփոխությունները ամփոփելով՝ կստանանք հետևյալ պատկերը՝

գրաբար		**միջին հայերեն**			**արևմտահայերեն**		
-ի	*-աք*	*-այ -աք*	*-ի*	*-աք /անք/ինք*	*-այ -աք/անք*	*-ի*	*-ինք -այ -անք*
-եր	*-էք/իք*	*-ար -այք*	*-եր/իր*	*-էք/իք*	*-ար -այք/աք*	*-իր*	*-իք -ար -աք*
-եաց -	*-ին*	*-աւ -ան*	*-եաց/եց -/աւ*	*-ան*	*-աւ -ան*	*-եց-*	*-ին -աւ -ան*

Իմաստային բնութագիր: Անցյալ կատարյալ ժամանակաձևը լեզվի զարգացման ընթացքում իմաստային որևէ փոփոխության չի ենթարկվել: Այն, ինչպես գրաբարում և միջին հայերենում, այնպես էլ արևմտահայերենում արտահայտում է առանց տևականության կատարված, ավարտված գործողություն: Իմաստային այս առանձնահատկությամբ անցյալ կատարյալը հակադրվում է անկատար անցյալ և վաղակատար անցյալ ժամանակաձևերին: Անցյալ անկատարը, ի տարբերություն անցյալ կատարյալի, ցույց է տալիս անցյալում կատարված, բայց չլրացած գործողություն, իսկ անցյալ կատարյալը՝ անցյալի մեջ կատարված և լրացած[2]: Իսկ վաղակատարի հետ համեմատած՝ անցյալ կատարյալը ցույց է տալիս այնպիսի գործողությունը, որին խոսողը ականատես է եղել. վաղակատարը ցույց է տալիս «ներկայի համեմատությամբ արդեն կատարված որոշակի

[1] *https://granish.org/qani-der-ches-qnats/:*

[2] *Տե՛ս **Շահնուր Շ.,** Համառօտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի, գիրք Ա, Գ եւ Դ դաս. համար, Կ. Պոլիս, 1939, էջ 62:*

տևականություն ունեցող գործողություն, որի մասին խոսողը պատմում է ոչ որպես ականատես»[1]:

Այսպիսով, կատարված քննությունը, արված վերլուծությունները և բերված բնագրային օրինակները ևս մեկ անգամ վկայում են, որ արևմտահայերենի լեզվական համակարգին բնորոշ իրողությունները ամբողջությամբ համընկնում են միջինհայերենյան ձևերին, և անգամ լեզվի քերականական համակարգի մի մասի քննությունը կարող է ցույց տալ լեզվական այդ երկու համակարգերի սերտ կապը և փաստել, որ արևմտահայերենը իրավամբ կարող է համարվել միջին հայերենի ժառանգորդը:

Գրականություն

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, 496 էջ:
2. **Աբաջյան Ա.**, Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, Ե, 1997, 127 էջ:
3. **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958, էջ 112:
4. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4. Ա գիրք, Ե., 1959, 593 էջ:
5. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ գիրք, Ե., 1961, 541 էջ:
6. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականությունհայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, 855 էջ:
7. **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Ե., 1987, 866 էջ:
8. **Անթոսյան Ս.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Ե., 1975, 384 էջ:
9. **Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2007, 300 էջ:
10. **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Ե., 2007, 286 էջ:
11. **Գազանճեան Յ.**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի. միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1913, 238 էջ:
12. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, 412 էջ:

[1] ***Ավետիսյան Յու.,*** *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Ե., 2007, էջ 176:*

13. **Յովնանեան Ղ.,** Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ։ Ուսումնասիրութիւնք եւ քաղուածքներ, Վիեննա, 1897, 272 էջ։
14. **Շահնուր Շ.**, Համառօտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի, Գիրք Ա, Գ եւ Դ դաս. համար, Կ. Պոլիս, 1939, 88 էջ։
15. **Չոլաքեան Յ.**, Արեւմտահայերեն (կանոնակարգ եւ խնդիրներ), Բ. գիրք, Ե., 2019, 152 էջ։
16. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, 495 էջ։
17. **Մեբաստացի Մ.,** Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Վ., 1727, 149 էջ։
18. **Սիմոնեան Ս., Պալեան Ս.**, Նոր քերականութիւն, Բեյրութ, 1980, 119 էջ։

Համառոտագրություններ

ԵԼԺ - Պչաքճեան Մ., Երկերու լիակատար ժողովածու, հ. 6, «Հայաստան», Ե., 2015, 616 էջ։

Ժող. - Ֆրիկ, Ժողովածու, Պետհրատ, խմբագիրներ՝ Հ. Պետրոսյան, Տ. Խաչվանքյան, Երևան, 1937, 208 էջ։

ՀԲ - Հայրէններու բուրաստանը, առաջաբան՝ Ա. Չօպանեան, Հ.Բ.Ը. Միութեան հրատ., Փարիզ, 1940, 550 էջ։

ՀՄԺԵ - Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, կազմ.՝ Աս. Մնացականյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1956, 671 էջ։

Մանտր. - Պըլտեան Գ., Մանտրաներ, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո, Երևան, 2010, 621 էջ։

ՄԺ - Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2, կազմ.՝ Վ. Հակոբյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1956, 685 էջ։

ՍԳ – Իգնա Սարբասլան, Սիրոյ գոյնը, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», Ե., 2010, 160 էջ։

Տաղ. - Երզնկացի Կ., Տաղեր, աշխատասիրությամբ՝ Ա. Սրապյան, ՀՍՍՌ ԳԱԱ հրատ., Երևան, 1962, 297 էջ։

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը։

ՀՏԴ 81`28

Բարբառագիտություն

Էդիտա ԱԼԹՈՒՆՅԱՆ
ԱրՊՀ ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ
e-mail: edita_altunyan@mail.ru

«ԺԱՄ» ԵՎ «ԺԱՄԱՆԱԿ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

*Սույն հոդվածում քննության են առնվում **ժամ** և **ժամանակ** հասկացությունները, դրանց բարբառային համապատասխանություններն ու հոմանիշային տարբերակները Ղարաբաղի բարբառում:*
Ժամանականիշ միավորները, ընդհանուր առմամբ, հայերենի բառապաշարի այն շերտի տարրերն են, որոնք մշակութաքաղաքակրթական որոշակի արժեք ունեն: Դրանք բացահայտում են Ղարաբաղի բարբառի բառապաշարի և լեզվաբնկալման յուրահատկությունները՝ փաստարկելի դարձնելով Արցախի տարածքում հայերենի վաղնջական գործածության և բարբառի կրած լեզվական ազդեցությունների իրողությունները:
Բանալի բառեր՝ *Ղարաբաղի բարբառ, ժամ, ժամանակ, ժամանականիշ բառամիավորներ, ժողովրդական լեզվամտածողություն, լեզվական ազդեցություն, հոմանիշային բազմազանություն:*

Э. Алтунян

ПОНЯТИЯ «ЧАС» И «ВРЕМЯ» В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

*В данной статье рассматриваются понятия **час** и **время**, их диалектное соответствие и синонимичные варианты в карабахском диалекте являются элементами того слоя*

словарного запаса, который имеет определенную культурологическую ценность. Они раскрывают специфику словарного запаса и языкового восприятия карабахского диалекта, доказывая факт функционирования на протяжении веков армянского языка на территории Арцаха и его языкового воздействия на карабахский диалект.

Ключевые слова: *Карабахский диалект, час, время, временные единицы, языковое мышление народа, языковое влияние, многообразность синонимов.*

E.Altunyan

THE CONCEPTS OF «HOUR» AND «TIME» IN THE KARABAKH DIALECT

The time units are the elements of the vocabulary layer of that has a certain cultural value. They reveal the specifics of vocabulary and linguistic perception of the Karabakh dialect, proving the fact of the Armenian language functioning throughout the centuries on the territory of Artsakh and its linguistic impact on the Karabakh dialect. This article examines the concepts of ***hour*** *and* ***time****, their dialectal correspondences and synonymous versions in the Karabakh dialect.*

Key words: *Karabakh dialect, hour, time, time unit, folk language thinking, linguistic influence, synonymous diversity.*

Ժամանակ հասկացությունն արտահայտում է երևույթների հաջորդափոխման կարգն ընդհանուր ձևով՝ առանց որոշակի կոնկրետության: Այն վերացական հասկացություն է, իսկ վերացականությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությանը[1]: Դրա համար էլ մարդը ժամանակը բաժանել է ավելի փոքր հատվածների՝ հիմք ընդունելով կենսական, երկրային ու երկնային այնպիսի դեպքեր, իրադարձություններ ու երևույթներ, որոնք մեր նախնիները տեսնում, ճանաչում և ընկալում էին:

Ժամանակ բառային միավորը վկայված է հին հայերենի գրավոր հուշարձաններում: Ծագմամբ փոխառյալ եզր է՝ իրանական աղբյուրից՝

[1] ***Բառնասյան Զ.***, *նշված աշխատությունը, էջ 7:*

žamān ձևից: Գ. Ջահուկյանը հայերենի իրանական փոխառությունների հիմնական ածանցավոր կազմությունները ներկայացնող բաժնում տրամաբանական է համարում **ժամ+անակ** ածանցումը[1]: Հր. Աճառյանն ավելի հավանական է համարում վերոհիշյալ բառի պահլավական փոխառություն լինելը՝ **ժաման+ակ** ձևով[2]: Լ. Հովհաննիսյանի կարծիքով՝ **ժամ**–ը կարող է միանգամայն տրամաբանական եղանակով առաջացած հայերեն բառ լինել՝ **զ** նախդիրով և **ամ** բնիկ հայերեն արմատով[3]: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ կարելի է ասել, որ **ժամ** հայերեն արմատի և **-անակ** իրանական փոխառյալ վերջածանցի բաղադրությամբ է առաջացել **ժամանակ** բառը[4]:

Ղարաբաղի բարբառում **ժամ** բառային միավորը գործածության ավելի մեծ հաճախականություն ունի, քան **ժամանակ-ը**: Այն ներկայացնում է իմաստային հետևյալ դրսևորումները. 1. *ժամանակի չափման միավոր, որ հավասար է վաթսուն րոպեի, ժամ (մին ժամանը յըէտը յէշáմ ըն, տըէսնում տըղան սարէն քըմական տáմս յըկավ)*, 2. *ժամանակ, պահ (էտ ժամէն ըխպիրին միշտ հէրթ ա ինáմ)*, 3. *մեկ ժամ տևողությամբ ժամանակի չափ (ժամի իրըքէն տըղ ըն հըսնում)*, 4.*եկեղեցի (ըտըղ մին ժամ ըն շինáմ, անըմը տինáմ Կանաչ ժամ)*, 5. *ժամերգություն, ժամասացություն (ժամէն վախտը էտ դէրը վ³րին ուստէն կընգանըն ար յէշում)*[5]:

Հատկանշական է, որ **ժամ** բառը բարբառում համանունային զույգ է. բառիմաստի ընդլայնմամբ այն ուրիշ՝ **եկեղեցի**, **ժամերգություն** նշանակությունն է ձեռք բերել՝ բազմիմաստության տրոհմամբ հիմք տալով համարմատ համանունների գոյության, օրինակ՝ ***Ժաման*** *յըէս ըմ կաամ, <<Օրինըյա դէրը>> տու վրս ասում [ԱԲ, 467] :*

Այս երևույթը խոսում է այն մասին, որ հայերենին հատուկ է ոչ միայն **տեղ>ժամանակ**, այլ նաև **ժամանակ>տեղ** անցումը:

Ժամանակ հասկացության արժեքով բարբառում գործառում է հոմանիշ եզրերի մի ամբողջ խումբ: Իմաստային այդ դաշտի միավորներից է **ժուկ**-ը: Այն ունի և՛ ժամանակ ընդհանրական նշանակությունը, և՛ մասնավորված *պահ, կարճ ժամանակ* իմաստը: Հաճախական կիրառություն ունի հատկապես հեքիաթներում, որտեղ հանդիպում է **ժուկ**, **ժուկ-ժամանակ, ժուկավ-ժամանակավ** ձևերով, ինչպես՝ *Էտչաք **ժուկ** Նուշիկն էլ ծըմակավը շոռ ա կաաս, շոռ, քիս մի քáմ³ քըթընաս [ՀԲ, 352], //**ժուկ** ա ընցնում,*

---

[1]***Ջահուկյան Գ.***, *նշված աշխատությունը, էջ 7:*

[2]***Աճառյան Հր.***, *Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1926, էջ 222:*

[3]***Հովհաննիսյան Լ.***, *Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 94:*

[4]***Բառնասյան Զ.,*** *նշված աշխատությունը, էջ 7:*

[5]*Ուսումնասիրության մեջ քննվող բոլոր բառերի իմաստները ներկայացվում են ըստ* ***Ա. Սարգսյանի*** *Ղարաբաղի բարբառի բառարանի տվյալների, Երևան, 2013:*

ժամանակ *ա ընցնում, էս մարթըն ու կընէգը էտ օխծէն նրհըտ էնքան ըն կապվում, էնքան ըն սիրում ըտրրա, վեր ըսէլի չի [ԱԲ, 167], //Մէր շէնին ժողովուրթը շատ ըշխըդավէր ըն, էտչաք կարճ* ***ժուկըմըտ*** *կըրրէցալ ըն ըշկոլը ռէմօնդ անին [ՀԲ, 353] //****Ժուկավ-ժամանակավ*** *Արմավիր քաղաքումը մին թաքավեր ար կենում [ՆԱԲ, 37] :*

Ջ. Բառնասյանը գրում է. <<*Այդօրինակ հարաղրությունները ժամանակային անորոշություն են ապահովում և խորհրդավորություն հաղորդում պատումին՝ վկայակոչելով անհիշելի ժամանակները*>>[1]: Հր. Աճառյանի կարծիքով՝ **ժուկ** բառի կիրառությունը հայերենի բարբառներում սովորական է, սակայն նրա ծագումը հայտնի չէ: Հնարավոր է այս բառի իրանական փոխառություն լինելը: Չի բացառվում նաև, որ այն **ժամանակ** բառի կրճատված և հնչյունափոխված տարբերակն է[2]:

Գրաբարյան **ժամ** բառի հնչյունափոխված տարբերակն է **ժէմ/ժում** ժամանականիշ բառամիավորը, որն ունի և՛ մակբայական կիրառություն՝ **անգամ** նշանակությամբ, և՛ գոյականական կիրառություն՝ **պահ, ժամանակ** նշանակությամբ: Բերենք համապատասխան օրինակներ՝ *Ամմէն մինը էրկու* ***ժէմ*** *էտ վըսկան հափռում ըն, պըրծընում ա [ՂԲԲ, 220]/, Սահանք էլ պայման ըն տընում, վեր էյսը էս համին* ***ժեմեն*** *ծախօղը կավը պիրի, մուշտարին էլ՝ փուլը [ՆԱԲ, 55]:*

Ժամանակ հասկացության դիմաց բարբառի խոսվածքներում գործառող ձևերից է նաև **գահ**-ը: Ջ. Բառնասյանի կարծիքով՝ այն **տեղ>ժամանակ** անցումով գոյացած բառ է, որ հայերենի բարբառներում գործածվում է **ժամանակ** վերացական հասկացության արժեքով: Այս դեպքում ենթադրելի է բառի ծագումը պարսկերեն gah (*տեղ, վայր, աթոռ*) արմատից[3]: Գրաբարում **գահ** բառն ուներ *բազմոց, իշխանություն, բարձրավանդակ* իմաստները[4]: Չի բացառվում նաև բառի ծագումը թրք. kặh (**երբեմն**) արմատից: Ղարաբաղի բարբառում **գահ** բառը տեղանիշ իմաստով պահպանվել է միայն **ըրէվին գահումը** կապակցության մեջ, որ նշանակում է *արևի տակ*: Օրինակները փաստում են, որ **գահ** բառի համար ավելի տարածված ու սովորական է իբրև ժամանականիշ գործածվելը, ուստի և ավելի հավանական է ծագումը թրք. kặh (**երբեմն**) արմատից: Այն բազմիմաստ բառ է: Բարբառում և՛ մասնավորված՝ *կարճատև ժամանակ, ակնթարթ, պահ* իմաստներով է դրսևորվում, և՛ *մերթ, երբեմն* իմաստներով. ինչպես՝ *Ըտրրա հըտան քընըմ ա, մին* ***գ³h*** *հէտքը կուրցընում, ամմա մին էլ*

---

[1] ***Բառնասյան Ջ.***, *նշված աշխատությունը, էջ 8:*
[2] ***Աճառյան Հր.***, *նշված աշխատությունը, հ. 2, էջ 222:*
[3] ***Բառնասյան Ջ.***, *նշված աշխատությունը, էջ 9:*
[4] ***Ղազարյան Ռ.***, *Գրաբարի բառարան, Երևան, 2000, հ. 2, էջ 303:*

ճարրմ ա… [ՀԺՀ, V, 17], էտ մարթը ***գ՝³h*** *հրրուստանում ա,* ***գ՝³h*** *քիսբրանում… [ՂԲԲ, 104]:*

Երբեմն-երբեմն, մերթընդմերթ իմաստներով հաճախ է հանդիպում **գ՝³h** բառի կրկնավոր ձևը՝ **գ՝³h-գ՝³h** (թրք. kāh-kāh)՝ մակբայական արժեքով՝ *էտ տրղան* ***գ՝³h-գ՝³h*** *կամ ա, հորը-մորը նրստավ ընցընում, էլիա քինամ [ՂԲԲ, 104]:*

Գ՝³h բաղադրիչով է կազմված *գ³՝h մէխին թրխէլ, գ՝³h նալէն* (անկայուն լինել, հաստատակամ չլինել) դարձվածային միավորը[1], օրինակ՝ *Ընդրրա նրհետ կօրծ փրռնելի չի.* ***գ³՝h*** *մէխին ա թրխում,* ***գ³՝h*** *նալէն [ՂԲԲ, 104]:*

Գ՝³h արմատն առկա է նաև **գ՝³հդ³նբիր** բառում, որ փոխառություն է թուրքերեն gahdanbir ձևից: Իմաստով համարժեք է **գ³՝h-գ՝³h** կրկնավորին, **գրրրն-գրրան** բարդությունը:

Հարմար պահ՝ առիթ իմաստներով բարբառում շատ գործածական է **գրրավա** բառամիավորը, որ փոխառություն է թուրքերեն girəvə ձևից՝ *Կատուն մուկուն փրռնէլի հէտէ մարաղ բիդի կէնա էնքան, մինչէվ* ***գրրաված*** *կ՝ա: [ՂԲԲ, 106]*

Հոլովված ձևը՝ **գրրվին/գիրվին**, ունի *հարմար պահին՝ ժամանակին* նշանակությունը, ինչպես՝ ***Գրրվին*** *յրէկավ, թոթը թափից քրէցավ [ՂԲԲ, 106]:*

Գրրավա բաղադրիչով կան հետևյալ դարձվածային միավորները՝ **գրրավան ա խօսում**- Որոշիչը դիպվածն է, **գրրավան պահէլ -** հարմար պահի՝ առիթի սպասել, **գրրավան պէց թօղնէլ-**հարմար պահից՝ առիթից չօգտվել, **գրրավա տալ -** հարմար պահ՝ առիթ ստեղծել, **գրրավան քրցիլ-** հարմար պահից՝ առիթից օգտվել:

Երբեմն, հազվադեպ, մերթընդմերթ իմաստներն են արտահայտում նաև **ղաթումը** և **ղրթրվղաթ** կամ **ղաթ-ղաթ** բառաձևերը: Օրինակ՝ ***Ղաթումը*** *կամ ար, հորը տրէսնում, էլիա քինամ [ՂԲԲ, 449], տրղան* ***ղրթրվղաթ*** *կաս ա, հորը տրսնաս, էլիա քիս [ՂԲԲ, 453] :*

Ժամանակ բառի դիմաց բարբառում գործառող ձևերից կիրառության ամենից լայն դրսևորումն ունի **վախտ** բառանվանումը: Այն հայերենի բարբառներին է անցել արաբերենից (vakt)՝անմիջականորեն կամ պարսկերենի միջնորդությամբ[2]: Փոխառյալ այս ձևը ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև հայերենի մյուս բարբառներում շատ է գործածվում կապական բառի արժեքով՝ *Ամմէն տարէ, լրհա վեր կ՝³ս ա էտ խրնձՊրեն քրղելի* ***վախտը****, քիս ըն տրսնաս մինրն էլ չի կա, լօխ պրլօկած, տարած [ԱԲ, 80],վէր էս*

---

[1] *Ուսումնասիրության մեջ քննվող բոլոր դարձվածների իմաստները ներկայացվում են ըստ* ***Ա. Սարգսյանի*** *և* ***Շ. Մինասյանի*** *Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանի տվյալների, Երևան, 2017:*

[2] ***Բառնասյան Զ.****, նշված աշխատությունը, էջ 12:*

թաքավէրին մրոնելի ***վախտը*** *կամ ա, կանչրմ ա տրդեն ասրմ. «Իմ հրրրստօթունրս լօխ քունրտ ա ինն ³ ն, բայց մին պէն ինձ խօսկ պիտի տաս. քրզանա հուվէր հինչ օգէ, պիտի տաս» [ԱԲ, 158]:*

Վախտ ժամանականիշ բառը կիրառվում է նաև գոյականաբար: Այդպիսի օրինակներ շատ կան ժողովրդական հեքիաթներում՝ *էլ* ***վախտ*** *չի կուրցնում, թորը յոր ա օնում յրրա պրրծնում, ըտրրան էլ տրէդ մօրթում [ԱԲ, 155], մին պատառ* ***վախտ*** *անց կացած՝ էտ շէնը էրուշ տրէդա մի հարուստ առէվտրրական ա կաս [ԱԲ, 77]:*

Բառի հոլովված ձևերը արտահայտում են իմաստային տարբեր նրբերանգներ. *Վէր* ***վրխտէն*** *չուբանեն ջուբը մին պէն քրց ³ ծ ինիս, մէր կավրն էլ դէքտեմբէրումը ծրնած կին ³ ր [ԱԲ, 333], էտ* ***վրխտանց*** *էլ ըստրդէս անումը մրնացալ ա Պրռրվաթումբ [ԱԲ, 190]:*

Առաջին նախադասության մեջ **վրխտէն** բառաձևն ունի *ճիշտ ժամանակին, հարմար պահին* նրբիմաստը, իսկ երկրորդ նախադասության մեջ ընդգծված **վրխտանց** բառաձևին բնորոշ է *անցած-գնացած ժամանակ* նրբիմաստը:

Բարբառում գործածական է նաև **բեյ-** փոխառյալ ժխտական նախածանցով կազմված **բէյվախտ** (պրս. bi-vagt) բառաձևը՝ *ոչ տեղին, անժամանակ, ոչ պատեհ* իմաստներով՝ ***Բէյվախտ*** *ղօնաղը ձՕր ³ ն քրսական կօտէ [ԱԲ, 456]:*

Բէյվախտ-ին հոմանիշ է թուրքերենից փոխառյալ **վախսրզ** բառամիավորը: Վերջինս էլ ունի իր հականիշային զույգը՝ **բէյվախսրզ** (*տեղին, ժամանակին, պատեհ*):

Վախտ բաղադրիչով կան նաև դարձվածային միավորներ՝**վախտը ընցրնէլ-** 1.ծերանալ, ուժից ընկնել, 2. շատ հասունանալ, թառամել, փչանալ(*Ապուն* ***վախտը ընցալ ա****, էլ կարում չի վրէրս անէ [ՂԲԲ, 682]),* **վախտ քրթէնալ-**1. հարմար՝ ազատ ժամանակ ստեղծել մի բանի համար, 2. նախատական արտահայտություն, որով դիմում են անպատեհ պահին որևէ գործ ձեռնարկողին կամ որևէ մեկին դիմողին (*Վախտ քրթի՛ր, մէհէտ ք՛ինինք՛ վրէրս [ՂԲԲ, 682],* ***Վախտ*** *ը՞ս քրթալ պՕձրթ թրկէլի… [ՂԲԲ, 682]):*

Երբեմն հանդիպում է **վախտ-վախտ** (*երբեմն-երբեմն, մերթընդմերթ*) կրկնավոր ձևը, որը իմաստով համարժեք է **գ՛ ³ հ-գ՛ ³ հ** կրկնավորին: Նույն նշանակությունն ունի նաև բարբառային **բ ³ զվախտ** բառը, որը բարբառի մի շարք խոսվածքներում **բ ³ զիվախտ** հնչատարբերակով է հանդես գալիս՝ ***Բ ³ զիվախտ*** *էլ ընդրէդրքան տրկօղին ար քաղում, պՕձրՕձմ խօխա-ըրախի պրժէնրմ… [ԼՂԲ, 297]:*

Իմաստային նույն դաշտում է ***չախ*** ժամանականիշ միավորը, որը փոխառություն է թուրքերենից՝ **čağ,** և ունի *ինչ-որ ժամանակ* բառիմաստը՝

Վէր տօնը լաւ ղօնաղ կա, կըլնխրս ըմ քուրբլական, էտ ***չախը*** *լաւ արաղ կըպիրիս [ԱԲ, 337] :*

Չախ բառը բարբառում հաճախ է գործածվում բաղադրությունների կազմում՝ իբրև երկրորդ բաղադրիչ, ինչպես, ասենք, **դáõբáõրգáõնաչախ**, **áõրգáõնաչախ**, օրինակ՝ ***Դáõբáõրգáõնաչախ*** *հրսնում ըն պրռավէն տօնը՝ վէրսը ծըրքըրնէրէն, մին լ ³ վ խըրաված ըն քըցáõմ, նրստում հաց օտում [ԱԲ, 145] :*

Բարբառում *ժամանակ, ժամանակաշրջան և պայմանաժամ, ժամկետ* իմաստներով արաբերենից փոխառյալ **վ ³ դ ³**՝ **váda** բառային միավորն է գործածական՝ ***Վրդին*** *չասած դáõզ խոսքը* ***անվ ³ դա*** *վրրցակու կանչ ա [ՆԱԲ, 211]:*

Ժամանակ հասկացության արժեքով բարբառում գործառում է նաև **մըջալ / մաջալ** բառամիավորը, որը փոխառություն է թուրքերեն mačal ձևից՝ *Մա՛մա մէր վարժաբէդը շատ տ ³ ս ա տրվալ,* ***մըջալ*** *չօնիք [ՀԺՀ, V, 473]:*

Այս բաղադրիչն ունենք **մըջալ անէլ / տրէռնալ** և **մըջալ տալ** դարձվածներում, որոնցից առաջինն ունի *դադար առնել, հանգստանալ*, իսկ երկրորդը՝ *հնարավորություն՝ հարմար պահ՝ միջոց ընձեռել* իմաստը:

Բարբառի խոսվածքներում **ժամ**, **ժամանակ** իմաստներով գործածվում է փոխառյալ **սըհաթ** բառանվանումը, որն արևելյան փոխառություն է՝ (արաբ., պրս., թրք. **sặat**): Փոխատու լեզվում բառն ունի **ժամացույց** իմաստը, որը պահպանվել է բարբառում՝ *Սալդաթը* ***սըհաթը*** *տամ ա áõր ³ ն, պըրծընում, թա քինի, դասիդան մուտանան վէր ա քըցում [ՀԺՀ, V, 649]:*

Ղարաբաղի բարբառում բառը իմաստափոխության ենթարկվելով, ձեռք է բերել *ժամ, ժամանակ* իմաստները, ինչպես նաև *պահ* մասնավորված իմաստը՝ *Դէ զարափաթ պէն չի, ախըրը, մ ³ րթը մին սաղ քըղաքու մըէծ ա, վէր* ***սըհաթ*** *քէփը հինչ տա, ինդի յէլ կարող ա անէ [ՀԲ, 338], Վէր ինքը յէր կէնա սրքսէ ճըմըլկօտալը, էտ* ***սրհաթէն*** *ծամէրը ծէրքավըտ ըս տամ հրսցընում կօխկրս… [ԱԲ, 136]:*

Մին բառ-մասնիկի հարադրությամբ կազմված **մին սըհաթ** կապակցությունը բարբառում ունի *մի ժամանակ, մի պահ* մասնավորված իմաստները: Ցույց է տալիս նաև գործողության կատարում կարճ ժամանակամիջոցում, ինչպես՝ *Ըզէն մընաց, յրէս ծին յէր իլի,* ***մին սրհաթ*** *տօն հրսէ [ԼՂԲՔ, 272]:*

Գործածական է նաև **միսրհաթ** տարբերակային ձևը՝ իբրև համադրական կազմություն՝ *Բա՛լա, տու խըմօրը հունցէ, յրէս* ***միսրհաթ*** *քինիմ բօստանը ճիրիմ, կամ [ԱԲ, 313]:*

Նույն արմատն ունենք նաև **սրհաթանմընուտ** բաղադրյալ կազմության մեջ՝ *Տի* ***սրհաթանմընուտ*** *հրրցընում ա, գիդմ՝ վէր թոռանը հրրսանէքրն ա, ծէրքէրը յէտ ա տանում, թա. «Հա՞, դէ պար յրէք, պար կանք» [ԱԲ, 331]:*

Ժամանակի կարճ հատված նշող հասկացությունները՝ **ռոպէ, վայրկյան**, բարբառում արտահայտվում են համապատասխանաբար **ռօպէ/մմՃՃնմՃՃտ** նույնանշային զույգով, իսկ վայրկյանը՝ և՛ նկարագրական եղանակով՝ **ըշկրճրպ(էլ)ումը**, և՛ նոր շրջանի փոխառությամբ՝ **սէկունդ** բառաձևով: **Ռոպէ**-ն փոխառություն է հունարենից՝ moment: **Վայրկյան** բառն առաջացել է **տեղ>ժամանակ** անցումով: Նախապես նշանակել է *որևէ տեղ*, հետո անցում է կատարվել *ժամանակի* գաղափարին[1]: Դրանք իրականում հստակ տարբերակված չեն որպես ժամի մասեր, այլ հանդես են գալիս *կարճ ժամանակահատված* ընդհանրական իմաստով՝ *Յրէս ծէրումը* հէնգ ***ռօպէ*** *յրմ կացալ, տու յրէք մէրումը մին տարէ կաց [ԱԲ, 411],դաստի Զանգին ա Զրրանգին պէց ըն թօրում, սահանք էլ մին* ***մՃՃնուտՃՃմը*** *հրսնում ըն տրդէն կօշտը [ԱԲ, 109],մին էրկու* ***մունուտանը*** *յրէտը նօրից ա մրննան ընգրնում, էլիա յա հրրցրնում [ԱԲ, 331],անց ա կրէնրմ իննը ամիս, իննը օր, իննը ժամ, իննը մունուտ, իննը* ***սեկունդ,*** *Աստված ըտրրանց երկու տրդա յա տամ [ՀԺՀ, V, 143], տա մին հէնց գ³բ³ յա ինրմ, վրէր յրրան կաղնիս, ըշտէղ ասիս, կրտանէ մին* ***ըշկրճրպէլումը*** *[ՂԲԲ, 520]:*

Մին ըշկրճրպ(էլ)ումը արտահայտությանը համարժեք են **մին ըշկրհօփումը**, **մին շրնչումը**, **մին նրփ³սումը** կապակցությունները՝ *ակնթարթորեն, վայրկենապես, շատ արագ իմաստներով*, օրինակ՝ *Էտ կՃՃլին ճօտէրը յրրա ըն պրրծրնրմ,* ***մին շրնչրմը*** *էտ ըխճրկանը պրտրռ-պատառ անրմ [ՀԺՀ, V, 57]:*

Շատ կարճ ժամանակ՝ ակնթարթ իմաստով գործածվող հետաքրքիր բառամիավոր է **դաղաղ**-ը, որի ծագումն անհայտ է՝*Էէրօպը ինձ մին* ***դաղաղրմը*** *տարավ լՃՃնընգին կրլօխը… [ՋՏ, Բ, 25]:*

Կարճ ժամանակամիջոց իմաստն ունի **հանգ-հօնգ / հանգ-հունգ** կրկնավոր բարդությունը՝ *Էս դուսաղը վրէր օտում ա, չրքօրանը* ***հանգը-հունգը*** *ռանգը փօխվում ա… [ՂԲԲ, 409]:*

Պահ, ակնթարթ, կարճ ժամանակ իմաստներով հազվադեպ կիրառություն ունի **հօվուր / հավուր / հուվուր** բառամիավորը՝ բաղադրված գրաբարյան **աւր** (օր) արմատով, որ առավելապես հանդես է գալիս **մի(ն)** թվականի հետ՝ *Մին* ***հուվուր*** *վեր անց ա կենում, մաշնակ հարթնն ա կյամ, ղզղանէն տակը տամ, մին հափուռ աղ քցում, խառնում քյրնում: [ՆԱԲ, 104]*

[1] ***Ամառյան Հր.****, նշված աշխատությունը, հ. 4, էջ 300, 444:*

Իմաստային նույն խմբում է **մամէնտ** բառը, որը փոխառություն է ռուսերենից (момент): Ունի *պահ, ակնթարթ* իմաստները՝ *Էն* ***մամէնտին*** *áõր ³ն քըցáõմ ա ընդէղ…[ՂԲԲ, 487]:*

Գործածական է նաև նույն հիմքից կազմված **մամէնտալնի** մակբայը, որ նշանակում է *ակնթարթորեն, վայրկենաբար՝ Յէտ ա տէռնում,* ***մամէնտալնի*** *կամ, էտ շՍրէրը տանում: [ՂԲԲ, 487]:*

Ղարաբաղի բարբառում գործածվում է նաև արևելյան լեզուներից փոխառված **ջըլ³վ / ջիլ³վ** բառամիավորը (պարսկերեն՝ jelou, թուրքերեն՝ čəlau): Բառի բուն նշանակությունն է՝ *պախուրց, սանձ*: Սակայն փոխաբերական կիրառությամբ բառը ձեռք է բերել *կարճ ժամանակամիջոց նշանակությունը, օ*րինակ՝ *Էս քըշէր անդար լըվէնը թուղէցէն ուչ, թա մին* **ջըլ³վ** *քօն ինիմ [ՂԲԲ, 522]:*

Բարբառում ոչ հաճախական կիրառություն ունեն **դար / դ³ր** և **վ³ր** ժամանականիշ բառամիավորները: Առաջինը գրաբարյան **դար** բառն է, որ, պահպանելով հանդերձ իր հիմնական իմաստը՝ *հարյուր տարվա ժամանակաշրջան, հարյուրամյակ*, ձեռք է բերել նաև *կարճ ժամանակ, պահ* մասնավոր իմաստները՝ *Մին քանէ* ***դար*** *ըստըրանա առաչ մին քըղաքու թաքավէր ուզիս ա, վէր մին կարմունջ շինի [ՀԺՀ, V, 588],Էտ* ***դ³ր***áõ***մըտ*** *Կըրիքօր դային պըտըհիս ա [ԱԲ, 302], Էս նըղ* ***դ³ր***áõ***մըս*** *ըստակալա, ինձ թողալ տըռըտօռ ընգած [ԱԲ, 332]:*

Երկրորդ բառամիավորը՝ **վ³ր,** բարբառում ունի միայն *պահ, ակնթարթ* իմաստները, ինչպես՝*Էտ* ***վ³ըմը*** *Պուղուսէն անա մին մարթ ա մուտանում, թա՝պարլուս Պուղուս [ԱԲ, 365]:*

Ժամանականիշ այս բառով բաղադրվել է **վ³ըը կ³լ³ծ** դարձվածային միավորը, որ նշանակում է՝ *անընդհատ, շարունակ՝ Էտ ըսկեսուրը* ***վ³ըը կ³լ³ծ*** *հըրթնէրէն անէսկ ա տամ [ՂԲԲ, 683]:*

Ինչպես գրական հայերենում, այնպես էլ Ղարաբաղի բարբառում որոշակի թիվ են կազմում ընդհանրական մակբայները, որոնք գործածվում են երկու և ավելի մակբայական նշանակություններով: Օրինակ՝ **բáõրդ³ն, բáõրդ³ն³նց, գիրթ, դ³ստի(ն³), դիգասկանց, իլբիհ³լ, իլբիհ³լմըս, ճէլ(լ)ի** մակբայները, արտահայտում են և՛ ձևի, և՛ ժամանակի իմաստներ: Բերենք համապատասխան օրինակներ՝ *Սումբաթ դային, ըրբան պէռնած, էն ա ինիս քիս,* ***բáõրդան*** *Իսակ դ³յին ըռաշկան տáõս ա կամ [ԱԲ, 305], քըշանա քիշէրավ մարը նի յա մընէս տըսնա տըղան զáõրթնացալա,* ***գիրթ*** *օխծը տըսնաս ա [ՀԲ, 336],Օվչի Փիրումը վար ասէ, թա ինքը հինչավ ա ծիծաղում,* ***դ³ստի*** *մըռնըլական ա [ՂԲԲ, 117], համա ղօչաղըտ* ***դիգասկաց*** *լօք տուվավ, áõնդáõր տօշ³ն փըռնից, նի կապից [ՀԲ, 335], թաքավէրին տըղան* ***իլբիհ³լ*** *վազ ա տաս, տըսնաս հի՞նչ. Մին վըսկէ ծուկուն կա էտ թօռըմը [ԱԲ,*

92], Ալիսան դ³յին ***իլբիհ³լմրս*** *խօսկը փոխում ա [ԱԲ, 329],* ***ճէլլի*** *յէր ա կէնում, քին³մ ձՕր³նց քաղաքը, նի մընում բազարը, մին վընճարու շախկա ինք՝ օնում, դարկում տօն [ՂԲԲ, 464], լա՛ց մէր ինիլ, ՈՒ՛ձՕց* ***ճէլլի*** *կընկաս, հանցու յրտանաս վէչ [ԱԲ, 242]:*

Բարբառում հանդիպում են **ճէ(լ)ի** բաղադրիչով բարդված հետևյալ դարձվածային կապակցությունները՝ **ճէ(լ)(ի) անէ-** շտապել, փութալ՝ *ճէլլ ա անում, հըսնում շէնը, խաբարը շին³ցուց ասում [ՂԲԲ, 464],* **ճէ(լ)ի թընքանօղ**-դյուրագրգիռ, բարկացկոտ, զայրացկոտ՝ *Թաքավէրըն էլ կօգի ճէլլի թընքանօղ ար, ամմա պարի մարդ ար [ՂԲԲ, 464],* **ճէ(լ)ի նըհըէտ կ'ընվող**-անոխակալ, անհիշաչար, շուտ հաշտվող՝ *ճէլլի թընքանօղը ճէլլի նըհըէտ կ'ընվօղ կինի [ՂԲԲ, 464]:*

Շատ արագ ու հաճախակի կատարվող գործողություն նշելու համար կիրառվում է **ճէ(լ)ի-ճէ(լ)ի** կրկնավոր բարդությունը, որի առաջին բաղադրիչը սովորաբար հնչյունափոխվում է՝ **ճիլը-ճէլլի**, **ճըլը-ճէլլի**, **ճըլլի-ճէլլի**՝ *Բ³լի լիա տաՕզն ըն,* ***ճլը-ճեալի*** *սուփրեն յեշում ըն [ՆԱԲ, 121]:*

Վերը նշված մակբայները, ինչպես երևում է օրինակներից, համատեղում են և՛ ձևային, և՛ ժամանակային իմաստները՝ ցույց տալով, որ գործողությունը կատարվում է հանկարծակիորեն, միանգամից, իսկույն, անմիջապես, անհապաղ՝ շատ կարճ ժամանակահատվածում:

Գրականություն

1. Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա-698 էջ, հ. Բ-687 էջ, հ. Գ-636 էջ, հ. Դ-676 էջ, Երևան 1926:
2. Բառնասյան Ջ., *Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում*, Երևան, 2009, 124 էջ:
3. Հովհաննիսյան Լ., *Հայերենի իրանական փոխառությունները*, Երևան, 1990, 302 էջ:
4. Ղազարյան Ռ., *Գրաբարի բառարան*, Երևան 2000, հ. 2, 1346 էջ:
5. Ջահուկյան Գ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երևան, 2010, 820 էջ:
6. Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառի բառարան*, Երևան, 2013, 845 էջ:
7. Սարգսյան Ա., Մինասյան Շ., *Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան*, Երևան, 2017, 566 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ., Լ.Գ.Մարգարյանը:

ՀՏԴ 82.9(75)

Գրականություն

Անահիտ ՕՀԱՆՅԱՆ
Շուշիի տեխնոլոգիական համալսարան, Արցախ

ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾ ԳԵՂԱԳԵՏԸ

«Արցախ աշխարհի մեծ գեղագետը» հոդվածը վերաբերում է Արցախի մշակույթի կարկառուն ներկայացուցիչ Ս.Գաբրիելյանի ստեղծագործական աշխարհի քննությանը:
Ս. Գաբրիելյանը իր ներդրումն է ունեցել Արցախի նկարչական արվեստի բնագավառում՝ ստեղծելով իր՝ զուտ գաբրիելյանական աշխարհը՝ ուրույն ոճով և ձեռագրով, ներաշխարհից բխող պատկերացումներով ու ինքնատիպ գաղափարներով:
Ս. Գաբրիելյանը արվեստագետ է, ով օգտագործել է դարերով կուտակված հայկական արվեստի գեղարվեստական միջոցների զինանոցը՝ կատարելապես տիրապետելով դրանց առանձնահատկություններին:
Գաբրիելյանական արվեստի քննությունը մեզ հնարավորություն է տալիս բացահայտել Արցախի արվեստի դպրոցի տիպաբանությունը, արվեստի այս կամ այն ճյուղերի փոխներթափանցումը և յուրահատուկ սինթեզը:
Ս. Գաբրիելյանը ազգային և համամարդկային նվիրյալ արվեստագետ է՝ իր ինքնատիպ արվեստով, կերպարակերպման իր յուրահատուկ ոճով:
Նրա շուրջ 1500 կտավները գտնվում են արտերկրի մասնավոր հավաքածուներում, ինչը մեծ պատիվ է Արցախը միջազգային հարթակում ներկայացնող գեղանկարչի, բոլոր արցախցիների համար:

Ս. Գաբրիելյանը իր դպրոցով, յուրահատուկ ձեռագրով ու ոճով անաղարտ պահեց հայրենի Արցախի կերպարը: Իսկ այդ կերպարը նրա կտավներում գոյության բանաձև է և արյան կանչ:

Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, հետազոտություն, կերպարվեստ, գեղարվեստական միջոցներ, նկարչություն, արցախյան դպրոց, ստեղծագործական աշխարհ, հետաքրքիր ու ինքնատիպ կտավներ, երևակայություն, ներքին զգայականություն, դիմանկարներ, ազգային մշակույթ, կոմպոզիցիոն առանձնահատկություններ, ներաշխարհի բացահայտում:

А. А. Оганян

ВЕЛИКИЙ ЭСТЕТ АРЦАХСКОГО МИРА

В статье «Великий эстет арцахского мира» рассматривается мир творчества яркого представителя арцахской культуры С. Габриеляна.

С. Габриелян внес свой вклад в искусство арцахской живописи, создав свой, чисто габриелянский мир, с неповторимым стилем и почерком, с возникающими из внутреннего мира оригинальными идеями и представлениями.

С. Габриелян – художник, который использовал накопленный веками арсенал художественных средств армянского искусства, в совершенстве овладев их особенностями.

Изучение габриелянского искусства дает нам возможность обнаружить типологию арцахской художественной школы, взаимопроникновение разных направлений искусства и их своеобразный синтез.

С. Габриелян – истинный национальный и общенародный художник со своим самобытным искусством, своей неповторимой манерой перевоплощения.

Около 1500 его картин находятся в частных коллекциях за рубежом, что для художника, представляющего Арцах на международной арене и для всех арцахцев является большой честью.

Своей школой, неповторимым почерком и стилем С. Габриелан сохранил первозданным образ родного Арцаха. И этот образ в его картинах — формула существования и зов крови.

Ключевые слова: *культурное наследие, исследование, изобразительное искусство, художественные средства, арцахская школа живописи, творческий мир, интересные и уникальные картины, воображение, внутреннее ощущение, портреты, национальная культура, композиционные особенности, открытие внутреннего мира.*

A. Ohanyan

THE GREAT ESTHETE OF THE ARTSAKH WORLD

The article "The great esthete of the Artsakh world" deals with the world of creativity of a prominent representative of the Artsakh culture S. Gabrielyan.

S. Gabrielyan contributed to the art of Artsakh painting, creating his own, purely Gabrielian world, with a unique style and handwriting, with original ideas arising from the inner world.

S. Gabrielyan is an artist who used the arsenal of artistic means of Armenian art accumulated over the centuries, mastering their features to perfection.

The study of Gabrielyan art gives us the opportunity to discover the typology of the Artsakh art school, the interpenetration of different areas of art and their peculiar synthesis.

S. Gabrielyan is a true national and international artist with his original art, his unique manner of transformation.

About 1500 of his paintings are in private collections abroad, which is a great honor for the artist representing Artsakh in the international arena and for all Artsakh residents.

With his school, unique handwriting and style, S. Gabrielan preserved the original image of his native Artsakh. And this image in his paintings is the formula of existence and the call of blood.

Key words: *cultural heritage, research, fine arts, artistic means, Artsakh school of painting, creative world, interesting and unique paintings, imagination, inner sensuality, portraits, national culture, compositional features, discovery of the inner world.*

Թերի կլինի խոսել 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի մշակույթի մասին, առանց Արցախի մշակույթի կարկառուն ներկայացուցիչ Սամվել Գաբրիելյանի մշակութային ժառանգության գնահատման:

Բոլոր ժամանակներում էլ Արցախի մշակույթի գործիչներն իրենց ներդրումն են ունեցել համազգային արվեստի բնագավառում: Արցախյան արվեստի գործիչները՝ նկարիչներ, քանդակագործներ, կիրառական արվեստի վարպետներ, դիզայներներ, արմատներով կապված են եղել և այսօր էլ կապված են հայրենիքին՝ իրենց մասնագիտական և քաղաքացիական պարտքը կատարելով ժողովրդի հանդեպ՝ ստեղծելով լիարժեք ու մնայուն ստեղծագործություններ: Միշտ էլ արժեքավոր ստեղծագործությունը իր ճանապարհը հարթելու եղանակը գիտե՝ ճանաչելի դարձնելով իրեն և հեղինակին: Մեր հետազոտությունը պարզել է, որ 20-րդ դարի և 21-րդ դարասկզբի Արցախի արվեստագետների որոշ աշխատանքներում զգացվում է նշված դարաշրջանների արվեստի զանազան ուղղությունների զարգացումն ու խորացումը: Շատ արվեստագետներ էլ փորձել են ձերբազատվել ազդեցություններից, կերպարվեստի՝ բարդություններով լի աշխարհում գտնել իրենց ուրույն ոճը և ձեռագիրը՝ ի ցույց դնելով միայն ներաշխարհից բխող պատկերացումներն ու ինքնատիպ գաղափարները:

Արցախյան մշակույթի պատմության մեջ անգնահատելի է Ս.Գաբրիելյանի տեղն ու դերը: Արվեստագետ, ում ինքնատիպ ոճերի բացահայտումը այսօր խիստ կարևոր դեր ունի Արցախի արվեստի պատմության մեջ:

Ս. Գաբրիելյանը արվեստագետ է, ով օգտագործել է դարերով կուտակված հայկական արվեստի գեղարվեստական միջոցների զինանոցը՝ կատարելապես տիրապետելով դրանց առանձնահատկություններին:

Հայկական արվեստի, մասնավորապես նկարչության արցախյան դպրոցը, բազում ստեղծագործական կապեր ունի, և դարերի նրա փորձը, ուսումնասիրության մեթոդիկան, տիպաբանությունը, ինքնատիպությունը շատ կարևոր նշանակություն ունեն Արցախի արվեստի զանազան ճյուղերի մասին համաշխարհային կարծիքի ձևավորման գործում:

Ս. Գաբրիելյանի ստեղծագործական աշխատանքի քննությունը մի քայլ առաջ կմղի արցախյան արվեստի շուրջ ստեղծված տեսություններն ու

վերլուծությունը: Մի հոդվածի սահմաններում դժվար է բացահայտել Ս.Գաբրիելյանի ստեղծագործական աշխատանքը, քանի որ այն բազմակողմանի ու բազմալեզու է, ինքնատիպ, ազգային ու համամարդկային:

Գեղագիտության պատմության մեջ եղել են արվեստի տեսակների դասակարգման շատ փորձեր: Ս. Գաբրիելյանի արվեստի քննությունը մեզ հնարավորություն է տալիս բացահայտել Արցախի արվեստի դպրոցների տիպաբանությունը, արվեստի այս կամ այն ճյուղերի փոխներթափանցումը և յուրահատուկ սինթեզը: Ս. Գաբրիելյանի ստեղծագործական աշխարհի քննությունը հնարավորություն է տալիս նորովի գնահատել նրա վաստակը՝ պատկերագրման ուրույն ոճը, մտածելակերպը, Արցախի էթնոավանդույթների, սովորությունների արժևորումը: Ս. Գաբրիլյանը չի գնում տրորված ճանապարգհով, չի մեկուսանում իր մեջ, նվիրվում է մարդկությանը՝ հետաքրքիր ու ինքնատիպ կտավների նրբագեղ ոճական հնարանքների միջոցով:

Ս. Գաբրիելյանը այն բացառիկ դեմքերից է, ով ստեղծել է գեղանկարիչների իր՝ գաբրիելյանական դպրոցը և իր տաղանդի ուժով Արցախում նոր որակի հասցրել գեղանկարչական արվեստը և ստեղծել գունեղ, լուսավոր կտավներ, որոնք այսօր էլ խնամքով պահպանվում են աշխարհի տարբեր երկրների թանգարաններում և ցուցասրահներում: Տաղանդավոր արվեստագետն իր շուրջը համախմբեց արվեստագետների՝ ստեղծելով «Գամ ար» նկարիչների միջազգային կազմակերպությունը, և իր վաստակը ներդրեց Արցախի մշակույթի պատմության մեջ: Տաղանդավոր արվեստագետը գույների, հույզերի ընկալումների իր ներաշխարհով զարգացրեց գեղանկարչական դպրոցի ավանդույթները: Տեղին է հիշել մեծ գրողի խոսքերը.

Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ,
Որ չբուսավ էս հողին,
Ի՜նչ պատասխան պիտի ես տամ,
Հող ու ծաղիկ տվողին…

Ս. Գաբրիելյանը կիսատ երազներ, կիսատ գույներ, կիսատ աշխարհընկալումներ է թողել, սակայն արած - թողածն էլ բավական է՝ պատկերացում կազմելու համար նրա արվեստի մնայուն աշխարհի մասին:

Արցախի վաստակավոր լրագրող Ն. Սողոմոնյանը պատահական չի գրել. «Սամվելը մի առանձին սիրով ու երևակայությամբ է հյուսել հայի, մասնավորապես արցախցու կերպարը, ներկայացրել նրա հոգևոր ու ֆիզիկական մաքառումները, հայրենիքի կերպարը նա բացահայտել է

յուրովի ու նորովի: Հայրենիքը նկարչի համար ոչ թե լեռ է, դաշտ, գետ, այլ՝ արյան հասցե: Առանց այս հող ու ջրի նա չէր կարող ապրել» [1]:

Հիրավի, արցախյան արվեստը շատ բան կկորցներ առանց Սամվել Գաբրիելյանի, ում դաժան կյանքը երբեք չփոխեց, ով պահպանեց իր մարդկային նկարագիրը՝ համեստ, ազնիվ, բարի ու լուսավոր: Ն.Սողոմոնյանը վերոնշյալ հոդվածում վկայակոչում է Հարրի Գիլմորի (ԱՄՆ առաջին դեսպանը Հայաստանում) խոսքերը: Իր ձեռք բերած մի նկարի առիթով նա ասել է, որ ինքը մի երկրի դեսպանն է, իսկ Սամվելն Արցախի դեսպանն է ամբողջ աշխարհում[2]:

Ս. Գաբրիելյանը ծնվել է 1951թ. նոյեմբերի 3-ին, Լեռնային Ղարաբաղում, որտեղ ապրել ու ստեղծագործել է մինչև 2015 թվականի հուլիսի 22-ը՝ մինչև կյանքի վերջը:

Սովորել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի, ապա Երևանի գեղարվեստական ինստիտուտի գեղանկարի բաժիններում: Բազմաթիվ հանրապետական և համամիութենական ցուցահանդեսներում միշտ էլ ուշադրություն են գրավել նրա բազում կտավները:

Գեղանկարչի բազմաթիվ աշխատանքներ («Տագնապ», «Կանայք», «Սիրո պահ», «Պայքար», «Զարթոնք», «Սիրո հրեշտակ», «Գիշեր», «Ջրահարս», «Ցավի բարձունք», «Տեսիլք», «Գաղթ», «Կոմիտաս», «Շուշի» և այլն) կյանքոտ, չափի զգացում, ընտիր ճաշակ, և կրքոտ հոգեվիճակներ արտահայտող երկեր են:

Նվիրյալ արվեստագետ էր Ս. Գաբրիելյանը: Ակնհայտ է, որ նրա վաստակը երբեմն լռության է մատնվել՝ ճիշտ ու տեղին չգնահատվելով իբր արվեստի հրաշագեղ նմուշներ, սակայն դա նրան չի մտահոգել, որովհետև արվեստը ստեղծագործական պահի արգասիք է, սրտի ու մտքի սինթեզ:

Ստեղծագործել է այն սկզբունքով, որ արվեստագետը ազգի ցավն այնպես պիտի ներկայացնի, որ այն հասկանալի և ընդունելի լինի նաև օտարին: Ամեն մի ազգային համամարդկային հնչողություն պիտի ունենա: Այս իմաստով խորախորհուրդ են Ս. Գաբրիելյանի կտավները: Գաբրիելյանական կերպարները ամենուր են: Նրանք մերթ անցյալի խորքից են հառնում, մերթ ծնվում են հայրենի հողից ու եզերքից, մերթ կարծես իջնում են տիեզերքից, բայց բոլորն էլ կարևոր տեղ են զբաղեցնում ժանրային առումով բազմազան գաբրիելյանական դիմանկարներում և

---

[1] ***Ազատ Արցախ***, *Ստեփանակերտ, 2016թ. 5 նոյեմբեր, էջ 6: Տե՛ս՝ Ն. Սողոմոնյանի, «Նրա համար կարևորը ստեղծագործական պահն էր» հոդվածը:*

[2] *Նույն տեղում, էջ 6:*

կոմպոզիցիաներում: Բնականաբար, գաբրիելյանական կտավների վրա սկզբնական շրջանում (ինչպես շատերի) զգացվում է համաշխարհային արվեստի մեծագույն ստեղծագործությունների ազդեցությունը: Սակայն ուսումնասիրությունը պարզում է, որ աստիճանաբար նրա արվեստը դառնում է ավելի զուլալ, ավելի ինքնատիպ և միայն իրենը: Կերպարակերտման նրա արվեստում գնալով ակնհայտ է դառնում արվեստագետի ներքին զգայականությունը: Բազմազան են Գաբրիելյանի կտավների թեմաները:

Այնտեղ մարդկային կյանքն է, շրջապատը՝ իր հետաքրքրություններով: Վկան՝ «Զրույց», «Թագավորների հանգիստը», «Կինը ծովափին…» և բազում այլ գործեր: Կարևոր է մի առանձնահատկություն. եթե դիմանկարներում Ս. Գաբրիելյանը ընդհանրացնում է կերպարները, ապա կոմպոզիցիաներում տեսնում ենք երևույթների ընդհանրացում և ամբողջացում:

Ս. Գաբրիելյանի արվեստը, նրա ստեղծագործական կերպարը խիստ համահունչ է ժամանակաշրջանին ու սերունդների համար դաս ու դասագիրք է:

Մեծ է նրա ավանդը Արցախի գեղանկարչական դպրոցի զարգացման գործում: Որպես մանկավարժ արվեստագետը Արցախում հիմնեց իր դպրոցը՝ իր ստեղծագործություններով ապրելով արվեստասեր սաների հոգիներում:

«Ասում են՝ անփոխարինելի մարդիկ չեն լինում: Գուցե շատ շատերի համար դա ճշմարիտ է: Ինչպես ասում են՝ գոյություն ունեն օրենքներ և… բացառություններ՝ օրենքից դուրս: Կարծում ենք, նման բացառիկ երևույթներից էր Ս. Գաբրիելյանը»,-կարդում ենք «Ազատ Արցախ» թերթի նոյեմբերի 5-ի համարում: Լրագրող Նվարդ Սողոմոնյանը լրացնում է. «Նրա արվեստում պայմանականությունը գերակշռում է, որը կռահելու, մտորելու տեղիք է տալիս: Սամվելի մոտ առաջին պլան են մղվում գույնի փիլիսոփայությունն ու գեղարվեստը: Նա անընդհատ որոնումների մեջ էր ու հղկում էր իր գործերը: Նրա ստեղծագործության գլխավոր հատկանիշներն են գունային կոլորիտը և պայմանականությունը. շարժում, անընդհատ շարժում, և նրա գործերում ծնվում է լույսը: Նման գործերով է հասարակության մեջ ձևավորվում արվեստի ընկալման կերպը»[1] :

Հիրավի, բազմաբնույթ ու բազմաշերտ է Գաբրիելյանի արվեստը: Նրա ներաշխարհը նախ և առաջ հայրենի Արցախն է՝ նրա լինելության խորհուրդը, նրա կտավների սրբազան ակունքը:

Ս. Գաբրիելյանի համոզմունքով՝ իսկական նկարիչը նա է, ով գտնում է իր սեփական ոճը: Առանց սեփական ձեռագրի, թեմայի նույնիսկ սեփական

---

[1] ***Ազատ Արցախ***, *Ստեփանակերտ, մարտի 20, 2021, էջ 6:*

փիլիսոփայության արվեստագետը, առավել ևս նկարիչը նկարիչ չէ: Ոճը ինչ-որ տեղից չի վերցվում, այն ծնվում է, ձևավորվում յուրաքանչյուր ստեղծագործողի ստեղծագործական աշխարհում՝ յուրատիպ ու յուրօրինակ:

Ս. Գաբրիելյանի համար բնականաբար ուղենիշ էին խորհրդային տարիների արվեստի առանձնահատկությունները: Դա, իհարկե, բնական է, որովհետև ստացած կրթությունը դա է պարտադրում: Ժամանակի ուսումնական հաստատություններն ունեին, այսպես կոչված, «սոցիալիստական գեղարվեստական ոճ ու ուղղվածություն»: Արվեստագետի համար հեշտ չէր դուրս գալ կաղապարներից և ստեղծել միանգամայն ինքնուրույն, անհատական ոճ: Հեշտ չէր ինքնուրույն հայեցակետի ձևավորումը, երևույթների ինքնուրույն ըմբռնումը:

Ս. Գաբրիելյանը զերծ չմնաց իրականության նոր ընկալումից: Խորհրդրդային արվեստագետների նման նա ևս փորձեց ընտրել արևմուտքի արվեստի ոճը, և շատերի նման նրա համար կարևորվեց ազգային արվեստի գաղափարախոսությունը: Գաբրիելյանը ուղղվեց դեպի ազգային մշակույթը:

Մի առիթով արվեստագետը ասել է. «Երբ ես գրիչ կամ մատիտ եմ վերցնում, ես չեմ մտածում այն մասին, որ սկսում եմ նկարել, ձեռքս ինքն է նկարում, գուցե և մեխանիկորեն, բայց քանի որ քո ներսում կա կոմպոզիցիոն մտածողություն, դրա համար էլ ձեռքդ գնում է այն ուղղությամբ, ինչ դու ես ուզում»: Ս.Գաբրիելյանի որոշ ստեղծագործություններ կրում են սյուրռեալիզմի ազդեցությունը: Բոլոր դեպքերում էլ Գաբրիելյանը եզակի գեղագետ է: Անգամ հակասական երևույթները, խորհրդավոր տեսիլքները խոսում են մարդու հոգեվիճակի հետ, ընտրված են ճաշակով, գեղագետի նրբազգացողությամբ:

Ս. Գաբրիելյանին նվիրված հոբելյանական ցուցահանդեսի բացման ժամանակ արվեստի վաստակավոր գործիչ, տաղանդավոր քանդակագործ Յու. Հովհաննիսյանը, ընդգծելով Ս. Գաբրիելյանի բացառիկ տաղանդը գեղանկարչության մեջ, ցավով նշեց, որ «Սամվելի տեղը դատարկ է մնում… Նա միաժամանակ խոստովանեց, որ Գաբրիելյանը այնպիսի հարուստ ժառանգություն է թողել, որ սերունդները դրանով հագեցնելու են իրենց հոգևոր ծարավը: Սամվելը խորհող ու որսող հայացք ուներ և շատ արագ էր ընկալում երևույթները և վարպետորեն դրանք վերարտադրում»[1]:

«Ս. Գաբրիելյանը մասնակցել է համամիութենական և միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների, խմբային և անհատական ցուցադրություններ ունեցել ԱՄՆ-ում, Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Լիբանանում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ֆինլանդիայում: Հատկանշական է այն

[1] ***Հայաստանի Հանրապետություն,*** *Երևան, թիվ 202, 2016, էջ 5:*

հանգամանքը, որ նրա 1500-ից ավելի կտավները գտնվում են արտերկրի մասնավոր հավաքածուներում, ինչը մեծ պատիվ է Արցախի միջազգային հարթակներում ներկայացնող գեղանկարչի, բոլոր արցախցիների համար»,[1]– գրում է բանաստեղծ Դավիթ Միքայելյանը:

Ս. Գաբրիելյանի արվեստի հմայքը առաջին հերթին պայմանավորված է գեղեցկությամբ: Իսկ այդ գեղեցկությունը բխում է ներկապնակի հարստությունից ու բազմազանությունից: Գույների խաղը, յուրօրինակ շեշտերը, դրանցից բխող ընկալման հետաքրքիր պահերը, ինքնատիպ ելևէջները, գունային մերթ ուժեղ, մերթ թույլ, բայց ներքին շերտավորում ունեցող պատկերները կախարդական ուժ ու հմայք են տալիս Ս. Գաբրիելյան արվեստագետի կտավներին:

Գունային կոմպոզիցիայով, գծային ռիթմիկ կառուցվածքով, արտահայտիչ ու ճկուն նկարագրերով աչքի են ընկնում նրա «Պար», «Հարսնահանդես», «Ցլամարտ» կտավները: Հետաքրքիրն այն է, որ էլ արվեստագետը փորձում է յուրացնել համաշխարհային արվեստի լավագույն արտահայտչաձևերը, միշտ երբ մնում է իր սեփական ու նոր աշխարհի մեջ, սեփական աշխարհով է հարաբերվում իրականությանը: Ս. Գաբրիելյանի ստեղծագործական աշխարհում կենտրոնում մարդն է, նրա ներաշխարհը, կյանքի հետ նրա ունեցած կապը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի գաբրիելյանական դիմանկարները, որոնք տարբեր կողմերից ընդգծում են կերպարի առանձնահատկությունը: Հիշենք նրա «Կնոջ դիմանկար», «Մայր», «Աղջկա դիմանկար», «Աննայի դիմանկար» և նմանատիպ մի շարք գործեր, որոնք ունեն ներքին չափազանց զգայականություն, ներաշխարհի բացահայտման բազում խորքեր ու գեղեցկություններ:

Հետաքրքիր է Գաբրիելյանի արվեստի կոմպոզիցիոն առանձնահատկությունը: Մե՛րթ ծավալականությունը, մե՛րթ մոնումենտալությունը հուշարձանակերտ բնորոշումներով հմայիչ են դարձնում կերպարը:

«Թափառական կրկես» կտավից թախիծ է ծորում, բայց մարդկայնորեն զուլալ, մաքրամաքուր, թեթև ու սահուն: Թախծոտ թեման մեր աչքի առաջ պայծառանում է, ասես կտավում ներկա է արվեստագետը՝ կրակոտ երևակայությամբ, բազմազան մտահղացումներով:

Ս. Գաբրիելյանը ստեղծեց իր՝ գաբրիելյանական դպրոցը, յուրատեսակ ձեռագրով ու ոճով՝ մինչև կյանքի վերջը անաղարտ պահելով հայրենիքի կերպարը, որը նրա կտավներում գոյության բանաձև է և արյան կանչ:

---

[1] *Նույն տեղում:*

Գրականություն

1. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 5 նոյեմբեր, 2016:
2. «Ազատ Արցախ», մարտի 20, 2021:
3. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, թիվ 202, 2016:
4. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, նոյեմբերի 11, թիվ 203 (6249), 2015:
5. «Հայրենիք», Երևան, թիվ 9, հուլիս 30, 2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82.01/.09

Գրականություն

Միրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԱրՊՀ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: sirasuhi@rambler.ru

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Սույն հոդվածի հիմքում դրված է արտասահմանյան գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի պատմական հայեցակարգի ճանաչողական խնդիրը քաղաքական տեսանկյունից: Սա դիտվում է որպես պայքարի գործընթաց, որի նպատակը ցեղասպանությունների, բռնությունների ընկալումն է, իսկ հիմնական պատճառը եղել ու մնում է պատմական կրկնության վախը: Բռնությունը որպես դիրքորոշում սահմանվում է ժամանակի քաղաքական մարտավարության և էթնիկ ներհատկության փոխներգործմամբ: Արդի հայեցակարգային որոնումների տեսական հիմք է առաջարկվում թուրք պատմաբան, ցեղասպանագետ, ԱՄՆ Քլարկի համալսարանի պրոֆեսոր Թաներ Աքչամի «Խայտառակ արարք Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանատվության հարցը» աշխատությունը; Գեղարվեստական առումով խնդրին առնչվող հենք ունեն Օմար Փամուքի «Ձյունը», Էլիֆ Շաֆագի «Ստամբուլի բիճը», Էդգար Հիլգենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» Աքրամ Այիսլիի «Քարակերտ երազներ», Գամիդ Ամիրովի «Արցունքներ դրախտում» վեպերը:

Բանալի բառեր՝ *Հայոց ցեղասպանություն, պատմական հայեցակարգ, էթնիկ առանձնահատկություն, մշակութային հիշողություն, մեդդահ, բռնության կրկնություն, համամարդկային խնդիր, ազգային ինքնություն, համիդյան ձեռագիր, պատմամշակութային շերտեր:*

С.Степанян

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОИСКИ ВОСПРИЯТИЯ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН

В основу данной статьи положена познавательная проблема исторической концепции темы Геноцида армян в зарубежной литературе с политической точки зрения как процесса борьбы, целью которого является восприятие геноцидов и насилия, а главной причиной был и остается страх перед историческим повторением. Насилие как позиция определяется взаимодействием политической тактики времени и этничности. В качестве теоретической основы для современных концептуальных поисков предлагается работа турецкого историка, исследователя геноцида, профессора Университета Кларка Танера Акчама «Позорное дело, Геноцид армян и вопрос турецкой ответственности». С художественной точки зрения романы «Снег» Омара Памука, «Стамбульский бастард» Элиф Шафага, «Сказка о последней мысли» Эдгара Хильзенрата, «Каменные сны» Акрама Айисли, «Слезы в раю» Гамида Амирова. имеют основу, связанную с этой проблемой.

Ключевые слова: *Геноцид армян, историческая концепция, этническая особенность, культурная память, медда, повторение насилия, общечеловеческая проблема, национальная идентичность, гамидовский почерк, историко-культурные слои;*

S.Stepanyan

CONCEPTUAL SEARCH FOR UNDERSTANDING THE THEME OF THE ARMENIAN GENOCIDE

This article is based on the cognitive problem of the historical concept of the Armenian Genocide in foreign literature from a political point of view as a process of struggle, the purpose of which is the perception of genocides and violence, and the main reason was and remains the fear of historical repetition. Violence as a position is determined by the interaction of the political tactics of the time and ethnicity. As a theoretical basis for modern conceptual searches, the work of the Turkish historian, genocide researcher, professor at Clark University

Taner Akçam "The Shameful Case, the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility" is proposed. From an artistic point of view, the novels "Snow" by Omar Pamuk, "Istanbul Bastard" by Elif Shafaga, "The Story of the Last Thought" by Edgar Hilsenrath, "Stone Dreams" by Akram Ayisli, "Tears in Paradise" by Gamid Amirov have a basis related to this problem.

Key words: *Armenian Genocide, historical concept, ethnic peculiarity, cultural memory, Meddah, repetition of violence, universal problem, national identity, Hamid's handwriting, historical and cultural layers.*

Վերածննդի դարաշրջանում մարդը՝ որպես բարձրագույն արժեք, համոզված էր, որ ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք: Եվ սա հիմք դարձավ, որ առաջին լուսավորիչները բռնությունը դիտարկեին որպես համամարդկային խնդիր: Չնայած դրան՝ բռնության ու ցեղասպանության խնդիրը մնաց արդիական և 20-րդ դարում ավելի լուրջ բնույթ ստացավ: Մարդկությունը կանգնած էր բազմաթիվ գերխնդիրների առջև, իսկ գրականությունը մարդուն տեսնում էր էքզիստենցիալ որոնումներում: Հայոց ցեղասպանության թեման մուտք գործեց համաշխարհային գրականության համատեքստ, որտեղ բոլոր հեղինակներին միավորում էր Հայոց ցեղասպանությունը համամարդկային խնդրի մակարդակի վրա ուսումնասիրելու նպատակը: Թուրքիայի կառավարության կողմից շարունակվող մերժողական քաղաքական դիրքորոշման դեմ Հայոց ցեղասպանության մնեմոնիկ դարամյա ներկայությունը գրականության մեջ՝ որպես «մշակութային հիշողության» բաղադրամաս, համաշխարհայնացման ու գիտատեխնիկական նվաճումների ազդեցությունների խառնարանում ընտրեց արդի առանցքանիշը՝ Հայոց ցեղասպանության թեմայի պատմական հայեցակարգի ճանաչողական խնդիրը քաղաքական, փիլիսոփայական, հոգեբանական, մշակութային տեսանկյունից: Թուրք գրող Օմար Փամուքն այստեղ կարևորում է վիպասանի դերը.«…Վիպասանի «քաղաքականությունը» առաջանում է նրա երեւակայությունից, ուրիշը լինելու կամ ուրիշին պատկերացնելու նրա կարողությունից: Այդ ընդունակությունը վիպասանին դարձնում է մի խոսնակ, որը բարձրաձայն խոսում է նրանց փոխարեն, ովքեր չեն կարող ճշմարիտ իրականության

մասին արտահայտվել»[1]: Այս դիրքորոշումը ստեղծագործական առումով նշանակում է ճշմարիտ հայացքով իրականության բացահայտումն ու բարձրաձայնումը: «Զյունը» վեպում Կարս քաղաքի նկարագրության պատմամշակութային շերտերում Օ.Փամուքն անընդհատ հիշեցնում է հայի ու հայկականության հենքի մասին. հայ ազգային թատրոնի շենքը, քաղաքապետարանի շենքը, Կարսի եկեղեցին, Վարդանի քարե կամուրջը, հայերի տների փակ դարպասները, հայերի հարուստ լինելու փաստը որպես էթնիկ առանձնահատկություն և այլն: Ամբողջ շրջագայության արդյունքում ընթերցողն ընկալում է մի բան. հայերը Կարս քաղաքի տերերն են եղել, որոնց նա չի հանդիպել Կարսի ներկայում: Ինչու՞: Այս հարցի պատասխանը հեղինակը տվել է գրքի գերմաներեն հրատարակության շնորհանդեսին. «Թուրքիայում 90 հազար քուրդ և մեկ միլիոն հայ է սպանվել; Ոչ ոք դա չի հանդգնում ասել, ես ասում եմ>>[2]:

Պատմական հայեցակարգի ճանաչողական գործառույթը ըստ թուրք գրող Էլիֆ Շաֆագի, գրականության մեջ կրում է բառը, որը պետք է այն լսարանն ունենա, որ ունեցել են Օսմանյան ժամանակաշրջանում մեդդահները, պատմասացները, որոնք շրջում էին տարբեր սրահներ, սրճարաններ ու պատմում պատմություններ, ու նրանց լսելու էին գալիս հասարակության տարբեր խավերի մարդիկ. «Պատմություններ լսելը ճկում է երեւակայությունը, իսկ պատմելը՝ թույլ է տալիս մեզ թռիչք կատարել մշակույթային սահմաններից այն կողմ, անցնել տարբեր փորձությունների միջով, զգալ մյուսների ապրումները>>[3]: 2008թ. մեդդահների արվեստը ներառվել է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում[4]: Հրեա գրող Էդգար Հիլզենրաթը Հայոց ցեղասպանության մասին «Վերջին մտքի հեքիաթը» վեպում Հայոց ցեղասպանության պատմությունը աշխարհին ճաաչելի դարձնելու համար գրական պատասխանատվությունը թողնում է մեդդահին: Վերջինիս պատմություններից ընթերցողն իմանում է Թովմա Խատիսյանի նախնիների մասին, լեգենդներ, որոնք վերաբերում են հայոց թագավորներին և Հայաստանի քրիստոնեական դարձին: Հեղինակը բազմիցս հայկական սովորույթներն ու բարքերի մասին պատմությունները դարձնում է երկխոսության թեմա: Հայ ժողովրդի ազգային ինքնության

---

[1] ***Ավետիսյան Անի***, *Պատմական Կարս քաղաքը Օրհան Փամուքի <<Զյունը>> վեպում, էջ 1: Տես՝ «Ազգ» օրաթերթ, թիվ 16, 28.10.2006:*

[2] ***Ավետիսյան Ա.***, *Պատմական Կարս քաղաքը* ***Օրհան Փամուքի*** *<<Զյունը>> վեպում: Տես՝ https://www.academia.edu/31707714/, էջ 7;*

[3] *Արձակագրության քաղաքականության մասին , տես՝ https://www.ted.com/talks/elif_shafak_the_politics_of_fiction?language=hy#t-1158302/:*

[4] *Տես՝ https://en.wikipedia.org/wiki/Meddah/*

մասին վկայակոչում են գերմանացիները, ավստրիացիները՝ ընդդեմ Թուրքիայի մերժողականության։

Ներկայացված երեք դեպքերում էլ վեպի կերտումը դիտվում է որպես պայքարի գործընթաց, որի նպատակը ցեղասպանությունների, բռնությունների ընկալումն է, իսկ հիմնական պատճառը եղել ու մնում է պատմական կրկնության վախը։ Այս առումով, 20-րդ դարի գեղարվեստական մտքի ձևավորման առաջնային տեսական հիմք է թուրք պատմաբան, ցեղասպանագետ, ԱՄՆ Քլարկի համալսարանի պրոֆեսոր Թաներ Աքչամի «Խայտառակ արարք Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանատվության հարցը» աշխատությունը (հայերեն թարգմանվել է 2021թ.), ուղղված թուրքերի մերժողականության դեմ.»…որ, լայնածավալ դաժան բռնությունների բոլոր ուսումնասիրությունները մեզ մեկ հիմնական սկզբունք են ուսուցանում. նման դեպքերի կրկնությունը կանխելու համար մարդիկ պետք է նախնառաջ գիտակցեն իրենց սեփական պատասխանատվությունը, քննարկեն այդ հարցը, վիճեն դրա շուրջ և ճանաչեն այն։ Նման ազնիվ գիտակցման բացակայության դեպքում այդպիսի գործողությունների կրկնվելու հավանականությունը մեծ է, քանի որ յուրաքանչյուր խումբ կարող է դիմել բռնության։ Երբ ստեղծվում են նպաստավոր պայմաններ, բռնության այդ հակումն ամենաչնչին պատրվակով կարող է իրականություն դառնալ։ Բացառություններ չկան>>[1]։ Թաներ Աքչամի ընդգծումով սա ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, հայկական Սփյուռքի և Թուրքիայի միջև առկա խնդիր է, այլ ունի նաև համաշխարհային բնույթ և մարդու իրավունքների համար պայքարի կարևոր մասն է կազմում [2]։ Հայոց ցեղասպանության իրականացմանը նախորդող՝ Օսմանյան բռնակալության ռեժիմի տակ գտնվող ժողովուրդները համարվում էին սուլթանի հպատակներ։ Այս ընդհանուր հալածանքի տակ մուսուլմանների ու ոչ մուսուլմանների միջև խտրականությունը հանգեցրել էր իրավական բացահայտ խախտումների։ Իսլամական օրենքով ձևակերպվել ու հաստատվել են մշակութային տարբեր խմբերը բնորոշող հասկացություններ, ինչպես օրինակ՝ «գրքի մարդիկ>>, «պայմանագրի մարդիկ>>, «պարտքի մարդիկ>>, «զիմմիներ» և այլն։ Տարբեր հրամանագրերով ոչ մուսուլմանների համար աստիճանաբար ավելանում էին նաև կենցաղային տարբերություններ. հայերի կոշիկներն ու գլխաշորերը պետք է կարմիր լինեին, մինչդեռ հույներինը սև էին, իսկ հրեաներինը՝ կապտավուն, նրանց տները նույնպես պետք է ներկված լինեին տարբեր

---

[1] ***Աքչամ Թ.***, *Խայտառակ արարք, Ե., 2021, էջ 8։*

[2] ***Աքչամ Թ.***, *Հայոց ցեղասպանության հարցը համաշխարհային բնույթ ունի, ազատության ռադիոկայան, 04.2020*

գույնով, զիմմիներին արգելված էր մաշիկներ հագնել, իսկ բաղնիքում նրանք պետք է լինեին փոքր զանգուլակներով: Այս ժամանակաշրջանը Թաներ Աքչամը համարում է Հայոց ցեղասպանության ետնապատկերը: Բռնության կրկնության համար նա կարևորում է նաև հոգեբանական գործոնը, որովհետև ըստ հեղինակի, թուրք հասարակությունը հակված չէ վերլուծել սեփական անցյալը: Պատմությունից խուսափելն այս դեպքում նա համարում է հետևանք նաև պատմության խեղաթյուրման:

Պատմության կրկնության պատճառներից իսպանացի գրող Գոնսալո Գուարչը առանձնացնում է թուրքերի՝ մարդ սպանելու հակումը գենետիկ մակարդակում: Սուլթանից մինչև հասարակ զինվորը, թվում է, վարակված են այդ արատներով, և սա հանգեցնում է հասարակության մերկացման, ինչը երևան է հանում Օսմանյան կայսրության ամբողջ արատավորությունը: Նման նկարագիր տալիս է նաև իսպանացի գրող Խուան Գոյտիսոլոյը ստամբուլյան ճանապարհորդական հուշերում՝ ներկայացնելով թուրք էթնոսի մասին Արևմուտքում տարածում գտած կարծիքը. «Օսմանյան կայսրության շքեղության շրջանում Արևմուտքում թուրքի դոմինանտ պատկերը ներկայանում է որպես բարբարոս, անգութ, դաժան ու արյունարբու՝ հանձնված մարմնական հաճույքներին ու սոդոմի գարշելի փչացածությանը>>[1]: Այս ձևակերպումը նորություն չէ, այս մասին հանդես է եկել գերմանացի հայտնի վերլուծաբան ու հրապարակախոս Հայնրիխ Ֆիրբյուխերը՝ հիմք ընդունելով էության ոճրագործ ներհատկությունը, որն ուղղորդում է ոճիրի կրկնությունը «Բռնություն, բռնություն և դարձյալ բռնություն. ահա թուրքական պատմության խորհրդանշանը»[2]:

Քաղաքական ու մարտավարական ժառանգությունը, որը սուլթան Համիդը թողել է երիտթուրքերին, սերնդեսերունդ պահպանվել է առ այսօր կրոնական ու աշխարհիկ դիմանկարում: Էլջին Գրոսքլոուսի (1899-1983) «Արարատ» վեպում հերոսներից մեկը հայտնվում է Բաքու քաղաքում: Նկարագրելով Բաքվի ջարդերը՝ հեղինակը ցույց է տալիս թուրքերի և կովկասյան թաթարների քաղաքականության նույնությունը: Մի հայի սատարելու համար Աքրամ Այիսլիի «Քարակերտ երազներ» վեպում ադրբեջանցի մի հայտնի դերասան ենթարկվում է մահացու ծեծի: Անգիտակից վիճակում նա միայն ճամփորդում է ժամանակների միջև, ներկայի պատկերներում ականատես դառնում անցյալի բռնության շարունակությանը: Տիրանալով թատրոնի աշխատակցի տանը՝ թուրք պաշտոնյան նրան նետում է բարձրահարկ շենքի լուսամուտից, ու դեպքը

---

[1] ***Կարապետյան Ս.***, *Հայց ցեղասպանության թեման իսպանական արձակում: Տես՝ Goytisolo J. Estambul otomano, Barcelona, Peninsula, 2003, p. 76.*

[2] ***Ֆիրբյուխեր Հայնրիխ***, *Հայաստան 1915-ին,Երևանի Պետական հր., Ե.,2000:*

ներկայացվում է որպես ինքնասպանություն: 21-րդ դարի Արցախյան պատերազմներում թուրք քաղաքականության ժառանգորդները դաղստանցի գրող Գամիդ Ամիրովի «Արցունքներ դրախտում»/2022թ./ վեպում պահպանում են համիդյան ձեռագիրն ի դեմ արցախցու, որում Աստված իր հոգին է դրել՝ նրան նվիրելով դրախտը: Իսկ ամենադառը մարդկային արցունքները թափվում են դրախտում: Վեպն իր գաղափարական նշանակությամբ փորձ է՝ հատելու ազգային սահմանները և հասկանալու հայկական ինքնագիտակցության ողջ խորությունը:

Վեպի տարածական ու ժամանակային տիրույթներում բռնության ժառանգակրի որդեգրած քաղաքականությամբ իսկ ստեղծվում է նաև ներքին՝ Թուրքիայում ժողովրդավարության խնդիրը: Ժամանակակից Թուրքիայի ժողովրդավարության համար պայքարող երիտասարդ սերնդի խոսքը բազմաթիվ զոհերի ու բանտարկումների պատճառ է դառնում: Հարյուրավոր երիտասարդ լրագրողներ գտնվում են Թուրքիայի բանտերում: Թուրք գրող Էլիֆ Շաֆագի «Ստամբուլի բիճը» վեպում հարբեցող ծաղրանկարիչը համոզված է, որ կատարած ծաղրանկարների պատճառով հերթական անգամ կբանտարկվի. «Հարբեցող ծաղրանկարիչը կառավարությունը պատկերել է որպես ոչխարի հոտ, իսկ վարչապետին՝ ոչխարի մորթու մեջ մտած գայլի տեսքով, ու այդ քաղաքական ծաղրանկարները մեծ համբավ էին ձեռք բերել: Եթե այս փոխաբերությունն էլ ձեռքից առնեին, այլ բան ուներ մտածած. պինգվիններ: Մեջլիսի բոլոր անդամներին որոշել էր սմոքինգով պինգվինների տեսքով նկարել>>[1]: Թուրքիայում ժողովրդավարության գոյության մասին նա ասում է. «Եթե այս երկրում գոնե մի քիչ դեմոկրատիա կա, այս ձեռքիս ալկոհոլի շշին ենք պարտական: Ոչ սոցիալական ռեֆորմները, ոչ քաղաքական շարժումները, ոչ անգամ ազատագրական պատերազմը: Թուրքիային մյուս բոլոր մուսուլման երկրներից առանձնացնողը սա է, այս գարեջուրը…>>[2]: Հեղինակը խոսում է արմատների մասին, Ստամբուլ քաղաքի մասին, որտեղ բնակվել են հայեր, հույներ, որոնք նույնքան բնիկ են, որքան թուրքերը: Արմատներից զրկումն ու դրա մոռացումը, որը հանգեցնում է մշակութային ճգնաժամի, հեղինակը դիտարկում է իր ժամանակաշրջանի քաղաքական տեսանկյունից. այսօրվա Թուրքիայում օտար են հայերը, բայց օտար է նաև հեղինակը: Հեղինակը պայքարում է հայրենի երկրի ժողովրդավարության հաղթանակի համար, ինչի համար և դատապարտվում է: «Թուրքիայում դժվար է հայ լինել>>[3]-The Armenien Mirror Spectator-ին տված հարցազրույցում ասել

---

[1] ***Շաֆագ Է.***, *Ստամբուլի բիճը, <<Անտարես>>, Ե., 2012, էջ 94;*

[2] *Նույն տեղում, էջ 103;*

[3] *-The Armenien Mirror Spectator, May 12, 2016:*

է հեղինակը: Սա ամենամեծ խնդիրն է Թուրքիայում, որտեղ ամեն ինչ մատնված է միօրինակությանը: Նույնիսկ նրա թուրք լինելու փաստը ոչ մի առավելություն չէր տվել, նրա կյանքը նույնքան վտանգված է, որքան որ Հրանտ Դինքինը կամ նրա համախոհներնը: Այս մասին է խոսել նաև Հրանտ Դինքին ուղղած նամակում. «Այս երկիրը տվել է ազգայնական, այլատյաց և խտրական քաղաքականություն, ...Այն գանձում էր իր մտավորականությանը, կախում, խոշտանգում և բանտարկում երիտասարդներին իրենց մտքերի համար: Նա մերժում էր մտքի ազատությունը, խոսքի ազատությունը>>[1]: Այն հարցը, թե գլխավոր կերպարներից Մուստաֆայի մահը սպանություն է, թե ինքնասպանություն, մնում է օդում կախված, բայց երկու դեպքում էլ այն արդարացվում է, որովհետև անցյալը կրնկակոխ հետևում է քեզ ու հիշեցնում իր մասին: Քազանջյանների ընտանիքի բոլոր անդամներն ունեն այս խնդիրը, ինչը նաև տոհմի ու Թուրքիայի պետության ու հասարակության խնդիրն է:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

[1] *An open letter to Hrant Dink: Տես՝ https://www.elifsafak.us/yazilar.asp?islem=yazi&id=361:*

УДК 327(470:44)
Всеобщая история

Валерий АВАНЕСЯН
Кафедра истории АрГУ, д.и.н., профессор
E-mail: vm.avanesyan@yahoo.com

О НЕКОТОРЫХ АСПЕКТАХ ГЕРМАНСКОЙ ПРОБЛЕМЫ В ФРАНКО-РУССКИХ ОТНОШЕНИЯХ (1848-1851гг.)

Վ.Ավանեսյան

ՖՐԱՆԿՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՈՐՈՇ ԱՄՊԵԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1848-1851)

1848-1849 թվականների եվրոպական հեղափոխություններում ֆրանկո-ռուսական հարաբերությունները, անկասկած, առանձնահատուկ տեղ էին գրավում : Այս հարաբերությունների բարելավումը կամ վատթարացումը պայմանավորված էր նրանով, որ Վիեննայի համակարգում հայտնվեցին նոր հանգամանքներ, որոնք առաջացել էին Ֆրանսիայում, Պրուսիայում, Ավստրիայում և Իտալիայում, հեղափոխությունների արդյունքում:
Ուսումնասիրության մեջ հեղինակը ներկայացնում է իր տեսակետը Ֆրանսիայի և Ռուսաստանի դիրքորոշման վերաբերյալ գերմանական պետությունների միավորման հարցում : Ավստրիայի և Պրուսիայի միջև հեգեմոնիայի համար պայքարը սրվեց և կարող էր հանգեցնել բացահայտ հակամարտության: Ֆրանսիան և Ռուսաստանը որոշել են չեզոքություն պահպանել: Ավստրիական կայսրության ոչ գերմանական տիրույթները գերմանական միության կազմում ընդգրկելու մեկ այլ կարևորագույն հարցի վերաբերյալ երկու կաբինետների մոտեցումները նույնպես մոտ էին:
Բանալի բառեր՝ *գերմանական խնդիր, Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ գերմանական և Փոքր գերմանական միավորման ուղիներ, Նիկոլայ I, գերմանական միություն:*

В европейских революциях 1848-1849гг. франко-русские отношения, бесспорно, занимали особое место. Улучшение, либо ухудшение этих отношений были связаны с тем, что появились новые обстоятельства в Венской системе,

Ակնհայտ է, որ ներքին ճգնաժամի ու պարտության հետևանքների հաղթահարման մշակվելիք ցանկացած ծրագիր պետք է նախատեսի այդ ճակատում գործերը շտկելու քայլեր: Դրանցից մեկը *իշխանություն-ընդդիմություն* կոնֆլիկտային խոսույթի և հանրային տրամադրությունների վրա ներազդելն է Արցախյան փաթեթում առկա այնպիսի փաստարկների միջոցով, որոնք չեն գնահատվել ըստ արժանվույն, հիշատակվել են հպանցիկ, ստացել ոչ հայանպաստ մեկնաբանություն կամ ընդհանրապես դուրս են մնացել շրջանառությունից: Դրա բացատրություններից մեկն ըստ երևույթին այն է, որ արցախյան հարցում իշխող բազմակարծությունը մեզանում հաճախ ներկայացվում էր (և շարունակվում է ներկայացվել) Ադրբեջանի նկատմամբ առավելություն՝ խոսքի ազատության բնագավառում ձեռք բերված նվաճում: Դա իրականում տեղեկատվական պատերազմում անկարողությունը քողարկելու ձև էր (և մեր օրերում էլ մնում է այդպիսին), որ հաճախ արդարացվում է «մեր ճշմարտությունը ինքն էլ իր համար ուղի կհարթի, և դրա համար ժամանակ ու միջոցներ ծախսելու կարիք չկա» պարզունակ հիմնավորվումով, երբ ակնհայտ է, որ տեղեկատվական պատերազմի ճակատներում անպաշտպան թողնված ճշմարտությունը սովորաբար կորչում է շրջանառվող կեղծիքների հեղեղում, ինչը ժողովրդավարության կամ խոսքի ազատության հետ ոչ մի առնչություն չունի: Ավելին, խնդիրը միջազգային հարթակներում ներկայացնելու գործում պաշտոնապես պատասխանատու (իրականում անպատասխանատու) որոշ անձինք դրա մեջ սոսկ բառախաղեր էին/են տեսնում՝ անգիտակ, որ հիմնախնդրի մասին բանալի ամեն մի բառի ու բանաձևի հիմքում խնդրի ըմբռնման հայեցակարգ է ընկած և որ միայն տեղեկատվական հոսքերում

ակտիվ ներդրումն ու զանգվածային տարածումն է դրանք դարձնում հանրային գիտակցության փաստ ու ճշմարտություն: Լռության մատնված, չգիտակցված ու չասված ճշմարտությունը մնում է ճշմարտություն ինքն իր համար և չի դառնում փաստարկ մեզ պարտադրված տեղեկատվական պատերազմում: Արցախյան թեմայով մենք ունենք նման ճշմարտությունների մի ամբողջ փաթեթ, որոնց որպես կանոն փոխարինում են Բաքվից տրամադրված բացահայտ կեղծ դրույթներ: Ներքին ու արտաքին լսարանին հղված Բաքվի ուղերձների ետևում դժվար չէ տեսնել ապատեղեկատվության համակարգված արտադրության հզոր մի մեքենա, որին կցված են քաղաքական ընտրախավը, ողջ փորձագիտական ու լրագրողական բանակը և որոնց գործը պաշտոնապես հնչեղություն ստացած, այլընտրանքներ ու տարբնթերցումներ չհանդուրժող հայեցակարգի քարոզն է: Անվիճելի է, որ Բաքվի համակարգված կեղծիքը ցայսօր հաղթում է ինքն իր հույսին թողած մեր ճշմարտությանը, որը հենց «մեր տանը» կորչում է անհիմն տեսակետների ազատ ժխորում, միտումնավոր կամ չիմացությամբ հրամցվող կեղծիքների հեղեղում:

Ադրբեջանի քարոզչական գրոհները ետ մղելու և նրան հաղթելու համար մեզ ոչ միայն հիմնավոր տեղեկատվական քաղաքականություն, այլև համարժեք մեթոդաբանություն և դրան հետևելու կարգապահություն է պետք: Ասվածը բնավ չի նշանակում, որ նման մարտավարությունը ենթադրում է խոսքի ու կարծիքների ազատության սահմանափակում գիտական հետազոտությունների դաշտում: Բնավ: Հակառակը՝ այն կոչված է օգնել, որպեսզի հենց գիտական բացախոսությամբ ու կարծիքների բախումով ձեռք բերած ճշմարտության ձայնը ոչ միայն չկորչի տեղեկատվական աղմուկում, այլև ընկճի շրջանառվող կեղծիքները: Շատ բան պայմանավորված է նրանով, որ քաղաքական ընտրախավը, փորձագիտական ու լրագրողական համայնքը, որոնք հատուկ տեղ ունեն տեղեկատվական դաշտի ձևավորման գործում, հասու լինեն հիմնախնդրին առնչվող փաստաթղթերի ու իրադարձությունների՝ գիտությամբ հաստատված «բնածին իմաստներին»՝ դրանց խեղաթյուրումներին հակադարձելու համար:

Որպես վերը ասվածի ընդհանրացում՝ կարող ենք արձանագրել սույն հոդվածին կանխահղվող մեթոդաբանական դրույթը՝ հետևյալ ձևակերպումով՝ մինչև մենք չունենանք Ղարաբաղյան հիմնախնդրի պատմական, իրավական ու քաղաքական փաստերին չհակասող հանրայնորեն ընկալելի հայեցակարգ, որը որդեգրված կլինի քաղաքական վերնախավի և այն գործադրող արտաքին քաղաքականության պատասխանատուների կողմից, մենք դատապարտված կլինենք ձախողումների դիվանագիտական, քաղաքական ու ռազմական ճակատներում և կշարունակենք մեկս մյուսի վրա բարդել այդ ձախողությունների մեղքը: Մինչև մենք միասնական չլինենք մեր ազգային

հարցերի ըմբռնումներում, միասնական չենք լինի տեղեկատվական ու հրանոթային պատերազմներում:

Հոդվածում նպատակ է դրվում վեր հանել արցախյան խնդիրը երկրում և արտերկրում ներկայացնող պատասխանատուների՝ պետական ու կուսակցական գործիչների, փորձագետների ու լրագրողների շրջանում խնդրին առնչվող բանալի հասկացությունների, բանաձևերի, փաստաթղթերի ու իրադարձությունների փոխբացառող մեկնաբանությունները՝ դրանց համաձայնեցված ըմբռնմանը հասնելու համար: Հեղինակը առաջին հերթին նկատի ունի այն հասկացություններն ու բանաձևերը, որոնց շուրջ տարակարծություններն ակնհայտ են: Հոդվածում անդրադարձ կկատարվի հետևյալ հասկացություններին՝ *Լեռնային Ղարաբաղ, հակամարտության սկիզբ, հակամարտության կողմեր, Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունք, պետությունների տարածքային ամբողջականության սկզբունք, Կովբյուրոյի որոշումներ, Կարսի պայմանագիր, գրավյալ տարածքներ, փոխզիջում, փախստականներ, Խոջալուի/Ադդամի ողբերգություն, Բիշքեկյան համաձայնագիր*: Վիճարկվող և ճշգրտման ենթակա բանաձևերից անդրադարձ է կատարվում հետևյալներին՝

ա) *1991 թ. սեպտեմբերի 2-ի Հռչակագրով Լեռնային Ղարաբաղը օրինաբար դուրս է եկել Ադրբեջանական Հանրապետության կազմից,*

բ) 1991-1994 թթ. Արցախը ազատագրել է Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածքները՝ որպես անվտանգության գոտի,

գ) Մինսկի խումբը հակամարտության կարգավորման հիմքում դրել և գործադրել է տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքները:

Սրանք միայն մի մասն են այն հասկացությունների ու բանաձևերի, որոնց մասին մեզանում համաձայնեցված, հայեցակարգորեն ընդունված տեսակետներ չկան: Տարակարծությունները դրանց շուրջ չեն մարվում նույնիսկ/նաև ընկերական կամ ընտանեկան սեղանի շուրջ բանավեճերում: Դրանք ավելի խոր արմատներ ունեն հանրային գիտակցության մեջ և ի վերջո դառնում են քաղաքական դաշտի բաժանարար գծեր ու անհանդուրժողականության խրամատներ: Այդ տարըմբռնումների հաղթահարումով է նաև էականորեն պայմանավորված ոչ միայն ղարաբաղյան, այլև դրանից ածանցվող ազգային մյուս հիմնարար հարցերում մեր հասարակության միասնականությունն ու համերաշխությունը՝ ի պատասխան աշխարհաքաղաքական իրադրության ահագնացող բարդացման:

Հատուկ ընդգծել է պետք, որ թվարկված հասկացությունների ու բանաձևերի հստակեցումը պետք է կատարվի Բաքվի կողմից դրանց կեղծ ըմբռնումներ վերագրելու փորձերի հաշվառումով, ինչը թույլ կտա մեր ընդդիմախոսի

տեղեկատվական հնարքների հետևում տեսնել Արցախի դեմ լարվող քաղաքական ծուղակներն ու թակարդները և կատարել դրանց հակադարձող քայլեր:

Եվ այսպես՝ Արցախյան հիմնախնդրի բանալի այն հարցադրումների ու բանաձևերի մասին, որոնք տարբեր, իրարամերժ կամ ուղղակի սխալ պատասխաններ են ստանում ՀՀ և ԼՂՀ քաղաքական վերնախավում (առաջին դեմքեր, օրենսդիր ու գործադիր իշխանությունների պատասխանատուներ), փորձագիտական համայնքում ու շարքային քաղաքացիների մոտ: Մենք տարբմբռնվող այդ հարցադրումների ու բանաձևերի թվարկումը կսկսենք ամենից տարածվածներից՝ ցույց տալու համար, թե մենք ինչպես ենք հանրայնորեն մոլորվում նույնիսկ ամենապարզ հարցերում:

Ահա դրանցից ամենահայտնին՝ «Լեռնային Ղարաբաղի շուրջ, ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ մենք յոթ շրջաններ գրավե՞լ ենք, թե ազատագրել»: 1994-1995 թվականներին հրադադարի մասին Բիշկեկյան արձանագրության ստորագրումից անմիջապես հետո քիչ չէին պետական գործիչներ, որոնք խորապես համոզված էին, որ ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը «Լեռնային Ղարաբաղի շուրջ» մասնակիորեն կամ լրիվ գրավել է Ադրբեջանական Հանրապետությանը պատկանող յոթ շրջաններ: Այստեղից է ծնվել մեզանում լայնորեն շրջանառվող «Տարածքներ խաղաղության դիմաց» բանաձևը: Իմաստն այն էր, որ մենք «Լեռնային Ղարաբաղի շուրջ» մեր կողմից որպես անվտանգության գոտի[1] գրաված յոթ շրջանները կամ դրանց մի մասը խաղաղության դիմաց ետ պիտի տանք Ադրբեջանական Հանրապետությանը: Այդպես էր մտածվում փոխզիջումը, և թվում է՝ ամեն ինչ լավ կլինի, եթե Բաքուն համաձայնվեր այդ առաջարկի հետ, մանավանդ որ նաև Մինսկի խումբն էր պնդում Ադրբեջանին վերադարձնել «Լեռնային Ղարաբաղի շուրջ» արցախցիների կողմից գրաված յոթ շրջանները: Հետագա տարիներին հայկական փորձագիտական շրջաններում արմատ ձգեց մի այլ տեսակետ այն մասին, որ այդ տարածքները արցախցիների կողմից ոչ թե գրավվել են որպես անվտանգության գոտի, այլ ազատագրվել են: Այդպես սկիզբ առավ ներքին մի տարաձայնություն կամ բանավեճ այն հարցի շուրջ, թե մենք գրավե՞լ, թե ազատագրել ենք «Լեռնային Ղարաբաղի շուրջ» յոթ շրջաններ; Առաջին հայացքից երկրորդ մոտեցումը ակնհայտորեն թվում էր ճիշտ ու ճշգրիտ: Սակայն պարզվում է, որ մենք չէինք նկատել այն ծուղակը, որի մեջ մենք հանրայնորեն (չնչին բացառություններով) գտնվում էինք: Բանն այն է, որ Արցախի պաշտպանական բանակը Լեռնային Ղարաբաղի շուրջ ոչ մի թիզ հող

---

[1] *Արցախի վերահսկողության տակ անցած տարածքները որպես «անվտանգության գոտի» որակելն արդեն իսկ նշանակում էր հրաժարում այդ տարածքների նկատմամբ ունեցած իրավունքներից, որ մեզ տրամադրում էր հիմնախնդրի իրավական փաթեթը:*

չէր գրավել կամ ազատագրել: Մեր կողմից ազատագրված բոլոր տարածքները Լեռնային Ղարաբաղում էին և ոչ թե նրա շուրջ: Համոզվելու համար ուղղակի պետք էր նայել քարտեզին կամ իմանալ, որ մեր կողմից ազատագրված բոլոր տարածքները աշխարհագրորեն Լեռնային Ղարաբաղ են: Այդ տեսակետին է եղել նաև ՌԿ(բ)Կ Կովբյուրոն, որը, Լեռնային Ղարաբաղը պոկելով Խորհրդային Հայաստանից, որոշել էր ճանաչել նրա (այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի) լայն ինքնավարություն ունենալու իրավունքը: Այդ հանգամանքը ընդունել է նաև Բաքուն, երբ 1920 թ. դեկտեմբերի 2-ի հռչակագրով ճանաչել էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Ավելին, 1923-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին Դեկրետով Բաքուն ընդունել է, որ մարզը Լեռնային Ղարաբաղի մի մասն է միայն[1]: Մենք մոռացանք դա և ոչինչ չհակադրեցինք 90-ականներին Բաքվի կողմից շրջանառության մեջ դրված այն բանաձևին, թե իբր արցախյան կողմը տարածքներ է գրավել Լեռնային Ղարաբաղի շուրջ: Մենք այդպես էլ «պաշտոնապես չհասկացանք», որ ԼՂԻՄ-ը Լեռնային Ղարաբաղի մի մասն է միայն, չնայած դրա համար ոչ բարձրագույն կրթություն էր պետք ունենալ, ոչ էլ բարձրակարգ դիվանագետ լինել: Չհասկացանք, որ Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակը դուրս չի եկել Լեռնային Ղարաբաղի սահմաններից, որպեսզի «նրա շուրջ տարածքներ գրավի», ինչը ուղղակի հաստատումն է այն բանի, որ մենք բանակցային գործընթացի շրջանակնում Բաքվի ու ԵԱՀԿ-ի հայեցողությանն էինք թողել *Լեռնային Ղարաբաղ* հասկացության սահմանման կամ, ավելի շուտ, այդ հասկացության աղավաղման գործը:

Այժմ համառոտ անդրադարձ այն հարցին, թե ինչ նկատառումներով էին Բաքուն և ԵԱՀԿ-ն դիմում հասկացությունների զանազան կերպափոխումների: Եթե նրանք ցանկանում էին ընդգծել, որ ԼՂՀ-ն գրավել է Ադրբեջանական Հանրապետությանը պատկանող տարածքներ, ապա աշխարհագրությունը և քաղաքական իրողությունները նրանցից պահանջում էին ասել, որ ԼՂՀ Պաշտպանական բանակը տարածքներ է գրավել ԼՂԻՄ-ի, այլ ոչ թե Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս: Բայց նրանք հրաշալի գիտակցում էին, որ այդ համատեքստում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին ոչինչ չպետք է ասվի, քանի որ այդ անվանման միայն հիշատակումը խոսույթի դաշտ է բերում հայկական ինքնավար մարզին՝ ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի սուբյեկտին՝ նրան վերապահված ինքնորոշման իրավունքով: ԼՂԻՄ-ի՝ որպես

---

[1] *Ողջ Լեռնային Ղարաբաղն էր հայկական և ողջ Լեռնային Ղարաբաղին պիտի տրվեր լայն իրավունքներով ինքնավարություն: Խախտելով Կովբյուրոյի առանց այն էլ ապօրինի որոշումը՝ Բաքուն այնուամենայնիվ Լեռնային Ղարաբաղի այն մասը, որին տրվեց ինքնավարության կարգավիճակ, ճանաչեց որպես հայկական:*

ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի միավորի անվանումը հնարավորինս պետք էր շրջանցվեր՝ նրա հետ կապված թեմաներից խուսափելու համար: Եվ այդպես էլ արվեց: Փոխանակ ասելու՝ «ղարաբաղցիները տարածքներ են գրավել ԼՂԻՄ-ի շուրջ» (այս դեպքում մենք այդ ձևակերպումը, որ նույնպես կեղծիք է, ներկայացնում ենք նրանց անունից), նրանք շրջանառում էին «ղարաբաղյան ուժերը տարածքներ են գրավել Լեռնային Ղարաբաղի շուրջ»՝ նույնացնելով աշխարհագրական Լեռնային Ղարաբաղը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ վարչաքաղաքական միավորի հետ՝ նրա անունը լռության ադրբեջանական տարածքները զավթած կողմ: Եվ դա արվել է ոչ միայն անվանումների շուրջ կատարվող հնարախաղերի միջոցով, այլև *Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ* կոնֆլիկտի սկիզբը ժամանակի մեջ տեղաշարժելու հնարքով:

Հայտնի է, որ Ղարաբաղյան հակամարտության սկիզբը 1918 թվականն է, երբ թուրքական բանակի կողմից հիմնած և պատմության մեջ առաջին անգամ հայտնված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) իր ծնողի և հիմնադրի ծավալապաշտական մղումների հունում տարածքային հավակնություններ է ներկայացրել բոլոր հարևաններին: Այդ անհիմն հավակնությունները վերաբերում էին նաև Լեռնային Ղարաբաղին, որը հենց 1918-ին ձևավորված իր լեգիտիմ իշխանությունների գլխավորությամբ ինքնապաշտպանական մարտերում մինչև տարածաշրջանի խորհրդայնացումը կարողացավ դիմակայել նախ օսմանյան բանակի, ապա անգլիացիների օգնությունը ստացող օսմանյան ու ադրբեջանական թուրքերի գրոհներին: Հենց 1918-ի հոկտեմբերին են Արցախի ինքնապաշտպանական ուժերը Մամնա գյուղի տակ ջարդել թուրքական զորագունդը, որը փորձում էր ուժով ենթարկել Լեռնային Ղարաբաղը իր խամաճիկին՝ ԱԴՀ-ին:

1918-1921 թթ. Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված իրադարձությունները փաստական հարուստ նյութերի հիման վրա լայնորեն լուսաբանված են գրականության մեջ: Մեր կողմից արծարծվող թեմայի տեսակետից կարևոր է հիշատակել, որ արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի սահմաններում հայտնվել է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից 1921 թ. հուլիսի 5-ի փաստորեն չընդունված, բայց գործողության մեջ դրված ապօրինի որոշմամբ: Դա միակ «փաստաթուղթն է», որին կարող է հղում կատարել Բաքուն՝ հիմնավորելու համար Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր հավակնությունների օրինականությունը: Սակայն նույնիսկ այդ չընդունված փաստաթղթով ճանաչվել է լայն իրավունքներով մարզային ինքնավարություն ունենալու Լեռնային Ղարաբաղի իրավունքը: Փաստաթուղթը հստակ արձանագրում է՝ Շուշի մայրաքաղաքով, լայն իրավունքներով մարզային ինքնավարության կարգավիճակ տրամադրել

Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին: Առանց այն էլ բռնազավթման ակտի մասին այդ որոշումը Բաքուն խախտել է 1923 թվականին՝ ինքնավար մարզը դեկրետավորելով ոչ թե Լեռնային Ղարաբաղի, ինչպես նշված էր Կովբյուրոյի որոշման մեջ, այլ միայն նրա մի մասի (գրեթե մեկ քառորդի) վրա՝ մարզի սահմաններից դուրս թողնելով Արցախի կենտրոնական ու հյուսիսային շրջանները: Փաստորեն, 1991-1994 թվականներին ԼՂՀ Պաշտպանական բանակը ազատագրել է միայն մի մասը այն տարածքների, որ Կովբյուրոյի որոշման համաձայն՝ մաս պիտի կազմեին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (Շահումյանի, Քարհատի և Հյուսիսային Արցախի շրջանները մնացել էին օկուպացված): ԼՂՀ-ն սահմանադրորեն պետական իշխանություն է իրագործել այն տարածքներում, որոնք օրինականորեն (և հարցին վերաբերող միակ փաստաթղթով, որին կարող է հղում կատարել Բաքուն) պետք է մաս կազմեին հայկական ինքնավար մարզի: Եվ ոչ ավելին: Հոդվածի սկզբում թվարկված տարընմբռնվող կամ բացահայտ խեղաթյուրվող հասկացություններից ու բանաձևերից առաջնային հպանցիկ դիտարկման համար վերն ընտրված *Լեռնային Ղարաբաղ, Ղարաբաղյան կոնֆլիկտի սկիզբ* հասկացությունների և *Լեռնային Ղարաբաղի շուրջ գրավյալ տարածքներ* բանաձևի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք շրջանառության մեջ են մտցվել հատուկ միտումնավորությամբ՝ հակամարտության խեղված կերպար ձևավորելու նպատակով: Եվ պետք է ասել, որ Բաքվի համապատասխան ծառայություններին դա հաջողվել է անել, քանի որ դրանք ի վերջո ներդրվել են և՛ հանրային գիտակցության մեջ, և՛ բանակցային խոսույթում՝ առանց մեր դիմադրությանը հանդիպելու:

Բանակցային խոսույթում (թող թույլ տրվի ասել) մշտական գրանցում ստացած և խնդրի էությունը կեղծող վերը նշված հասկացություններն ու դիտարկված բանաձևը ամենից հեշտն էին՝ քողազերծելու տեսակետից: Բայց այն, որ դրանք չվիճարկվեցին մեր դիվանագետների կողմից և չմերժվեցին, հասկանալի է դարձնում, որ Բաքվի և ԵԱՀԿ կողմից շրջանառության մեջ դրվող փոքր-ինչ ավելի լուրջ վերլուծական մոտեցում պահանջող հասկացություններն ու բանաձևերը, որ ավելի նուրբ ձևով էին խեղաթյուրում խնդրի էությունը, դարձյալ պետք է առանց մեր դիմադրության ներդրվեին բանակցային խոսույթում և տեղ գտնեին խնդրին առնչվող փաստաթղթերում ու պատասխանատու մարմինների հայտարարություններում: Այն, որ հայկական դիվանագիտական միտքը հենց այսօր ունի դրանց վերլուծության կարիքը, որևէ կասկածից դուրս է, քանի որ միայն այդպես կարելի է խորապես հասկանալ քաղաքական ու տեղեկատվական ճակատներում մեր թույլ տված սխալները՝ ապագայում դրանցից խուսափելու համար: Բայց դա իր դիվանագիտական նրբությունների ու քաղաքական ենթախորքերի բացահայտման տեսակետից

հատուկ և ծավալուն հետազոտության նյութ է, և սույն հոդվածը չի հավակնում այն սպառել: Սակայն հոդվածի սահմանները թույլ են տալիս թվարկել գոնե կարևոր այն հարցերի մի մասը, որոնց ո՛չ մեր իշխանությունները, ո՛չ էլ փորձագիտական համայնքը չեն տվել հայ հանրության համար համընդունելի պատասխաններ՝ ներքին կյանքում դառնալով քաղաքական պառակտումների պատճառ: Ստորև մենք կանդրադառնանք այն հարցերին, որոնց՝ գիտության կողմից տրվող անկողմնակալ պատասխանները, հակառակ տարբեր հարթակներում դրանց կրքոտ բանավեճերի առարկա դառնալուն, ակնհայտ են:

Առաջին հարց: Ճի՞շտ են վարվել արդյոք ՀՀ իշխանությունները 1994 թվականի մայիսին՝ հանձնարարելով Ազգային ժողովի նախագահ պր-ն Բ. Արարքցյանին՝ պետության անունից ստորագրել հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրությունը: Ակնհայտ է, որ ՀՀ նախագահը և իշխանության ղեկին գտնված ՀՀ քաղաքական ընտրախավը՝ ի դեմս *Հայոց համազգային շարժում* կուսակցության, այդ քայլը ճիշտ են համարել, այլապես կհրաժարվեին, որ պաշտոնական Երևանը դառնար այդ փաստաթուղթը ստորագրող կողմերից մեկը: Դժվար ասել, թե ինչ հաշվարկներ են կատարել որոշումն ընդունող պատասխանատուները այդ քայլը արդարացված համարելու համար: Դժվար է նաև ասել, թե ովքեր են եղել նրանց խորհրդատուները: Հարցը չի դրվել հանրային կամ փորձագիտական քննարկման[1]: Գուցե այդ դեպքում հենց այն ժամանակ հնչեր այսօր արդեն բարձրաձայնվող այն տեսակետը, որ հայկական դիվանագիտությունը այդ ճակատագրորեն սխալ քայլին չպիտի գնար: Բացատրությունը պարզից էլ պարզ է: Հայաստանի Հանրապետությունը, որ Ղարաբաղյան հիմնախնդրով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1993 թ. վերջերին ընդունած բանաձևերում չէր դիտվում հակամարտության կողմ[2], այդ ստորագրությամբ ինքնակամ ընդունեց այդ կարգավիճակը, քանի որ միջազգային պրակտիկայում հենց

---

[1] «Պատերա՞զմ, թե խաղաղություն. լրջանալու պահը» («Հայաստանի Հանրապետություն», 1 նոյեմբերի, 1997 թ.) իր աղմկահարույց հոդվածում ՀՀ առաջին նախագահը հայտնում էր, որ հանրապետությունում փորձագիտական մակարդակով խնդրին տիրապետող ընդամենը մի քանի հոգի կան՝ ինքը, Ռ.Քոչարյանը, Ա. Ղուկասյանը, Ժ. Լիպարիտյանը, Ա. Արզումանյանը և Վ. Օսկանյանը: Ընդամենը վեց հոգի, որոնք, ինչպես հետագայում պարզվեց, տարբեր հայացքներ ունեն արցախյան հարցում:

[2] 1993 թվականին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Ղարաբաղյան հարցին անդրադարձել է չորս անգամ՝ 822 (1993 թ., ապրիլի 30), 853 (1993 թ., հունիսի 29), 874 (1993 թ., հոկտեմբերի 14), 884 (1993 թ., նոյեմբերի 12): Երրորդ Բանաձևում, որ ընդունվել էր ԼՂՀ Պաշտպանական բանակի կողմից Քարվաճառի ազատագրության կապակցությամբ, հստակ նշված է, որ այդ տարածը գրավել են «ԼՂ տեղական ուժերը», իսկ նոյեմբերին ընդունված բանաձևում կոչ էր արվում ՀՀ իշխանություններին՝ օգտագործել իրենց ազդեցությունը ԼՂ իշխանությունների վրա, որպեսզի նրանք կատարեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը: Ո՛չ մեկում, ո՛չ մյուսում ՀՀ-ն չէր դիտվում կոնֆլիկտի կողմ:

հրադադարը ստորագրող կողմերն են համարվում հակամարտության կողմեր: Դրա համար էլ Ռուսաստանից Մինսկի խմբի համանախագահ Վլ. Կազիմիրովը հրադադարի համաձայնության մասին փաստաթղթի նախագիծը կազմել էր՝ նախատեսելով, որ այն պետք է ստորագրեն Բաքուն և Ստեփանակերտը[1]: Ծանոթանալով համաձայնագրի նախագծին՝ Հեյդար Ալիևը առաջարկեց Վլ. Կազիմիրովին՝ հաղորդել իր խնդրանքը ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, որպեսզի Հայաստանը նույնպես իր ստորագրությունը դնի փաստաթղթի տակ: Մինսկի խմբի համանախագահը բացատրել է Հեյդար Ալիևին, որ Երևանը չի գնա այդ քայլին, քանի որ նա հակամարտության կողմ չի դիտվում: Վերջինս, այնուամենայնիվ, կրկնել է իր խնդրանքը: Որպես միջնորդ Վլ. Կազիմիրովը պարտավոր էր դա անել՝ վստահ, որ Երևանից կստանա բացասական պատասխան: Բայց, ի զարմանս իրեն, երկու ժամ չանցած իմանում է, որ Հեյդար Ալիևի խնդրանքին Երևանը դրական պատասխան է տվել: Այսպես է Հայաստանի Հանրապետությունը դարձել զինված հակամարտության կողմ: Եվ դրանից հետո Բաքվին դժվար չէր հրաժարվել բանակցային սեղանի շուրջ Ստեփանակերտի հետ նստելուց: Դա տեղի է ունեցել արդեն Ռոբերտ Քոչարյանի նախագահության ժամանակ, ինչը առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թիմը սեփական մեղքը թաքցնելու համար օգտագործում է՝ նրան մեղադրելու ԼՂՀ-ին բանակցային գործընթացից դուրս թողնելու համար: Եվ դա այն դեպքում, երբ իրականում Արցախը դուրս չէր մղված բանակցային գործընթացից:

Սա մեր կողմից թվարկվող հաջորդ հարցն է, որի շուրջ մենք համախոհություն չունեինք: Այժմ՝ հակիրճ այդ մասին: Այո, ՀՀ երկրորդ նախագահը անմիջական պատասխանատվություն չի կրում այն բանի համար, որ Բիշքեկյան փաստաթղթի տակ հայտնվել է ՀՀ ստորագրությունը: Բայց ինչպես ինքը, այնպես էլ ՀՀ երրորդ նախագահը համարժեք քայլեր չեն ձեռնարկել, որպեսզի լայն տարածում չգտնի այն տեսակետը, թե իբր Բաքուն է Ստեփանակերտին դուրս մղել բանակցային գործընթացից: Բաքուն չէր սահմանել բանակցային ձևաչափը, որպեսզի այն փոխի: Իրականում Ստեփանակերտը շարունակում էր մնալ բանակցային գործընթացի կողմ, որ ընթանում էր ոչ ստանդարտ ձևաչափով: Մինսկի խմբի համանախագահները կանոնավոր կերպով այցելում էի Ստեփանակերտ՝ տեղում քննարկում ընթացիկ հարցերը: Մաքոքային դիվանագիտության այդ մարտավարությամբ

---

[1] *Մոսկվայում 2022 թ. սեպտեմբերի 15-16-ին տեղի ունեցած «Արցախը պատմության ու արդիականության համատեքստում» միջազգային համաժողովում նա ներկայացրեց դեպքի մանրամասները, որոնց նաև անդրադարձել էր իր «Мир Карабаху» գրքում: Ի դեպ, այդ մասին նա արտահայտվել է տարբեր առիթներով, այդ թվում և լրագրողներին հետ ունեցած հարցազրույցներում; Ահա դրանցից մեկի հասցեն համացանցում՝* https://www.youtube.com/watch?v=FfDILPQ4ALA

ԵԱՀԿ-ն հաստատում էր, որ Լեռնային Ղարաբաղը մնում է հակամարտության կողմ: ԵԱՀԿ-ն դա ընդունում էր: Այդ մենք էինք, որ հուրախություն Բաքվի՝ զօրուգիշեր տարփողում էինք, թե ԼՂՀ-ն դուրս է թողնված բանակցային գործընթացից: Դա տեսակետ էր, որ Բաքվի հետ մեկտեղ մենք էինք արմատավորում հանրային գիտակցության մեջ թե՛ ներսում, թե՛ դրսում: Միայն 2017 թ. մարտի 13-ին, բավականին ուշացումով, ՀՀ երրորդ նախագահը իսպանական «EFF» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում հիշատակեց, որ «…կոնկրետ բանակցային սեղանի շուրջ, եթե կարելի է այսպես ձևակերպել, Հայաստանը նստում է Ղարաբաղի փոխարեն»[1]: Բայց եթե դա այդպես է եղել, Երևանը բանակցությունների սեղանին միշտ պիտի դներ միայն Ստեփանակերտի (այլ ոչ թե իր) առաջարկությունները և անընդհատ շեշտեր, որ վերջին խոսքը պատկանում է նրան:

Երրորդ հարց: Խոսքը փախստականությանը վերաբերող չարչրկված, բայց դարձյալ պարզ խնդրի մասին է: Բավական էր ծանոթ լինել միջազգային իրավունքում փախսականությանը վերաբերող հայտնի դրույթներին, հավաստի հիմնավորումներ ունենալու առ այն, որ ղարաբաղյան հակամարտության համատեքստում ադրբեջանցի փախստականներ չկան, և որ նման կարգավիճակ ունեն միայն և միայն 1988-1991 թվականներին Ադրբեջանում կոտորածներից փրկված հայերը: Իրավական հիմնավորումը ավելի քան պարզ է: Փախստական կարող է համարվել այն խաղաղ բնակիչը, որը իր կյանքին սպառնացող վտանգի պատճառով փոխում է իր քաղաքացիության երկիրը: Այն ադրբեջանցիները, որոնց տարիներ շարունակ Բաքուն որպես փախստականներ է ներկայացրել, ո՛չ խաղաղ բնակիչներ են եղել, ո՛չ էլ փոխել են իրենց քաղաքացիության երկիրը: Եվ հակառակ այս ակնհայտ փաստին՝ հայկական մամուլը, շատ փորձագետներ և քաղաքական վերնախավի ներկայացուցիչներ անընդհատ խոսում էին ադրբեջանցի փախստականների մասին: Իսկ ՀՀ «պատկան մարմինները» երեսուն տարիների ընթացքում ոչ մի անգամ չդատապարտեցին Ադրբեջանում հայերի ցեղասպանությունը: Այնպես որ այս հարցում էլ մենք չունենք միասնական տեսակետ[2]:

Չորրորդ հարց: Ի՞նչ սկզբունքներ է դրել ԵԱՀԿ-ն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում: Թվում է՝ պատասխանն ակնհայտ

---

[1] *Հարցազրույցի հասցեն համացանցում՝ https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2017/03/13/President-Serzh-Sargsyan-gave-an-interview-to-EFE-agancy/ :*

[2] *Այն ադրբեջանցիները, որոնց Բաքուն ներկայացնում է որպես փախստականներ, զանգվածաբար մասնակցել են ԼՂՀ շրջափակմանը և պատերազմին, որ Բաքուն սանձազերծել էր ընդդեմ Արցախի: Հեղինակը հարցին անդրադարձել է իր «Ղարաբաղյան հակամարտություն: Ընբռնման դինամիկան» հոդվածում՝ http://ysu.am/files/01A_Manasyan-1533977932-.pdf*

է: ԵԱՀԿ-ն այդ սկզբունքները հռչակել է, և դրանք միջազգային իրավունքի հայտնի երեք սկզբունքներն են՝ ա) պետությունների տարածքային ամբողջականություն, բ) ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունք, գ) ուժի կամ ուժ կիրառման սպառնալիքի արգելում: Այս տեսակետին հակված էին գրեթե բոլորը, այդ թվում և մեր պաշտոնական շրջանակները, որոնք երբևիցե ԵԱՀԿ այդ դիրքորոշումը չդարձրին լուրջ քննության առարկա և երբևիցե չհակադրվեցին միջնորդներին այդ հարցում: Սակայն խնդրի ավելի խոր քննությունը պարզում է, որ այդ սկզբունքներից ոչ մեկը փաստորեն չի դրվել հակամարտության կարգավորման հիմքում, քանի որ բանակցային խոսույթը երբեք չի կապվել հակամարտության էությունը ներկայացնող իրավական ու փաստական փաթեթի հետ: Երբեք չի կապվել: Այլապես կպարզվեր, որ տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառելի չէ Ադրբեջանական Հանրապետության նկատմամբ, քանի որ Արցախի անկախացման օրինականությունը անբասիր էր, և անկախացման ակտը կայացել էր մինչև Եվրոպան կճանաչեր Ադրբեջանական Հանրապետության անկախությունը: Նույն կերպ կպարզվեր, որ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը արդեն մի քանի անգամ ճանաչվել է՝ այդ թվում և Խորհրդային Ադրբեջանի (1920 թ. դեկտեմբերի 2-ի հռչակագրով) և ԽՍՀՄ կողմից՝ 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի կարգավորման մասին» ԽՍՀՄ օրենքով: Սրանք հայտնի փաստեր են, որոնք այսօր էլ դրված չեն ԼՂՀ և ՀՀ արտաքին քաղաքականության հիքերում, քանի որ դրանց նկատմամբ չկա միասնական դիրքորոշում:

Հինգերորդ հարցը վերաբերում է Խոջալուի խաղաղ բնակչության սպանդին: Դեպքից անմիջապես հետո բազմաթիվ անհերքելի փաստերով ու վկայություններով պարզ է եղել, որ այն տեղի է ունեցել Աղդամի մերձակայքում, այլ ոչ թե Խոջալուում: Բայց արի ու տես, որ մենք բոլոր մակարդակներում ձայնակցում էինք Բաքվին, որը ողբերգության տեղը փոխելու միջոցով այդ հանցագործությունը վերագրում էր հայկական կողմին; Մենք դրան ոչինչ չհակադարձեցինք, և միջազգային հանրությունը ստացավ այն պատկերացումը, թե խաղաղ բնակչության սպանդը տեղի է ունեցել արցախյան ուժերի վերահսկողության տարածքում, այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվել էր Ադրբեջանական ժողճակատի կողմից վերահսկավող տարածքում՝ Աղդամի մատույցներում:

Վեցերորդ հարցը, որի շուրջ մենք ցայսօր չունենք միասնական պատասխան, վերաբերում է Արցախի կարգավիճակին: 1988-ին արցախահայությունը ոտքի ելավ *Միացում* կարգախոսով: Արդեն 1989-ին պարզ դարձավ, որ Խորհրդային Հայաստանի քաղաքական վերնախավում կան ուժեր, որոնք դեմ են համաժողովրդական կարգախոսին: Բայց 1989 թ.

դեկտեմբերի 1-ին նրանք այնքան զորեղ չէին, որպեսզի արգելափակեին ՀԽՍՀ հետ ԼՂԻՄ-ի միավորման բանաձևը հանրապետության Գերագույն Խորհուրդում: 1991 թ. սեպտեմբերի 21-ին նրանք արդեն այնքան ուժեր ունեին հանրապետության օրենսդիր մարմնում, որ անկախության մասին հանրաքվեն կազմակերպվեց միայն Խորհրդային Հայաստանի սահմաններում՝ առանց Արցախի: Այդ մասին նախապես տեղեկացված արցախցիները սեպտեմբերի 2-ին հռչակեցին ԼՂՀ անկախությունը: 1992 թ, մարտի 5-ին ՀՀ առաջնորդը մոսկովյան «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում բացեց բոլոր խաղաքարտերը՝ պնդելով, որ ՀՀ տեսակետից բոլոր կողմերի համար ընդունելի է, որ ԼՂԻՄ-ը թողնվի Ադրբեջանական Հանրապետության կազմում՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով: 1992 թ. ամռանը ՀՀ Ազգային ժողովում այդ տեսակետին ընդդիմադիր ուժերին հաջողվեց, որ ընդունվի բանաձև, որը ՀՀ-ի համար անընդունելի է համարում ներքին կամ արտաքին որևէ փաստաթուղթ, որում Լեռնային Ղարաբաղը կնշվի որպես Ադրբեջանական Հանրապետության մաս: Ղարաբաղյան հարցում հայկական քաղաքական վերնախավում բռնկված վեճերը ավարտվեցին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի պաշտոնանկությամբ: Երկրորդ և երրորդ նախագահները կանգնած էին ԼՂՀ անկախության ապահովման ուղու վրա: 2018 թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո Արցախի կարգավիճակում կատարվեց վերադարձ առաջին նախագահի քաղաքական ուղեգծին:

Այստեղ մեր խնդիրը այդ և մնացած հարցերում կատարված շրջադարձերի քաղաքական ու անձնական շարժառիթների բացահայտումը չէ: Դա ինքնուրույն վերլուծության առարկա է: Մեր նպատակը այն իրողության բացահայտումն էր, որ արցախյան հիմնախնդրի տարբմբռնվող և իրարամերժ պատասխաններ ստացող հարցերի առատությունը հետևանք է ազգային միասնական հայեցակարգի բացակայության, որն ի վերջո ներկայանում է ազգի քաղաքական մասնատվածության տեսքով:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնը:

ՀՏԴ 32

Քաղաքագիտություն

Մարիամ ՄԱՐԳԱՐՅԱՆ
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գարիկ ՊՈՂՈՍՅԱՆ
Քաղաքագիտության մագիստրոս
Գլոբալ Բրիջ կրթահամալիրի անգլերենի դասախոս
e-mail: garik.poghosyan2011@gmail.com

ԱՐԴԻ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏՈՒԹՅԱՆ «ԲԻՈՔԱՂԱՔԱԿԱՆ» ԵՎ «ԲԻՈԿՐԹԱԿԱՆ» ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱՊԱԳԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Քաղաքական գործընթացների բովանդակային քննարկման ընդարձակման նպատակով սույն հոդվածն առաջ է քաշում կենսունակ ապագայաբանության բազմավեկտոր վերծանման հարցը արդի տուրբուլենտության պայմաններում: Այս համատեքստում համակողմանի վերլուծության են ենթարկվել բիոկրթական ու բիոքաղաքական չափումները որպես մրցունակ ապագայի բաղադրիչներ՝ վերարժևորելով դրանց տեղն ու դերը արդի մարտահրավերներին անթրոպոլոգիական ուսումնասիրությունների հիման վրա ինստիտուցիոնալ արձագանքի մեխանիզմներ ձևավորելու հարցում:

Բանալի բառեր՝ բիոքաղաքական, բիոկրթական, կեսունակություն, արդի տուրբուլենտություն, ապա-գայաբանություն, մեխանիկական արդիականացում:

Г.Погосян

В статье поднимается вопрос многомерного декодирования жизнеспособной футурологии в условиях современной турбулентности С целью расширения

значимого обсуждения политических процессов,. В этом контексте, био-образовательные и биополитические измерения были тщательно проанализированы как компоненты конкурентного будущего, повторное их место и роль в формировании механизмов институционального ответа на современные вызовы, основанные на антропологических исследованиях.

Ключевые слова: *биополитика, биообразование, жизнеспособность, текущая турбулентность, футурология, механическая модернизация*

G.Poghosyan

In order to expand the meaningful discussion of political processes, this article raises the question of a multi-dimensional decoding of a viable futurology in the context of current turbulence. In this context, bio-educational and biopolitical dimensions have been comprehensively analyzed as components of a competitive future, reassessing their place and role in the formation of institutional response mechanisms to modern challenges based on anthropological research.

Key words: *Biopolitical, bioeducational, viability, current turbulence, futurology, mechanical modernization*

1.1. «Բիոկրթական» եզրի ներմուծումը արդի տուրբուլենտության քննարկումներում

Քաղաքական ապագայաբանության մեր ուսումնասիրության հիմնասյունը Հայաստանի Հանրապետության կենսունակության բացահայտման, վերծանման և կոդավորման գաղափարն է: Գիտահետազոտական հարացույցի միջոցով վերջինս գործառնելու նպատակով գործ ունենք քաղաքագիտական ու հասարակագիտական բազմաճյուղ վերլուծության հետ, որտեղ խաչվում են *տուրբուլենտություն, ռազմավարական պլանավորում, գունավոր հեղափոխություններ, բիոքաղաքականություն* եզրերը: Հիմնահարցի կշիռն ու բարդությունը հաշվի առնելով՝ կարևոր ենք համարել քաղաքագիտական ներկապնակի հարստացումը համադրական վերլուծության միջոցով, երբ քաղաքական վարքաբանության ու կենսունակության վերջնարդյունքի կառավարմանն ուղղված մեկնաբանությունները մեկտեղվում են՝ մեկ հարցի համակողմանի անդրադարձ կատարելու համար: Արդի տուրբուլենտությունը դիտարկելով

որպես սույն աշխատանքի համատեքստ՝փորձ ենք անում վեր հանել քաղաքագիտական, սոցիոմշակութային, անթրոպոլոգիական և սրանց հարող գիտաճյուղերի տեսակետից համարժեք ընկալելի բանաձևեր ինչպես կենսունակության, այնպես էլ ապագայի ռազմավարական մշակման դաշտում:Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ «Հայաստանում քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, ավանդական և արդի արժեքներ կրողների ու արարողների և իշխանության ինստիտուտների միջև քաղաքական փոխազդեցությունների բազմաչափ ու բարդ խճանկար է: Դա է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, լեգիտիմություն **(օրինականություն)**, ինքնություն) ճգնաժամների հաղթահարումը ձգձգվում է…»[1]: Ճգնաժամերի հաղթահարման ձգձգումը, մեր համոզմամբ, ունի քաղաքական և անթրոպոլոգիական բաղկացուցիչներ, քանի որ մի կողմից հայ մարդու ազգային «ես»-ի արդիականացման, մյուս կողմից՝գլոկալ փոփոխություններին ազգային անվտանգության տիրույթում հաշվետու ու գիտակցված ձևով արձագանքելու անկարողության տեսական քննարկումների ծիրում է: Սոցիալ-մշակութային ու քաղաքական տեղաշարժերը դիտարկելով որպես մեկ ամբողջություն, վերծանելով արդի անորոշությունների քաղաքական չափման ռիսկայնության աճի հավանականությունը, արժևորելով վիրտուալ տարածության դերային անորոշություններ գեներացնելու ներուժը՝ ՀՀ առաջ ծառացած ու նրա պետութենական կենսունակությունը խարխլող գործոնները փորձել ենք վերանայել համակողմանիորեն՝գտնելու համապիտանի ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ մարտահրավերներին արագ և հիմնովին արձագանքելու, ինչու՞ ոչ՝մարտահրավեր նետելով ազգային կենսունակությունը բարձրացնելու հեռահար նպատակով: Ասվածի գիտական պահանջարկվածությունը հիմնավորված ենք համարում այն փաստարկով, որ «ՀՀ-ում զուգահեռ ընթացող մեխանիկական «արևմտականացման» և «վազող արդիականացման» խորքային խզումների (բախումների) հետևանքով քաղաքական զարգացման նեոլիբերալ դերակատարները մերժեցին ազգային, քաղաքական և քաղաքացիական ինքնության բնականոն արդիականացման միջոցով տուրբուլենտության մարտահրավերներին պատասխանելու հնարավորությունը»[2]: Հիմք ընդունելով այն իրողությունը, որ ինքնության ու դրա բնականոն արդիականացման ազգային քաղաքական ու

---

[1] ***Մարգարյան Մ.,*** *Քաղաքական տուրբուլենտություն. մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման հնարավորությունները, 26.01.2021* https://mmmargaryan.wordpress.com

[2] *Նույն տեղը*

քաղաքացիական չափումների ուսումնասիրությունը պահանջում է ենթախորք և համակողմանիություն՝ ուրվագծվում են սույն աշխատանքի գիտական բիֆուրկացիայի հնարավորությունները, երբ մեկ գիտաճյուղի վարկածը, դիցուք՝ազգային ու պետական կենսունակության մասով, փորձ է արվում դասակարգել ու հիմնավորել մեկ այլ գիտաճյուղի ծիրում արված հետազոտությունների արդյունքներով: Այս նկատառումով էլ մրցունակ, կենսունակ, հարատև կերպափոխվող հասարակարգ կառուցելու ձգտումով կարևորել ենք ինչպես քաղաքագիտական, անթրոպոլոգիական, տեսական բնույթ կրող կամ վերլուծական մոտեցումները, այնպես էլ կրթական քաղաքականության և «քովիդի»[1] պայմաններում ուսանողների շարժունակության խնդիրները: Կրթական քաղաքականության, կրթական հաստատությունների շարժունակության սահմանափակումների, կրթական վերազգային ինտեգրման փորձի ուսումնասիրության ընտրության հիմքում դիտարկել ենք իրերի հետևյալ դասավորությունը: Առաջին, գլոկալ հիմնախնդիրների արծարծումը հնարավոր չէ պատկերացնել առանց թիրախային ոլորտների ուսումնասիրության՝ռազմական ու մարդկային անվտանգություն, միջազգային տնտեսական հարաբերություններ և առևտուր, կրթական քաղաքականություն և տեխնոլոգիաներ, մարդկանց միջազգային և ներազգային շարժունակություն, Սփյուռքի, միջմշակութային հարաբերությունների հարցեր և այլն: Աշխարհաքաղաքական ճամփաբաժանի տեսակետից ներկայացված լինելով եվրոպական ու եվրասիական վերազգային ինտեգրման գործընթացների էպիկենտրոնում՝ՀՀ-ն ունակ է եղել քաղաքական, տնտեսական երկխոսությունից ու չափանիշների մոտարկումից զատ համադրել իր կրթական ավանդույթները եվրոպական բարձրագույն կրթության ոլորտի հետ: Նորարարության, տեխնոլոգիաների, բարեփոխումների, միջազգային ուսանողական շարժունակության հարցերը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտը շաղկապել են նրա արտաքին քաղաքական ուղենիշների հետ: Եթե անվտանգության, տնտեսության, շրջակա միջավայրի, միգրացիայի և այլ ոլորտներում թիրախավորված ուսումնասիրությունները դժվար է ընկալել որպես քաղաքական մեծ կշիռ ունեցող, սակայն միևնույն ժամանակ աշխարհաքաղաքական վերադասավորումներից մասամբ մեկուսի գործընթացներ, ապա կրթական քաղաքականության և բարձրագույն կրթության ոլորտում ինտեգրման տիրույթում «քեյս սթադին» կարող էր մի կողմից վեր հանել հայկական փորձում առկա թերացումները (դրանով իսկ հնարավորություն ընձեռելով վերաարժևորելու ՀՀ կենսունակության այս չափումը), մյուս կողմից՝մատնացույց անել մի

[1] Covid-19 Disease https://www.britannica.com/science/COVID-19

ճանապարհային քարտեզ, որը կենսունակ պետության ապագայաբանությունը դիտարկում է նեղ հասարակագիտական տեսությունների ծիրից դուրս, առավել ճկուն վերլուծական կառուցակարգերի համակարգում: Վստահ ենք, որ «քովիդի» սահմանափակումների պայմաններում կրթական հաստատությունների առաջ ծառացած խնդիրները ոչ միայն կրթական, այլև սոցիոմշակութային բնույթ են կրում: Ուստի, հանդիսանալով բազմալորոտ համադրական ուսումնասիրությունների անհրաժեշտության գիտակցումով շահադրդված կողմ՝հանձն ենք առել լրացնելու գիտահետազոտական աշխարհում առկա բացը: Համոզմունք ունենալով առ այն, որ «քովիդի» հարկադիր սահմանա-փակումները երիտասարդների շարժունակության, սոցիալականացման, ինքնաիրացման ու ինքնադրսևորման իմաստով նորագույն մարտահրավեր են, փորձ ենք արել ներառականության սկզբունքով ավագ դպրոցի ուսանողական շարժունակության հիմնախնդիրը ապակոդավորել՝ սոցիոմշակութային մարդաբանության պրիզմայով դիտարկելով: Այլ կերպ ասած, երկու «քեյս սթադիի» հանրագումարում, որքանով ցույց են տվել մեր հետազոտությունները, առաջին անգամ համադրել ենք կրթական քաղաքականության, մարդկանց շարժունակության սոցիոմշակութային, ինստիտուցիոնալ, կառուցվածքագործառութային խնդիրները արդի տուրբուլենտության հաղթահարման ու կենսունակ ապագայաբանության քաղաքագիտական ուսումնասիրության հետ: Ասվածից հետևում է, որ ազգային ու պետական ինստիտուցիոնալացված կենսունակության որակական բարելավման տեսակետից ուշագրավ է բիոքաղաքական սոցիովարքաբանության բովանդակության ընդլայնումը դիտարկել բազմաոլորտ վերլուծությունների արդյունքների համակցման ծիրում, ինչի, թերևս, առաջին փորձը սույն աշխատանքն է:

Այսպես, «քովիդի»՝14-18 տարեկան հայ պատանիների ու աղջիկների շարժունակության վերաբերյալ բաց հարցերի տեսքով երեսուն պատանիների ու աղջիկների շրջանում կատարված մեր հետազոտության արդյունքում կարող ենք վստահորեն արձանագրել հետևյալ եզրահանգումների հիմնավորվածությունը՝

ü «Քովիդի» սահմանափակումները մասնակի կամ լրիվ բացասական ազդեցություն են ունեցել ինչպես կրթական, ինտելեկտուալ կյանքի, սպորտային կյանքի առումով, այնպես էլ կրթության որակի ապահովման իմաստով ընդհանրապես՝արդյունավետություն, ուսումնական ծրագրի

կատարմանն առնչվող խնդիրներ, առաջադիմություն, կայուն հոգեբանական վիճակ և այլ:[1]

- Հուզական կյանքի և հոգեբանական առողջության ռիսկերի մեծացում:
- Մարդկային շարժունակության երկարաժամկետ հետևանքների գիտակցում՝ հարաբերությունների, տարիքային խմբում հորիզոնական կապերի, ընկերության, հաղորդակցության և վերջիններից որակի ու հաճակիության իմաստով:
- Շարժունակության ու կրթական սահմանափակումների քաղաքականության արդյունավետության շուրջ դիրքորոշումների անորոշություն կամ հակադրում, ինչը սոցիալ-մշակութային իրողությունների առկա խզումների խորացման կամ խնդիրների բարդացման պատճառ կարող է հանդիսանալ:
- Առցանց կրթական ծրագրերի որակի նկատմամբ վերապահում, քաղաքացիական սեկտորից ակնկալիքների չձևավորված կամ անորոշ վիճակ:
- Ծագմամբ, ընտանեկան կամ սոցիալական դրությամբ, առողջական վիճակով ու նմանատիպ հանգամանքներով պայմանավորված առավել խոցելի խմբերի կրած դժվարությունների բացահայտման հարաբերական բարդություն:

«Բիոկրթական» ուսումնասիրությունների երկրորդ մասը հայկական բարձրագույն կրթության ինտեգրման փորձի ուսումնասիրությունն է Եվրոպական բարձրագույն կրթական տարածությանը: Եթե նախորդ ուսումնասիրության թիրախում դպրոցահասակ պատանիների շարժունակության սահմանափակման ծնած սոցիոմշակութային, հոգեբանական, ինստիտուցիոնալ, քաղաքական խնդիրներն էին, ապա այս հետազոտության կիրառական նշանակությունը երկակի է՝կրթական, քաղաքական և միջազգային: Որպես կրթական վերազգային տարածությանը ինտեգրման փորձի օրինակ հայկական բարձրագույն կրթության ոլորտի փորձագետների խմբի շրջանում արված հետազոտություն եզրահանգումները կապված են «ԲՐԻՔՍ» երկրների՝կրթական տարածության միասնականացման քաղաքականության սաղմնային վիճակի հետ, ուստի վերջիններից համար կրում են մոդելային բնույթ: Այսպես՝

- Փորձագիտական համայնքը՝ դասախոսներ, կրթական քաղաքականության մշակման և իրագործման մեջ ներգրավված անձինք,

---

[1] ***Poghosyan G.***, *The Self-perceived Impact of COVID-19 Human Mobility Restrictions on Armenian Students Aged 14-18, Journal of Education in Black Sea Region Vol. 6, Issue 2, 2021,* ***DOI:*** *https://doi.org/10.31578/jebs.v6i2.234, p. 89*

գիտահետազոտողներ, ընդհանուր առմամբ համոզված են, որ բարձրագույն կրթության համակարգերի ինտեգրումը բազմաշերտ երևույթ է, այն ներառում է անձնական ու մասնագիտական աճ, տեխնոլոգիական զարգացում, մշակութային հարցերի իրազեկում, քաղաքական նկատառումներ և այլն[1]:

ü Ինտեգրման առավելություններից են շարժունակությունը, կարիերայի աճը, տնտեսական զարգացումը, մշակութային բազմազանությունը, գործընկերներից սովորելու հնարավորությունը, երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացմանը նպաստելը, քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային ոլորտներում իրականացվող փոփոխությունները, անհատական, ազգային, վերազգային ոլորտներում գործառնումը, միջազգային կրթական պրակտիկայի տեղայնացումը և այլն:

ü Ինտեգրվող և ինտեգրող երկրների համար առկա է փոխշահավետության սկզբունքը: Մի կողմից՝ փոքր երկրները հնարավորություն են ստանում օգտվելու տեխնոլոգիաներից, հետազոտական նորարարություններից ու «թրենդներից», մյուս կողմից՝ ինտեգրող (ընդունող) հասարակություններն օգտվում են ինտելեկտուալ ներհոսքից, մշակութային ու կրթական հնարավորությունների ընդլայնումից և այլն:

ü Առկա է թափանցիկությամբ պայմանավորված ինստիտուցիոնալ արդյունավետության խնդիր, երբ հակադրվում են *անհատ-հասարակություն* շահերը, ինչի հետևանքով կրթական տարածության ինտեգրման գործընթացը կրում է հատվածային բնույթ՝ներգրավելով միայն անհատների որոշակի խմբերի:

Հանրագումարենք.քաղաքական երևույթների ու օրինաչափությունների տեսական ու կիրառական քննարկումների բազմաչափությունը բազմաոլորտ ուսումնասիրությունների արդյունքների համադրությամբ նորովի մեկնաբանելու անհրաժեշտություն է առաջացել: Միակողմանի, տեսական, կիրառական, ձևով միջգիտակարգային, բովանդակությամբ՝ նեղ ուսումնասիրությունները չեն արտահայտում քաղաքական դինամիկ զարգացումների գիտական տրամախոսությունը: Բազմաոլորտ ուսումնասիրությունների ներդաշնակումը կարող է ստեղծել նոր հնարավորություններ *անհատ-հասարակություն-պետություն-գլոկալ քաղաքակրթություններ* քառամակարդակ, *անցյալ-ներկա-ապագա* եռաչափ

[1] ***Poghosyan G****. At the intersection of the European Higher Education Area and BRICS: The Way Forward, «Լրաբեր», Հայ-ռուսական համալսարանի սերիա՝հումանիտար և հասարակական գիտություններ, (35), ՀՌՀ հրատարակչություն, № 2/2020, p.153*

հարթություններում ազգային ու պետական կենսունակության շերտերի փոխդասավորության օրինաչափությունների վերծանման, առաջնահերթությունների վերաձևակերպման համար: Հայ մարդը, լինելով աշխարհակարգի, քաղաքակրթությունների բախման ու երկխոսության, արտածին ու ներծին բազմապիսի մարտահրավերների օբյեկտ, հնարավորություն է ստանում մարտահրավեր նետելու իր դրությունը ապակայունացնող, խաթարող, վտանգող, այլ կերպ ասած՝ տուրբուլենտություն ծնող, զարգացնող, ուղղորդող ներքին ու արտաքին դերակատարների արժեշահային խմբերին, գործոնների համալիրին: Դառնալով կենսունակ, ինքնանորացող ու ինքանորոգվող, պերմանենտ կերպով զարգացող, աճի ու ռեսուրսների բազայի ընդլայնմանը միտված, սեփական ներուժն ու կենսունակությունը շարունակաբար բացահայտող, համալրող, զորացնող տեսակ՝ հայ մարդն իր քաղաքական խնդիրների համակարգը փոխլրացնում, ներդաշնակում, բարելավում, կանոնակարգում ու կառավարում է տարբեր գիտաճյուղերից ստացվող գիտական տեղեկույթով: Փոքրի, զոհի թերարժեքության բարդույթի հաղթահարման, կենսունակ ապագայի տեսլականի կառուցման իմաստով կարևորում ենք արդի տուրբուլենտության պայմաններում տարատեսակ ոլորտների՝տնտեսություն, անվտանգություն, կրթություն, իրավունք, մշակույթ, փոխլրացնող հետազոտությունների արդյունքների քաղաքագիտական վերլուծությունը: Այսօրինակ հանգամանքներում «բիոկրթական», այսինքն՝ մարդու կենսագործունեության կրթական փոխազդեցությունների ուսումնասիրությունը կլիներ թերի առանց «բիոքաղաքականության» ու կենսունակության հարցերի հիմնարար դիսկուրսի ծավալման:

1.2 Քաղաքական գործընթացների «բիո» չափումը՝ որպես ռազմավարական հեռանկարների կանխատեսման փոխլրացնող միջոց

Ակնհայտ է, որ տուրբուլենտություն ու քաղաքական հեռանկարներ եզրերը գոյություն ունեցող քաղաքագիտական չափումները միայն մասնակիորեն են ներկայացնում քաղաքական դինամիզմի տրամաբանությունը: Այս իմաստով կարևորում ենք մեր վերլուծություններում «բիո» չափման ներմուծումը, այսինքն՝ մարդը որպես կենսաբանական էակ իր կենսունակության հեռանկարներն ապահովում է կենսաբանության ու վարքաբանության առնչակցությունների խաչմերուկում՝ բազմապատկելով իր մշակութային, քաղաքական, սոցիալ-հոգեբանական ինքնության ենթաշերտերը: Եթե քաղաքագիտական տիրույթում ավանդաբար «բիո» տիրույթը ոչ թե պարտադիր, այլ փոխլրացնող է համարվել, ապա համաշխարհային գործընթացների

տարերային ազդեցությունը մարդու ինքնության բազմավեկտոր փոխակերպումների վրա հարկադրում է վերաարժևորելու «բիո» ասպեկտի կշիռը քաղաքական քննարկումներում: Մի կողմից՝ մարդը որպես սոցիալական էակ ունի իրեն բնորոշող սոցիոմշակութային քաղաքական վարքագիծ, մյուս կողմից տեսանելի է, որ վարքաբանության ու կենսաբանության կապը դուրս է սոցիոմշակութային բանաձևերի գործառնության ծիրից, ոչ թե կրում է վերջիններիս ազդեցությունը, այլ ակնհայտ (ագրեսիա, բռնություն, ռեակցիա, զանազան ռեֆլեքսներ) կամ թաքնահարույց (պասիվ ագրեսիա, հակամարտության պատճառներ, հաշտվողականության պատրաստակամության բացակայություն, մանիպուլյացիաներ, քաղաքական երկխոսության մերժում) կա՛մ անմիջականորեն ձևավորում է դրանք, կա՛մ փոխակերպում, կա՛մ քայքայում: Ուստի մարդու՝ որպես քաղաքական, տնտեսական, սոցիալական, կենսաբանական էակի համալիր դիտարկումը քաղաքագիտական քննարկումներում հույժ կարևոր է հիմնախնդիրների համալիր լուծումներ գտնելու նպատակով:

Ընդունված մոտեցում է, որ բիոքաղաքականության հիմնադիրն է Միշել Ֆուկոն[1], սակայն կարծում ենք՝ կարևոր է հիշատակել, որ ֆուկոյական բիոքաղաքականությունը որքան էլ կարևոր, մասամբ է ներկայացնում բիոքաղաքականության այն բազմաճյուղ զարգացումը, որը 20-րդ դարի երկրորդ կեսին հասարակագետներին ստիպեց վերանայել քաղաքական վարքաբանության ու գործընթացների մեջ «բիո» չափման դերի մասին ունեցած նախկին քարացած, մերժողական կամ ոչ լիարժեք ընկալումները: Այսպես՝ վարքի կառավարման իր մոդելը ներկայացնելով՝ Մ. Ֆուկոն պարզաբանում է, որ «հպատակների վարքը կարգավորելու» կառավարության նպատակներն անսահմանափակ են, դրանց նպատակն այլ պետությունների հետ մրցակցությունն է, տնտեսական գործունեությունը, արտադրությունը, գնային քաղաքականությունը վերահսկելը հանուն «այլ պետությունների հետ մրցունակ հավասարակշռության»[2]: Այս նկատառումներից ելնելով է, որ Մ. Ֆուկոն կենսաքաղաքականության հիմքում տեսնում է բնակչությունը[3]՝ դրա տնտեսական հնարավորությունների ներուժով հանդերձ: Մեր ուսումնասիրության սևեռումը, սակայն, անհատի կենսաբանական շահադրդմամբ պայմանավորված քաղաքական վարքաբանությունն է՝

---

[1] ***Foucault M.***, *The Birth of Biopolitics, Lectures at the College de France, 1978-79, edt. Senellart M., Palgrave Macmillan, 2008*

[2] *Տե՛ս Ibid, p.7*

[3] *Ibid, p.21*

կենսաբանական ազդակների դերաբաշխումը *անհատ-հասարակություն-պետություն* քաղաքական միկրո և մակրո մակարդակներում: Այս համատեքստում ուրվագծվում են վարքաբանության կենսաբանական գործոնների և ռազմավարական հեռանկարների կապերը. եթե մարդը քաղաքական միջավայրում ինքնադրսևորվում ու ինքնաիրացվում է ինչպես սոցիոմշակութային, այնպես էլ կենսաբանական գործիքների դրդմամբ կամ միջոցով, ապա մարդու՝ որպես կենսաբանական էակի գործառնման բովանդակությունը կարելի է դիտարկել իր առաձգականության տիրույթում՝ընդգծելով հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակների քանակական ու որակական հատկանիշները: Այս նկատառումներից ելնելով, ինչպես նաև համամոլորակային կենսաքաղաքական գործընթացներով պայմանավորված՝մարդկային շարժունակության կրթական չափման ուսումնասիրմամբ փորձ կատարեցինք լրացնել մեր տեսադաշտում առկա ուսումնասիրությունների բացը: Կենսաքաղաքական այս կամ այն ասպեկտի, դիցուք՝շարժունակության կամ բիոկրթական հիմնախնդիրների ընդհանրական պատկերացում ունենալու մտադրությամբ, հակիրճ անդրադարձ կատարենք կենսաքաղաքականության բնութագրական գծերին: Բազմաբնույթ են մարդու՝բնության թելադրանքով դրսևորած վարքագծի օրինակները: Այսպես, հետազոտողները պարզել են, որ «անգամ նախադպրոցական տարիքում, երբ մեծահասակներ ներկա չեն, իշխող երեխաները հեշտությամբ ստանձնում են իշխող դեր խմբի նկատմամբ կանոնները մեկնաբանելու ու դրանք պարտադրելու նպատակով»[1]: Նմանատիպ օրինակների հիման վրա Ռոջեր Դ. Մասթերզը հանգում է այն եզրակացությանը, որ քաղաքականությունը կարելի է սահմանել «որպես այն վարքը, որը միաժամանակ գործի է դնում հարաբերություններ հաստատելու, տիրապետելու և ենթարկեցնելու ատրիբուտները, որ մարդ պրիմատը կիսում է շատ այլ կաթնասունների հետ, ինչպես նաև լեզալ ու սոցիալական կյանքի սովորութային կարգավորման ատրիբուտները, որոնք բնորոշ են լեզվով օժտված մարդկային խմբերին»[2]: Փաստորեն քաղաքականությունը ոչ միայն բնորոշվում է սոսկ որպես վարքի դրսևորման ձև, այլև սահմանվում է սոցիոմշակութային ու կենսաբանական ազդեցությունների միջակայքում որպես դրանք իրար հետ համադրող, հաշտեցնող ու համակարգող մի օրինաչափություն, որն ունի ինչպես զարգացման տրամաբանություն ու նախասկիզբ, այլև կանխատեսելի վերջնարդյունք ու բնական-մշակութային գործիքակազմ: Ուստի

---

[1] ***Blank R. H. and Hines S. M., Jr***, *Biology and Political Science, Routledge, 2001, p.96*

[2] *Ibid, p. 26*

պատահական չէ հետազոտողների այն կարծիքը, որ «մարդկանց սոցիալականացնում են այնպես, որ նրանք ներքնայնացնեն նախազգուշական մշակութային մոտեցումները (attitudes), որոնք ազդում են այն բանի վրա, թե ինչպես են նրանք վերաբերվում իրենք իրենց և աշխարհում իրենց տեղին: Սոցիալականացման այս գործընթացով մարդկանց հարաբերությունն աշխարհի հետ փոխվում է»[1]: Այնուհանդերձ, կենսաքաղաքականության ու քաղաքական վարքաբանության մեկ այլ ծայրահեղության մեջ չընկնելու նպատակով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ոչ միայն գենետիկ գործոնները, այլև մշակութային միջավայրն են ձևավորում անձին որպես սոցիալական, քաղաքական էակ վարքի կրկնօրինակման կառուցակարգերով: Դիցուք՝ «ծնողների վարքը կարող է ակնհայտ բարերար ազդեցություն գործել զավակի աճի ու հաջող վերարտադրության շանսերի վրա ու սա հատկապես կարևոր կարող է լինել սոցիալական տեսակների համար, որտեղ սոցիալական հմտությունները պետք է փոխանցվեն ծնողից զավակին կրկնօրինակման միջոցով (մշակութային ժառանգականություն)»[2]: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ ներմուծել ենք «բիոկրթական» եզրը, որը հնարավորություն է տալիս՝

- բացահայտել բազմաչափ կենսաքաղաքական ու սոցիամշակութային երևույթների փոխկախվածությունը.
- գտնել փոխազդեցությունների բարերար ազդեցությունը մեծացնելու իրական միջոցներ.
- սահմանել սովորութային ու կենսահասարակական երևույթների իրական կամ երևակայական սահմանները.
- շարժունակությունն ու կրթական շարժունակությունը, ինտեգրումը դիտարկել որպես նոր կենսահասարակական ու կենսաքաղաքական գիտաճյուղ.
- ինտեգրել հասարակագիտական բազմաոլորտ ուսումնասիրություններ արդյունքները.
- գտնել հի կենսունակության ապագայաբանական հենքերը.
- քննարկել կենսունակությունը ռազմավարական այլ խնդիրների, տվյալ դեպքում՝կենսաքաղաքականության և բիոկրթական հիմնախնդիրների համապատկերում.
- մշակել ռազմավարական ապագայի կանխատեսման, ծրագրավորման, կառավարման մեխանիզմներ ըստ այդմ և այլն:

---

[1] ***Furedi F.***, *How Fear Works: Culture of Fear in the 21st Century, Bloomsbury Continuum, p.175*

[2] ***Dunbar R.***, *Evolution: What Everyone Needs to Know, Oxford University Press, 2020, p.66*

Գրականություն

1. **Մարգարյան Մ.,** Քաղաքական տուրբուլենտություն. մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման հնարավորությունները, 26.01.2021 https://mmmargaryan.wordpress.com
2. **Blank R. H. and Hines S. M., Jr,** Biology and Political Science, Routledge, 2001
3. **Dunbar R.,** Evolution: What Everyone Needs to Know, Oxford University Press, 2020
4. **Foucault M**., The Birth of Biopolitics, Lectures at the College de France, 1978-79, edt. Senellart M., Palgrave Macmillan, 2008
5. **Furedi F.,** How Fear Works: Culture of Fear in the 21st Century, Bloomsbury Continuum
6. **Poghosyan G**. At the intersection of the European Higher Education Area and BRICS: The Way Forward, «Լրաբեր», Հայ-ռուսական համալսարանի սերիա՝հումանիտար և հասարակական գիտություններ, (35), ՀՌՀ Հրատարակչություն, № 2/2020, էջ148-160
7. **Poghosyan G**., The Self-perceived Impact of COVID-19 Human Mobility Restrictions on Armenian Students Aged 14-18, Journal of Education in Black Sea Region Vol. 6, Issue 2, 2021, pp. 85-94 DOI: https://doi.org/10.31578/jebs.v6i2.234

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

ՀՏԴ 94(323)

Պատմություն

Արմեն ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ.
E-mail: armbad@mail.ru

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ.

Հոդվածը ներկայացնում է 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո քաղաքական իշխող նոր ուժի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության կադրային քաղաքականությունը: ՀՍԽՀ բոլշևիկյան իշխանությունը, կրկնօրինակելով Խորհրդային Ռուսաստանի օրինակը, իր կադրային քաղաքականությունը դարձրեց մենաշնորհային. միայն ՀԿ(բ)Կ անդամները կարող էին զբաղեցնել տարբեր աստիճանի ղեկավար պաշտոններ: Դրա համար ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1920-ական թթ. ստեղծեց համապատասխան նորմատիվ-իրավական դաշտ: Վարվող քաղաքականության արդյունքում ձևավորվեց կադրային նոր համակարգ՝ խորհրդային նոմենկլատուրա:

Բանալի բառեր՝ *Խորհրդային Հայաստան, բոլշևիկյան իշխանություն, կադրային քաղաքականություն, նոմենկլատուրա, նորմատիվ-իրավական դաշտ, 1920-ական թթ.:*

А. Бадалян

КАДРОВАЯ ПОЛИТИКА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920-Е ГОДЫ)

В статье представлена кадровая политика, проводимая новой правящей политической силой – Коммунистической партией Армении, после переворота 2 декабря 1920г. в Республике Армения. Большевистская власть Армянской ССР, подражая примеру Советской России, сделала свою кадровую политику монопольной, подразумевающая, что

только члены КП(б)А могли занимать различные руководящие должности. Для реализации этой политики, ЦК КП(б)А своими решениями в 1920-х годах создал соответствующее нормативно-правовое поле. В результате проводимой политики сформировалась новая кадровая система-номенклатура.

Ключевые слова: *Советская Армения, большевистская власть, кадровая политика, номенклатура, нормативно-правовое поле, 1920-е годы*

A. Badalyan

THE CADRE POLICY IN SOVIET ARMENIA (IN THE 1920S)

The article is dedicated to the cadre policy of the Communist Party of Armenia which seized the power in the Republic of Armenia on December 2, 1920. The Bolshevik authorities of Soviet Armenia copied the cadre policy of Soviet Russia thus turning it to its monopoly. It meant that only the members of CPA could held different leading posts in the state. To implement this cadre policy, the Central Committee of CPA passed decisions that created a corresponding norms' and laws' field. As a result of this policy, a new cadre system, the nomenclature, was formed.

Key words: *Soviet Armenia, Bolshevik power, cadre policy, nomenclature, norms' and laws' field, 1920 s.*

Խորհրդային իշխանությունների կադրային քաղաքականության՝ անվանակարգության (հետայսու՝ նոմենկլատուրայի) ձևավորման հիմքում դրված սկզբունքը պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում կարևոր պաշտոններ զբաղեցրած անձանց թեկնածությունների նախօրոք քննարկումը, առաջադրումը, հաստատումը և տեղափոխությունն էր կուսակցական տարբեր մակարդակի (շրջկոմներից ու քաղկոմներից մինչև՝ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրո) կոմիտեների կողմից:

ԽՍՀՄ տարիներին խորհրդային իշխանությունների կողմից իրականացվող կադրային քաղաքականության մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, որոնք, սակայն, ունեին առավելապես ագիտացիոն, այլ ոչ թե նոմենկլատուրայի ձևավորման ու գործունեության մեխանիզմները ներկայացնող գիտական բնույթ[1]:

Հասկանալի է, որ կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի ձևավորման ու գործունեության թեմայի ուսումնասիրությունը, շատ այլ

---

[1] *Տես՝* ***Гимпельсон Е.Г.****, Проблемы создания и совершенствования аппарата управления Советским государством (1917-1920 гг.) // «История СССР», 1987, N 3, с. 61-76 և այլն:*

թեմաների նման, ուղղակի արգելված էր ԽՍՀՄ-ում, բնականաբար և խորհրդահայ պատմագրությունում: Նշենք միայն, որ թեման առանձին և խորաձավալ ուսումնասիրության հարց դարձրին Մ. Ջիլասը և Մ. Վոսլենսկին, ովքեր Արևմուտք էին արտագաղթել համապատասխանաբար՝ Հարավսլավիայից և ԽՍՀՄ-ից: Նրանց աշխատությունները հրատարակվեցին միայն ԽՍՀՄ կազմալուծման վերջին տարիներին կամ դրանից կարճ ժամանակ անց[1]:

Գորբաչովյան վերակառուցման տարիներից սկսած և, հատկապես՝ ԽՍՀՄ կազմալուծումից հետո, թեման խորապես ուսումնասիրեցին հետխորհրդային ռուս պատմաբանները, իրավաբանները, սոցիոլոգները և այլք[2]:

Ինչ վերաբերում է հետխորհրդային հայագիտության ներկայացուցիչներին, ապա նշենք, որ 1920-ական թթ. նոմենկլատուրայի ձևավորման և գործունեության հարցը նրանց կողմից դեռևս բազմակողմանի և լիարժեք չի ուսումնասիրվել, բացառությամբ՝ Վ. Ղազախեցյանի և, հատկապես, Ա. Հակոբյանի[3]: Իսկ սույն հարցի ուսումնասիրությունը խիստ կարևոր է, քանզի խորհրդային նոմենկլատուրան ոչ միայն խորհրդային հասարակության քաղաքական ուժն էր, այլև «ղեկավարող դասակարգը»: Ընդհանրապես, պետական կառավարման ցանկացած ձևի և քաղաքական համակարգի պայմաններում իշխանության բարձրագույն մարմինների նախաձեռնությունների, նախագծերի, ծրագրերի, ռազմավարական և մարտավարական որոշումների կատարումը կախված է իրականացնողների կադրային որակական կազմից: Այդ իսկ պատճառով, Խորհրդային Միության (բնականաբար և Խորհրդային Հայաստանի) քաղաքական պատմության ներկայացումը, առանց խորհրդային իշխանությունների (կոմկուսի) կադրային՝ նոմենկլատուրայի ձևավորման պատմության ուսումնասիրության, կլինի թերի և ոչ լիարժեք: Ուստի, արդի ժամանակաշրջանում ՀՀ պետական կառավարման և կադրային քաղաքականության առավել

---

[1] *Տես՝* ***Восленский М. С.****, Номенклатура, Господствующий класс Советского Союза, Москва, 1991,* ***Джилас М.****, Лицо тоталитаризма, Москва, 1992.*

[2] *Տես՝* ***Свириденко Ю. П., Пашин В. П.****, Коммунистическая номенклатура: истоки, сущность, содержание, Москва, 1995,* ***Олегх Г.****Л., Партийная машина РКП(б) в начале 1920-х гг.: устройство и функионирование, Новосибирск, 1995,* ***Джавланов О. Т., Михеев В. А.****, Номенклатура: эволюция отбора. Историко-политологический анализ, Москва, 1993,* ***Пашин В. П., Богданов С. В., Зюбин О.П.****, Партийная номенклатура в СССР (1917-1930-е годы): зарождение, развитие, безраздельное могущество, Белгород, 2004,* ***Гимпельсон Е. Г.****, Советские управленцы. 20-ые годы (Руководящие кадры государственного аппарата СССР), Москва, 2001 և այլն:*

[3] *Տե՛ս* ***Ղազախեցյան Վ.****, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006,* ***Հակոբյան Ա.****, Միակուսակցական վարչակազմի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, էջ 220-252:*

արդյունավետ համակարգի ձևավորման համար խիստ անհրաժեշտ է ուսումնասիրել խորհրդային կադրային համակարգի՝ նոմենկլատուրայի գործունեության պատմական՝ դրական և բացասական փորձը: Ելնելով վերոշարադրյալից՝ կփորձենք հակիճ ներկայացնել Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (այսուհետև՝ ՌԿ(բ)Կ (այնուհետև՝ ՀամԿ(բ)Կ), այդ թվում և Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցություն (այսուհետև՝ ՀԿ(բ)Կ) կադրային քաղաքականության՝ նոմեկլատուրայի ձևավորման, կայացման և գործունեության առաջին քայլերը 1920-ական թվականներին, հատկապես՝ հարցի նորմատիվ-իրավական դաշտի ձևավորման պատմական գործընթացը:

Հաշվի առնելով, ինչպես արդեն նշեցինք, թեմայի գրեթե չուսում-նասիրված լինելու հանգամանքը, սույն հարցի ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրը Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի արխիվային փաստաթղթերն են, որոնց վերլուծությունը օգնում է ըմբռնելու ԽՍՀՄ կուսակցական կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի գործունեության մեխանիզմը: Այդ համատեքստում առավել ուշադրության են արժանի Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (այսուհետև՝ՀԿ(բ)Կ) նախա-գահության և քարտուղարության նիստերի արձանագրությունները, որոնք բացահայտում են ՀԿ(բ)Կ ղեկավարության կողմից վարչահրամայական համակարգի ստեղծման և ղեկավար աշխատողների նկատմամբ իրականացվող կադրային քաղաքականության մշակման գործընթացը: Հավելենք նաև, որ խորհրդային իշխանության կադրային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ իրավական սկզբնաղբյուրների թվին են դասվում նաև համառուսաստանյան, ինչպես նաև՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (այսուհետև՝ ՀՍԽՀ) համագումարների և խորհրդային իշխանության համապատասխան որոշումները և դեկրետները:

Խորհրդային նոմենկլատուրայի ձևավորման պատմությունը սկսվում է 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, երբ հեղափոխությանը նախորդած 20-ամյակի ընթացքում ձևավորված պրոֆեսիոնալ հեղափոխականների ընտրախավը, դեռևս զուրկ լինելով այդ ժամանակահատվածում նոմենկլատուրայի ձևավորման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական դաշտից, պաշտոնների նշանակման հարցում առաջնորդվում էր «հեղափոխության արժեքային համակարգով»: Ի դեպ, չպետք է շփոթել նոմենկլատուրան ընտրախավի հետ, որովհետև վերջինս հասարակության փոքրաթիվ, սակայն, որոշակի արժեքային

համակարգ կրող բարձրագույն խավն է, իսկ նոմենկլատուրան՝ կառավարիչների խումբը: Այսպիսով, խորհրդային նոմենկլատուրայի պատմությունը սկսվում է բոլշևիկների՝ իշխանությունը գրավելու առաջին իսկ օրվանից, երբ նրանք կարևոր պաշտոններում նշանակեցին իրենց կադրերին:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Հայաստան հռչակելու մասին Հայաստանի հեղափոխական կոմիտեի (այսուհետև՝ Հայհեղկոմ) 1920թ. նոյեմբերի 29-ի հռչակագիրը նաև նոր իշխանությունների ներքին քաղաքականությունը ուղենշող ծրագրային փաստաթուղթ էր, որում կարևորվում էր «խաղաղ աշխատանքը և խորհրդային շինարարության գործին ծառայելուն միտված աշխատավոր մտավորականության փորձը ու կարողությունը» և, բնականաբար, թեմայի համատեքստում կարելի է այս փաստաթուղթը դիտարկել նաև որպես խորհրդային իշխանության կողմից ապագայում իրականացվելիք կադրային քաղաքականության համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական առաջին փաստաթուղթ: Ինչ վերաբերում է հռչակագիրն ընդունած Խորհրդային Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեին (այսուհետև՝ ՌՀԿ), ապա, այս կառույցի ղեկավարներին, միգուցե ոչ լիարժեք, սակայն կարելի է համարել Խորհրդային Հայաստանի նոմենկլատուրայի դրսևորման առաջին անձանց, քանզի ՌՀԿ-ն, ճիշտ է, կազմավորվել էր Խորհրդային Ադրբեջանում, սակայն ՀԿ(բ)Կ արտասահմանյան բյուրոյի կողմից:

ՀՀ խորհրդայնացումից հետո երկրում տեղի ունեցավ վարչական նոր բաժանում, որի արդյունքում ստեղծվեցին 9 գավառային և 30-ից ավելի գավառակային հեղկոմներ: Դրանց կազմակերպումը նոր իշխանությունների հաստատման սկիզբն էր, որը կայանում էր նախկին իշխանության համակարգի վերացման միջոցով: Դրա վերացմանը զուգընթաց, ՀՍԽՀ տարածքում դադարեց գործել ՀՀ օրենսդրությունը և որպես նոր օրենսդրություն ճանաչվեցին Խորհրդային Ռուսաստանի օրենքները:

Խորհրդային իշխանության հաստատման հետ միաժամանակ ՀՍԽՀ տարածքում ձևավորվեցին Հայաստանի կոմկուսի կառույցները: ՀԿ(բ)Կ Կենտկոմը, հետևելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի օրինակին, կազմակերպում և ղեկավարում էր խորհրդային իշխանության հաստատման գործընթացը երկրում, որի արդյունքում ՀՍԽՀ-ում հաստատվում ու ամրապնդվում էր կոմունիստական կուսակցության մենատիրությունը կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում և՝ պետական ու ոչ պետական կառավարման հիմնարկներում պաշտոնյաների նշանակման և տեղափոխության գործընթացում:

Ինչպես արդեն նշեցինք, խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերից բոլշևիկները, ձևավորելով պետական իշխանության նոր մարմիններ, ձգտում էին իրենց ներկայացուցիչներին նշանակել նշյալ մարմինների ղեկավար պաշտոններում: Սա բոլշևիկյան կուսակցական շինարարություն քաղաքական և կազմակերպչական աշխատանքների միասնականության հիմնական սկզբունքներից էր, որը հետևողականորեն պաշտպանում էր բոլշևիկյան կուսակցության առաջնորդ Վ. Լենինը: Խորհրդային իշխանության նոր մարմինների ստեղծման և վերջիններիս գործունեության առաջին տարիներին պետական կառավարման համակարգում գործառույթների հստակեցման օրենսդրական դաշտի բացակայության պատճառով ծագեցին խնդիրներ բոլշևիկյան կուսակցության կազմակերպությունների ու խորհրդային իշխանության մարմինների աշխատանքային հարաբերություններում: Նման օրինակները ստիպեցին բոլշևիկներին ՌԿ(բ)Կ VIII համագումարում (18-23.03.1919թ.) անդրադառնալ հարցին և հաստատել պետական շինարարության խորհրդային տեսության կարևորագույն սկզբունքը. «...Ոչ մի դեպքում չի կարելի միաձուլել պետական մարմինների (խորհուրդների) և կուսակցական կազմակերպությունների գործառույթները... Կուսակցությունն իր որոշումները պետք է իրականացնի խորհրդային մարմինների միջոցով՝ խորհրդային սահմանադրության շրջանակներում: Կուսակցությունը պետք է ձգտի ղեկավարել խորհուրդների գործունեությունը, այլ ոչ թե փոխարինել դրանք»[1]: Չնայած համագումարի վերոշարադրյալ որոշմանը, այնուամենայնիվ, ՌԿ(բ)Կ ղեկավար գործիչների մի մասը շարունակում էր պնդել, որ կուսակցությունը պետք է պետական մարմինների առջև դնի քաղաքական խնդիրներ, հրահանգներ տա և ստուգի դրանց կատարմանը, միաժամանակ՝ չազդելով պետական մարմինների կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի ձևավորման գործընթացի վրա: Ամբողջությամբ հակառակն էր պնդում կուսակցության ղեկավար մեծամասնությունը՝ Վ. Լենինի գլխավորությամբ: Այսպես, VIII համագումարում ուղղակի հայտարարվեց, որ բոլշևիկյան կուսակցության խնդիրն է գրավել խորհուրդներում քաղաքական մեծամասնությունը և դրանց աշխատանքի նկատմամբ սահմանել լիակատար վերահսկողություն՝ առաջադրելով խորհրդային բոլոր պաշտոններում առավել նվիրված և վստահելի կողմնակիցներին:

Բնականաբար, կադրային նման քաղաքականություն էր իրականացնելու նաև ՀԿ(բ)Կ-ն, սակայն կադրային հարցը լուրջ խնդիր էր ՀՍԽՀ նոր իշխա-

[1] *Коммунистическая партия Советского Союза в резолюциях и решениях сьездов, конференций и Пленумов ЦК, т. 2, 1917-1924, Москва, 1970, с. 107.*

նությունների համար, և պատահական չէր, որ իշխանափոխությունից օրեր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 9-ին, ՀԿ(բ)Կ Երևանի կազմակերպության ժողովում Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը իր ելույթում նշեց, որ, չնայած երկրում այլևս չեն կարող գործել բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչները, սակայն դրանց առանձին անդամներ կարող են իրենց ծառայությունը մատուցել երկրին[1]: Նոր իշխանությունների՝ կադրային քաղաքականության այս ծանր ժամանակահատվածում հատկապես խիստ էր զգացվում «պատասխանատու ղեկավարներ աշխատողների» (հեղկոմների նախագահներ, բաժնի վարիչներ, խորհրդային պետական մարմինների՝ բարձր ու միջին օղակի ղեկավար գործիչներ) կարիքը, որոնց համար պարտադիր էր կուսակցական ստաժը: Նշյալ կարգի կադրերի բացակայությունը հատկապես տեսանելի էր հանրապետության գավառներում և առավել ևս՝ գավառակներում:

Խնդիրը լուծելու նպատակով, ՀԿ(բ)Կ Կենտկոմը շրջաբերական գրությամբ դիմեց Խորհրդային Ռուսաստանում գործող ազգությամբ հայ «պատասխանատու կուսակցական ընկերներին»՝ Խորհրդային Հայաստան գալու առաջարկությամբ[2]:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1920թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ՝ ազգությամբ հայ բոլշևիկների մի խումբ (Ս. Լուկաշին, Պ. Մակինցյան, Ա. Կարինյան և այլք) ժամանեց Խորհրդային Հայաստան: Կուսակցական բազմաթիվ գործիչներ ժամանեցին նաև Խորհրդային Վրաստանից և Խորհրդային Ադրբեջանից[3]:

Կուսակցության կողմից իրականացվող կադրային քաղաքականությունը ընդհատվեց երկրում 1921թ. փետրվարի 18-ին ծագած քաղաքացիական պատերազմի պատճառով: Ընդհատված քաղաքականությունը շարունակվեց քաղաքացիական կռիվների ավարտից և Զանգեզուրի՝ ՀՍԽՀ-ին միանալուց հետո: Սակայն այդ քաղաքականության շարունակության հետ կապված ծագեցին տարաբնույթ խոչընդոտներ, որոնցից մեկը՝ քաղաքացիական կռիվներից հետո բնակչության մեծ զանգվածի արտագաղթն էր Պարսկաստան: Պարտված ապստամբների և քաղաքացիական բնակչության արտագաղթը կանխելու, ինչպես նաև՝ արդեն արտագաղթածներին վերադարձնելու նպատակով, ՀՍԽՀ ղեկավարությունը 1921թ. ապրիլի 10-ին, 23-ին և մայիսի 16-ին հայտնում էր լրիվ և համընդհանուր ներում բոլոր քաղաքական և զինվորական գործիչներին, «ովքեր ապստամբել ու պայքարում են խորհրդային իշխանության դեմ»[4]:

---

[1] *Տես՝ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 8:*

[2] *Տես՝* ***Կասյան Ս.****, Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 183-186:*

[3] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 19-25:*

[4] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 21, թ. 38:*

Սույն քաղաքականությամբ, ՀՍԽՀ իշխանությունները փորձում էին լուծել նաև հանրապետությունում առկա կադրային սովը:

Խորհրդային իշխանության կադրային քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը կուսակցական կադրերի հաշվառման և նշանակման համակարգի կազմակերպումն էր: ՌԿ(բ)Կ VIII համագումարի որոշմամբ՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության կազմում 1919թ. ապրիլին ստեղծվեց հաշվառման-նշանակման բաժին, որի գործառույթը կուսակցական անդամների հաշվառումն էր և նրանց հետագա նշանակումը կուսակցական, պետական, տնտեսական և արհմիութենական հիմնարկ-կազմակերպություններում[1]: Կարճ ժամանակ անց՝ 1921թ. մայիսի 9-ին, նույնը կատարեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը, երբ իր իսկ որոշմամբ, Կենտկոմի կազմբաժնին կից ստեղծվեցին մի քանի ենթաբաժիններ, որոնց թվում և հաշվառման-նշանակման[2]: Եվ սա բնական էր, քանզի ՀԿ(բ)Կ-ն ՌԿ(բ)Կ-ի բաղկացուցիչ մասն էր՝ օժտված մարզային կազմակերպության իրավունքներով[3]: ՀՀ խորհրդայնացումից հետո ՀԿ(բ)Կ-ն ևս իրականացրեց անդամ-թեկնածուների հաշվառում, ցուցակագրում և զտում, որի արդյունքում, 1921թ. սկզբին, կուսակցությունն իր շարքերում ուներ 5300 անդամ և թեկնածու[4]: Ձևավորվեցին ՀԿ(բ)Կ գավառային ու գավառակային կազմակերպությունները և տարբեր հիմնարկ-կազմակերպություններում առաջացան կուսակցության առաջին սկզբնական կառույցները (բջիջները):

Կուսակցական կադրերի հաշվառման և նշանակման գործում մեծ նշանակություն էր ունենալու նաև նրանց մասնագիտական պիտանելիության հարցը: Այս կապակցությամբ, 1921թ. հոկտեմբերին Վ. Լենինը, դիմելով ՌԿ(բ)Կ Կենտկոմին, առաջարկեց ուսումնասիրել տարբեր մասշտաբի «պատասխանատու կոմունիստ ղեկավարների» համապատասխանության հարցը իրենց կատարած աշխատանքներին: Այս առաջարկությունը ընդգրկվեց 1921թ. հոկտեմբերի 8-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի՝ Վ. Մոլոտովի զեկուցմամբ ընդունված պատասխանատու աշխատողների և նրանց նշանակման մասին որոշման մեջ: Այդ որոշման իրականացման պատասխանատուներ նշանակվեցին Վ. Մոլոտովը և Լ. Կագանովիչը[5]:

---

[1] *Տես՝ **Зеленов М. В.**, Становление аппарата ЦК и института секретаря ЦК РСДРП (б)-РКП(б) в 1917-1922 гг., Нижный Новгород, 2007, с. 105-115:*

[2] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 44, թ. 1-3:*

[3] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 8-11 հակ.: «Резолюция пленума ЦК КПА по партстроительству», принято на заседании от 06.06.1922 г.:*

[4] *Տես՝ **Ղազախեցյան Վ.**, նշվ. աշխ., էջ 17:*

[5] *Տես՝ **Воробей А.**, Основные тенденции формирования системы номенклатурных кадров в 1920-ы годы // «Вестник Северного федерального университета», 2012, N 2, с. 5-11:*

Շարունակելով կուսակցական կադրերն ավելի արդյունավետ օգտագործելու քաղաքականությունը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի հաշվառման-նշանակման բաժինը 1922թ. մշակեց և ենթակա կառույցներին (այդ թվում և՝ ՀԿ(բ)Կ-ին) ուղարկեց «պատասխանատու աշխատողների հաշվառման մասին հրահանգը»[1]: Չնայած հաշվառումը վերաբերում էր միայն կոմկուսի անդամներին, սակայն իրականում հաշվառվելու էին բոլոր այն անձինք, ովքեր վերջին վեց ամսվա ընթացքում զբաղեցրել էին ղեկավար պաշտոններ[2]:

«Պատասխանատու աշխատողների» հաշվառումը իրականացվում էր տեղական (գավառային կոմիտեից մինչև Կենտկոմ) կուսակցական կոմիտեների կողմից, համաձայն եռահարկ՝ նահանգային, գավառային և գավառակային համակարգի: Հրահանգով խիստ հստակեցվում էր յուրաքանչյուր համակարգի պաշտոնների ցանկը, որը տեղական կուսակցական կազմակերպությունները չէին կարող փոխել: Այսպես, օրինակ, «խորհրդային վարչական աշխատող» խմբում նահանգային համակարգի «պատասխանատու աշխատողներ» էին համարվում նահանգային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը, նախագահության անդամները և գործկոմի բաժնի վարիչները, գավառային համակարգում՝ գավգործկոմի նույնակարգ աշխատողները և այլք:

1923թ. ապրիլի 17-ից 25-ը տեղի ունեցած ՌԿ(բ)Կ XII համագումարը ամրապնդեց բոլոր ղեկավար կադրերի նշանակման և տեղափոխության նկատմամբ բոլշևիկյան կուսակցության ունեցած լիակատար վերահսկողությունը: Համագումարում, ներկայացնելով ՌԿ(Բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը, Ի. Ստալինն, անդրադառնալով Վ. Լենինի՝ կուսակցության գործունեության քաղաքական և կազմակերպչական գործառույթների միասնականության խնդրին, իր ելույթում հնչեցրեց նշյալ խնդրի դասական ձևակերպումը. «...կուսակցության ղեկավար դերը արտահայտվում է ոչ միայն նրանում, որպեսզի տրվեն հրահանգներ, այլև նրանում, որ կարևորագույն պաշտոններում նշանակվեն մարդիկ, ովքեր ի վիճակի են հասկանալու և ազնվորեն կատարելու մեր տված հրահանգները...»[3]:

Բոլշևիկյան կուսակցության կադրային քաղաքականության էության՝ նոմենկլատուրայի ձևավորման ծնունդը սովորաբար կապվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի 1923 թ. նոյեմբերյան որոշման հետ, որում նշվում

---

[1] *Сборник инструкций по учету и распределению партработников, Москва, 1923, с. 4-12:*

[2] *Նույն տեղում, էջ 23-28:*

[3] *Двенадцатый съезд РКП(б). 17-25 апреля 1923 г., Стенографический отчёт, Москва, 1968, с. 62-63.*

էր. «Պետական և տնտեսական մարմինների պատասխանատու աշխատողների նշանակումը և տեղափոխությունը կայանում է Կենտկոմի հաստատմամբ, իսկ տեղում՝ համապատասխան ժողկոմների և ժողկոմատների կամ գործկոմների կոլեգիաների կողմից»: Որոշմամբ առաջարկվում էր հստակեցնել, թե որ պաշտոնում կառավարչական ինչ արարողակարգով պետք է նշանակում կատարվի[1]: Այս բաժանումը հիմք ծառայեց նոմենկլատուրայի պաշտոնների առաջին, երկրորդ, իսկ հետագայում նաև՝ երրորդ ցուցակների առաջացմանը:

Բնականաբար, Խորհրդային Հայաստանի իշխանությունների կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի ձևավորման հիմքում ընկած էին վերոշարադրյալ սկզբունքները, որոնք իրենց առաջին ձևակերպումը՝ որպես նորմատիվ-իրավական դաշտի ստեղծում, ստացան ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության՝ 1923թ. մայիսի 3-ի որոշման 5-րդ կետում: Սույն կետով հաստատվեց գավառային մասշտաբի «պատասխանատու աշխատողների» (22 հոգի), պահուստային (25 հոգի) և հատուկ (2 հոգի) խմբերի ցուցակը[2]:

Նշյալ որոշման հավելվածում ներկայացված էր ցանկը: Օրինակ, գավառային մասշտաբի ցուցակի առաջին համարը Ս. Լուկաշինն էր, որին հաջորդում էին՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամներ Ա. Շահսուվարյանը, Գ. Մեհրաբյանը և այլք, իսկ պահուստային ցուցակում էին՝ Ե. Բակունցը, Ա. Քարամյանը ու ուրիշներ: Հատուկ ցուցակում էր ընդգրկված ՀԿ(բ)Կ քարտուղար Աշոտ Իոաննիսյանի (Հովհաննիսյանի) եղբայր՝ համալսարանի ռեկտոր՝ Հակոբ Իոաննիսյանը[3]:

Մի քանի օր անց՝ մայիսի 29-ին, ամրապնդելով նոմենկլատուրային համակարգի ձևավորման գործընթացը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը (արձանագրություն թիվ 7) որոշեց ստեղծել հինգ հոգանոց (Ա. Իոաննիսյան, Ս. Մարտիկյան, Ս. Լուկաշին, Դ. Տեր-Սիմոնյան և Ա. Շահսուվարյան) հանձնաժողով՝ գավառային մասշտաբի «պատասխանատու աշխատողների» բնութագրերը կազմելու համար[4]:

Հաջորդ օրը տեղի ունեցած նիստում հանձնաժողովը հաստատեց 43 «պատասխանատու աշխատողի» բնութագիր: Ցուցակը գլխավորում էր Ս. Լուկաշինը և ավարտում Ի. Սարգիսովը[5]:

Կարճ ժամանակ անց՝ 1924թ. հունվարի 1-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը հաստատեց գավառային մասշտաբի 36 հոգանոց (գլխավորում էր

---

[1] *Տես՝ КПСС в резолюциях и решениях сьездов, конференции и пленумов ЦК (1898-1986), т. 3, 1922-1925, Москва, 1984, с. 99, 219.*

[2] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 15:*

[3] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 18:*

[4] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 23 և հակ.:*

[5] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 2-3:*

Ե. Բակունցը) և պահուստային խմբի 15 հոգանոց (գլխավորում էր Ս. Աբովյանը) ցուցակը[1]:

Խորհրդային իշխանության կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի ձևավորման գործընթացից անմասն չէր նաև ՀԿ(բ)Կ քարտուղարությունը: Այսպես, ՀԿ(բ)Կ քարտուղարությունը 1923թ. դեկտեմբերի 18-ին (արձանագրություն թիվ 18, կետ 3) որոշեց ՀՍԽՀ տարբեր գավառներին (Մեղրի, Ալեքսանդրապոլ, Լոռի-Փամբակ, Դիլիջան և Նոր-Բայազետ) և գավառակներին կցել բազմաթիվ «պատասխանատու աշխատողների»[2]: Մի քանի օր անց՝ հունվարի 14-ին, քարտուղարությունը (արձանագրություն թիվ 26) կրկին տարբեր գավառներին կցեց բազմաթիվ «պատասխանատու աշխատողների»[3]:

Այս ժամանակահատվածում ՌԿ(բ)Կ Կենտկոմը շարունակում էր կադրային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական դաշտի ստեղծման աշխատանքները: Մասնավորապես, դեռևս 1923 թ. հունիսի 12-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն ընդունեց որոշում «Նշանակումների» մասին, իսկ նույն տարվա հոկտեմբերին Կենտկոմի կողմից ընդունվեց հաշվառման-նշանակման աշխատանքների հիմնական խնդիրներին առնչվող որոշումը: Ի վերջո, ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն 1925թ. նոյեմբերի 16-ին ընդունեց նոր, լրամշակված և բավականին ընդգրկուն ու մանրամասը շարադրված՝ «Աշխատողների ընտրության և նշանակման կարգի» մասին կանոնադրությունը և նոմենկլատուրային պաշտոնների վերամշակված ցուցակը: Այս և նմանատիպ փաստաթղթերը ՌԿ(բ)Կ Կենտկոմը չէր հրապարակում:

Սկզբում կար երկու ցուցակ. նոմենկլատուրա թիվ 1 և նոմենկլատուրա թիվ 2: Առաջին ցուցակում ընդգրկված էին այն պաշտոնները, որոնցում նշանակումները տեղի էին ունենում միայն Կենտկոմի որոշմամբ, իսկ երկրորդում՝ Կենտկոմի հաշվառման-նշանակման բաժնի համաձայնությամբ: Հետագայում, նոմենկլատուրա թիվ 1 ցուցակին կցվեց «ընտրվող պաշտոնների» ցուցակը, որում ընդգրկված անձանց թեկնածուները նախօրոք հաստատվում էին համապատասխան կուսակցական կառույցների կողմից: Նշենք, որ որևէ նշանակություն չուներ, թե ուր էին պատրաստվում «ընտրվել» և որպես ինչ էին պատրաստվում «ընտրվել» այդ թեկնածուները՝ տարատեսակ խորհուրդների կամ ժողովների պատգամավորներ կամ պատվիրակներ, ժողովրդական ներկայացուցիչ դատարանում, արհմիութենական կամ կոմերիտական աշխատող և այլն:

---

[1] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 24:*

[2] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 12, թ. 4 և հակ.:*

[3] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 9, թ. 55-57:*

Նոմենկլատուրայի թիվ 1 և թիվ 2 ցուցակներում չընդգրկված, սակայն ղեկավար համարվող պաշտոնների ցուցակում ընդգրկված անձանց ընտրությունը կամ նշանակումը կատարվում էր յուրաքանչյուր պետական հաստատության կողմից հաստատված և Կենտկոմի կազմակերպչական բաժնի կողմից համաձայնեցված ընթացակարգով: Այս երրորդ ցուցակը ստացավ *վարչական նոմենկլատուրա կամ նոմենկլատուրա թիվ 3* անվանումը:

ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1925թ. նոյեմբերի 16-ի որոշմամբ միութենական հանրապետությունների կոմկուսների Կենտկոմներին, կուսակցության բոլոր երկրամասային ու նահանգային կոմիտեներին կարգադրեց սկսել իրենց կողմից հաստատվող կամ նշանակման ժամանակ համաձայնեցման ենթակա տեղական նոմենկլատուրայի ցուցակի կազմման աշխատանքները: Այս որոշմանը կցվեց «Հրահանգ տեղական կազմակերպությունների ղեկավար աշխատողների նշանակման և տեղափոխության համաձայնության ձևերի մասին» հավելվածը: Հրահանգի կետերից մեկում նշվում էր, որ « ... նոմենկլատուրայի թիվ 1 և թիվ 2 ցուցակներում ընդգրկված աշխատողների նշանակման, տեղափոխության և ազատման մասին տեղական կուսկազմակերպությունների բոլոր առաջարկությունները պարտադիր պետք է Կենտկոմի կազմակերպչական նշանակման բաժնի միջոցով քննարկման առարկա դառնան Կենտկոմի նիստում: Տեղական կուսկազմակերպությունները չեն կարող ինքնուրույն նշանակել, տեղափոխել և ազատել այդ ցուցակներում ընդգրկված աշխատողներին [աշխատանքից][1]:

Ստանալով վերոնշյալ որոշումը, ՀԿ(բ)Կ քարտուղարությունը անցավ դրա կատարմանը: 1926թ. հունիսի 12-ին քարտուղարությունը, լսելով Ե. Բակունցի զեկուցումը նոմենկլատուրայի թիվ 1 և թիվ 2 ցուցակների մասին (արձանագրություն թիվ 17, կետ 3), որոշեց ստեղծել հանձնաժողով (նախագահ՝ Ե. Բակունց, անդամներ՝ Ա. Շահգելդյան, Ա. Թաթյան, Ա. Մանուչարյան, Գ. Գողթունի) և եռօրյա ընթացքում քննարկելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվառման նշանակման բաժնի կազմած նոմենկլատուրայի թիվ 1 թիվ 2 ցուցակները, դրանք՝ սեփական առաջարկություններով ներկայացնել ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությանը՝ հաստատման համար[2]: Շուրջ 10 օր անց՝ հունիսի 23-ին, քարտուղարությունը, լսելով նոմենկլատուրային ցուցակի մասին Ե. Բակունցի զեկուցումը (արձանագրություն թիվ 18), հաստատեց ներկայացված ցուցակը: Միաժամանակ

---

[1] ***Кожихина Т. П., Фигантер Ю. Ю.***, *Советская номенклатура: становление, механизмы действия // «Вопросы истории», 1993, N 7, с. 3-4.*

[2] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 12, թ. 40-41:*

որոշվեց, որ միությունների (նշված չէ, թե որ միությունների մասին է խոսքը՝ արհեստագործական, թե ստեղծագործական) կենտրոնական վարչությունների քարտուղարների նշանակումների և տեղափոխությունների ժամանակ հարկ է պարտադիր հաշվի առնել ՀԿ(բ)Կ Երևանի կազմակերպության կարծիքը[1]:

Ինչպես արդեն նշել ենք, ՀԿ(բ)Կ ղեկավարությունը կադրային իր քաղաքականությունը համաձայնեցնում էր վերադաս կառույցների հետ: Նման օրինակ է ՀԿ(բ)Կ քարտուղարության 1928թ. փետրվարի 28-ի նիստը, որի ժամանակ, լսելով նոմենկլատուրայի պաշտոններում նշանակման հարցը, քարտուղարությունը որոշեց խնդրանքով դիմել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմին՝ վերանայելու ՀՍԽՀ նոմենկլատուրայի ցուցակի պաշտոններում նշանակման կարգը: Միաժամանակ, առաջարկեց այդ ցուցակում կատարել մասնակի փոփոխություններ և հաջորդ նիստերից մեկում, հաստատել նոր ցուցակը և նշանակման կարգը[2]: Սույն որոշման հավելվածում ներկայացվեց նշանակման կարգի փոփոխության վերաբերյալ 22 առաջարկություն: Մասնավորապես, առաջարկվում էր ՀԿ(բ)Կ Երևանի կուսկոմիտեի քարտուղարի պաշտոնը հանել Անդրերկրկոմի կողմից հաստատվող նոմենկլատուրայի թիվ 1 ցուցակից և տեղափոխել նոմենկլատուրայի թիվ 2 ցուցակ[3]:

Այսպիսով, 1920-ական թվականներին ստեղծվեց ՀԿ(բ)Կ-ի կողմից իրականացվող կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի ձևավորման և գործունեության համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական համապատասխան դաշտը, որը հետագայում կատարելագործվեց: Պետական կառավարման, ներառյալ՝ ընտրովի պաշտոններում կադրային քաղաքականության՝ նոմենկլատուրայի ձևավորման (նշանակում և տեղափոխություն) մենաշնորհը անցավ ՀԿ(բ)Կ-ին: Անվանացուցակում հատուկ տեղ էր զբաղեցնում «պատասխանատու ղեկավար աշխատող» հաստիքը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

---

[1] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 12, թ. 42-43:*

[2] *Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 22, թ. 44:*

[3] *Տես՝ **Հակոբյան Ա.**, Միակուսակցական վարչակազմի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, էջ 248:*

ՀՏԴ 314/316/

Սոցիոլոգիա

Անդրանիկ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս
E-mail: shahinyan_90@mail.ru

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ. ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՁԵՎԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածում քննվում են անօրինական միգրացիան և ռեադմիսիայի ձևերը:
***Հոդվածի նպատակն է** `ուսումնասիրել ՀՀ-ում վերադարձողների հետ կապված օրենսդրությունը, անօրինական միգրացիայի դիմելու պատճառներն ու մոտիվացիան, ինչպես նաև վերասոցիալականացման պետական ծրագրերը և տալ համապարփակ տեղեկատվություն անօրինական աշխատանքային միգրացիայի վերաբերյալ:*
*Բնակչության **անօրինական միգրացիան** բավականին բարդ սոցիալական երևույթ է, որը սերտորեն կապված է տնտեսական կառուցվածքների փոփոխությունների և արտադրողական ուժերի տեղաբաշխման հետ: **Արտաքին անօրինական միգրացիայի** ցուցանիշը պայմանավորված է ինչպես մշտական բնակության վայրի փոփոխումով, այնպես էլ աշխատանքային պայմանագրերով արտերկիր մեկնող մարդկանց թվակազմով: 2021 թվականի ընթացքում ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով՝ Միգրացիոն ծառայություն են դիմել 254 օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող 1 անձ:*
*Հետազոտության մեջ ուշադրություն ենք դարձրել այն փաստին, որ **անօրինական աշխատանքային միգրացիան** լուրջ ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման գործում, հատկապես մեծ է ազդեցությունը երկրի համախառն ներքին արդյունքի վրա: **Անօրինական աշխատանքային միգրացիան** բացասական ազդեցություն է ունենում երկրի **ներքին աշխատաշուկայի** վրա՝ ստեղծելով*

աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն: ՀՀ-ում անօրինական աշխատանքային միգրացիան կանոնակարգելը երկրի կարևորագույն խնդիրներից է:

Բանալի բառեր՝ *վերադարձողներ, հետընդունում, անօրինական միգրացիա, անկանոն միգրացիա, ելքի երկիր, նպատակակետ երկիր, ապաստան:*

А.Шагинян

НЕЛЕГАЛЬНАЯ МИГРАЦИЯ. ФОРМЫ ПРИНЯТИИ НАЗАД (РЕАДМИССИЯ) В РА

В статье как тема исследования выбраны нелегальная миграция и формы реадмиссии. Целью статьи является изучение законодательства, касающегося репатриантов в Республике Армения, причин и мотивации обращения за нелегальной миграцией, а также государственных программ ресоциализации, для предоставления исчерпывающей информации о нелегальной трудовой миграции.

Нелегальная миграция населения представляет собой достаточно сложное социальное явление, тесно связанное с изменениями в хозяйственных структур и размещении производительных сил. Уровень нелегальной внешней миграции обусловлен как сменой постоянного места жительства, так и количеством лиц, выезжающих за границу по трудовым договорам. В течении 2021 года в Миграционную службу Армении за убежищем обратились 254 иностранца, 1 лицо без гражданства.

В исследовании обратили внимание на то, что нелегальная трудовая миграция оказывает существенное влияние на экономическое развитие страны, особенно большое влияние на валовой внутренний продукт страны. на внутренний рынок труда страны, создавая несоответствие между спросом и предложением на рынке труда. Регулирование нелегальной трудовой миграции в РА является одним из важнейших вопросов в стране.

Ключевые слова: *репатрианты, реадмиссии, нелегальная миграция, незаконная миграция, страна выезда, страна назначения, приют.*

A. Shanhinyan

ILLEGAL MIGRATION. FORMS OF ACCEPTANCE BACK (READMISSION) IN RA

In the article as the subject of study are chosen illegal migration and forms of readmission. The purpose of the article is to study

the legislation relating to the repatriates in the Republic of Armenia, the reasons and motivation of the appeal for illegal migration, as well as government resocialization programs, to provide comprehensive information about illegal labor migration.
The illegal migration of the population is a rather complicated social phenomenon, closely related to changes in economic structures and the placement of productive forces. The level of illegal external migration is due to the change of permanent residence, as well as the number of persons traveling abroad on labor contracts. For 2021, 254 foreigners appealed to the Migration Service of Armenia for the asylum, 1 stateless person. The study drew attention to the fact that illegal labor migration has a significant impact on the economic development of the country, especially a large impact on the gross domestic product of the country. Illegal labor migration has a negative impact on the country's domestic labor market, creating a discrepancy between supply and demand in the labor market. Regulation of illegal labor migration in RA is one of the most important issues in the country.
Key words: ***r****eturnees, readmission, illegal migration, irregular migration, country of exit, destination country, shelter.*

Վերջին քսան տարիներին էականորեն փոխվել են ինչպես Հայաստանի Հանրապետությանն առնչվող միգրացիոն գործընթացները, դրանք ծնող պատճառներն ու հետևանքները, միգրացիոն գործընթացների մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները, այնպես էլ պետական կարգավորման միջոցով հիմնախնդրի լուծման մասին պատկերացումները:

Անօրինական միգրացիան՝ ըստ էության՝ միգրացիոն երևույթի հակառակ «երեսն» է: Գոյություն չունի *անկանոն միգրացիա* հասկացության հստակ կամ համընդհանուր ճանաչված սահմանում: Ըստ Միգրացիայի միջազգային կազմակերպության՝ դա ելքի, տարանցիկ և մուտքի երկրների հսկողությունից դուրս տեղի ունեցող տեղաշարժն է: ***Նպատակակետ երկրների*** տեսանկյունից՝ ***անկանոն միգրացիան*** երկիր անօրինական մուտք գործելը, մնալը կամ աշխատելն է, որը նշանակում է, որ միգրանտը չունի իմիգրացիայի մասին կանոնակարգերով սահմանված տվյալ երկիր մուտքի, կացության կամ աշխատելու իրավունք կամ համապատասխան փաստաթուղթ: ***Ելքի երկրի տեսանկյունից՝ անօրինական են համարվում,*** օրինակ, այն դեպքերը, երբ անձը հատում է միջազգայնորեն ճանաչված սահմանը՝ առանց վավերական անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ ունենալու կամ չի բավարարում երկրից մեկնման համար

անհրաժեշտ վարչական պահանջներ: Այդ առումով հարկ ենք համարում նշել, որ Հայաստանը մինչև այժմ չունի ՀՀ-ից քաղաքացիների ելքի և ՀՀ մուտքի մասին օրենք, և դա կարող է լրջագույն բաց համարվել[1]:

Անօրինական միգրացիան երբեմն եվրոպական փորձագետների կողմից օգտագործվում է նաև ***«ստվերային միգրացիա» «լատենտային միգրացիա»,*** իսկ անօրինական միգրանտները՝ ***«փաստաթուղթ չունեցող միգրանտներ»*** անվանումներով[2]:

Անօրինական աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնախնդիրներն ուսումնասիրողներից շատերը համարում են, որ աշխատուժի միջազգային տեղաշարժերի գլխավոր պատճառն աշխատավարձի մակարդակների ազգային տարբերություններն են, որոշ երկրներում՝ ավելի բարձր աշխատավարձը: Ցածր աշխատավարձ վճարող երկրներից աշխատուժը հոսում է ավելի բարձր աշխատավարձ վճարող երկրներ: Այսպես, Մեքսիկայից անօրինական աշխատուժի հոսքը դեպի ԱՄՆ հասել է աննախադեպ չափերի և մինչև օրս չի դադարում, որովհետև նույն որակի ու քանակի աշխատանքների համար ԱՄՆ-ում անհամեմատ բարձր են գնահատում, քան Մեքսիկայում:

Ապաստան հայցող անձանց քաղաքացիության երկրներն են.
Իրանի Իսլամական Հանրապետություն՝ 121 անձ, Իրաքի Հանրապետություն՝ 51, Սիրիայի Արաբական Հանրապետություն՝ 27, Կուբայի Հանրապետություն՝ 11, Ռուսաստանի Դաշնություն՝ 6, Թուրքիա՝ 5, Վրաստանի Հանրապետություն՝ 5, Մյանմա՝ 4, Հորդանան՝ 4, Լիբանանի Հանրապետություն՝ 3, Չինաստան՝ 3, Ուկրաինա՝ 3, Հնդկաստան՝ 3, Ուզբեկստան՝ 1, Նիգերիա՝ 1, Պակիստան՝ 1, Եգիպտոս՝1, Կամերուն՝ 1, Թուրքմենստան՝1, Մոլդովա՝1, Աֆղանստան՝1:

Նրանցից 2021 թվականի ընթացքում ՀՀ-ում փախստական են ճանաչվել և ապաստան ստացել 85 օտարերկրացի, ընդ որում՝ 1-ը ճանաչվել է փախստական, սակայն չի ստացել ապաստան: Փախստականի կարգավիճակ չի տրամադրվել և ապաստանի տրամադրումը մերժվել է 63 օտարերկրյա քաղաքացու:

ՀՀ-ում ապաստան հայցողին փախստական չճանաչելու և ապաստանի տրամադրումը մերժելու մասին Միգրացիոն ծառայության 27 որոշումներ բողոքարկվել են ՀՀ վարչական դատարան: Բոլոր 27 հայցադիմումների վերաբերյալ ծառայության կողմից ներկայացվել են առարկություններ:

---

[1] *Տե՛ս **Աթոյան Կ.Լ.**, Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում, «Տնտեսագետ», Երևան, 2015, էջ 56:*

[2] *Տե՛ս **Աթոյան Կ.Լ.**, նույն տեղում, էջ 59-60:*

«Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում տեղավորվել է 45 ապաստան հայցող օտարերկրացի:
Կազմակերպվել է ՀՀ-ում ապաստան հայցող՝ «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված 31 օտարերկրացիներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամական օգնության տրամադրում՝ կենսապահովման հիմնական կարիքները հոգալու նպատակով:

Ապաստան հայցողների համար ապահովվել է 191 գրավոր և 287 բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում:

ՄԱԿ-ի տվյալներով աշխատանքային միգրանտների թիվը ողջ աշխարհում այսօր ավելի քան 214 մլն. մարդ է կազմում, այսինքն աշխարհի ողջ բնակչության 3 տոկոսը աշխատանքային միգրացիայի մեջ է:

Հարկ ենք համարում ընդգծել, որ տեղաշարժի ազատությունը չի ներառում կամայական ընտրությամբ որևէ երկիր մուտք գործելու ընդհանուր, համընդհանուր իրավունք, չնայած դա տեղաշարժի ազատության իրավունքի հենց այն բացակայող բաղադրիչն է, որը մարդիկ շատ հաճախ ցանկանում են ունենալ: Բացի այդ, ընդունված միջազգային նորմերի համաձայն, օտարեկրացուն մուտքի իրավունքի տրամադրումը համարվում է տվյալ երկրի ինքնիշխան իրավունքներից մեկը, և այն օտարերկրացիները, որոնք, տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելով, մուտք են գործում կամ գտնվում (բնակվում են) այնտեղ, համարվում են ***անօրինական միգրանտներ***[1]***:***

Անօրինական միգրանտի կարգավիճակում անձը կարող է հայտնվել թե՛ անօրինական ճանապարհով երկիր մուտք գործելու (մուտք առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի, կեղծ փաստաթղթերի ներկայացում, մուտք երկիր ոչ սահմանային անցակետերով և այլն), և թե՛ օրինական ճանապարհով երկիր մուտք գործելու, սակայն թույլատրելի ժամկետից ավելի մնալու պարագայում:

Անկանոն միգրանտ համարվող օտարերկրացին իրավունք չունի զբաղվելու աշխատանքային գործունեությամբ:

Դա հնարավոր է հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում՝

- Ø ընտանիքի վերամիավորում
- Ø կրթություն
- Ø աշխատանք

---

[1] ***Գալստյան Ք., Պրուտչ Ֆ., Ռոսի-Լոնգի Պ.***, *«ՀՀ-ում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն: Գնահատման առաքելության զեկույցի» մասով ձեռնարկված քայլեր, Թարգմ.՝ ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն, Հրատ.՝ ՄՄԿ-ի Հայաստանում ծրագրերի մշակման և իրականացման բաժին, Երևան, 2011: էջ 43:*

Ø ապաստան:

Տվյալ պետությունում օրինական բնակվող անձի ընտանիքի անդամները կարող են ժամանել այդ երկիր՝ իրենց հարազատի հետ բնակվելու նպատակով: Այս դեպքում որպես ընտանիքի անդամներ դիտարկվում են ***կինը/ամուսինը, անչափահաս երեխաները, խնամքի տակ գտնվող ծնողները***[1]:

Տվյալ պետության որևէ ուսումնական հաստատություն ընդունված անձը կարող է մուտք գործել և բնակվել այդ երկրում ուսանելու ժամանակահատվածում: Սակայն նրա մուտքը կթույլատրվի միայն այն պարագայում, եթե լինի հավաստիացում, որ նա կարող է վճարել (ինքը կամ որևէ հիմնադրամ կամ երրորդ անձ) իր ուսման և կեցության հետ կապված բոլոր ծախսերը:

Այս դեպքում անձի մուտքը թույլատրվում է տվյալ երկրում աշխատել ու թույլտություն և գործատուի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում: Որպես կանոն նման հնարավորություն է տրամադրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներին: Միաժամանակ երկրների մեծամասնությունն անգամ նրանց դեպքում սահմանում են մուտքի բավականին բարձր չափանիշներ՝ համապատասխան կրթություն, բավարար աշխատանքային ստաժ և փորձառություն, օտար լեզվի գերազանց իմացություն, իրենց երկրում կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված տարեկան վարձատրության բավականին բարձր չափ և այլն[2]:

Ապաստան հայցողներ: Այլ երկրներում ապաստան փնտրելու և ստանալու իրավունքն ամրագրված է ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում /Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, «Փախստականների մասին» 1951թ. ժնևյան կոնվենցիա/, այնպես էլ մի շարք պետությունների սահմանադրություններում և օրենքներում: Ապաստանի տրամադրումը ենթադրում է պաշտպանություն ետ վերադարձվելուց /«non-refoulerment» սկզբունք/ և տվյալ երկրի տարածքում մնալու հնարավորություն այնքան ժամանակ, որքան որ պաշտպանության կարիք կա: Այլ կերպ ասած, մինչև տվյալ երկրի սահմանային կետ հասած և այդ երկրից ապաստան հայցող անձին թույլատրվում է մուտք գործել երկիր և այնտեղ մնալ առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ բացասական որոշում չի կայացվել նրա հայցի վերաբերյալ: Որոշ երկրներ ապաստանի հայցադիմումներ են ընդունում նաև արդեն իրենց երկիր մուտք գործած և այնտեղ անօրինական բնակվող

---

[1] ***Գալստյան Ք., Պրուտչ Ֆ., Ռոսի-Լոնգի Պ.***, *նշվ. աշխ., էջ 47:*

[2] *Նույն տեղում, էջ 49:*

օտարերկրացիներից, ինչը վերջիններիս կողմից դիտվում է որպես իրենց անօրինական վիճակը օրինականացնելու լավ հնարավորություն[1]:

Զարգացող երկրների, այդ թվում և Հայաստանի հազարավոր քաղաքացիներ, փորձում են օգտագործել այս ճանապարհը՝ բարեկեցիկ արևմտյան երկրներում հայտնվելու նպատակով: Սակայն պետք է հաշվի առնել, որ անձին ապաստան է տրամադրվում միայն այն դեպքերում, երբ նա «ըստ ռասսայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելիության կամ քաղաքական համոզմունքների համար հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիության պատկանելիության պետությունից դուրս և չի կարող կամ չի կամենում օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ չունենալով որևէ պետության քաղաքացիություն և գտնվելով իր նախկին հիմնական բնակության վայրի պետությունից դուրս՝ չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ պետություն կամ եթե անձը միաժամանակ մի քանի պետության քաղաքացի է, սակայն երկյուղ ունի, որ չի կարող օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ չունենալով որևէ պետության քաղաքացիություն և գտնվելով իր նախկին հիմնական բնակության վայրի պետությունից դուրս՝ չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ պետություն կամ եթե անձը միաժամանակ մի քանի պետության քաղաքացի է, սակայն երկյուղ ունի, որ չի կարող օգտվել այդ պետություններից որևէ մեկի պաշտպանությունից»[2]:

Ապաստան հայցողների մեծ թվի պատճառով հաճախ հայցի դիտարկումը տևում է տարիներ, իսկ ապաաստանի վերաբերյալ օրենսդրությունը հնարավորություն է տալիս բողոքարկել ապաստանի մերժման վճիռը, ինչը նույնպես երկարատև գործընթաց է: Արդյունքում, այդ ամբողջ՝ հայցի դիտարկման և բողոքարկման ընթացքում, ապաստան հայցող մեր քաղաքացիները մի քանի տարի բնակվում են այդ երկրում, և տպավորություն է ստեղծվում, թե նրանք այնտեղ հաստատվել և բնակվում են օրինական հիմունքներով: Սակայն դա մոլորություն է: Ի վերջո, նրանք բոլորը վերադարձվում են (կամավոր կամ հարկադիր կերպով) իրենց երկիր[3]:

Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության հետ կնքված ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում 2021թ-ին ստացվել են 785 ռեադմիսիոն

---

[1] ***Մարգպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն.***, *Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, ԵՊՀ հրատ., Երևան, 2016, էջ 105:*

[2] *Ն. տ., էջ 117:*

[3] *Տե՛ս* ***Հարությունյան Մ.***, *Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Երևան, «Նաիրի» հրատ., 2014, էջ 314:*

հայցեր՝ 1354 անձանց մասին: Ստացված հայցերի թվով առաջատար երկիրը Գերմանիան է՝ 503 հայց՝ 916 անձանց մասին, որից հաստատվել է 674 անձի քաղաքացիությունը (83,42%), այնուհետև՝ Ֆրանսիան, որտեղից ստացվել է 134 հայց՝ 174 անձանց մասին, որից հաստատվել է 167 անձի քաղաքացիությունը (96,53%):

ՀՀ Կառավարության 2021թ. մայիսի 6-ի N 706-Լ որոշմամբ՝ ՀՀ Կառավարության 2020թ. մարտի 19-ի N 336-Լ «Հայաստանի Հանրապետության վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի» մասին որոշման մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, որի արդյունքում ընդլայնվել է Հայաստանի Հանրապետություն վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի շահառուների շրջանակը: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից՝ *տեղեկատվական աջակցության տրամադրում և կարիքներին համապատասխան ուղղորդում, ինչպես նաև բնակվարձի փոխհատուցում հարկադիր, առանձին դեպքերում՝ նաև կամավոր վերադարձողներին*[1]:

ՀՀ Կառավարության կողմից 2021թ. մայիսի 6-ի N 336-Լ որոշման փոփոխության արդյունքում *երկրորդ բաղադրիչի* համար աջակցություն ստանալու հարցում այժմ կարող են դիմել ինչպես հարկադիր, այնպես էլ կամավոր վերադարձած այն ՀՀ քաղաքացիները, ովքեր կհամապատասխանեն հետևյալ խոցելի խմբերից առնվազն մեկին՝

1) բազմազավակ ընտանիք (4 և ավելի երեխաներ ունեցող).

2) հաշմանդամություն ունեցող անձինք:

Հետազոտության շրջանակում արված հարցմանն ի պատասխան պարզեցինք, որ 2021թ. ընթացքում Միգրացիոն ծառայության վերադարձի և վերաինտեգրման բաժնի կողմից ընդունվել է 25 դիմում, որի արդյունքում 21 դիմում բավարարվել է, 4-ը՝ մերժվել: Շահառուները *Գերմանիայից (12), ՌԴ-ից (4), Շվեդիայից (2), Ֆրանսիայից (1), Ավստրիայից (1) և Շվեյցարիայից* (1) են: Ընդ որում, 4-ը կամավոր են վերադարձել, 17-ը՝ հարկադիր: Ընդհանուր առմամբ բնակվարձի փոխհատուցման ծրագրից օգտվել է 66 անձ՝ 21 շահառու:

Վերադարձի և վերաինտեգրման բաժնի կողմից աշխատանքներ են տարվել՝ ՀՀ վերադարձող հատուկ կարիքներ ունեցող շահառուներին օդանավակայանից դիմավորելու, իրենց կարիքներին համապատասխան հաստատություններում տեղավորելու ուղղությամբ:

---

[1] *Հայեցակարգ, «ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն աշխատանքային միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման վերաբերյալ», Երևան: ՀՀ կառ. հրատ., 2021 թ, էջ 3-5:*

Շահառուներին ներկայացվել է անվճար հոգեբանական աջակցություն ստանալու հնարավորությունը ինչպես Միգրացիոն ծառայությունում, այնպես էլ տնայցերի կամ հեռախոսազանգերի միջոցով: Բնակվարձի փոխհատուցման գումարը նպատակային օգտագործելը պարզելու համար՝ ծառայության աշխատակիցների կողմից իրականացվել է ծրագրի շահառուների ամենամսյա մշտադիտարկում՝ հեռախոսազանգերի միջոցով:

Հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրեր և կիրարկման արձանագրություններ

Ծառայությունն ակտիվորեն մասնակցել է միգրացիայի հարցերով միջազգային համաձայնագրերի, մասնավորապես՝ հետընդունման (ռեադմիսիայի) մի շարք միջպետական համաձայնագրերի նախապատրաստման և կնքման գործընթացներին: 2013թ. ապրիլի 19-ին «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի շրջանակներում 2021թ. ընթացքում կիրարկման երկկողմ համաձայնագրեր են ստորագրվել Լեհաստանի Հանրապետության (հոկտեմբերի 29-ին) և Լիտվայի Հանրապետության (հունիսի 15-ին) հետ: 2021թ. հոկտեմբերի 8-ին ստորագրվել է նաև «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը:

2021թ. ընթացքում Միգրացիոն ծառայության նախաձեռնությամբ տեղի է ունեցել Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի երեք հանդիպում: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստան վերադարձի և վերաինտեգրման հետ կապված խնդիրներ, դրանց լուծմանը միտված քայլեր, ոլորտի պետական քաղաքականության հետ կապված հարցեր: Հանդիպումների արդյունքներն ամփոփվել են արձանագրություն-ների մեջ, որտեղ, բացի օրակարգում ընդգրկված հիմնական հարցերի ներկայացումից, ամփոփվել են նաև ֆորումի անդամ հանդիսացող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերում 2021թ. ընթացքում տեղի ունեցած վերջին զարգացումները, փոփոխություններն ու անելիքները[1]:

Միջազգային համագործակցություն: Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և Միգրացիոն քաղաքականության միջազգային կենտրոնի

---

[1] *Տե՛ս Հայեցակարգ, «ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն աշխատանքային միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման վերաբերյալ», Երևան, ՀՀ կառ. հրատ., 2021 թ., էջ 17-18:*

կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի հզորացման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման» (EU4IMPACT ARMENIA) ծրագրի պաշտոնական մեկնարկը տեղի է ունեցել մարտի 15-ին: Ընտրվել է ծրագրի կրթական փուլի իրականացման գործընկերը՝ «ԻՐԻՍ Բիզնես Ինկուբատոր» հիմնադրամը: Կազմակերպվել է հանրային իրազեկման լայնածավալ արշավ: Իրականացվել են 12 մարզային և համայնքային իրազեկման այցեր: Մինչև նոյեմբերի 30-ը ծրագիրն ստացել է 126 հայտադիմում: Ներկայում կատարվում է հայտադիմումների նախնական ուսումնասիրում ու հեռախոսային հարցազրույցներ դիմորդների հետ, ինչի հիման վրա կառանձնացվեն ուսումնական փուլի մասնակիցները: Ուսումնական փուլի մեկնարկը նախատեսվում է 2022թ. հունվարից: Դասընթացին առանց բացակայությունների մասնակցած, քննությունը հաջողությամբ հանձնած ու մրցութային հանձնաժողովի կողմից հավանության արժանացած բիզնես-պլան մշակած 25-30 մասնակիցները կդառնան ծրագրի շահառու և ծրագրի կողմից հատկացվելիք 2.000-10.000 եվրո չափի դրամաշնորհի (և նույն չափի սեփական ներդրման) օգնությամբ հնարավորություն կստանան հիմնել կամ ընդլայնել սեփական գործը:

2021թ. ավարտվեց ՀՀ և ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) վավերացման գործընթացը, և մարտի 1-ից այն ամբողջովին ուժի մեջ մտավ: Համաձայնագրի 3-րդ մասի 14 և 15-րդ հոդվածները վերաբերում են «Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությանը, անձանց տեղաշարժին և հետընդունմանը»:

Միգրացիոն ծառայության կողմից աշխատանքներ են տարվում՝ Եվրոպական միգրացիոն ցանցին (ԵՄՑ) դիտորդի կարգավիճակով միանալու ուղղությամբ: Այն Եվրոպական միությունում միգրացիայի և ապաստանի ոլորտին առնչվող քաղաքականության մշակմանն աջակցելու նպատակով համագործակցում է նշված ոլորտներում գործունեություն ծավալող ԵՄ անդամ պետությունների և համայնքային կառույցների պատկան մարմինների հետ: Եվրոպական միգրացիոն ցանցի նպատակը, որ սահմանվել է կազմակերպության խորհրդի որոշմամբ 2008 թ., միգրացիայի և ապաստանի ոլորտների ինստիտուտների և անդամ երկրների իշխանությունների տեղեկատվական կարիքները բավարարելը և անաչառ, արժանահավատ, թարմ և համադրելի տեղեկատվություն ապահովելն է՝ Եվրոպական միությունում քաղաքականություն մշակողներին աջակցելու նպատակով: Հոկտեմբերի 25-ին ԵՄՑ հետ համագործակցության տեսլականը և

Մեր կարծիքով՝ պայմանագիրը չկնքված համարելու օրենսդրական «սպառնալիքով» հաճախորդին կամ լիզինգառուին լիզինգի առարկայի բոլոր նույնականացնող հատկանիշները պարունակող դիմում (պրակտիկայում, որպես կանոն,դա անվանվում է լիզինգի հայտ), ինչպես նաև լիզինգի պայմանագրի կնքման օֆերտա ներկայացնելու պահանջը սխալ է երկու առումով: Նախ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ լիզինգային հարաբերությունների առանձնահատկությունը, որը ենթադրում է նշված դիմումը կամ օֆերտան ներկայացնելու պահի դրությամբ լիզինգի առարկայի գտնվելը ոչ թե լիզինգի պայմանագրի կողմի կամ լիզինգառուի կոնտրագենտ լիզինգատուի, այլ վաճառողի մոտ: Ընդ որում, լիզինգառուն լիզինգային ծառայություններ ստանալու վերաբերյալ դիմումը ներկայացնելու կամ պայմանագիր կնքելու գործընթաց նախաձեռնելու պահին միշտ չէ, որ ցանկանում է ստանալ որոշակի կոնկրետ գույքը, այլ հաճախ ցանկանում է ստանալ որոշակի մոդելի, հզորության և այլ հատկանիշներով օժտված տեխնիկա կամ սարքավորում, որն առկա է շուկայում ու ենթակա է վաճառքի: Բացի այդ, կարծում ենք՝ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ գործնականում հաճախ լիզինգառուներն

---

[1]Տե՛ս ***Сахарова И. В.*** *Правоотношения, возникающие из договоров лизинга и купли-продажи объекта лизинга. Москва. Юстицинформ. 2013, էջեր172, 181-182: Այդ մասին տե՛ս նաև Торрес Ортега И.В. Договор лизинга как структурно-сложное обязательство. Диссертация на соискание ученой степени к.ю.н., Москва, 2011, էջ 105:*

[2]*Տե՛ս Обзор судебной практики по спорам, связанным с договором финансовой аренды (лизинга). Утвержден Президиумом Верховного Суда Российской Федерации 27 октября 2021 г., էջ 11:*

ապավինում են լիզինգային ընկերությունների գործարար հմտություններին ու հնարավորություններին, քանի որ հենց նրանք են ունենում ձևավորված ու կայուն կապեր տարբեր մատակարար ընկերությունների հետ, և տրամաբանական է, որ նրանք նաև ավելի լավ են կողմնորոշվում ըստ տարբեր մոդելների ու անհատականացնող այլ տվյալների ապրանքների որակական հատկանիշների, պիտանիության և այլ հարցերում: Ավելին, գործարար կապերի շնորհիվ լիզինգային ընկերությունները կարողանում են գույքը ձեռք բերել զեղչված գնով կամ այլ արտոնյալ պայմաններով: Նման դեպքերում տրամաբանորեն ավելի արդյունավետ է լիզինգատուին որոշակի հայեցողության հնարավորություն ընձեռելը՝ հաճախորդի կողմից առաջադրված ընդհանուր հատկանիշների շրջանակում շուկայում համապատասխան գույք ձեռք բերելու հարցում: Անշուշտ, նշվածը չպետք է բացառի լիզինգառուի իրավունքն ու հնարավորությունը՝ մատնանշելու կոնկրետ անհատականացնող հատկանիշներով լիզինգի առարկա՝ այն ձեռք բերելու նպատակով:

Այսպիսով, գտնում ենք, որ լիզինգային ծառայություններ ստանալու վերաբերյալ հաճախորդի դիմումի ու լիզինգի պայմանագրի կնքման օֆերտան ուղարկելու պահի դրությամբ բավարար կարելի է համարել գույքի վերաբերյալ ընդհանուր նվազագույն տվյալները, որոնք անհրաժեշտ ու բավարար են առուվաճառքի պայմանագրի առարկայի մասին պայմանը համաձայնեցնելու համար, իսկ լիզինգի առարկա գույքի անհատականացման հարցը մեկնաբանելու առումով վճռորոշ նշանակություն պիտի տրվի լիզինգի պայմանագրի հետագա լրացումներում, փոփոխություններում կամ լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտում առկա տեղեկություններին, որոնք կարող են հավաստել որոշակի հատկանիշներով ու տվյալներով կոնկրետ գույքը լիզինգառուին հանձնելու հանգամանքը: Մասնավորապես, տվյալ դեպքում բավարար (պարտադիր) կարելի է դիտարկել նյութական օբյեկտը բնութագրող այնպիսի տվյալների առկայությունը, ինչպիսիք են՝ գույքի (ապրանքի) անվանումը, քանակը, իսկ, օրինակ, սարքավորման տեխնիկական պարամետրերը կարող են դիտարկվել որպես լրացուցիչ տվյալներ1:

Գույքի մասին պայմանի հետ սերտորեն առնչվում է գույքի վաճառողի մասին պայմանը, որը ևս որոշ դեպքերում դիտարկվում է որպես լիզինգի պայմանագրի էական պայման:

---

[1] Մինչդեռ, Օրենսգրքի 684-րդ հոդվածի 1-ին մասի կատեգորիկ ձևակերպման պայմաններում ստացվում է, որ տվյալ սարքավորումն իդենտիֆիկացնող բոլոր տվյալների առկայությունը պարտադիր է լիզինգի պայմանագրի կնքման օֆերտան ուղարկելու ժամանակ:

Մասնավորապես, Ե. Ա. Սուխանովը նշում է, որ եթե «լիզինգի պայմանագիր» կոչվող պայմանագրում կողմերը պարզապես նշեն, որ վարձատուն պարտավորվում է ժամանակավոր տիրապետման ու օգտագործման հանձնել այն գույքը, որը նա ձեռք կբերի ապագայում՝ չնշելով վաճառողին, ապա գործ կունենանք հասարակ վարձակալական հարաբերությունների հետ, թեև այն կոչվում է «լիզինգ»: Այլ խոսքով՝ լիզինգը կլինի կեղծ: Բանն այն է, որ վարձատուի կողմից ընտրված վաճառողի վերաբերյալ հստակ նշման բացակայությունը վարձակալին զրկում է վաճառված գույքի թերությունների համար վաճառողին ու վարձատուին համիրավ պահանջներ ներկայացնելու իրավունքից[1]:

Յու. Ա. Սերկովան լիզինգի պայմանագրի համար էական է համարում ոչ միայն լիզինգի առարկայի վաճառողի մասին պայմանը, այլև պայմանն այն մասին, թե կողմերից որ մեկն է կատարում վաճառողի ու ձեռք բերվող գույքի ընտրությունը, քանի որ տվյալ հարցի լուծումից է կախված պայմանագրի բովանդակությունը՝ կողմերի իրավունքների, պարտականությունների ու պատասխանատվության բաշխումը[2]:

Վաճառողի մասին պայմանը, ինչպես նաև վաճառողի ընտրությունը կատարած կողմի մասին պայմանն էական պայմաններ համարելու կողմնակից է նաև Ա. Գ. Մալինինան[3]:

Ըստ Ի. Վ. Սախարովայի՝ նպատակահարմար է օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրել լիզինգի պայմանագրում լիզինգի առարկայի վաճառողին որոշակիացնող տվյալներ նշելու անհրաժեշտությունը: Հեղինակը նշում է, որ երբ լիզինգի առարկան ձեռք է բերվում ընդհանուր կանոնի համաձայն՝ լիզինգառուի կողմից որոշված վաճառողից, ապա լիզինգատուի պարտականությունը կարող է կատարված համարվել միայն այն պարագայում, երբ գույքը ձեռք է բերվում հենց կոնկրետ այդ վաճառողից, քանի որ ցանկացած այլ վաճառողից լիզինգի առարկան ձեռք բերելը կնշանակի, որ լիզինգատուն ինքնուրույն է ընտրել վաճառողին, ինչն իր հերթին կհակասի լիզինգառուի կողմից վաճառողին ընտրելու պայմանագրային պայմանին: Մյուս կողմից, եթե լիզինգատուին լիզինգի պայմանագրով հնարավորություն է տրվում կատարել վաճառողի ընտրությունը, ապա դա չի նշանակում լիզինգատուի բացարձակ

---

[1] *Российское гражданское право: Учебник: В 2-х т,т. II: Обязательственное право. Отв. ред. Е.А. Суханов. 2-е издание, стереотипное. Москва: Статут, 2011, էջ 359:*

[2] *Տե՛ս* ***Серкова Ю. А****. Договор лизинга по российскому и зарубежному праву. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Казань, 2002.*

[3] *Տե՛ս* ***Малинина А. Г.*** *Правовое обеспечение лизинговой деятельности в Российской Федерации. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2003.*

ազատություն այդ հարցում, քանի որ հակառակ հետևությունն առնվազն կհանգեցնի նման համաձայնության «անորոշության»: Ենթադրվում է, որ լիզինգատուն պետք է ընտրի կոնկրետ գույքը՝ ելնելով որոշակի տեսակի գույքից, որն անհրաժեշտ է լիզինգառուին որոշակի նպատակների համար ու որոշակի քանակով, ինչը պետք է արտացոլվի լիզինգի պայմանագրում1:

Կարծում ենք՝ գույքի վաճառողի մասին, ինչպես նաև վաճառողի ընտրությունը կատարած կողմի մասին պայմանները բոլոր դեպքերում նպատակահարմար է նախատեսել լիզինգի պայմանագրում՝ թե՛ լիզինգառուի և լիզինգատուի միջև հարաբերությունների որոշակիությունն ապահովելու տեսանկյունից, թե՛ հետագայում վաճառողի սուբյեկտի հետ կապված անհամաձայնություններն ու վեճերը կանխելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ վաճառողի սուբյեկտի վերաբերյալ անհատականացնող տվյալները որպես լիզինգի պայմանագրի էական պայման ճանաչելը և նման պայմանը չհամաձայնեցնելու դեպքում պայմանագիրը չկնքված համարելու իրավական հետևանք նախատեսելը չափազանց խիստ մոտեցում կլինի, քանի որ հաճախ հաճախորդը որոշակի գույքը շուկայում ընտրելու ու ձեռք բերելու խնդրանքով դիմում է լիզինգային ընկերությանը՝ հաշվի առնելով վերջինիս պրոֆեսիոնալիզմն ու իրազեկված լինելը շուկայի ու պոտենցիալ վաճառողների մասին (որոնցից շատերի հետ լիզինգային ընկերությունները գտնվում են երկարաժամկետ համագործակցության մեջ): Հատկապես նման դեպքերի համար ցանկալի է ապահովել վաճառող ընտրելու հարցում լիզինգատուի ճկունությունը:

Ինչ վերաբերում է վաճառողին ընտրած կողմի վերաբերյալ պայմանն էական պայման համարելու հարցին, ապա հարկ է նկատի ունենալ, որ Օրենսգրքի 677-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերի բովանդակությունից բխում է, որ ըստ ընդհանուր կանոնի՝ նման ընտրությունը կատարում է լիզինգառուն, իսկ բացառությունն ընդհանուր կանոնից կարող է համաձայնեցվել կողմերի միջև՝ ընտրությունը թողնելով լիզինգատուի վրա: Հետևում է, որ հիշյալ պայմանը, ինչպես նշվեց, կարող է ընդամենը դիտվել որպես ցանկալի ու նպատակահարմար դրույթ և ոչ որպես պայմանագրի էական պայման:

Մասնագիտական գրականության մեջ քննարկվել է նաև լիզինգի պայմանագրի ժամկետի ու գնի մասին պայմաններն էական համարելու հարցը: Ինչպես որ վարձակալության պայմանագրի պարագայում է գինը հանդիսանում վարձակալած գույքի օգտագործման համար սահմանված

---

[1]*Տե՛ս* ***Сахарова И.В****. Определение продавца как существенное условие договора лизинга. Пробелы в российском законодательстве. 2009. № 4. էջեր 346 – 348:*

վարձավճարների ընդհանուր գումարը1, այնպես էլ լիզինգի պայմանագրի գինը ներառում է լիզինգային վճարների ընդհանուր գումարը, ինչպես նաև լիզինգառուի կողմից լիզինգի առարկայի գնման գինը, եթե ըստ պայմանագրի լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է անցնի լիզինգառուին:

Ի. Ա. Ռեշետնիկի կարծիքով՝ լիզինգի պայմանագրի գինն այնքան է կախված ու անմիջականորեն կանխորոշված լիզինգային հարաբերությունների բազմաթիվ այլ պայմաններից (ամորտիզացիայի պայմաններից, փոխառու միջոցների օգտագործումից, լրացուցիչ ծառայություններ մատուցելուց, գույքի շահագործման բնույթից և այլն), որ անալոգիաներ փնտրելը՝ սովորական լիզինգային վճարներ սահմանելու նպատակով, ոչ միայն էական բարդություն է իրենից ներկայացնում, այլև անհեռանկար է թվում: Հեղինակը նշում է, որ լիզինգառուի իրավունքներն իրենց բնույթով հավասարապես չեն կարող լինել ինչպես անժամկետ իրավունքներ, այնպես էլ անորոշ գործողության ժամկետով իրավունքներ: Ըստ հեղինակի՝ լիզինգի պայմանագրի ժամկետի ու գնի վերաբերյալ պայմաններն անհրաժեշտ է նախատեսել որպես լիզինգի պայմանագրի էական պայմաններ2:

Լիզինգի պայմանագրի ժամկետի ու գնի մասին պայմաններն էական են դիտարկել նաև Ի. Վ. Սախարովան3, Ե. Վ. Ուգոլնիկովան4, Վ. Ի. Չույկոն5, Տ. Ա. Կոնոնովան6, այլք:

Ժամկետը լիզինգի պայմանագրի էական պայման է համարվել նաև Գ. Հ. Ղարախանյանի կողմից7, իսկ ըստ Ս. Մեղրյանի՝ պայմանագրի ժամկետից բացի էական պայման է նաև լիզինգի պայմանագրի գնի մասին պայմանը8:

---

[1] *Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, երկրորդ հրատարակություն, փոփոխություններով և լրացումներով (Տ. Բարսեղյան, Ա. Հայկյանց, Գ. Ղարախանյան, Ս. Մեղրյան): Երևանի պետ. համալս. Եր.: ԵՊՀ հրատ., 2008, էջ 127:*

[2] *Տե՛ս* ***Решетник И. А.*** *Гражданско-правовое регулирование лизинга в РФ. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Пермь, 1998, էջեր 152-155:*

[3] *Տե՛ս* ***Сахарова И. В.*** *Срок и цена как существенные условия договора лизинга. Актуальные проблемы российского права. 2009 N2(11), էջեր 212-219:*

[4] *Տե՛ս* ***Угольникова Е. В.*** *Договор финансовой аренды (лизинга) и его правовая сущность. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2005, էջ 10:*

[5] *Տե՛ս* ***Чуйко В. И.*** *Лизинг в Российской Федерации: проблемы гражданско-правового регулирования и правоприменительной практики. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 105:*

[6] *Տե՛ս* ***Коннова Т. А.*** *Лизинговые отношения в российском гражданском праве. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2002:*

[7] *Տե՛ս* ***Ղարախանյան Գ. Հ.*** *Ֆինանսական վարձակալության պայմանագիր (լիզինգ)// Պետություն և իրավունք, Եր. 1999, թիվ 3, էջեր 9-14, էջ 12:*

[8] *Տե՛ս Մեղրյան Ս. Գ. Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիր. ԵՊՀ հրատ. 2000, էջ 13:*

Ըստ Օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այն դեպքերում, երբ հատուցելի պայմանագրում գին նախատեսված չէ և չի կարող որոշվել պայմանագրի պայմանների հիման վրա, պայմանագրի կատարումը պետք է վճարվի այն գնով, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար: Նշենք, որ նույնաբովանդակ կարգավորում է նախատեսում նաև ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 3-րդ մասը: Ինչպես այս առնչությամբ գրում է Ա. Գ Կարապետովը, նշված նորմի ուժով հատուցելի պայմանագրում գինը, ընդհանուր կանոնի համաձայն, պայմանագրի էական պայման չի համարվում, և գնի բացակայության դեպքում պայմանագիրը չպետք է ճանաչվի չկնքված1: Գինը գերակշիռ մեծամասնությամբ դեպքերում իբրև ոչ էական պայման է դիտարկվում նաև այլ հեղինակների կողմից2:

Համակարծիք լինելով նշված հեղինակների հետ՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի առկայության պայմաններում ընդհանուր կանոնն այն է, որ պայմանագրի գնի մասին պայմանը չի համարվում էական պայման, ու կողմերի միջև այդ պայմանի համաձայնեցված չլինելու պարագայում հիմք է ընդունվում նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվող գինը: Հատուկ դեպքերում օրենսդիրը կոնկրետ նախատեսում է պայմանագրի գինը՝ որպես էական պայման, որի համաձայնեցված չլինելու դեպքում պայմանագիրը համարվում է չկնքված: Նշված մոտեցումն է դրված նաև Օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված կարգավորման հիմքում:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ ինչքան պայմանագրի գնի ներքին կառուցվածքը բարդ կամ բազմաբաղադրիչ է, այդքան նվազ է նաև պայմանագրի գինը համեմատելի հանգամանքների միջոցով որոշելու հնարավորությունը: Օրենսգրքի 684.3-րդ հոդվածը նախատեսում է լիզինգային վճարների կազմում ներառվող երկու բաղադրիչ՝ լիզինգի առարկայի արժեքն ու պայմանագրով սահմանված տոկոսագումարը: Գործնականում լիզինգի պայմանագրի գինը ձևավորվում է որոշակի պարտադիր ու յուրաքանչյուր պայմանագրի համար անհատական այնպիսի

---

[1] *Տե՛ս Договорное и обязательственное право (общая часть): постатейный комментарий к статьям 307-453 Гражданского кодекса Российской Федерации, М-Логос, Электронное издание, Редакция 1.0, 2017, էջ 851:*

[2] *Տե՛ս, օրինակ, Комментарии к Гражданскому Кодексу Российской Федерации. Часть первая: учебно-практический комментарий (под ред. Сергеева А. П.), Москва, "Проспект", 2010, էջ 905:*

բաղադրիչներից ու գործոններից, ինչպիսիք են՝ լիզինգի առարկան ձեռք բերելու և լիզինգառուին հանձնելու հետ կապված ծախսերը, լիզինգի պայմանագրով լիզինգատուի կողմից մատուցվող տարբեր ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի փոխհատուցումը, լիզինգի առարկայի պիտանիության կանխատեսվող ժամկետը, լիզինգատուի շահույթը, ինչպես նաև լիզինգի առարկան լիզինգառուի կողմից գնելու գինը, եթե լիզինգի պայմանագրով նախատեսվում է լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում լիզինգառուին: Այս առումով, լիզինգի պայմանագրի գնի վերաբերյալ պայմանը որոշակիորեն խտացնում է լիզինգային հարաբերությունների էական գծերը: Եթե փորձենք անցկացնել զուգահեռներ, ապա ակնհայտ է դառնում, որ գույքը սովորական վարձակալության տրամադրելիս վարձավճարի կազմում նման տարրեր առկա չեն, հետևաբար՝ վարձակալության պարագայում համադրելի հանգամանքները գտնելն անհամեմատ ավելի հեշտ է:

Ինչ վերաբերում է լիզինգի պայմանագրի ժամկետին, ապա պայմանագրի այդ պայմանը որոշվում է տվյալ լիզինգի առարկայի օգտակար ծառայության ժամանակահատվածը կամ ամորտիզացիայի աստիճանը հաշվարկելու արդյունքում՝ այնպես, որ լիզինգատուն այդ ժամկետի ընթացքում ստանա շահույթ՝ գույքն օգտագործման տրամադրելու դիմաց ստացվող լիզինգային վճարներից, որոնք հաշվարկելու համար, ինչպես վերը նշվեց, պարտադիր հաշվի է առնվում նաև պայմանագրի ժամկետի մասին պայմանը: Այսինքն՝ լիզինգի պայմանագրում ժամկետի ու լիզինգային վճարների մասին պայմանները փոխկապակցված են միմյանց հետ: Ընդ որում, հատկապես ֆինանսական լիզինգի պարագայում պայմանագրի ժամկետը որոշվում է այն հաշվով, որ գրեթե համընկնի գույքի լրիվ ամորտիզացիայի ժամկետի հետ կամ գոնե մոտ լինի այդ ժամկետին, իսկ պայմանագրի ժամկետի ավարտին, որպես կանոն, գույքը ձեռք է բերվում լիզինգառուի կողմից:

Ընդգծենք նաև այն հանգամանքը, որ լիզինգատուի դերում հանդես է գալիս ֆինանսական կազմակերպություն, ինչը, կարծում ենք, ունի վճռորոշ նշանակություն լիզինգի պայմանագրի գնի ու ժամկետի մասին պայմաններն էական համարելու հարցում, քանի որ նշված կազմակերպություններն իրենց ֆինանսական միջոցներն օգտագործում և ներդնում են ժամկետների ու շահույթների հստակ հաշվարկների արդյունքում:

Այսպիսով, գտնում ենք, որ լիզինգի պայմանագրի ժամկետի և գնի վերաբերյալ դրույթները հարկ է նորմատիվ մակարդակում ճանաչել որպես լիզինգի պայմանագրի էական պայմաններ, քանի որ դա բխում է լիզինգային իրավահարաբերությունների էությունից (առարկայի մասին պայմանը,

ինչպես արդեն նշվել է, օրենսդիրն էական է համարում բոլոր պայմանագրերի համար)։

Ընդ որում, կարծում ենք՝ լիզինգի նյութական օբյեկտի անհատականացման, ինչպես նաև պայմանագրի գնի ու ժամկետի մասին պայմաններն էական համարելու հարցում Օրենսգիրքը տեղ է թողնում տարամեկնաբանությունների։ Այսպես, եթե զուտ բովանդակային առումով համադրենք Օրենսգրքի 684-րդ հոդվածի 1-ին մասի նորմը և Օրենսգրքի 677-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիտիվ կարգավորումը, ապա դժվար չէ հայտնաբերել նշված երկու դրույթների միջև առկա էական հակասությունը։ Մասնավորապես, ստացվում է, որ մի կողմից օրենսդիրը թույլ է տալիս, որ լիզինգի պայմանագրով կողմերը պայմանավորվեն, որ և՛ ձեռք բերվող գույքի, և՛ վաճառողի ընտրությունը կատարի լիզինգատուն, որպիսի պարագայում ակնհայտ է, որ պայմանագիրը լիզինգատուի ու լիզինգառուի կողմից ստորագրելու պահին ուղղակի անհնար է անհատականացնել գույքը, իսկ մյուս կողմից Օրենսգրքի 684-րդ հոդվածի 1-ին մասը փաստորեն կողմերին պարտավորեցնում է պայմանագրում հստակ ու որոշակիորեն համաձայնեցնել գույքի մասին պայմանը։

Ինչ վերաբերում է պայմանագրի գնին, ապա Օրենսգրքի 35-րդ գլխի 6-րդ պարագրաֆն ուղղակիորեն չի նախատեսում որևէ դրույթ առ այն, որ լիզինգի պայմանագրի գնի մասին պայմանն էական պայման է[1]։ Մյուս կողմից, Օրենսգրքի 684.3-րդ հոդվածը, որը նվիրված է լիզինգային վճարներին, իր բնույթով եզակի է, քանի որ Օրենսգրքի՝ վարձակալության որևէ այլ տեսակին վերաբերող դրույթներով հատուկ չի կարգավորվել վարձավճարի հարցը։ Բացի այդ, ինչպես վերը նշվեց, լիզինգի պայմանագրի դեպքում Օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման միջոցով լիզինգի կոնկրետ պայմանագրի գինը որոշելը գործնականում կիրառելի չէ, իսկ լիզինգային վճարների չափն ուղղակիորեն փոխկապակցվում է պայմանագրի ժամկետի հետ, ուստիև ստացվում է, որ լիզինգային վճարը կարող է հաշվարկվել միայն պայմանագրով հստակ ժամկետ նախատեսված լինելու պարագայում։

Հնարավոր է իրավիճակ, երբ լիզինգառուն ու լիզինգատուն ընդհանրապես պայմանագրով համաձայնեցրած չլինեն լիզինգի պայմանագրի գնի ու ժամկետի մասին պայմանները ու վեճ ծագելու

---

[1] *Օրինակ՝ Օրենսգրքի 35-րդ գլխի 4-րդ պարագրաֆում, որը նվիրված է շենքերի ու շինությունների վարձակալության կարգավորմանը, առկա է կոնկրետ նորմ (Օրենսգրքի 658-րդ հոդվածի 1-ին մաս), ըստ որի՝ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը պետք է նախատեսի վարձավճարի չափ, և վարձավճարի չափի մասին պայմանի բացակայության դեպքում շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը համարվում է չկնքված։*

պարագայում մի դեպքում, հղում կատարելով Օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության վրա, խնդրեն կիրառել համադրելի գներ, իսկ մյուս դեպքում առհասարակ կարող է վիճարկվել պայմանագրի կնքված լինելը՝ էական պայմանները համաձայնեցված չլինելու հիմնավորմամբ:

Գտնում ենք, որ նման դեպքերում պետք է հիմք ընդունել պայմանագրի կնքված լինելու կանխավարկածը: Այս մոտեցումը, ըստ էության, բխում է Օրենսգրքի 3-րդ հոդվածում ամրագրված՝ քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով ու ի շահ իրենց ձեռք բերելու նիրականացնելու, ինչպես նաև պայմանագրի ազատության սկզբունքների էությունից՝ հիմք ընդունելով այն կանխադրույթը, որ եթե քաղաքացիական իրավունքի սուբյեկտներն իրենց կամքով մտնում են պայմանագրաիրավական կապի մեջ, ապա ենթադրվում է, որ նրանց կամքն ուղղված էհենց կնքման պայմաններին բավարարող ու վավեր պայմանագիր կնքելուն, իսկ հակառակը ենթակա է հիմնավորման ու ապացուցման:

Այս առնչությամբ տեղին ենք համարում հիշատակել ՌԴ գերագույն դատարանի ուշագրավ դիրքորոշումը, ըստ որի՝ պայմանագրի կնքված լինելու կամ վավերության հարցերի վերաբերյալ վեճի առկայության դեպքում, եթե այլ բան ապացուցված չէ, անհրաժեշտ է ելնել տվյալ պայմանագրի կնքված ու վավեր լինելու կանխավարկածներից, իսկ եթե պայմանագրի պայմանը թույլ է տալիս մեկնաբանման մի քանի տարբերակներ, որոնցից մեկը հանգեցնում է պայմանագրի անվավերության կամ չկնքված ճանաչելուն, իսկ մյուս տարբերակը չի հանգեցնում նման հետևանքների, ապա, ընդհանուր կանոնի համաձայն, նախապատվությունը տրվում է մեկնաբանման այն տարբերակին, որի դեպքում պայմանագիրը պահպանում է իր ուժը1:Կարծում ենք՝ շարադրված մոտեցումը, ըստ էության, կիրառելի է նաև մեր իրավակիրառ պրակտիկայում:

Ի դեպ, լիզինգի պայմանագրի բովանդակության մեջ ներառվող էական պայմանները նորմատիվ մակարդակում ամրագրելու ճանապարհով են գնացել մի շարք երկրներ: Մասնավորապես, խնդիրն այդ ձևով է լուծվել «Ֆինանսական լիզինգի մասին» Ուկրաինայի օրենքի 14-րդ հոդվածում2, «Լիզինգի մասին» Ուզբեկստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածում3, «Ֆինանսական լիզինգի մասին» Ղազախստանի

---

[1]*Տե՛ս նաև Постановление Пленума Верховного Суда РФ от 25.12.2018г. N 49 «О некоторых вопросах применения общих положений Гражданского кодекса Российской Федерации о заключении и толковании договора»:*

[2]*Տե՛ս Закон Украины «О финансовом лизинге» с изменениями 2022 год N 1201-IX от 04.02.2021:*

[3]*Տե՛ս Закон Республики Узбекистан от 14 апреля 1999 года №756-I «О лизинге»:*

Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածում 1։Կարծում ենք՝ նման կարգավորում հարկ է նախատեսել նաև հայրենական օրենսդրությամբ:

Ինչպես նշվեց, Օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունն էական պայման է դիտարկում նաև կողմերից մեկի կողմից առաջարկվող պայմանագրային դրույթը, որի վերաբերյալ պետք է ձեռք բերվի համաձայնություն։

Լիզինգի պայմանագրի կնքման օֆերտայի ու լիզինգի պայմանագրի բովանդակությունը մշակվում է լիզինգային ընկերությունների կողմից համապատասխան մասնագիտական վերլուծությունների արդյունքում՝ բնականաբար հաշվի առնելով լիզինգային գործառնությունների իրականացումից առավելագույն հասույթ ստանալու՝ ֆինանսական կազմակերպության ակնկալիքը, որպիսի պայմաններում լիզինգային ընկերության կողմից լիզինգի պայմանագրում առավելապես իր շահերը՝ նույնիսկ ի հաշիվ լիզինգառուների շահերի, արտացոլող դրույթներ ներառելու ռիսկը բարձր է։

Լիզինգի պայմանագրի կնքման գործընթացում լիզինգային ընկերության (լիզինգատուի) բանակցային հնարավորությունները հիմնականում ավելի մեծ են լինում հաճախորդի (լիզինգառուի) համեմատ, ինչը նաև արտացոլվում է լիզինգատուների կողմից կազմվող ստանդարտ պայմանագրային պայմաններում, իսկ մյուս կողմը հաճախ զրկված է լինում այդ հնարավորությունից՝ իր կարգավիճակի, ոչ պրոֆեսիոնալ լինելու, տնտեսական ռեսուրսների կամ երկարատև բանակցություններ վարելու ժամանակի անբավարարության, կախյալ դրության, մենաշնորհի առկայության, ծանր հանգամանքների զուգադիպման և նմանատիպ այլ պատճառներով։ Կողմերի բանակցային հնարավորությունների ակնհայտ անհամապատասխանության պարագայում ուժեղ կողմը, չարաշահելով իր դիրքը, թույլ կողմի համար կարող է նախատեսել այնպիսի պայմաններ, որ վերջինիս համար պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը դառնա անհամեմատ ավելի անբարենպաստ, քան կլիներ պայմանագրային ուժեղ կողմի բարեխիղճ վարքագծի դեպքում։ Նման պայմանագրային պայմանները տեսության մեջ ստացել են «անարդար

---

[1]*Տե՛ս Закон Республики Казахстан от 5 июля 2000 года № 78-II«О финансовом лизинге»: Այդօրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Լիզինգի պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ էական պայմանները՝ 1)պայմանագրի առարկան, 2)լիզինգի առարկայի վաճառողի անվանումը, 3)լիզինգի առարկան լիզինգատուին հանձնելու պայմանները և ժամկետը, 4)լիզինգային վճարների չափը և պարբերականությունը, 5)լիզինգի առարկայի արժեքը, 6)պայմանագրի գործողության ժամկետը, 7)լիզինգի առարկան լիզինգատուինի սեփականություն անցնելու պայմանները, եթե այդպիսի անցումը նախատեսված է պայմանագրով, 8)լիզինգի առարկայինկ արագրությունը: Այդ պայմանների բացակայության դեպքում լիզինգի պայմանագիրը համարվում է չկնքված»:*

պայմաններ» ձևակերպումը: Անարդար պայմանների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ակնհայտ ձևով չեն հակասում օրենքին (առնվազն իմպերատիվ նորմերին), սակայն կոնկրետ իրավիճակում կարող են զրկել կոնտրագենտներից մեկին այնպիսի իրավունքներից, որոնք տրվում են այդ տեսակի պայմանագրերով, բացառել կամ սահմանափակել մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունների խախտման համար և այլն1: Ինչպես նշվում է տեսության մեջ, կողմերի բանակցային հնարավորությունների միջև էական խզման դեպքում պայմանագրի ազատության սկզբունքի կարգավորիչ խստությունը պատերնալիստական նպատակներով կարող է որոշակիորեն մեղմացվել, և դատարանը կարող է զգուշորեն սահմանափակել պայմանագրի ազատությունը, եթե պայմանագրի պայմաններն ակնհայտ անարդար են ու չհավասարակշռված 2:

Անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական միությունում 1993 թվականի ապրիլի 5-ին ընդունվել է N 93/13/EEC «Սպառողական պայմանագրերում անարդար պայմանների մասին» Եվրոպական դիրեկտիվը, որի 3-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով անարդար կարող է ճանաչվել այնպիսի պայմանը, որը, ի հակառակ բարեխղճության պահանջի, էական անհավասարակշռություն է առաջացնում պայմանագրի կողմերի իրավունքներում ու պարտականություններում՝ ի վնաս սպառողի: Դիրեկտիվի 4-րդ հոդվածը նախատեսում է, որ պայմանագրի անարդար բնույթը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով պայմանագրով ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների բնույթը, ինչպես նաև պայմանագրի կնքման պահին առկա հանգամանքները, իսկ հավելվածով նախատեսված է անարդար պայմանների նմուշային ցանկ3:

Անդրադառնալով պայմանագրային անարդար պայմանների էությանը՝ ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանը մասնավորապես նշել է, որ, եթե պայմանագիրը կնքելիս նախագիծն առաջարկվում է կողմերից մեկի

---

[1] *Պայմանագրային անարդար պայմանների մասին տե՛ս Кратенко М. В. Несправедливые условия в договорах с потребителями: понятие, виды, способысудебной защиты. Законы России: опыт, анализ, практика. 2008. N 4, էջ 56, Фогельсон Ю. Несправедливые (недобросовестные) условия договоров. Хозяйство и право. 2010. N 10 (405), էջ 47, Тужилова-Орданская Е. М. Несправедливые договорные условия в гражданском праве РФ. Власть Закона. 2019. N 4 (40), էջեր 109-110:*

[2] *Տե՛ս* ***Карапетов А.Г., Савельев А.И****. Свобода договора и ее пределы. Т. 1: Теоретические, исторические и политико-правовые основания принципа свободы договора и его ограничений. М.: Статут, 2012, էջեր 373-389:*

[3] *Տե՛ս Council Directive 93/13/EEC of 5 April 1993 on unfair terms in consumer contracts https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A31993L0013:*

կողմից և ներառում այնպիսի պայմաններ, որոնք ակնհայտորեն ծանրաբեռնում են նրա կոնտրագենտին ու էապես խախտում կողմերի շահերի հավասարակշռությունը (անարդար պայմանագրային պայմաններ), իսկ կոնտրագենտը դրվում է այնպիսի իրավիճակում, որը դժվարացնում է պայմանագրի առանձին պայմաններն այլ բովանդակությամբ համաձայնեցնելը (այսինքն՝ հանդիսանում է պայմանագրի թույլ կողմ), ապա դատարանն իրավունք ունի այդպիսի պայմանագրի նկատմամբ կիրառել միանալու պայմանագրերին վերաբերող դրույթները՝ համապատասխան պայմանագիրն այդպիսի կոնտրագենտի պահանջով փոփոխելով կամ լուծելով։Ըստ դատարանի՝ պայմանագրից ծագող վեճեր լուծելիս, եթե պայմանագրի պայմանները հստակ չեն, ու անհնար է պարզել կողմերի իրական ընդհանուր կամքը՝ պայմանագրի նպատակների հաշվառմամբ, այդ թվում՝ ելնելով պայմանագրի տեքստից, պայմանագրի կնքմանը նախորդած բանակցություններից, կողմերի գրագրությունից, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված պրակտիկայից, սովորույթներից, ինչպես նաև կողմերի հետագա վարքագծից, ապա պայմանագրի պայմանները պետք է մեկնաբանվեն այն կողմի կոնտրագենտի օգտին, որը նախապատրաստել է պայմանագրի նախագիծը կամ առաջարկել համապատասխան պայմանի ձևակերպումը։ Ընդ որում, եթե հակառակն ապացուցված չէ, ապա ենթադրվում է, որ այդպիսի կողմ է հանդիսացել այն անձը, որը պրոֆեսիոնալ է համապատասխան ոլորտում, ինչը պահանջում է հատուկ գիտելիքներ (օրինակ, բանկը՝ վարկային պայմանագրով, լիզինգատուն՝ լիզինգի պայմանագրով, ապահովագրողը՝ ապահովագրության պայմանագրով և այլն)1։

Հավելենք, որ գործող խմբագրությամբ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 428-րդ հոդվածում, ըստ էության, արտացոլվել են դատական պրակտիկայում ուղենշված վերոշարադրյալ մոտեցումները։ Մասնավորապես, հիշյալ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ միանալու պայմանագրով ակնհայտ ծանրաբեռնող պայմանների մասով միացած կողմի՝ պայմանագրի փոփոխում կամ լուծում պահանջելու իրավունքներին վերաբերող կանոնները կիրառելի են նաև այն դեպքերում, երբ միանալու պայմանագիր չհանդիսացող պայմանագիր կնքելիս պայմանագրի պայմանները որոշվել են մի կողմի կողմից, իսկ մյուս կողմը բանակցային հնարավորությունների ակնհայտ անհավասարության պատճառով դրվել է այնպիսի դրության մեջ, որն էականորեն դժվարացնում է պայմանագրի առանձին պայմաններն այլ բովանդակությամբ համաձայնեցնելը։ Բացի այդ, ՌԴ քաղաքացիական օրենսգիրքն առանձին հոդվածով (հոդված 434.1)

---

[1] *Տե՛ս Постановление Пленума ВАС РФ от 14.03.2014 г. N 16 «О свободе договора и ее пределах»։*

անդրադարձել է պայմանագրի կնքման վերաբերյալ բանակցություններին՝ ամրագրելով բանակցություններ վարելիս կողմերի բարեխիղճ գործելու պարտականությունը (նշված դրույթները ձևակերպվել են 2015 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում)1:

Միանալու պայմանագրին նվիրված ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 444-րդ հոդվածը նման կարգավորում չի նախատեսում. անբարեխիղճ կամ «անարդար» պայմանները մեր օրենսդրությամբ նման իրավաբանական հետևանքներ կարող են ունենալ միայն այնքանով, որքանով ներառված են լինում միանալու պայմանագրերում2: Ընդ որում, հարկ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը չի վերաբերում Օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված դեպքերին, երբ այդպիսի պայմանագրային պայմաններին մի կողմը ստիպված է եղել համաձայնելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք): Բանն այն է, որ լիզինգի պայմանագիրը կնքվում է մասնագիտացված ֆինանսական (լիզինգային) ընկերության ու լիզինգառուի միջև, որը լիզինգի պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթանում է լիզինգի պայմաններին, հետևապես այս դեպքում գործարքը կնքելիս լիզինգառուի կամահայտնության վրա արտաքին ազդեցություն չի լինում: Ինչպես արդեն նշվել է, անարդար պայմանների յուրահատկությունը նրանում է, որ դրանք առերևույթ չեն հակասում իմպերատիվ կարգավորումներին, սակայն միաժամանակ պայմանագրի թույլ կողմի համար հանդես են գալիս որպես անբարենպաստ դրույթներ: Բացի այդ,Օրենսգրքի 313-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցը նպատակահարմար չէ կիրառել նաև ապացուցողական տեսանկյունից3: Շատ դեպքերում պայմանագրի փոփոխումը համապատասխանում է թույլ կողմի պայմանագրային շահերին, որը շահագրգռված է լինում կնքված պայմանագիրը փոփոխելու, քան թե անվավեր ճանաչելու մեջ, եթե անգամ այն պարունակում է անարդար պայմաններ:

Գտնում ենք, որ, հաշվի առնելով լիզինգային հարաբերությունների զարգացման նպատակը և հատկապես փոքր ու միջին ձեռնարկատերերի, ինչպես նաև սպառողների համար լիզինգից օգտվելու առավելագույն նպաստավոր պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը, այն դեպքում,

---

[1] *Տե՛ս Федеральный закон от 08.03.2015 N 42-ФЗ "О внесении изменений в часть первую Гражданского кодекса Российской Федерации":*

[2] *Տե՛ս թիվ ԵԷԴ/0632/02/13 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի որոշումը:*

[3] *Տե՛ս թիվ ԵՇԴ/1671/02/09 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 1-ի որոշումը, թիվ ԵԿԴ/5820/02/14 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2022 թվականի փետրվարի 24-ի որոշումը:*

երբ լիզինգի պայմանագիրը լիզինգառուին զրկում է նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է լիզինգատուի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է լիզինգառուի համար այլ անարդար պայմաններ, որոնք նա չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել լիզինգատուի կողմից մշակված լիզինգի պայմանագրի պայմանների որոշմանը, նպատակահարմար է նորմատիվ, ինչպես նաև իրավակիրառական մակարդակում լիզինգառուներին ընձեռել իրավունք՝ վիճարկելու նման պայմանագրային պայմանների իրավաչափությունն ու պահանջելու փոփոխել դրանք կամ պահանջելու լուծել պայմանագիրը։

Ներկայացված առաջարկն արդիական է հատկապես այն դեպքերում, երբ լիզինգային ընկերությունները պայմանագրերում նախատեսում են լիզինգային վճարները չվճարելու համար չափազանց բարձր տոկոսներ, լիզինգային վճարների չափը միակողմանիորեն փոփոխելու (բարձրացնելու)[1] կամ լիզինգառուի կողմից պայմանագրի պայմանների անգամ ոչ էական խախտման դեպքում պայմանագիրը լուծելու և գույքը վերադարձնելու հնարավորություն։

Վեր հանված հիմնախնդիրների կապակցությամբ ձևակերպված դրույթները կարող են օգտագործվել իրավաստեղծ պրակտիկայում։ Ներկայացված առաջարկները և մոտեցումները կարող են օգտագործվել նաև պայմանագրային աշխատանքում, լիզինգառուները հնարավորություն կունենան արդյունավետորեն պաշտպանվել անարդար կամ անբարեխիղճ պայմաններից ու դրանց գործողության հետևանքներից, ինչի արդյունքում նաև կբարձրանա լիզինգային հարաբերությունների կարգավորման որակը մեր երկրում։

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը։

[1] *Տե՛ս, օրինակ, https://ameriabank.am/business/ameria-leasing-terms հղումով։*

ՀՏԴ 341.2

Իրավագիտություն

Սոսի ԶԱՔԱՐՅԱՆ
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս
E-mail: sosy21@yandex.com

ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ժամանակակից պայմաններում աշխարհի և ոչ մի պետություն չի կարող ապահովել իր երկրի բնականոն գործունեությունն առանց լիարժեք ու համակողմանի համագործակցության այլ պետությունների ու միջազգային կառույցների հետ: Իսկ համագործակցությունն անհրաժեշտ է բոլոր ուղղություններով՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, ռազմական, իրավական, քաղաքական, դիվանագիտական և այլն: Նույնը վերաբերում է նաև դե ֆակտո կամ չճանաչված պետություններին, որոնք, սակայն, զրկված են այդ հնարավորություններից:

Բանալի բառեր՝ *չճանաչված պետություններ, ՄԱԿ, համագործակցություն, ԱՀ, ՄՄՀ, Աբխազիա, Հարավային Օսեթիա:*

С. Захарян

В современных условиях ни одно государство мира не может обеспечить нормальное функционирование своей страны без полноценного и всестороннего сотрудничества с другими государствами и международными структурами. А сотрудничество необходимо по всем направлениям: экономическому, социальному, культурному, военному, правовому, политическому, дипломатическому и т.д. То же

самое относится к де-факто или непризнанным государствам, которые, однако, лишены этих возможностей.
Ключевые слова: непризнанные государства, ООН, сотрудничество, АР, ПМР, Абхазия, Южная Осетия

S. Zaqaryan

In modern conditions, no state in the world can ensure the normal functioning of its country without full and comprehensive cooperation with other states and international structures.

And cooperation is necessary in all directions: economic, social, cultural, military, legal, political, diplomatic, etc. The same applies to de facto or unrecognized states, which, however, are deprived of these opportunities.

Key words: *Unrecognized states, UN, cooperation, RA, TMR, Abkhazia, South Ossetia.*

Ժամանակակից պայմաններում աշխարհի և ոչ մի պետություն չի կարող ապահովել իր երկրի բնականոն գործունեությունն առանց լիարժեք ու համակողմանի համագործակցության այլ պետությունների ու միջազգային կառույցների հետ: Իսկ համագործակցությունն անհրաժեշտ է բոլոր ուղղություններով՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, ռազմական, իրավական, քաղաքական, դիվանագիտական և այլն: Նույնը վերաբերում է նաև դե ֆակտո կամ չճանաչված պետություններին, որոնք, սակայն, զրկված են այդ հնարավորություններից: Հետխորհրդային տարածաշրջանում առկա են չորս պետական կազմավորում, որոնք ձգտում են միջազգային ճանաչման՝ Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետությունը, Աբխազիայի Հանրապետությունը, Հարավային Օսեթիայի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այս ցանկին կարելի է ավելացնել համեմատաբար վերջերս իրենց անկախ հայտարարած (2014 թվականին) Դոնեցկի ու Լուգանսկի Հանրապետությունները: Աշխարհում չճանաչված պետությունների ցանկը դրանով, իհարկե, չի սահմանափակվում: Ցանկին ավելանում են այլ պետություններ, որոնք կամ ընդհանրապես ճանաչված չեն ՄԱԿ-ի անդամ որևէ երկրի կողմից, կամ մասնակի են ճանաչված ու դեռ հսկայական անելիքներ ունեն պետականության կայացման ճանապարհին:

Պետության արտաքին հարաբերությունները կարգավորող նորմատիվ բազայի հիմքն են կազմում Սահմանադրության՝ արտաքին հարաբերությունների ու միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժի մասին դրույթները, միջազգային պայմանագրերի մասին հատուկ

օրենքն ու արտաքին հարաբերությունները իրականացնող մարմնի (որպես կանոն Արտաքին գործերի նախարարություն) մասին օրենսդրությունը: Սահմանադրության նորմերը սահմանում են միջազգային իրավունքի նորմերի տեղը պետության իրավական համակարգում և կանխորոշում են միջազգային հարաբերություններում պետության մասնակցության շրջանակներն ու գործընթացը[1]:

Այսպես, համաձայն Աբխազիայի Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ <<Աբխազիայի Հանրապետությունը միջազգային իրավունքի սուբյեկտ է, այլ պետությունների հետ մտնում է պայմանագրային հարաբերությունների մեջ:

Միջազգային պայմանագրերի կնքման, հրապարակման, վավերացման և չեղյալ հայտարարման կարգը սահմանվում է օրենքով>>[2]: Իսկ Սահմանադրության 11-րդ հոդվածը հռչակում է հավատարմությունը մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի նկատմամբ:

Հարավային Օսեթիայի Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ կետը հռչակում է, որ միջազգային իրավունքի ու միջազգային պայմանագրերի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները հանդիսանում են Հարավային Օսեթիայի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Իսկ հոդված 11-ը սահմանում է երկրի արտաքին քաղաքականության սկզբունքները՝ համընդհանուր և արդարացի խաղաղություն, փոխշահավետ համագործակցություն, կոլեկտիվ անվտանգության համակարգի միացում, միջազգային կազմակերպությունների ու այլ միությունների անդամակցում: Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, ինչպես նաև Հարավային Օսեթիայի Հանրապետության միջազգային պայմանագրերը հանդիսանում են այլ պետությունների հետ հարաբերությունների հիմք[3]:

ՄՄՀ-ի Սահմանադրության 10-րդ հոդվածը սահմանում է, որ հանրապետության արտաքին քաղաքականությունը հիմնված է

---

[1] *Տե՛ս ГОСУДАРСТВА DE FACTO: ВНУТРЕННЕЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО О МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ И ВНЕШНИХ СНОШЕНИЯХ. КУЗЬМИН А. В., ЛИГАРОВА В. А., ЛЕОНТЬЕВА Е. О., Theory and Practice of the restoration of rights. 2015, Nr. 2, c. 63*

[2] *Աբխազիայի Սահմանադրություն, ընդ. 1994 թվականի նոյեմբերի 26-ին, փոփ.՝ 2014 թվականի ապրիլի 30-ին . № 3494-c-V. Աբխազիայի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ /http://presidentofabkhazia.org/upload/iblock/9b1/Конституция_Республики_Абхазия_2015_03_31_13_14_23_110.pdf հղման ամսաթիվը՝ 06.06.2021/:*

[3] *Տես՝ Հարավային Օսեթիայի Սահմանադրություն. ընդ. 2001 թվականի ապրիլի 8-ին, փոփ.՝2016 թվականի նոյեմբերի 30-ին. Հարավային Օսեթիայի Հանրապետության Պառլամենտի պաշտոնական կայքէջ. http://www.parliamentrso.org/node/13 հղման ամսաթիվը՝ 06.06.2021/:*

պետությունների ինքնիշխան հավասարության, ուժի չկիրառման, վեճերի խաղաղ կարգավորման, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հիման վրա: Փաստորեն, ՄՄՀ-ի Սահմանադրությունն իր համար առանձնացրել ու կարևորել է միջազգային իրավունքի որոշ հիմնարար սկզբունքներ: ՄՄՀ-ն նույնպես, ինչպես մնացած չճանաչված ու ճանաչված բազմաթիվ երկրներ, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները համարում է իրենց երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մասը և դրանք հիմք համարում այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման համար[1]: Դոնեցկի[2] ու Լուգանսկի[3] Սահմանադրությունները նույնպես ճանաչում ու երաշխավորում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան (հոդված 12): Թայվանի Սահմանադրության[4] 141-րդ հոդվածը հռչակում է. <<Չինաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը պետք է կառուցվի անկախության ոգով, ապավինի սեփական ուժերին ու հիմնված լինի հավասարության ու փոխադարձության սկզբունքների վրա՝ այլ պետությունների հետ բարեկամական հարաբերությունների զարգացման համար ու պահպանեն ՄԱԿ-ի պայմանագրերն ու Կանոնադրությունը՝ արտասահմանում բնակվող չինական քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանության, միջազգային համագործակցությանն ու արդարադատությանը նպաստելու և ամբողջ աշխարհում խաղաղության ապահովելու նպատակով>>:

---

[1] *Տես՝ Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության Սահմանադրություն, ընդ. 1995 թվականի դեկտեմբերի 24-ին, փոփ.՝ 2019 թվականի օգոստոսի 30-ի դրությամբ. ՄՄՀ Գերագույն խորհրդի պաշտոնական կայքէջ. http://vspmr.org/legislation/constitution/ /հղման ամսաթիվը՝ 08,06,2021/*

[2] *Տես՝ Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրություն, ընդ.՝ 2014 թվականի մայիսի 14-ին, փոփ.՝ 2020 թվականի մարտի 6-ի դրությամբ. Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջ՝ https://minjust-dnr.ru/konstitutsiya-donetskoj-narodnoj-respubliki/ /հղման ամսաթիվը՝ 08.06.2021/:*

[3] *Տես՝ Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրություն, ընդ.՝ 2014 թվականի մայիսի 18-ին, փոփ.՝ 2020 թվականի հունիսի 3-ի դրությամբ. Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության Ազգային խորհրդի պաշտոնական կայքէջ՝ https://nslnr.su/zakonodatelstvo/normativno-pravovaya-baza/591/ /հղման ամսաթիվը՝ 08.06.2021/:*

[4] *Տես՝ Թայվանի /Չինաստանի/ Հանրապետության Սահմանադրություն, ընդ.՝ 1947 թվականի հունվարի 1-ին, փոփ.՝ 2000 թվականի ապրիլի 24-ի դրությամբ. Taiwan Documents Project http://www.taiwandocuments.org/constitution01.htm /հղման ամսաթիվը՝ 08.06.2021/:*

Մասնակի ճանաչված Կոսովոյի Սահմանադրությունը նույնպես նախատեսում է միջազգային պայմանագրեր կնքելու ու միջազգային կազմակերպություններին անդամակցելու հնարավորությունը, որոնք ուղղված են խաղաղության, մարդու իրավունքների ու անվտանգության պահպանմանը (հոդված 10): Առանձնահատուկ ուշադրության կարիք ունի Կոսովոյի Սահմանադրության 22-րդ հոդվածը, որը վերաբերում է միջազգային համաձայնագրերի անմիջական կիրառմանը: Այնտեղ, մասնավորապես, նշվում է, որ մարդու իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորվում են միջազգային պայմանագրերով, այսուհետ երաշխավորվում են սույն Սահմանադրությամբ, կիրառվում են անմիջականորեն Կոսովոյի Հանրապետությունում և ունեն առաջնահերթություն՝ այլ օրենքների դրույթների և հասարակական գործունեության ակտերի միջև վեճի դեպքում: Դրանք են՝ 1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը 2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և դրան կից լրացուցիչ արձանագրությունները 3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգայն կոնվենցիան և դրան կից լրացուցիչ արձանագրությունները 4. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիան 5. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիաներ 6. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիաներ 7. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիաներ 8. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ կոնվենցիաներ[1]:

Ինչ վերաբերում է Արցախի Հանրապետությանը, ապա Սահմանադրության 13-րդ հոդվածն ամրագրում է, որ <<Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով>>: ԱՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 4-րդ կետը նշում է, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան: Այսինքն, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու

---

[1] *Տես՝ Կոսովոյի Սահմանադրություն // ընդ. 2008 թվականի ապրիլի 9-ին. https://www.vfgh.gv.at/cms/vfghkongress/downloads/ru/The_Constitution_of_the_Republic_of_Kosovo_RUS.pdf*

ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան գործելու սկզբունքը ամրագրված է չճանաչված ու մասնակի ճանաչված բոլոր երկրների Սահմանադրություններում: Այս սկզբունքի ամրագրումը կապված է ոչ միայն այն փաստի հետ, որ մարդը համարվում է բարձրագույն արժեք, ու պետությունը պարտավոր է անել ամեն ինչ իր քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար, այլև այս կերպ (միջազգային պայմանագրերին միանալով ու իր երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս համարելով) չճանաչված երկրները փորձում են իրենց իդենտիֆիկացնել միջազգային հանրության հետ ու միջազգային հարաբերությունների՝ թեկուզ աննշան, բայց այնուամենայնիվ, մաս կազմել: Պետությունը, որը չունի լուրջ ֆինանսական, տնտեսական, ռազմական, թեկուզ մարդկային բավարար ռեսուրսներ, չունի ոչ մի այլ խաղաթուղթ ագրեսոր երկրից պաշտպանվելու համար (որից ձգտում են անկախության), քան պարզապես միանալ ՄԱԿ-ի կողմից ընդունված պայմանագրերին ու հարկ եղած դեպքում մատնանշել, թե իրենց որ իրավունքներն է խախտվել անկախության, պետականակերտման ու միջազգային հանրության կողմից ճանաչման երկարատև ու դժվարին ճանապարհին:

Արտաքին հարաբերությունների ու միջազգային անցուդարձին ինտեգրման հաջորդ օրենսդրական մակարդակը միջազգային պայմանագրերի վերաբերյալ օրենսդրության առկայությունն է: Նշենք, որ նշված բոլոր երկրներն էլ վաղուց ունեն միջազգային պայմանագրերի մասին օրենք, որոնք գրեթե չեն տարբերվում ՄԱԿ-ի անդամ երկրների օրենսդրությունից:

Նշված օրենքով կարգավորվում են միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, միանալու, ուժի մեջ մտնելու, կատարման, փոփոխման, չեղյալ հայտարարելու և դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Այսպես, Արցախի Հանրապետությունը հասցրել է նույնիսկ միջազգային պայմանագրերի մասին երեք օրենքը ընդունել՝ 2005, 2014 և 2021 թվականներին[1], Աբխազիան՝ 2007 թվականին[2], Հարավային

---

[1] *Տես՝ ԱՀ իրավական տեղեկատվական համակարգ // http://arlexis.am/:*

[2] *Տես՝ Աբխազիայի Հանրապետության Միջազգային պայմանագրերի մասին Աբխազիայի Հանրապետության օրենք /ընդ. 2007 թվականի նոյեմբերի 2-ին № 1872-c-IV/ Աբխազիայի Հանրապետության նախագահի պաշտոնական կայքէջ՝ http://presidentofabkhazia.org/upload/iblock/721 Закон о международных договорах Республики Абхазия_2015_03_31_13_16_32_220.pdf /հղման ամսաթիվ՝09,06,2021/:*

Օսեթիան՝ 2007 թվականին[1], Դոնեցկը՝ 2015 թվականին[2], Լուգանսկը՝ 2018 թվականին[3] , Կոսովոն՝ 2011 [4], ՄՄՀ՝ 2016 թվականին[5] և այլն: Ավելացնենք, նաև, որ ի հավելումն միջազգային պայմանագրերի մասին օրենքի, չճանաչված երկրներում ընդունվել են նաև դիվանագիտական ծառայության մասին օրենք, ինչպես նաև երկրի արտաքին քաղաքականությունը համակարգող մարմնի մասին օրենք ու հիմնադրվել այն իրականացնող համապատասխան մարմին, այն է՝ արտաքին գործերի նախարարություն: Հավելենք, որ չճանաչված երկրների արտաքին գործերի նախարարություններն ունեն իրենց պաշտոնական կայքէջերը, որոնք ակտիվորեն թարմացվում են, և կայքում տեղադրում են իրենց ողջ՝ նույնիսկ ամենաչնչին աշխատանքն ու ձեռքբերումները: Սահմանադրական ու օրենսդրական կարգավորումներից բացի չճանաչված երկրների միջազգային համագործակցության՝ արտաքին քաղաքականության հիմնադրույթները կարգավորվում են նաև գերատեսչական ակտերով: Նշված երկրների պետության գլուխները ևս օժտված են բավականին լայն լիազորություններով՝ այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն իրականացնելու

---

[1] *Տես՝ Հարավային Օսեթիայի Հանրապետության Միջազգային պայմանագրերի մասին Հարավային Օսեթիայի Հանրապետության օրենք /ընդ. 2007 թվականի դեկտեմբերի 25-ին № 89/ Հարավային Օսեթիայի Հանրապետության պառլամենտի պաշտոնական կայքէջ՝ http://www.parliamentrso.org/node/88 /հղման ամսաթիվ՝09,06,2021/*

[2] *Տես՝ Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության Միջազգային պայմանագրերի մասին Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության օրենք /ընդ. 2015 թվականի հունիսի 29-ին №66-IHC/ Государственная информационная система нормативных правовых актов Донецкой Народной Республики https://gisnpa-dnr.ru/npa/0002-66-ihc-20150629/ /հղման ամսաթիվ՝09,06,2021/*

[3] *Տես՝ Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության Միջազգային պայմանագրերի մասին Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության օրենք /ընդ. 2018 թվականի հոկտեմբերի 8-ին 274-II / Լուգանսկի Ազգային Հանրապետության Ազգային խորհրդի պաշտոնական կայքէջ՝https://www.nslnr.su/zakonodatelstvo/normativno-pravovaya-baza/6987/ /հղման ամսաթիվ՝09,06,2021/*

[4] *Տես՝ Կոսովոյի Հանրապետության Միջազգային պայմանագրերի մասին Կոսովոյի Հանրապետության օրենքը /ընդ. 2011 թվականի նոյեմբերի 14-ին No. 04/L-052/ Կոսովոյի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր. https://gzk.rks-gov.net/ActDocumentDetail.aspx?ActID=2789 /հղման ամսաթիվ՝09,06,2021/*

[5] *Տես՝ Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության Միջազգային պայմանագրերի մասին Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության օրենք /ընդ. 2016 թվականի մայիսի 24-ին № 131-3-VI/ Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտոնական կայքէջ՝ http://www.vspmr.org/legislation/laws/zakonodateljnie-akti-pridnestrovskoy-moldavskoy-respubliki-v-sfere-konstitutsionnogo-stroya-osnov-pravoporyadka-a-takje-deyateljnosti-organov-gosudarstvennoy-vlasti-i-upravleniya/zakon-pridnestrovskoy-moldavskoy-respubliki-o-mejdunarodnih-dogovorah.html /հղման ամսաթիվ՝09,06,2021/*

առումով, որոնք, որպես կանոն, կարգավորվում են Սահմանադրությամբ: Այդ լիազորությունների մեջ է մտնում՝ երկիրը միջազգային հարաբերություններում ներկայացնելը, պետության անունից միջազգային պայմանագրեր կնքելը, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցիչներին նշանակելն ու հետ կանչելը, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը ընդունելը, ինչպես նաև ներկայացուցչական բնույթի այլ լիազորություններ իրականացնելը:

ԱՀ նախագահի 2017-2020 թվականների ծրագրի 2-րդ բաժինը վերաբերում է արտաքին քաղաքականությանն ու պաշտպանությանը, որտեղ ի սկզբանե նշված է, որ 2017-2020 թթ. որպես արտաքին քաղաքականության ոլորտի գերակա ուղղություններ կշարունակեն մնալ Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը և ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը[1]:

Իսկ այժմ տեսնենք, թե չճանաչված երկրները գործնականում ինչպես են իրականացնում միջազգային ինտեգրում ու համագործակցություն այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ: Ըստ այդմ էլ չճանաչված պետությունները պետք է համագործակցության շեշտը դնեն մի քանի ուղղությունների վրա՝ ա) ՄԱԿ-ի անդամ երկրների հետ, բ) իրենց նման այլ չճանաչված երկրների հետ, գ) միջազգային կառույցների հետ:

Ա) համագործակցությունը ՄԱԿ-ի անդամ երկրների հետ.

Չճանաչված պետությունների համագործակցությունն այլ պետությունների հետ (ՄԱԿ-ի անդամ) գլխավորապես սահմանափակվում է այն պետությունների հետ հարաբերություններ հաստատելով, որին ցանկանում են հետագայում միանալ, կամ, այլ կերպ ասած, հարաբերություններ ունեն միայն հովանավորող կամ պատրոն պետության հետ: Օրինակ, ՄՄՀ-ն, Հարավային Օսեթիան և Աբխազիան ՄԱԿ-ի անդամ երկրներից լիարժեք շփվում ու նույնիսկ դիվանագիտական կապեր ունեն միայն Ռուսաստանի Դաշնության հետ: Վերջինս ճանաչել էր Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը դեռևս 2008 թվականին, բայց մինչ այժմ Ռուսաստանը, քաղաքական նկատառումներից ելնելով, չի շտապում այդ երկրներին իր կազմի մեջ ներառել: ՌԴ-ից բացի Աբխազիային ու Հարավային Օսեթիային ՄԱԿ-ի անդամ երկրներից ճանաչել են նաև Վենեսուելան, Նիկարագուան և Նաուրուն: Աբխազիան ու Հարավային Օսեթիան Ռուսաստանի Դաշնության հետ ունեն համագործակցության

[1] *Տես՝ Արցախի Հանրապետության նախագահի 2017-2020 թվականների ծրագիրը. էջ 14:*

հարյուրից ավել պայմանագրեր, որոնք ներառում են հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտները՝ ռազմական, առևտրային տնտեսական, սոցապահովության, գյուղատնտեսության, հանցավորության դեմ պայքարի և այլ ոլորտներ: Նիկարագուայի ու Նաուրուի հետ նույնպես ունեն համագործակցության մի քանի տասնյակ պայմանագրեր[1]:

Չնայած Ռուսաստանի Դաշնությունը չի ճանաչել ՄՄՀ-ի անկախությունը, սակայն ՌԴ-ն այնտեղ ունի իր հյուպատոսությունը: ՄՄՀ-ին հաջողվել է առևտրային-տնտեսական հարաբերություններ հաստատել արևմուտքի երկրների հետ, իսկ արտաքին քաղաքականության ոլորտում համագործակցության հիմնական ջանքերն ուղղված են միջազգային ճանաչմանը[2]: ՌԴ-ից բացի, ՄՄՀ համագործակցության մի շարք պայմանագրեր ունի Եվրամիության հետ, որոնք գլխավորապես տնտեսական ուղղվածության են: ՄՄՀ–ն համագործակցում է նաև Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի, Իտալիայի ու Ֆրանսիայի հետ: Ուշադրության է արժանի այն փաստը, ՄՄՀ-ն համագործակցում է նաև (տնտեսական, կրթական, իրավական) այսպես կոչված մետրոպոլ երկրի (Մոլդովայի) հետ՝ Բրյուսելի պահանջով, մի բան, որը կատեգորիկ բացակում է չճանաչված մյուս երկրների պարագայում[3]:

ՄՄՀ-ի իշխանությունները, Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի նման, նույնպես իրենց երկրի ապագան տեսնում են կամ անկախ պետություն ստեղծելու կամ էլ ՌԴ-ի կազմում[4], չնայած նախընտրելին առաջին տարբերակն է: ԼՂՀ-ի իշխանությունները ևս չեն ժխտում անկախության ճանաչումից հետո մայր Հայաստանին միանալու հնարավորությունը: Ցանկություն, որը արտահայտվել էր Արցախյան շարժման հենց սկզբում, երբ արցախցիները <<ՄԻԱՑՈՒՄ>> էին կանչում Հայաստանին:

ՄԱԿ-ի անդամ երկրներում հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրներից ամենաթույլ ներկայացվածությունը ունի Լուգանսկը,

---

[1] *Տե՛ս Односторонние международные акты государств и приграничное сотрудничество* ***Е.Г.Ляхов, М.Б.Бадалина, А.А. Алимов****// Вестник Московского университета МВД России N1 2011. с. 101*

[2] *Տե՛ս Атрибуты государства в непризнанной Приднестровской Молдавской Республике. Харитонова Н.И.. // Государственное управление. Электронный вестник. Выпуск № 37. Апрель 2013 г.*

[3] *Տե՛ս Расширение <<зоны проблемной государственности>> как фактор турбулентности современного мира /на примере непризнанных государств постсоветского пространства/ .В.И. Сальников // Донецкий национальный университет. Исторический факультет. Журнал исторических, политологоческих и международных исследований. № 2/65/ 2018. Донецк. с. 100*

[4] *Приднестровье и Абхазия попытаются вступить в Россию. Открылось совещание непризнанных государств. Газета "Коммерсантъ" №114 от 03.07.2001, стр. 2. https://www.kommersant.ru/doc/273027*

որը իր գործունեությունը սկսեց միայն 2017 թվականին, չնայած անկախությունը հռչակել էր 2014 թվականին: Թեև Լուգանսկն ու Դոնեցկն իրենց անկախությունն Ուկրաինայից գրեթե միաժամանակ են հայտարարել, սակայն Դոնեցկի արտաքին քաղաքականության գերատեսչությունը շատ ավելի ակտիվ է գործում, քան Լուգանսկինը: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լուգանսկն ու Դոնեցկը հետխորհրդային տարածաշրջանի մյուս չճանաչված երկրների համեմատ առավել երիտասարդ են, նրանց ոչ միայն արտաքին հարաբերությունների մարմինը, այլև պետական իշխանության մյուս մարմինները ևս այնքան էլ զարգացած, չեն ու անելիքները հսկայական են: Հավելենք, որ հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրներում արտաքին հարաբերությունների ոլորտում ամենից բարձր մակարդակի համագործակցությունը իրականացնում են ՄՄՀ-ն և ԼՂՀ (ոչ միայն սահմանադրական ու օրենսդրական մակարդակներով, այլև գործնականում)[1] :

Այս համատեքստում ուսանելի է մեկ այլ չճանաչված երկրի՝ Թայվանի փորձը: Թայվանը կամ Չինաստանի Հանրապետությունն իր անկախությունն է հռչակել Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետությունից դեռևս 1911 թվականին և, իրավամբ, կարող է համարվել չճանաչված երկրների վետերանը: Չճանաչվածությունը, սակայն, Թայվանին չի խանգարել, որ նա տնտեսական, ռազմական ու դիվանագիտական[2] (այլ ոչ թե հասարակական բնույթ կրող ներկայացուցչական) կապեր հաստատի մոտ երկու տասնյակ երկրների հետ: Անշուշտ, Թայվանը ոչ միայն չճանաչված, այլև եվրոպական մի շարք երկրների համեմատ ունի բավականին բարձր տնտեսական զարգացվածության ցուցանիշ: <<Ասիական չորս վագրերից>> մեկը հանդիսացող այս երկիրը, չնայած իր տարածքով Հայաստանից մեծ է մոտ 6000 քառ. կմ-ով (ՀՀ տարածքը կազմում է 29 743 քառ.կմ, իսկ Թայվանինը՝ 35 980 քառ. կմ), սակայն բնակչությամբ այն ՀՀ-ին գերազանցում է ավելի քան 8 անգամ՝ 23 593 794 մարդ (2019թ. դրությամբ): Այն բազմաթիվ եվրոպական երկրներից ավելի մեծաքանակ բնակչություն ունի, իսկ ՀՆԱ-ի բնակչության

---

[1] *Տե՛ս Внешняя политика непризнанных и частично признанных госуадарств постсоветского пространства: институциональные основания// О.В. Онопко, В.В. Загородный // Ученые записки Крымского федерального университета имени В. И. Вернадского Философия. Политология. Культурология. Том 4 (70). 2018. № 2. с. 88.*

[2] *Տե՛ս США – ТАЙВАНЬ: ОСОБЕННОСТИ ВОЕННЫХ СВЯЗЕЙ С НЕПРИЗНАННЫМ ГОСУДАРСТВОМ И РЕАКЦИЯ КНР. Муратшина К.Г., Романова Е. Б., Электронное приложение к <<РОССИЙСКОМУ ЮРИДИЧЕСКОМУ ЖУРНАЛУ>> 3/2018, с.6.*

մեկ շնչին հասնող նոմինալ մակարդակը կազմում է 25 873 ԱՄՆ դոլար (38-րդը աշխարհում)[1] :

Կարելի է ասել, որ սրանով էլ հիմնականում սահմանափակվում է այս չճանաչված պետությունների համեմատաբար լիարժեք համագործակցությունը ՄԱԿ-ի անդամ երկրների հետ: Սակայն նշենք, որ և՛ ՄՄՀ, և՛ Աբխազիան, և՛ Հարավային Օսեթիան, չճանաչված պետություններ լինելով հանդերձ, ունեն իրենց պաշտոնական ներկայացուցչությունները Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում[2]: ԼՂՀ-ն չունի դեսպանություն կամ պաշտոնական ներկայացուցչություն ՀՀ-ում ու ոչ էլ որևէ այլ երկրում: Դրա փոխարեն նա ունի մշտական ներկայացուցչություններ: ԱՀ-ն իր մշտական ներկայացուցչություններն ունի ՀՀ-ում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում և Կանադայում (համատեղությամբ), Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրալիայում և Մերձավոր Արևելքի երկրներում[3]: Արցախի Ազգային ժողովը համեմատաբար ակտիվ կապեր է հաստատել Ֆրանսիայի, Բելգիայի, Բասկերի երկրի, Հունաստանի, Լիտվայի, Կանադայի և մի շարք այլ եվրոպական երկրների խորհրդարանականների հետ, ստեղծվել են միջխորհրդարանական բարեկամական խմբեր[4]: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս արտաքին կապերից և ոչ մեկը ուղղված չէ մարդու իրավունքների պաշտպանությանը: Նշված միջխորհրդարանական բարեկամական խմբերի, մշտական ներկայացուցչությունների գլխավոր խնդիրն է Արցախի ճանաչումը, ու բոլոր ռեսուրսներն ուղղվում են հենց այդ խնդրի լուծմանը: Նշենք, որ ՀՀ-ում առկա ԱՀ ներկայացուցչությունն ավելի շատ հյուպատոսական գործունեություն է ծավալում (ընտրությունների, քաղաքացիության, բնակեցման, սոցիալական և այլ հարցերի հետ կապված), քան լուրջ քաղաքական ինտեգրացիոն գործունեություն: Ու թեև ՀՀ և ԱՀ իշխանությունների միջև գրեթե բոլոր ոլորտներում իրականացվում է սերտ համագործակցություն (ռազմական, իրավական, դատական, կրթական, առողջապահական և այլն), սակայն դրանցից շատ քիչ ոլորտների վերաբերյալ է, որ կան պատշաճ իրավական

---

[1] *https://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D0%B8%D1%82%D0%B0%D0%B9%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F_%D0%A0%D0%B5%D1%81%D0%BF%D1%83%D0%B1%D0%BB%D0%B8%D0%BA%D0%B0_(%D0%A2%D0%B0%D0%B9%D0%B2%D0%B0%D0%BD%D1%8C)*

[2] *Տես՝ ՄՄՀ-ի պաշտոնական ներկայացուցչությունը Մոսկվայում - http://russia.gospmr.org/*

[3] *Այդ ներկայացուցչությունների մասին առավել մանրամասն տես ԱՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում՝ http://www.nkr.am/hy/karabakh-permanent-rresentations*

[4] *Տես՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի միջխորհրդարանական կապեր,- http://www.nankr.am/hy/14*

ընթացակարգով կնքված համագործակցության գրավոր պայմանագրեր կամ հուշագրեր:

Ի տարբերություն հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված մյուս երկրների՝ Արցախին հովանավոր երկրից՝ Հայաստանից բացի, իր աջակցությունն է ցուցաբերում նաև հայկական սփյուռքը, որը աչքի է ընկնում իր բարձր կազմակերպվածությամբ[1]: Հենց հայկական սփյուռքի ջանքերի շնորհիվ է, որ ԱՄՆ մի շարք նահանգներ ճանաչել են Արցախի անկախությունը (իսկ 44-օրյա պատերազմի ժամանակ և դրանցի հետո՝ նաև մի շարք եվրոպական քաղաքներ):

Հայկական սփյուռքի ամենից հզոր օջախները կենտրոնացված են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում ու Ռուսաստանում: Այսինքն՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրներում, որոնք միաժամանակ նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ են: Հայկական սփյուռքը իր լոբբիստական գործունեությունն իրականացնում է հետևյալ հեղինակավոր ու ազդեցիկ կազմակերպությունների միջոցով՝ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (ANCA), Ամերիկայի հայկական ասամբլեայի (AAA), Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների կոորդինացիոն խորհրդի (CCAF), Ֆրանսիայում Լեռնային Ղարաբաղի աջակցության ասոցիացիայի (L'Association de Soutien au Haut-Karabagh), Ռուսաստանի հայերի միության (CAP) և այլ կազմակերպությունների միջոցով: Ավելացնենք, որ Արցախը միակ չճանաչված երկիրն է, որը ԱՄՆ Կոնգրեսի կողմից ստանում է տարեկան ֆինանսական աջակցություն (շնորհիվ ԱՄՆ-ում հայկական լոբբիստական ընկերությունների)[2] :

Անհրաժեշտ է նշել, որ հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրներում, բացի ԼՂՀ-ից, առկա է երկքաղաքացիության ինստիտուտ Ռուսաստանի Դաշնության հետ, ինչպես նաև խաղաղապահ ուժեր (ռուսական) և երկրորդ պաշտոնական լեզու՝ ռուսերեն: Արցախի Հանրապետությունն էլ վերջերս ընդունեց Լեզվի մասին ԱՀ օրենքում փոփոխություն, համաձայն որի՝ ռուսերեն լեզվին տրվեց պաշտոնական լեզվի կարգավիճակ: Չի կարելի ասել, թե դա անհրաժեշտություն էր Արցախի ժողովրդի համար, ու դրանից ռուս խաղաղապահները կսկսեն ավելի լավ խաղաղապահել: Ոչ մի նման բան: Ուղղակի բնակչության մի մասն իրեն

---

[1] Սփյուռքը հայկական համայնքի առկայությունն է ՀՀ և ԱՀ սահմաններից դուրս: Ըստ տարբեր տվյալների՝ այսօրվա դրությամբ հաշվվում են մոտ 10-12 մլն սփյուռքահայեր: Այսինքն՝ արտասահմանում ապրող հայերի քանակը մի քանի անգամ ավելի մեծ է, քան հայկական երկու պետություններում՝ միասին վերցրած:

[2] Տե՛ս Legislative History of U.S. Assistance to NagornoKarabakh // Armenian National Committee of America. 61 p. URL: http://www.anca.org/assets/pdf/misc/US_assistance_to_NKR.pdf /հղման ամսաթիվ 17.06.2021/:

ավելի ապահով է զգում օրենսդրական այդ փոփոխությունն ընդունելով: Ու որպես դրա շարունակություն՝ ապագայում Արցախում ռուսական նոր դպրոցներ կհիմնեն, որպեսզի ռուս խաղաղապահները այստեղ բերեն նաև իրենց ընտանիքներին: Այսինքն, ոչ միայն զինված ռուս խաղաղապահների, այլև նրանց ընտանիքների առկայությունն Արցախում տեղի բնակչության մոտ ավելի մեծ վստահություն կառաջացնի վաղվա օրվա հանդեպ, արցախցիներն իրենց ավելի անվտանգ ու ապահով կզգան: Իսկ բնակչության մի քիչ մասն էլ նախընտրում է, որ ԼՂՀ-ն միանա ՌԴ-ին քան մնա ներկա անորոշ կարգավիճակում, քանի որ ՌԴ-ի հետ անվտանգության ավելի մեծ երաշխիքներ են տեսնում: Ի դեպ, վերջին ժամանակներս ակտիվորեն սկսել են շրջանառվել Արցախի քաղաքացիներին ռուսական անձնագրեր (հատուկ նշումով) տալու մասին ասեկոսները…

Իհարկե, վերջին շրջանում արցախցիներն իրավացիորեն հիմք ունեն դժգոհելու Հայաստանի Հանրապետության ինչպես ներկա, այնպես էլ նախորդ իշխանություններից՝ ԼՂՀ անկախությունը համառորեն չճանաչելու և արցախահայության ու հայաստանահայության միջև լիարժեք ինտեգրացիա չիրականացնելու համար, սակայն դա ամենևին էլ չպետք է նշանակի ռուսանալու կամ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու համար: Չմոռանանք, որ Արցախը դարեր շարունակ, նույնիսկ Մեծ Հայքի կազմում միշտ էլ ունեցել է անկախ ու անառիկ կարգավիճակ: Իսկ խորհրդայնացումից ի վեր, պայքարում ենք միայն անկախության ու միջազգային ճանաչման համար, այլ ոչ թե որևէ երրորդ երկրի իշխանության տակ անցնելու համար…

Վերոգրյալին ավելացնենք, որ եթե խաղաղապահ ուժերը ՄՄՀ-ում, Աբխազիայում ու Հարավային Օսեթիայում տեղակայվել են վաղուց (1992 թվականից սկսած), ապա ԱՀ-ում դրանք տեղակայվեցին միայն վերջերս՝ 44-օրյա պատերազմի արդյունքում՝ նոյեմբերի 9-ի պայմանագրի հիման վրա: Այսինքն, հետխորհրդային տարածաշրջանի բոլոր չճանաչված երկրներում՝ ՄՄՀ-ում, Աբխազիայում, Հարավային Օսեթիայում ու ԼՂՀ-ում առկա են ռուսական խաղաղապահ ուժեր, ռուսերենը՝ որպես այդ երկրների երկրորդ պաշտոնական լեզու և ՌԴ քաղաքացիություն (ԼՂՀ-ում առայժմ չկա, բայց ամենայն հավանականությամբ շուտով դա էլ կլինի):

Չնայած չճանաչված երկրները ներկայացուցչություններ ունեն մի շարք երկրներում, սակայն դրանք ունեն յուրահատուկ իրավաբանական կարգավիճակ: Այն է, չճանաչված պետության տեսանկյունից լինելով արտգործնախարարության ենթակառուցվածք կամ դիվանագիտական ներկայացուցչություն՝ հյուրընկալ երկրում դրանք ունեն ոչ կառավարական կամ հասարակական կազմակերպության կարգավիճակ:

Համապատասխան ռեսուրսների անբավարարության պատճառով չճանաչված երկրների համագործակցության ոլորտները սահմանափակ են ու մակերեսային, բացակայում են ոլորտային համագործակցությունները մարդու իրավունքների ոլորտում: Համագործակցության բոլոր ուղղություններն առավելապես ուղղված են այդ երկրների միջազգային իրավական ճանաչմանը, քան մարդու իրավունքների պաշտպանությանը:

Բ) Չճանաչված երկրների համագործակցությունն այլ չճանաչված երկրների հետ.

Հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրները՝ Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետությունը, Աբխազիան, Հարավային Օսեթիան ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որոնք որպես այդպիսին (ինքնահռչակ կամ չճանաչված) դարձան ԽՍՀՄ փլուզումից հետո, իրենց անկախությունը հռչակելուց հետո ձեռնամուխ եղան միմյանց միջև համագործակցություն հաստատելուն: Ստեղծվեց Չճանաչված պետությունների միությունը (համագործակցությունը) (ռուսերեն՝ Союз непризнанных государств, СНГ-2): Սկզբնական շրջանում այդ չորս երկրից բացի, կազմում մտնում էին նաև Սերբական Հանրապետությունը (Բոսնիա և Հերցոգովինայի տարածքում էր ձևավորվել) և Սերբական Կրաինան (Խորվաթիայի տարածքում էր ձևավորվել): Սերբական Կրաինան Խորվաթիային էր միացել 1995 թվականի ամռանը, իսկ Սերբական Հանրապետությունը Դայտոնյան համաձայնագրի արդյունքում (1995 թվականի նոյեմբեր) ստացել է պետական կազմավորման կարգավիճակ Բոսնիա և Հերցոգովինայի կազմում: Այդ ժամանակ էլ երկու պետություններն էլ մեխանիկորեն դադարեցրին իրենց անդամակցությունը Չճանաչված պետությունների միությանը[1]:

Հիմնադրման սկզբնական շրջանում (գաղափարը՝ 1992 թվական, իսկ գործնականում՝ 2001 թվական) Չճանաչված պետությունների միությունը, որը որպես կազմակերպություն խիստ պայմանականորեն կարելի է այդպես ասել, բավականին ակտիվ գործունեություն էր իրականացնում, ու հաճախակի էին հանդիպումները պետության գլուխների ու արտգործնախարարների մակարդակով: Սակայն ժամանակի ընթացքում շփումները միայն նվազեցին: Այդ գործում իր դերը կատարեցին համագործակցության անդամ պետությունների միջև ընդհանուր սահմանի բացակայությունը, սահմանադիր փաստաթղթի ու մշտապես գործող մարմնի բացակայությունը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ, որոնք էլ հանգեցրին այդ համագործակցության դադարեցմանը: Սակայն համագործակցությունն իսպառ չի դադարել: Շարունակվում են

[1] *Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki*

հանդիպումներն օմբուդսմենների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների մակարդակով, ինչպես նաև պառլամենտական ու նախագահական ընտրությունների ժամանակ նշված երկրներում հրավիրվում են դիտորդական խմբեր: Արցախը կապեր է հաստատել նաև Իսպանիայի հյուսիսում ինքնավարության կարգավիճակ ունեցող Բասկերի երկրի հետ: Աբխազիան, Հարավային Օսեթիան ու ՄՄՀ-ն միմյանց միջև վաղուց ունեն դիվանագիտական կապեր, իսկ Աբխազիան ու Հարավային Օսեթիան փոխադարձաբար ճանաչել են նաև միմյանց անկախությունները:

Գ) Համագործակցությունը միջազգային կառույցների հետ

Նորահռչակ պետականության կայացման գործում շատ կարևոր դեր ունի համագործակցության հաստատումը միջազգային կառույցների հետ: Գլխավոր պատասխանատու մարմինը, իհարկե, Միավորված ազգերի կազմակերպությունն է: Առաջին հերթին հենց ՄԱԿ-ը պետք է շահագրգռված լինի իր կանոնադրության դրույթների պահպանմամբ, որը ընդունվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Եթե ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածում նշված է, որ իր գործունեության գլխավոր նպատակն է հանդիսանում <<պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը>>[1], ուրեմն հենց նա էլ չպետք էր թույլ տար 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ծավալումը: Արցախահայության համար այս ողբերգական ժամանակաշրջանում ո՛չ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ո՛չ գլխավոր քարտուղարը ու ո՛չ էլ ՄԱԿ-ի պատասխանատու այլ կառույցներ, որոնց պաշտոնական լիազորությունների մեջ է մտնում ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված նշված նպատակի իրագործումը, ոչինչ չարեցին իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար ու թույլ տվեցին հայոց ցեղասպանության շարունակությունը մեր օրերում: Նույնկերպ էլ ո՛չ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը, ո՛չ Մարդու իրավունքների կոմիտեն ու ոչ էլ ՄԱԿ-ի կազմում գործող մարդու

[1] *Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ. Երևան, 2013. էջ13:*

իրավունքների պաշտպանության պայմանագրային ու արտապայմանագրային մարմինները, ոչ մի միջոց չձեռնարկեցին՝ մարդու տարրական, կենսական իրավունքների ապահովման համար: Այս ամենը խիստ հեղինակազրկում է ՄԱԿ-ին, որը դարձել է գործիք խոշոր պետությունների ձեռքին ու վերածվել՝ կոռուպացված ու շահի հետևից ընկնող կազմակերպության (Արցախյան 44-օրյա պատերազմը դրա լավագույն օրինակ):

Մասնագետների ու հենց ՄԱԿ-ի գնահատմամբ՝ ՄԱԿ-ի կազմակերպման հնացած համակարգն՝ իր գործառույթներով ու լիազորություններով հանդերձ, թույլ չի տալիս արդյունավետորեն հաղթահարել իր առջև դրված խնդիրները: Պետությունների անհավասար ներկայացուցչությունը, միջազգային հակամարտություններին օպերատիվ արձագանքելու անհնարինությունը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի չկայացած բարեփոխումները չեն նպաստում այս կազմակերպության հեղինակության բարելավմանը, աշխարհում նրա դերի բարձրացմանը: Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ ներկայումս ՄԱԿ-ը չի հանդիսանում գլոբալ անվտանգության ապահովման արդյունավետ հարթակ[1]:

ՄԱԿ-ի կողմից Արցախի նկատմամբ նույն այդ անտարբերությունը կար նաև մինչև 44-օրյա պատերազմը՝ 30-ամյա <<ոչ պատերազմ, ոչ խաղաղություն>> պայմաններում: Օրինակ, 2000 թվականի սեպտեմբերին՝ <<նոր հազարամյակի արշալույսին>>, աշխարհի 147 պետությունների ու կառավարությունների ղեկավարներ հավաքվեցին <<ՄԱԿ-ի նյույորքյան Կենտրոնական գրասենյակում՝ վերահաստատելու մեր հավատն առ կազմակերպությունն ու իր կանոնադրությունը՝ որպես առավել խաղաղ, բարգավաճ ու արդար աշխարհի կայուն հիմքեր>>, որի արդյունքում ընդունեցին ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիրը[2]: Հռչակագրում հատուկ ուշադրության արժանացան հետևյալ խնդիրները՝ խաղաղություն, անվտանգություն և զինաթափում, զարգացում և աղքատության վերացում, շրջակա միջավայրի պահպանություն, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և պատշաճ կառավարում, խոցելի խավերի պաշտպանություն: Նշված խնդիրների լուծումը մնացին անհասանելի երազանք ոչ միայն այդ փաստաթղթում՝ որպես հոգածության հատուկ օրինակ նշված Աֆրիկայի համար, այլև չճանաչված ու մասնակի ճանաչված

---

[1] *Տե՛ս Особенности функционирования непризнанных государств. Авцинова Г.И., Новицкая А.А.// НАУКА И СОВРЕМЕННОСТЬ 2015 N3/5/ , с. 69*

[2] *ՄԱԿ-ի Հազարամյակների հռչակագիր. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ, Երևան, 2013, էջ 81:*

երկրների համար: Վերջին հաշվով, հենց նրանք ունեն այդպիսի խնդիրներ, այլ ոչ թե հռչակագիրը կազմող ու ընդունող զերզարգացած երկրները՝ ԱՄՆ-ն, Եվրոպան և այլն: Եթե ՄԱԿ-ի Հազարամյակների հռչակագրում կամ էլ նրան փոխարինած 2015 թվականի սեպտեմբերի 15-ի ՄԱԿ-ի ԳԱ-ի կողմից ընդունված <<Կայուն զարգացման 2030 օրակարգ>> բանաձևում նշված խնդիրների գոնե 20-30 տոկոսը իրականացվեր Արցախում, ապա մենք կունենայինք տնտեսական զարգացվածության բոլորովին այլ՝ անհամեմատ բարձր ցուցանիշ:

Եվ, իհարկե, չճանաչված երկրների ցանկում Արցախը միակ երկիրը չէ, ում նկատմամբ շարունակաբար տիրում է քար անտարբերություն ու լռություն: Նույնը կարելի է ասել Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի դեմ վրացական ագրեսիայի ու դրա հետևանքների մասին, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրների:

Չնայած եղած բոլոր թերություններին ու թերացումներին, այդուհանդերձ, ՄԱԿ-ը համեմատաբար քիչ թե շատ հնարավարությունների տեր կազմակերպություն է ու կարող է ապահովել որոշակի երաշխիքներ անվտանգության ու համագործակցության ոլորտում: Արցախը և մյուս չճանաչված երկրները պետք է ստեղծեն մի այնպիսի կառույց, որն իր ներկայացուցչությունը կունենա ՄԱԿ-ում: Ինչպես չճանաչված երկրների ճանաչման, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, բավականին արդյունավետ ու հեռանկարային կլինի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարին կամ Մարդու իրավունքների կոմիտեին կից չճանաչված երկրների կազմակերպություն-ներկայացուցչություն ունենալը, որը կգործի ՄԱԿ-ի հովանու ներքո: Այս կազմակերպության գործունեության իրավական հիմքը պետք է կազմի ինչպես ՄԱԿ-ի կանոնադրությունը, այնպես է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966 թվականի զույգ դաշնագրերը, և, իհարկե, պետք է լինի գործունեության սեփական կանոնադրություն ու նորմատիվ բազա: Նմանատիպ կազմակերպության հիմնադրումն ու գործունեությունը միանգամից մի քանի նպատակի կծառայի՝ թույլ չի տա ագրեսոր երկրի (որից անկախություն են ձգտում) զինված հարձակում, մարդու իրավունքների պաշտպանություն, միջազգային ճանաչման հեռանկարի ավելի մերձեցում, տնտեսության զարգացում՝ շնորհիվ ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային զարգացման ծրագրերի ու միջոցառումների իրականացման: Այս կազմակերպության հիմնադրումը բխում է հենց ՄԱԿ-ի կանոնադրությունից ու մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի բոլոր կոնվենցիաների իրականացման պահանջից: Այսինքն, կշահեն բոլորը, մի

կողմից ՄԱԿ-ը կիրականցնի մարդու իրավունքների պաշտպանության ու կայուն զարգացման իր հայեցակարգը, մյուս կողմից՝ չճանաչված երկրները կապահովեն իրենց տնտեսական զարգացվածությունը, իրավագիտակցության բարձրացումը, քաղաքացիական հասարակության ու դեմոկրատական արժեքների տարածումն ու պաշտպանությունը, և, իհարկե, կբարձրացվի այդ երկրների անկախության միջազգային ճանաչման հեռանկարը: Ավելին, այս կազմակերպության ցանկում պետք է ներառել ոչ միայն հետխորհրդային, այլև այլ չճանաչված ու մասնակի ճանաչված այլ երկրներ, ինչպիսիք են Թայվանը, Կոսովոն, Կիպրոսը, Սոմալիլենդը, Արևելյան Թիմորը, Բասկերի երկիրը, Վազիրիստանը, Դոնեցկը, Լուգանսկը, Թամիլ Իլամը, Արևմտյան Սահարան, Հարավային Սուդանը և այլն, ու նմանատիպ խնդիրներ ունեցող այլ կախյալ տարածքներ: Այդօրինակ կազմակերպության հիմնադրումը ձեռնտու է բոլոր չճանաչված պետություններին՝ բոլոր առումներով: Ավելին, կարելի է նույնիսկ (իհարկե բավարար քաղաքական կամք ու ֆինանսական միջոցներ ունենալու դեպքում) ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային հիմնարար սկզբունքների (այլ ոչ միայն ազգերի ինքնորոշման կամ տարածքային ամբողջականության) հիման վրա էլ կառուցել չճանաչված երկրների ճանաչման գործընթացը՝ նորից հիմքում ունենալով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը 1950 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան, 1966 թվականի զույգ դաշնագրերը և մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ այլ հիմնարար փաստաթղթեր: Վերջին հաշվով, խոսքը գնում է հասարակ մարդկանց իրենց հայրենի հողում խաղաղ երկնքի տակ ապրելու իրավունքի մասին, այլ ոչ թե զուտ հողատարածքի կամ նրան զավթելու ցանկություն ունեցող հողատերերի կամայականությունների մասին, ինչպես ստրկատիրական ժամանակաշրջանում: Իսկ սահմանադրական օրենսդրության զարգացումը, արտաքին քաղաքականության կոնցեպցիաների ու ռազմավարությունների մշակումը թույլ կտա դե ֆակտո պետություններին լինել ավելի տեսանելի ու հասկանալի համաշխարհային քաղաքականության այլ սուբյեկտների համար:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը:

ՀՏԴ 342,4

Իրավունք

Նորիկ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ԵՀՀ միջազգային հարաբերությունների և իրավագիտության ինստիտուտի դասախոս, ՀՀ ԶՈՒ № զորամասի օպերատիվ բաժանմունքի ավագ սպա, կապիտան
E-mail: norik.shaxnazaryan@yandex.ru, 055021020

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ՝ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հոդվածը նվիրված է սահմանադրության և հերմենևտիկայի տեսական, կիրառական հարցերին: Մասնավորապես համակողմանի վերլուծության են ենթարկվել իրավաբանական և սահմանադրական հերմենևտիկայի հասկացությունն ու նշանակությունը:
Հետազոտության առարկան է՝ ժամանակակից սահմանադրության հասկացությունը, առանձնահատկությունները և զարգացման միտումները:
Հոդվածի նպատակն է բացահայտել սահմանադրական հերմենևտիկայի հասկացությունը, էությունը և բովանդակային առանձնահատկությունները, պարզաբանել նրա անմիջական գործադրման տեսական և կիրառական նշանակությունը իրավակարգավորումների որոտում:
Գիտական նորույթը կայանում է նրանում, որ հոդվածում առաջին անգամ մանրակրկիտ բացատրություն է տրվում հերմենևտիկայի ծագմանը և կիրառմանը իրավագիտության մեջ, համակարգված մեթոդաբանությամբ վերլուծության է ենթարկվում սահմանադրական հերմենևտիկայի տեսական – կիրառական և ամբիվալենտային բնույթը:
Բանալի բառեր՝ *սահմանադրական հերմենևտիկա, իրավաբանական հերմենևտիկա, սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական մեկնություն, իրավական*

ակտերի սահմանադրականության դատական վերահսկում, սահմանադրական ինտերպրետացիա, սահմանադրական նորմեր, իրավաբանական կոնֆլիկտ, սահմանադրական – իրավական ինստիտուտներ:

Н. Шахназарян

КОНСТИТУЦИЯ И ГЕРМЕНЕВТИКА ПО ТЕОРЕТИЧЕСКИМ И ПРИКЛАДНЫМ ВОПРОСАМ

Статья посвящена теоретическим и прикладным вопросам конституции и герменевтики. В частности, всесторонне проанализированы понятие и значение правовой и конституционной герменевтики.

Предметом исследования являются понятие, особенности и тенденции развития современной конституции.

Цель статьи - раскрыть понятие, сущность и содержательные особенности конституционной герменевтики, разъяснить теоретическое и прикладное значение его непосредственного применения в области правового регулирования.

Научная новизна заключается в том, что в статье впервые дается обстоятельное объяснение зарождения и применения герменевтики в юриспруденции, при систематической методологии анализируется теоретико–прикладной и амбивалентный характер конституционной герменевтики.

Ключевые слова: *конституционная герменевтика, юридическая герменевтика, конституционный контроль, конституционное толкование, судебный контроль конституционности правовых актов, конституционная интерпретация, конституционные нормы, правовой конфликт, конституционно – правовые институты.*

N. Shahnazaryan

CONSTITUTION AND HERMENEUTICS ON THEORETICAL AND APPLIED ISSUES

The article is devoted to theoretical and applied issues of constitution and hermeneutics. In particular, the concept and meaning of legal and constitutional hermeneutics are comprehensively analyzed.

The subject of research is the concept, features and tendencies of the development of the modern constitution.

The purpose of the article is to reveal the concept, essence and substantive features of constitutional hermeneutics, to explain the

theoretical and practical significance of its immediate application in the field of legal regulation.

The scientific novelty lies in the fact that for the first time the article provides a thorough explanation of the origin and application of hermeneutics in jurisprudence, the theoretical–applied and ambivalent nature of constitutional hermeneutics is analyzed with a systematic methodology.

Key words: *constitutional hermeneutics, legal hermeneutics, constitutional control, constitutional commentary, judicial control of the constitutionality of legal acts, constitutional interpretation, constitutional norms, legal conflict, constitutional - legal institutions.*

Ժամանակակից սահմանադրականության տեսությունը հիմնվում է մեկնաբանական մեթոդաբանությունների վրա[1], որոնք առաջարկում են սահմանադրական տեսության իմաստավորում՝ սահմանադրական նորմերի մեկնաբանման և կիրառման տեսակետից: Լայն իմաստով, մեկնաբանական մեթոդաբանությունները ներկայացնում են մեթոդների հավաքածու, որոնք բացատրում են սահմանադրական-իրավական առանձին ինստիտուտների զարգացման հարաշարժությունը, դերն ու նշանակությունը, նրանց փոխադարձ կապը սահմանադրական և այլ իրավահարաբերությունների իրագործման ընթացքում: Նեղ իմաստով՝ դա սահմանադրական մեկնաբանման եղանակների, ձևերի, տեսությունների համակարգ է, որը կիրառվում է սահմանադրության դատական և այլ մեկնաբանությունների ընթացքում: Մեկնաբանական մեթոդաբանությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի որոշակի կապ գրավոր իրավական ակտի՝ սահմանադրության և հերմենևտիկայի միջև:

Որպես տեքստերի մեկնաբանման արվեստ և տեսություն՝ հերմենևտիկան մշակվում և կիրառվում է հասարակագիտության տարբեր

---

[1] *Տվյալ աշխատության մեջ բանավիճային կարգով առաջարկվում է երկու մոտեցում «մեկնաբանական մեթոդաբանություններ» հասկացության վերաբերյալ, քանզի մեր իրավագիտության մեջ բացակայում է «interpretive methodologes» հաստատուն բառակապակցությունը: Տվյալ տերմինը մենք փոխ ենք առել Կալիֆոռնիայի համալսարանի (Սան Ֆրանցիսկո) կողմից հրապարակվող և սահմանադրական իրավունքի հարցերին նվիրված ամսագրից, որի թեմատիկ թողարկումը վերնագրված է «Մեկնաբանական մեթոդաբանություններ. սահմանադրական իրավունքի հեռանկարները» և ներառում է զանազան հոդվածներ ամերիկյան վաղ սահմանադրական բանավեճերում ժողովրդավարական ինքնիշխանության հայեցակարգի զարգացման, սահմանադրության դատական գերակայության և ոչ դատական մեկնաբանման և այլ հարցերի մասին (Hetings Constitutional Law Quarterly. 1997. Vol. 24, N 2, էջ 281-664:*

բնագավառներում՝ փիլիսոփայության, բանասիրության, հոգեբանության, իրավունքի մեջ: Դրա արմատները գալիս են աստվածաբանությունից (Աստվածաշնչի մեկնություններ և եկեղեցու հայրերի գործեր) և հունական դիցաբանությունից: «Հերմենևտիկա» տերմինը հին հունական ծագում ունի: Որոշ գիտնականներ կապում են այն Հերմեսի՝ աստվածների կամքը փոխանցող սուրհանդակի անվան հետ,[1] մյուսները՝ hermeneuein բայի հետ, որը սովորաբար թարգմանվում է «մեկնել», բացատրել», «թարգմանել» արտահայտություններով, կամ էլ hermeneia գոյականի հետ, որը նշանակում է՝ «մեկնել», «մեկնաբանել» (այս հասկացությունն օգտագործվում է նաև «սրբազան գիր», «հաղորդում», «պատվիրան» իմաստով)[2]:

Հերմենևտիկան սովորաբար ընկալվում է որպես մեկնաբանման ընդհանուր սկզբունքների հետազոտություն, ընդ որում՝ նաև տեքստերի մեկնություն: Հերմենևտիկ հետազոտությունն այլևս չի սահմանափակվում միայն այն կանոնների ձևակերպմամբ, որոնց օգնությամբ հնարավոր է կատարել մեկնաբանություն: Այն այսօր ընդգրկում է նաև մարդկային հասկացման բուն պայմանների հետազոտումը[3]:

Հերմենևտիկայի և իրավագիտության փոխկապվածությունն արտահայտվում է, ամենից առաջ, իրավունքի տարբեր ինստիտուտների և աղբյուրների մեկնաբանման մեջ, որոնք վերաբերում են ինչպես պատմական իրավական փաստաթղթերին, այնպես էլ ներկայումս գործող զանազան իրավական ակտերին[4]: Իրավաբանական հերմենևտիկայի տարա-տեսակներից է գրավոր սահմանադրության մեկնաբանումը, որն առանցքային դիրք է գրավում գրավոր նորմատիվ իրավական ակտերի համակարգում[5]:

«Իրավաբանական հերմենևտիկա» եզրույթը բավական տարածված է և կիրառվում է տարբեր իրավական ակտերի (ինչպես գործող, այնպես էլ պատմության գիրկն անցած) տեքստերի մեկնաբանումների բնութագրման համար: Հետևաբար, իրավաբանական հերմենևտիկան ուսումնասիրում է գրավոր տեքստի մեկնումն ու նշանակությունը, այդ պատճառով էլ այն

---

[1] *Տե՛ս* ***Грейс Р.****, Мифы Древней Греции / Под ред. и с послесл. А. А: Тжо-г. 1992, с.44-47.*

[2] *Տե՛ս* ***Inwood M.****, Hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM / General Editor Ed. Craig. Version 1.0 London, 1998; Palmer R. E. Hermeneutic: Interpretation theory in :JSchleiermacher, Dilthey, Heidegger, and Gadamer. Evanston, 1969, p. 12.*

[3] *Տե՛ս* ***Leyh G.****, Toward a Constitutional Hermeneutics // American Jomal of Political Science/ 1988.vol 32, p.372.*

[4] *Մասնագիտական գրականության մեջ հերմենևտիկան, որպես կանոն, կապում են իրավունքի մեկնման ընդհանուր գործընթացի հետ (Տես՝* ***Суслов*** *В, В. Герменевтика и юридическое толкование // Государство и право. 1997, N* ***6****, с. 115-118).*

[5] *Տես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը:*

կարելի է բնորոշել որպես տեքստուալ առարկա, որը սկիզբ է առնում հունական և հռոմեական իրավունքի դասական կոդիֆիկացիաներից[1]:

Իրավագիտության մեջ իրավաբանական հերմենևտիկան կոչված է ձևավորելու իրավական ակտերի մեկնման տեսությունն ու մեթոդները: Արդի փուլում դա ունի ոչ միայն ճանաչողական նշանակություն, այլև ծառայում է իրավական նորմերի, սկզբունքների և ինստիտուտների իրագործման գործնական նպատակներին: Իրավագիտության մեջ իրավունքի կամ օրենքի մեկնման խնդիրը դիտարկվել է, ամենից առաջ, իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում, իսկ մի շարք դեպքերում՝ իրավական նորմերի կամ էլ իրավունքի առանձին ճյուղերի (որպես կանոն՝ քաղաքացիական և քրեական) կիրառման տեսության շրջանակներում: XIX դարում իրավունքի տարբեր ձևերի (աղբյուրների) մեկնման հարցերի ուսումնասիրությամբ էին զբաղվել այնպիսի իրավագետներ, ինչպիսիք են Ե. Վ. Վասիլկովսկին, Ա. Դ. Գրադովսկին, Ն. Մ. Կորկունովը[2]: Խորհրդային դարաշրջանում իրավունքի մեկնման հիմնահարցերը մշակվում էին Ա. Բ. Վենգերովի, Ն. Ն. Վոպլենկոյի, Տ. Յա. Նասիրովայի, Ա. Ս. Պիգոլկինի, Ա. Ֆ. Չերդանխի և այլ գիտնականների կողմից[3]: Ընդհանուր առմամբ մեկնման հիմնախնդիրը հատուկ է այն իրավական համակարգերին, որոնցում իրավական նորմն ընկալվում է որպես վարքի ընդհանուր կանոն, իսկ նրա մեկման էությունը հասկացվում է որպես հստակ դեպքի հարմարեցում համընդհանուր օրենքին: Սահմանադրական նորմերին մյուս բոլոր նորմերից ավելի հատուկ է ընդհանուր բնույթը: Սահմանադրության մեջ առավել հաճախ են սկզբունք-նորմերը, նպատակ-նորմերը, խնդիր-նորմերը՝ դրանք բոլորն էլ կրում են ընդհանուր-կարգավորիչ բնույթ: Սահմանադրական նորմերի մեկնության պահանջը պայմանավորված է դրանց ոչ միանման ընկալմամբ և իրավաստեղծության կամ իրավակիրառման գործընթացում ոչ նույնանման իրագործմամբ: Հերմենևտիկ ջանքերը կոչված են վերացնելու այդպիսի բազ-

---

[1] Տե՛ս **Goodrich P.,** *Legal hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM; Legal Hermeneutics: History, Theory, fnd Pracvtice / Ed. by G. Leyh. Los Angeles; Berkeley (CA),1992.*

[2] Տե՛ս **Васьковский Е. В. ,** *Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов. Одесса, 1901; М., 2002;* **Градовский А. Д.** *О судебном толковании законов по русскому праву 7/ Собр. соч. Т. 7. СПб, 1907, с. XXI-LVIII;* **Коркунов Н. М.** *Лекции по общей теории права. 8-е изд. СПб., 1909*

[3] Տե՛ս **Венгеров А. Б.,** *О прецеденте толкования правовой нормы // Ученые записки ВНИИСЗ. Вып. 6. М., 1966, с. 3-8;* **Вопленко Н. Н. ,** *Официальное толкование норм права. М., 1976;* **Насырова Т. Я.** *Телеологические (целевое) толкование советского закона. Казань, 1988;* **Пиголкин А. С.,** *Толкование нормативных актов в СССР. М., 1962;* **Черданцев А. Ф.** *Толкование советского права. М., 1979.*

միմաստությունը: Դրա հետ մեկտեղ իրավաբանական հերմենևտիկայի զուտ տեխնիկական ընկալումը՝ որպես «բացառապես օրինականացված իրավակարգին աջակցելու նպատակ հետապնդող գիտություն», ըստ ամենայնի, թվում է միակողմանի[1]: Հերմենևտիկան ծառայում է սահմանադրական նորմերի ճիշտ (ճշմարիտ) մեկնմանը և կիրառմանը: Իրավական նոր համակարգի ստեղծման կամ հին համակարգի փոփոխման պայմաններում հերմենևտիկան ունակ է կատարելու նաև վերափոխիչ գործառույթ:

Սահմանադրական հերմենևտիկայի հասկացությունն ու հատկանշանները: «Սահմանադրական հերմենևտիկա» հասկացությունն օգտագործելի է ամերիկյան սահմանադրական տերմինաբանության մեջ «սահմանադրական մեկնաբանում» հասակցության հետ մեկտեղ, սակայն ազգային իրավական ավանդույթում մինչև վերջերս կիրառելի չէր: Սահմանադրական մեկնման զանազան մեթոդներ և տեսություններ լայնորեն քննարկվում են ամերիկյան սահմանադրական իրավունքում, այդ թվում դատական գործունեության, դատական իրավաստեղծության համատեքստում՝ կիրառվելով մեկնման տարբեր սուբյեկտների, սահմանադրության պատմական զարգացման, ժամանակակից պետական զարգացմանը ԱՄՆ-ի հիմնադրամների հայտերի մտադրությունների համապատասխանության վերաբերյալ[2]:

Սահմանադրական դրույթների և սահմանադրական մեկնման սահմանների վերահիմաստավորումը կապված է, որպես կանոն, հասարակական զարգացման ուղղության փոփոխման կամ սոցիալական և տեխնիկական առաջընթացի այնպիսի նոր գործոնների ծագման հետ, որոնք չէին կարող հայտնի լինել 18-րդ դարի վերջերին[3]:

Ու թեև սահմանադրական մեկնումը (ինտերպրետացիան) սահմանադրական հերմենևտիկայի տարատեսակ է, գոյություն ունեն միայն իրեն բնորոշ հատկություններ, որոնք բնութագրվում են կիրառվող

---

[1] *Տե՛ս* ***Гадамер Г. Г.,*** *Риторика и герменевтика // Гадамер Г. Г. Актуальность прекрасного. М., 1991, с. 191.*

[2] *Տե՛ս* ***Ball T.,*** *Constutional Interrelation fnd Conceptual Change // Legal Hermeneutics: History, Theory, fnd Pracvtice / Ed. by/G. Leyh. Berkeley (CA), 1991, p. 129-146; Leyh G. Toward a Constitutional Hermeneutics, p. 369-387*

[3] *Տե՛ս* ***Friedman D., Smith S. D****. The Sedimentary Constitution // Uneversity of Pensilvariia Law Rewiev. 1998. November. Vol 147. Issue I,® 1-90;* ***Peabody B. G.****, Nonjudicial Constitutional Interpretation, Autoritative Settlment, and a New Agenda for Research // Constutional Commentary. 1999. Spring. Vol. 16. Issue 1, p. 63-90;* ***Whittington K. E.****, Dworkin's "Originalism": The Role of Intentions in ConstitutionaHpterpretation // Review of Politics. 2000. Spring. Vol. 62. Issue 2, p. 197-229.*

ընթացակարգերով՝ երկրի իրավական համակարգի վրա ներգործությամբ և իրավաբանական հետևանքներով, որոնք դուրս են գալիս զուտ սահմանադրական իրավունքի շրջանակներից դեպի իրավունքի այլ ճյուղեր ու բնագավառներ: Մեկնումային գործունեությանն առավել բնորոշ է ինչպես ռոմանոգերմանական, այնպես էլ անգլոսաքսոնական իրավական համակարգի պայմաններում գործող ժամանակակից ինդուստրիալ ժողովրդավարական պետությունների համար: Հենց այդ պատճառով էլ ժողովրդավարացման և իրավական համակարգի բարեփոխման պայմաններում սահմանադրական նորմերի մեկնումը հանդիսանում է իրավական կարգի սահմանադրականացման կարևորագույն գործոններից մեկը:

Սահմանադրական հերմենևտիկան սահմանադրության նորմերի մեկնման արվեստն ու տեսությունն է՝ սահմանադրական արդարադատության կամ սահմանադրական վերահսկողության մարմնի կողմից զանազան գործառույթների իրագործման և կատարման ընթացքում, ինչպես նաև սահմանադրական արդարադատության ոլորտի մեջ մտնող տարբեր տեսակի նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրական իմաստի ու նշանակության փիլիսոփայական և տեսական-իրավական հիմնավորումը և բացահայտումը:

Մյուս եզրույթները՝ «սահմանադրական մեկնում» կամ «սահմանադրական ինտերպրետացիա», որոնցից նույնպես ստիպված ենք օգտվել, ունեն իրավաբանական հատուկ բովանդակություն և կարող են կիրառվել մի քանի իմաստներով: Ժամանակակից սահմանադրական տեսության մեջ դրանք նշում են. ա) սահմանադրական նորմերի իմաստի և բովանդակության պարզաբանման տեսություն, բ) պետական իրավասու մարմնի կողմից իրավունքի տարբեր սուբյեկտներին սահմանադրական դրույթների բացատրման իրավաբանական ընթացակարգ, գ) սահմանադրական իրավունքի ինստիտուտ, որը ներառում է սահմանադրական պաշտոնական մեկնման մասին գործերի քննումը և դրանց իրավաբանական հետևանքները կարգավորող սահմանադրական նորմերի, օրենքների և այլ ակտերի ամբողջականությունը:

Առանձնացնենք սահմանադրական հերմենևտիկայի հիմնական հատկանիշները, որոնք ելակետային են նրա բնույթի և իրավական համակարգում տեղի ու նշանակության բացահայտման առումով:

1. Սահմանադրական հերմենևտիկային հատուկ է *ամբիվալենտային* բնույթ: Սահմանադրական նորմերի մեկնությունն ունի խառը քաղաքական-իրավական բնույթ և իրականացվում է որոշակի մշակութային և գաղափարախոսական համատեքստում: Սահմանադրության մեկնման

արդյունքները միշտ էլ արտահայտություն են իրավական որոշակի քաղաքականության, որն իրականացնում է պետական այն մարմինը, որն օժտված է տալու հեղինակավոր և իրավունքի այլ սուբյեկտների համար պարտադիր մեկնաբանություններ: Ընդ որում, քաղաքական և մշակութային տարբեր պայմաններում սահմանադրական միևնույն դրույթի մեկնումները կարող են ունենալ մի դեպքում դրական, իսկ մեկ այլ դեպքում՝ բացասական արդյունքներ:

2. Սահմանադրական հերմենևտիկան օգտագործում է փիլիսոփայական և իրավական *տարբեր* կատեգորիաներ: Այսպես, «պոզիտիվ» և «նեգատիվ» ազատության կատեգորիաները կիրառվում են սահմանադրության մեջ ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների բովանդակության պարզաբանման համար: «Ժողովրդական ինքնիշխանություն» (սուվերենություն), «պետական ինքնիշխանություն», «իշխանությունների տարանջատում» կատեգորիաներն օգտագործվում են Հիմնական օրենքով սահմանված պետական մարմինների ձևավորման և գործունեության կարգի վերլուծման համար: Անշուշտ, մեկնման գործընթացի մեջ ներգրավվում են, առաջին հերթին, սահմանադրական-իրավական կատեգորիաները, որոնք բովանդակային կորիզ են սահմանադրական ցանկացած դրույթի համար: Միևնույն ժամանակ, սահմանադրական հերմենևտիկան մեկնման գործընթացի մեջ է ներառում իրավունքի զանազան ճյուղեր և դրանց համապատասխանող կատեգորիաներ՝ միջազգային-իրավական, քաղաքացիական-իրավական, քրեական-իրավական, ընտանեկան-իրավական, դատավարական-իրավական և այլն: Սահմանադրական հերմենևտիկայի մեջ կիրառվող կատեգորիաների *բազմաճյուղային* բնույթը բացատրվում է սահմանադրությամբ կարգավորվող հասարակական հարաբերությունների ընդգրկման լայնությամբ:

3. Սահմանադրական հերմենևտիկան ենթադրում է նորմերի և սկզբունքների *արժեքորեն կողմնորոշված* մեկնություն: Սահմանադրության վերաբերյալ հերմենևտիկ ջանքերի կիրառումը միշտ հիմնված է սահմանադրական (հակասահմանադրական) որոշակի արժեքների վրա: Մեկնության շնորհիվ ստեղծելով սահմանադրական արժեքների հեղինակավոր պատկեր սահմանադրական հերմենևտիկան հարթել է համաձայնեցման ենթակա արժեքների կոնֆլիկտը: Այդ եղանակով պարզաբանվում են նաև սահմանադրական արժեքների փոխկապվածություններն ու որոշակի հիերարխիան:

4. Սահմանադրական հերմենևտիկան ունի *տեսական-կիրառական* բնույթ, քանի որ բացատրում է իրավական երևույթները իրավական կար-

գավորման կամ իրագործման մեխանիզմի համատեքստում: Սահմանադրական մեկնման ընթացքում ընդհանուր սկզբունքները կամ առանձին նորմերը բացատրվում են ոչ միայն համապարտադիր դրույթների իմաստը բացահայտելու համար, այլև հստակեցվում են իրավունքի կոնկրետ սուբյեկտների կողմից դրանց կիրառման հնարավորությունները: Դրանով է պայմանավորված այն, որ սահմանադրական հերմենևտիկան օժտված լինելով բարձր տեսության հատկանիշներով, միաժամանակ ունակ է ազդել ֆիզիկական և իրավաբանական տարբեր անձանց և պետական մարմինների վրա:

5. Սահմանադրական հերմենևտիկան պարզաբանում է իրավական մտածողությունը՝ ցույց տալով սահմանադրության և իրավական համակարգի այլ տարրերի կառուցվածքային և գործառույթային փոխկապակցությունները՝ սահմանադրության տեքստի, իրավունքի զանազան ճյուղերի նորմերի, ինչպես նաև իրավունքների, ազատությունների, պարտականությունների և լիազորությունների իրագործման ընթացքում իրավունքի տարբեր սուբյեկտների վարքի և գործունեության միջև: Դրանով իսկ բարձրանում է սահմանադրական նորմերի գործողության և իրագործման արդյունավետության աստիճանը:

Ժամանակակից իրավական հետազոտություններում ներկայացված է սահմանադրական նորմերի մեկնությունների բնույթն ու ընթացքը բնորոշող անվանումների ողջ լայն շրջանակը[1]: Մեր հոդվածում «սահմանադրական հերմենևտիկան», «սահմանադրության մեկնություն», «սահմանադրության ինտերպրետացիա», «սահմանադրական մեկնաբանումներ» տերմիններն օգտագործվում են մեկ ընդհանուր հասկացողական շարքում:

«Սահմանադրության մեկնում», «սահմանադրական վերահսկողություն», «սահմանադրական արդարադատություն», «իրավական ակտերի սահամանադրականության դատական վերհսկում» եզրույթների օգտագործումը հաճախ պայմանավորված է հետազոտության օբյեկտի

---

[1] *Գիտության մեջ կան հետազոտություններ՝ նվիրված ինչպես սահմանադրական վերահսկողության տեսությանն ու պրակտիկային, այնպես էլ սահմանադրական դատավարության (արդարադատության) կազմակերպմանն ու գործունեությանը: Տես՝* ***Հարությունյան Գ.****, Սահմանադրական իրավունք,* ***Витрук Н. В.,*** *1. Конституционное правосудие: судеьное конституционное право и процесс. М., 1998; 2. Конституционное правосудие в России* ***(1991-2001 гг.):*** *Очерк теории и практики. М., 2001;* ***Кряжков В. А., Лазарев Л. В.****, Конституционная юстиция в Российской Федерации: Учебное пособие. М., 1998;* ***Кряжков В. А.****, Конституционное правосудие в субъектах Российской Феедерации (правовые основы и практика). М., 1999;* ***Митюков М А., Барнашов А. М.,*** *Очерки конституционного правосудия (сравнительно-правовое исследование законодательства и судебной практики). Томск, 1999;* ***Несмеянова С. Э.****, Конституционное правосудие в Российской Федерации. Екатеринбург, 2000;* ***Шульженко Ю. Л.****, Конституционный контроль в России. М., 1995 և այլն:*

առանձնահատկությամբ: Դրանք միանման չեն իրենց ծավալով և տարբեր կողմերից են բնութագրում սահմանադրության մեկնման հետ կապված իրավական իրականությունը: Կոնկրետ երկրում դրանց հարաբերակցության և օգտագործման հաճախականության վրա ազդում է իրավական և դատական այն համակարգի տեսակը, որի շրջանակներում իրականացվում է իրավական գործունեության տվյալ տեսակը:

Սահմանադրական նորմերի բովանդակությունը և դրա կողմից սահմանվող սահմանափակումները իշխանությունների լիազորությունների, մարդկանց իրավունքների և ազատությունների վերաբերյալ կարող են տարբեր լինել: Սակայն ցանկացած սահմանադրություն, անշուշտ, ներառում է նաև տեքստ: Իսկ սահմանադրությունը, որպես գրավոր տեքստ, անկախ իր բովանդակությունից, ենթադրում և պարտադրում է մեկնության գործընթացի մեջ մտցնել ինչպես սահմանադրական իրավունքի տեսության կատեգորիաներ, այնպես էլ հերմենևտիկայի որոշակի փիլիսոփայություն, որը փորձում է անբացատրելի պայմաններ գտնել բոլոր տեքստերը հասկանալու համար[1]:

Գրավոր սահմանադրության առկայությունը սահմանադրական հերմենևտիկայի տեսության և պրակտիկայի անհրաժեշտ, սակայն ոչ ամբողջապես բավարար նախապայմանն է: Սահմանադրությունը միշտ գործում է որոշակի իրավական համակարգի և սոցիալական միջավայրի պայմաններում: Այն կարող է լինել սոցիալական վերափոխումների գործոն կամ շատ քիչ կիրառվող և նույնիսկ ընդհանրապես չկիրառվող հռչակումների հավաքածու: Իրավական համակարգի և ընդհանրապես ողջ հասարակության վրա սահմանադրության ակտիվ ներգործությունն է, որ ձևավորում է սահմանադրական մեկնության պահանջարկը՝ հատկապես պետության և իրավունքի վերափոխման դինամիկ անցումային ժամանակաշրջանում: Դա առանցքային պայման է սահմանադրական կոնֆլիկտների խաղաղ լուծման և համաձայն սահմանադրական նոր սկզբունքների ու սահմանադրական նոր գաղափարների իրավական համակարգի կայուն վերափոխման համար: Հիմնականում դրանով է բացատրվում սահմանադրության պաշտոնական համապարտադիր և կազուալ կամ միայն կազուալ մեկնաբանման ինստիտուտի այդչափ մեծ տարածումը ետսոցիալիստական պետությունների մեծ մասում:

Իրավական համակարգի վրա ապակայունացնող ազդեցություն գործող սահմանադրական սկզբունքների մեկնաբանությունը, որպես կանոն,

---

[1] *Դրա հետ մեկտեղ Գ, Էյը որպես սահմանադրական հերմենևտիկայի անհրաժեշտ նախադրյալ նշում է «գրավոր դիսկուրսը» («written discourse»):*

պայմաններ է նախապատրաստում սահմանադրական լուրջ բարեփոխումների կամ սահմանադրության մասնակի փոփոխությունների համար: Իրավական համակարգի համար կայունացնող դերակատարություն ունեցող սահմանադրական մեկնությունները նպաստում են սահմանադրական սկզբունքների կենսագործմանը, տարածում են սահմանադրության գործողությունը իրավունքի բարեփոխվող ճյուղերում, վերափոխում են հասարակական գիտակցությունը և ընդհանուր առմամբ ծառայում են առավել կարևոր և սահմանադրորեն նշանակալից հարցերով հասարակական և մասնագիտական (իրավաբանական) ընդհանուր հայտարարի գալու նպատակին, այդ թվում նաև հերմենևտիկ ջանքերի օգնությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների արդյունքում եզրահանգում ենք, որ կարելի է առանձնացնել սահմանադրական մեկնաբանման պահանջարկ ծնող հետևյալ հանգամանքները.

1. գրավոր սահմանադրության առկայություն, որը կատարում է հասարակական հարաբերությունների և սոցիալական վերափոխումների ակտիվ իրավական կարգավորիչի գործառույթ,

2. սահմանադրության նորմերի և քաղաքական-իրավական իրողության միջև ճեղքվածքի առաջացում, ինչը պահանջում է հարմարեցնել սահմանադրական դրույթները փոփոխված *հասարակական հարաբերություններին,*

3. իրավունքի սուբյեկտների մոտ սահմանադրական դրույթների ոչ ադեկվատ ընկալում և հասկացում, ինչը կարող է հանգեցնել իրավաբանական կոնֆլիկտների և սահմանադրական օրինականության միասնականության խախտման,

4. սահմանադրությանը երկարատև կյանք և նրա զարգացմանը շարունակական բնույթ ապահովելու ձգտումը[1]:

Ըստ մեր տեսանկյան, սահմանադրական մեկնման իրավաբանական նպատակներն ու հնարավորությունները ներառում են իրավական համակարգի տարբեր տարրեր, սակայն, առաջին հերթին, դրանք ներգործում են սահմանադրական իրավունքի և սահմանադրական քաղաքականության ոլորտի վրա: Կարելի է առանձնացնել հետևյալ

---

[1] *ԱՄՆ -ի Գերագույն դատարանի դատավորների կողմից Սահմանադրության մեկնման տարբեր մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս հարմարեցնել նորմերը ժամանակակից պահանջներին և ապահովել նրա կենդանի գոյությունը արդեն քանի սերունդ: Սահմանադրական, մեկնությունների տարբեր ձևերի ու մեթոդների («forms» or «modalities») մասին աձս Fallon R. H.* ***A constructivist coherence theory of constitutional interpretation // Harvard Law Revew. 1987. Vol. 100. N 6, p. 1189-1209***

նպատակները և հնարավորությունները.

1. սահմանադրական նորմերի և իրավունքի այլ ճյուղերի նորմերի համակարգված կապերի բացահայտում,

2. սահմանադրական նորմերի զարգացման և հստակեցման հարցերով օրենսդիրների հնարավորությունների պարզում.

3. սահմանադրության ուղղակի գործողության կանոնների մշակում և դրա սահմանների հստակեցում,

4. վարույթի տարբեր առարկաների մեջ մտնող հարցերի կարգավորման ծավալի բացահայտում,

5. պետության սահմանադրական և օրենսդրական քաղաքականության հիմնական ուղղությունների պարզաբանում (բացահայտում):

Այսպիսով, սահմանադրական հերմենևտիկայի քաղաքական նպատակներն ու հնարավորությունները շոշափում են հանրային քաղաքականության տարբեր մակարդակներ և ընդհանուր առմամբ հակազդում են ծայրահեղական գործիքայնությանը հանրային իշխանության կազմակերպման և իրականացման գործում: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ սահմանադրական մեկնությունները նպաստում են հակամարտող քաղաքական խմբերի ու շահերի համաձայնեցմանն ու հաշտեցմանը և ապահովում են քաղաքական կոնֆլիկտների քաղաքակիրթ լուծումը: Պակաս կարևոր չէ նաև այն, որ այդ գործընթացի իրականացման ժամանակ համաչափվում են սոցիալական տարբեր խավերի, քաղաքական և մասնագիտական խմբերի կողմից որդեգրված քաղաքական ու այլ արժեքներ և՛ քննարկման և՛ մեկնաբանման ճանապարհով կատարվում է դրանց հիերարխիայի փոխհամաձայնեցված լեգալացում: Սահմանադրական նորմերի մեկնաբանման սոցիալական նպատակներն ու հնարավորություններն ուղենիշ են ծառայում հասարակական հարաբերությունների ողջ համակարգի համար: Դրա օգնությամբ է կատարվում հասարակության տարբեր ենթահամակարգերի ավելի ընդ-հանուր և բազմակողմանի կարգավորումը, հանրության ամբողջականու-թյան և նրա առանձին մասերի զարգացումների միջև հավասարակշռության պահպանումը:

Գրականություն

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը,
2. **Грейс Р.,** Мифы Древней Греции / Под ред. и с послесл. А.А: Тжо – г. 1992.
3. **Inwood M.** Hermeneutics // Routledge Enciclopedia of Pilosophy CD-ROM / General Editor Ed. Craig. Version 1.0

London, 1998; Palmer R. E. Hermeneutic: Interpretation theory in :JSchleiermacher, Dilthey, Heidegger, and Gadamer. Evanston, 1969.

4. **Leyh G.**, Toward a Constitutional Hermeneutics // American Jomal of Political Science/ 1988.vol 32.
5. **Суслов В. В.,** Герменевтика и юридическое толкование // Государство и право. 1997, N 6.
In 40% of the completed works the symbolism of rain, hail and lightning prevailed. In their associations, the respondents referred to a comparison with projectiles falling from the sky. The main sensory markers were confusion, numbness, uncertainty. In 28% of the images the symbolic image of the hurricane dominated. Basically, respondents depicted more than one hurricane in one drawing. In this regard, verbal associations mainly concerned the presence of a sense of anxiety.

In 16% of cases the theme of leaf fall dominated. The branches of the trees remained empty at the same time. The autumn season prevailed. The verbal associations of the subjects concerned the themes of sadness, longing, but also some hope. In 12% of cases, the symbolic theme of the reincarnation prevailed. The drawings were dominated by images of flowers, green plants, the sun and the blue sky. According to the associations of the participants, flowers and plants were turned to the sky and fed from the energy of the sun.

Conclusion

This article demonstrated the results of a study aimed at identifying the characteristics of the perception of military operations in Karabakh in 2020. The study included the age group from 18 to 35 years old. Within the framework of this study the main indicator of fixing the features of the perception process was the process of symbolic representation of experience, in particular, the comparison of military operations with natural phenomena and projection onto a specific drawing. Mainly four dominant themes were identified

In a large number of cases the symbolic image of a thunderstorm, rain and hail prevailed, which was mainly associated and verbalized as a feeling of surprise, numbness. Then, in percentage, it was the symbol of hurricane that demonstrated military operations. The main sensory marker was the feeling of anxiety.

In the third group respectively autumn motives (falling leaves, empty trees) prevailed in symbolic images where the main sensory markers were feelings of sadness and longing. In the last group the theme of revival was traced (images of flowering vegetation, blue sky).

From the above data it can be concluded that depressive moods prevail in a certain part of the Armenian society. Despite this we can state the fact of the preservation of psychological resources which is expressed in the theme of revival, transformation.

References

1. **Antonio Damasio**. Descarte's error. Emotion, reason and the Human Brain. VINTAGE BOOKS London. Published by Vintage 2006.
2. Figure-Ground Perception in Psychology.-URL: https://www.verywellmind.com/what-is-figure-ground-perception-2795195 Accessed June 25, (Дата обращения: 05.05. 2021);
3. **Hakobyan N., Khachatryan A**., Methodological Approaches to the Study of Person's Identity, - Կաճառ գիտական պարբերական, 2020, 2, 60-67.
4. **Hakobyan N., Khachatryan A**., Post-War Anomie in the Field of Management Leadership and Anomie Overcoming Models, - 2022, 6(2), 94-102.
5. **Hakobyan N., Khachatryan A**., Socio-Cultural Interpretation of Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues Of Pedagogy And Psychology, 2020, 17(1), 65-82.
6. **Hakobyan N., Khachatryan A., Vardanyan N**., MARGINALITY AND ETHNO-CULTURAL ENVIRONMENT, - Paradigmata poznani, 2018, 3, 44-51.
7. Joseph O'connor. NLP workbook;
8. **Hakobyan N., Dabaghyan A., Khachatryan A.,** Strategies of post-war anomie's overcoming in the fields of social interactions and business- 2022, 6(3), 105-112.
9. **Боденхамер Б. Г**., Полный курс НЛП/Б. Г. Боденхамер- "АСТ", 1999, 2005 – (Психология. Высший курс);
10. Великая отечественная война глазами детей и подростков России. [Электронный ресурс] https://ens.mil.ru/science/sociological_center/army_in_numbers/more.htm?id=10424049@cmsArticle (Дата обращения: 07.05.2021);
11. **Волков С. В**., Политическая метафора в современных СМИ (Выпускная квалификационная работа по направлению 44.03.01. Педагогическое образование,

профилю “Образование в области иностранного языка (английского)”, Екатеринбург, 2017;
12. **Гарри Олдер и Берил Хэзер**, NLP. Полное практическое руководство, 183 с;
13. Гештальт-психология. [Электронный ресурс] https://www.psychologos.ru/articles/view/geshtalt-psihologiya. (Режим доступа: 10. 06.2021)].
14. **Карамова А. А.**, Манипулятивный потенциал политической метафоры (Международный научно-исследовательский журнал, https://research-journal.org/wp-content/uploads/2011/10/7-4-38.pdf.
15. **Муромцева А. В.**, Особенности восприятия информации человеком в современном мультимедийном пространстве. [Научный журнал] https://cyberleninka.ru/article/n/osobennosti-vospriyatiya-informatsii-chelovekom-v-sovremennom-multimediynom-prostranstve (Дата обращения: 07.06.2021).
16. Особенности восприятия современной молодёжью событий Великой Отечественной войны 1941-1945 г.г., [Электронный ресурс] https://xn--d1abbusdciv.xn--p1ai/ (Дата обращения: 09.06.2021).
17. **Пезешкиан Н. П.,** Психосоматика и позитивная психотерапия: Пер. с нем./Носсрат Пезешкиан.-2-е издание.-М.: Институт позитивной психотерапии, 2006.-464с.-(серия “Позитивная психотерапия).
18. **Плющ А.Н., Plyushch A.**, Психологические механизмы восприятия информации. Psychologichal mechanisms of information perception. https://lib.iitta.gov.ua/716926/1/INFW-42016-2.indd.pdf ИНФОРМАЦИОННЫЕ ВОЙНЫ №4 (40) 2016;
19. **Райская Л.М.**, Лекции по русскому язык и культуре речи /Л.М. Райская.-Томск: Изд-во Томского политехнического университета, 2009. - 148 с.
20. **Сундуков Р. В.**, Дилемма социальных и культурных оснований репрезентации. [Научная статья] http://www.unn.ru/pages/vestniki_journals/9999-0201_West_soc_2002_1(2)/29.pdf (Дата обращения: 11.06.2021).
21. **Турков Е. А.**, Восприятие Великой Отечественной Войны российскими старшеклассниками: анализ символов и образов. [Научная статья] https://www.jour.fnisc.ru (Дата обращения: 11.06.2021);

22. Чем метафора отличается от сравнения.[Электронный ресурс]. https://russkiiyazyk.ru/leksika/metafora-otlichaetsia-sravneniia.html (Дата обращения: 07.06.2021).
23. Эриксон Милтон Стратегия психотерапии: Пер. с англ>:- СПб.: Издательский Дом “Ювента”, М.: КСП+, 2000.-512с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ. Յարամիշյանը:

ՀՏԴ 159,96

Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.
E-mail: vityayaramishyan@mail.ru

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ-ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՍԹՐԵՍԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդվածում ներկայացված են Ղարաբաղյան երկրորդ (44-օրյա) պատերազմի մարտական գործողություններին մասնակցած Արցախի պետական համալսարանի ուսանողների մոտ հետվնասվածքային սթրեսային հակազդումների բացահայտման և հաղթահարման ուղղությամբ իրականացվող հոգեբանական աշխատանքի որոշ առանձնահատկություններ: Համառոտ վերլուծված են հետպատերազմյան իրավիճակում բնականոն ուսումնական գործունեության վերականգնման և գործընթացի մասնակիցների մոտ հետպատերազմյան սինդրոմների հաղթահարման ուղղությամբ համալսարանի ղեկավարության գործադրած ջանքերը, նկարագրված են հրավիրված մասնագետների, այդ թվում՝ Արցախում տեղակայված խաղաղապահ ուժերի պրակտիկ հոգեբանների հետ համագործակցության որոշ ուղղություններ, տրված են երաշխավորություններ՝ հոգեբանական աշխատանքի կազմակերպման և նկարագրված խնդիրների լուծման համար:

Բանալի բառեր՝ *մարտական սթրես, հետվնասվածքային սթրեսային հակազդումներ, հետպատերազմյան սինդրոմներ, խմբային թրեյնինգներ, դեբրիֆինգ, հոգեբանական աջակցություն, հոգեբանական աշխատանքի կազմակերպում:*

В.Ярамишян

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ РАБОТЫ СО СТУДЕНТАМИ-УЧАСТНИКАМИ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ ПО ПРЕОДОЛЕНИЮ ПОСТТРАВМАТИЧЕСКИХ СТРЕССОВЫХ РЕАКЦИЙ (НА ПРИМЕРЕ АРЦАХА)

В статье представлены некоторые особенности психологической работы по выявлению и преодолению посттравматических стрессовых реакций у студентов Арцахского государственного университета-участников боевых действий Второй (44-х дневной) Карабахской войны. Коротко анализированы усилия руководства университета по восстановлению повседневной учебной деятельности, а так же по преодолению поствоенных синдромов у участников данного процесса, охарактеризованы некоторые направления взаимодействия с приглашенными специалистами, в том числе с практическими психологами миротворческих сил, помещенных в Арцахе, внесены психологические рекомендации по по организации психологической работы и по решению описанных задач.

Ключевые слова: *посттравматические стрессовые реакции, посвоенные синдромы, групповые трейнинги, дебрифинг, психологическая поддержка, организация психологической работы.*

V.Yaramishyan

SOME FEATURES OF THE ORGANIZATION OF PSYCHOLOGICAL WORK WITH STUDENTS PARTICIPATING IN HOSTILITIES TO OVERCOME POST-TRAUMATIC STRESS REACTIONS (ON THE EXAMPLE OF ARTSAKH).

The article presents some peculiarities of the psychological work carried out by the students of Artsakh State University, who took part in the hostilities of the second (44-day) Karabakh war, to detect and overcome post-traumatic stress reactions. The efforts of the university administration to restore normal educational activities in the post-war situation and to overcome the post-war syndromes of the participants in the process are briefly analyzed, some areas of cooperation with invited specialists, including psychologists from peacekeeping troops in Artsakh, are described, and problem-solving psychological work is given.

Key words: *combat stress, post-traumatic stress response, post-war syndromes, group training, debriefing, psychological support, organization of psychological work.*

Երկու խոսք: Ղարաբաղյան երկրորդ կամ 44-օրյա պատերազմը ռազմա-հոգեբանական առումով նոր երևույթ էր: Մասնագետները խոսում են հինգերորդ սերնդի պատերազմի մասին, որում ներգրավված էին գերճշգրիտ զինատեսակներ, կիրառվում էին մարտ վարելու նորագույն մեթոդներ [1]: Պատերազմի վնասներն առայսօր լիարժեք հաշվարկված չեն՝ մարդկային, տարածքային, նյութական կամ որևէ այլ առումով [2]: Շրջանառվող թվերը մոտավոր են. Արցախի տարածքի 75%-ի կորուստ, հայկական կողմերի զոհերի ընդհանուր թվում 750 Արցախի քաղաքացի (81-ը՝ քաղաքացիական անձ): Արցախի 73 քաղաքացի անհայտ կորած է, որից 22-ը՝ քաղաքացիական անձ [3]: Արցախի նման փոքր երկրի համար այս կորուստները չափազանց մեծ են:

Աշխատանքի արդիականությունը: Պատերազմը բերեց ոչ միայն տարածքային, մարդկային, նյութական կորուստներ, այլև հումանիտար խնդիրներ: Պատերազմի մասնակիցների մոտ առաջ եկան հոգեկան խեղումներ, որոնք ուղեկցվեցին յուրահատուկ հակազդումներով՝ դրսևորվելով որպես հետվնասվածքային սթրեսային խանգարումներ՝ ՀՎՍԽ: Առհասարակ, պատերազմի հետևանքներից այս խնդիրը լավ ուսումնասիրած է, սակայն մեր օրինակում՝ գերճշգրիտ զինատեսակների կիրառման պայմաններում, նկատվեցին նոր, դեռևս ամբողջությամբ չուսումնասիրված երևույթներ, որոնց վերլուծությանն էլ նվիրված սույն աշխատանքը:

44-օրյա պատերազմի օրերին թիրախավորվել են Արցախի բոլոր բնակավայրերը, այդ թվում՝ Ստեփանակերտը: Հուսահատություն և

խուճապ առաջացնելու նպատակով կիրառվել են բարձր ճշգրտություն և մահացու ներուժ ունեցող գերժամանակակից զինատեսակներ: Արցախում խաթարվել էր բնականոն կյանքը: Արցախի պետական համալսարանում նույնպես պարապմունքները դադարեցվել են, ուսուցման առկա համակարգի 151 ուսանող մեկնել է ռազմաճակատ, 60-ից ավելի կամավորներ գրանցվել են թիկունքային ջոկատներում: Զոհվել է 26 ուսանող, 1-ը անհայտ կորած է, 24-ը ծանր վիրավորում է ստացել, բռնատեղահանվել է 322-ը: Այս տվյալները վերաբերում են մի բուհի, որում տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին ավանդաբար ցածր է՝ նրա մանկավարժական ուղղվածության պատճառով:

Զինադադարից հետո պարապմունքները վերսկսելու համար ձեռնարկեցին միջոցառումներ, սակայն ուսանողները դժվարությամբ էին վերադառնում: Անզեն աչքով նկատելի էր, որ շատերը կորցրել են անվտանգության զգացումը, ունեն վախեր և տագնապներ, հուսալքություն, մարտական սթրես, ընկճվածություն, հոգեկան բազային կառույցների փլուզումներ, գոյաբանական (էքզիստենցիալ) խնդիրներ: Հատկանշական է, որ հոգեկանի վրա պատերազմի քայքայիչ ազդեցությունը զգացել էին ոչ միայն մարտերի մասնակիցները, այլև թիկունքի մարդիկ, քանի որ «թիկունք» հասկացություն փաստացի չկար: Դիտարկված երևույթները՝ զանգվածային խուճապ, դասալքության դեպքեր՝ ընդհուպ Ղարաբաղյան առաջին պատերազմի վետերանների շրջանում, հիմք են տալիս ենթադրելու, որ գործ ունենք հոգեվնասման զգալի ծավալների հետ: Ահա թե ինչու 44-օրյա պատերազմի նորահայտ գործոնների (գերճշգրիտ զենքեր, հոգեբանական գրոհներ) հաշվառումով ենթադրեցինք, որ հետվնասվածքային սթրեսային հակազդումների ծավալները նախկին պատերազմների համեմատ աճելու են: Օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Առաջինի համեմատությամբ, հոգեկան խանգարումների թիվը աճել էր 300 %-ով, չնայած հաշվարկման պահանջները 3-4 անգամ խստացվել էին [4]: Սա ևս հիմք է տալիս ենթադրելու, որ Արցախյան 44-օրյա պատերազմի բացասական հետևանքները, որոնք դեռ պետք է ուսումնասիրվեն, նույն տրամաբանությամբ, աճ են արձանագրելու:

Ամերիկյան մասնագետների տվյալներով, ՀՎՍԽ դիտարկվել է Վիետնամի վետերանների 30%-ի մոտ: 1988թ. տվյալներով՝ նման խանգարումներ ունեցել է տղամարդ-վետերանների 15.2%-ը և կին վետերանների 8.5%-ը: Տարբերություններ կան նաև էթնիկական բաղադրիչով պայմանավորված: Նման խանգարումներ ունեցել է իսպանալեզու վետերանների 27.9%-ը, սևամորթների 20.6%-ը: ԱՄՆ զինված ուժերը Երկրորդ համաշխարհայինի ժամանակ մարտական հոգեկան

խանգարումների պատճառով կորցրել են 500 հազար մարդ: Մարմնական վիրավորում ստացած վետերանների մոտ ՀՎՍԽ-ն հասնում է 42 %-ի [4, էջ 280]: Այս երևույթը ևս մանրակրկիտ ուսումնասիրվել է, ինչը դժվար է իրականացնել 44-օրյա պատերազմից ընդամենը մեկ ու կես տարի հետո, սակայն մեր դիտարկումների արդյունքները, որոնց մասին կխոսենք ստորև, վկայում են, որ մեր օրինակում մարտական սթրեսի ենթարկված անձանց քանակը շատ ավելի մեծ է եղել:

Նկատենք, որ այստեղ խոսվում է ***մարտական սթրեսի*** մասին՝ որպես օրգանիզմի բազմամակարդակ ադապտացիոն ակտիվության գործընթացի՝ ուղեկցվող ինքնակարգավորման մեխանիզմների լարվածության աճով և յուրահատուկ հոգեֆիզիոլոգիական հարմարվողական փոփոխությունների ֆիքսմամբ[5]: Մարտական սթրեսը, որպես կանոն, ժամանակի ընթացքում անհետևանք հաղթահարվում է, մինչդեռ ***հետվնասվածքային սթրեսը***՝ ՀՎՍ, որպես հոգեկան վնասվածքին տրվող հուզական հակազդեցություն, կարող է ունենալ տևական ընթացք: Վնասվածքից հետո շատերն են նշում, որ իրենց կյանքը փոխվել է. այն, ինչ նախկինում թվում էր ծանոթ ու անվնաս, հանկարծ ընկալվում է վտանգավոր և անկանխատեսելի:

Բոլոր դեպքերում, մարտի հոգեխոցիչ գործոնները փոխում են մարդու վարքը ինչպես անմիջականորեն մարտում, այնպես էլ որոշ ժամանակ հետո [6, էջ 106]: Այդ գործոնները բաժանվում են երկու խմբի՝ ***արտաքին և ներքին (օբյեկտիվ և սուբյեկտիվ)*** [7, էջ 42]: ***Արտաքին գործոններ են*** մարտի բնույթը, ինտենսիվությունը, անձնակազմի կորուստները, եղանակային պայմանները և այլն: ***Ներքին գործոնները*** սուբյեկտիվ են: Դրանք են վտանգի գիտակցումը, խուճապը, տեղեկատվական դեպրիվացիան (տեղեկույթի պակասը) կամ դրա ավելցուկը, անորոշությունը, հուզական գերլարում պահանջող այլ գործոններ [7, էջ 43]: Զ.Ֆրեյդը և հետևորդները խոսել են ***«ռազմական ևնրոզի»*** մասին, որն առավել ճիշտ է բնորոշում երևույթը, քանի որ մինչ այդ կիրառվող ***«վնասվածքային ևնրոզ»*** եզրույթը այդ երևույթը կարծես կապում է կոպիտ ուժի՝ բարձր ձայների, լուսային առկայծումների, մահվան տեսարանների հետ: Իրականում, ևնրոզի պատճառ, ըստ Զ. Ֆրեյդի, կարող են լինել ոչ այնքան արտաքին, որքան ներքին ազդակները՝ վախը, ծանր ապրումները: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Մ.Ի. Աստվածատուրովն իր հերթին առանձնացրեց ***«հուզական ևնրոզը»,*** որն ընդունվեց մասնագետների մեծամասնության կողմից [4, էջ 278]: Այս ամենը, ինչպես նշեցինք, նախկինում մանրակրկիտ ուսումնասիրվել է [4, 5, 6, 7, 8]: Մեր կողմից ավելացնենք, որ այս օրինաչափությունները կիրառելի են նաև մարտական փորձառություն չունեցող անձանց կամ նրանց համար, ովքեր գործել են թիկունքում: Կա նաև հակառակ երևույթը: Գ.Ե. Շումկովը (1904-

1905), Մ.Ի. Աստվածատուրովը (1912), Վ.Մ. Բեխտերևը (1915), Ա.Վ. Գերվերը (1916) նշում են, որ մարտական սթրեսին ենթակա են նույնիսկ նրանք, ովքեր անցել են հատուկ պատրաստություն և հոգեկան ցնցումների հակվածություն չունեն:

Հոգեվնասման ***հոգեբանական պատճառները*** երկուսն են [4, էջ 277]:

Առաջին՝ անձը հարկադրաբար գործում է իր հզորագույն բնազդներին, օրինակ՝ ինքնապաշտպանական բնազդին հակառակ՝ ընդառաջ գնալով մահվանը:

Երկրորդ՝ հոգեվնասող ազդակները կրկնվում են բազմակի: Պատերազմի մասնակցի խոսքով՝ «ստիպված ես մի քանի անգամ զոհվել ու վերակենդանանալ»:

ՀՎՍ հիմնական ***նախանշաններ*** են համարվում կպչուն մտքերը, գիշերային մղձավանջները, անքնությունը, դեպրեսիան, ապաթիան, լարվածությունը, մեղքի զգացումը, հուզական պոռթկումները, գերզգոնությունը, գրգռվողականությունը, չարացածությունը, վնասվածքից խուսափելու միտումը, կոնֆլիկտայնությունը, դեղամիջոցների, ալկոհոլի, թմրանյութերի չարաշահումը, ինքնամեկուսացումը:

Ա. Կարդինեպն առանձնացնում է ՀՎՍ ***հետաձգման հինգ հիմնական նախանշան***. 1. վնասվածքի վրա սևեռվելը, 2. բնորոշ երազները, 3. հոգեկան գործունեության արդյունավետության նվազումը, 4. ագրեսիվ վարքը և 5. հիշողության կորուստը: Հիշողության հետագա վերականգնումը համարվում էր ապաքինման նշան [8, էջ 43]:

ՀՎՍ-ն հոգեբանական խնդիր է, սակայն ոչ դատավճիռ: Այդ պաշտպանական մեխանիզմի օգնությամբ հոգեկանը փորձում է հաղթահարել հոգեվնասող իրադարձության հետևանքները, ինչի համար, ինչպես ուղեղի կաթվածից հետո, որոշակի ժամանակ է պետք:

44-օրյա պատերազմի բարձր տեխնոլոգիականության, հանկարծակիության, ինտենսիվության, դաժանության արդյունքում ձևավորված իրավիճակը մենք բնութագրել ենք որպես ***զանգվածային-ֆրուստրացիոն:*** Մեր կարծիքով, հետպատերազմյան ֆրուստրացիոն իրավիճակը կարելի է կապակցել նաև ***պատերազմի անակնկալ ելքի հետ,*** որը շատերն ընկալել են որպես կապիտուլյացիա, մինչդեռ Ղարաբաղյան առաջին պատերազմի հաղթական ելքը օգնել էր թեթև տանելու մարտական սթրեսները:

44-օրյա պատերազմի մասնակից ուսանողների հետ մեր կողմից իրականացված ***վերականգնողական աշխատանքները ներառել են.***

· անձնային թերապիա, երբ հույզերը ճնշելու փոխարեն դրանք արտահայտելու, դրսևորվելու հնարավորություն է ընձեռվում:

Ուսումնական պարապմունքը այդ խնդիրը լուծելու մեծ ներուժ է պարունակում:

· ներգրավում ուսանողական ակտիվ կյանքում, երբ ամենօրյա սիրած զբաղմունքը բավականություն է պատճառում, բերում է ներքին հանդարտություն,

· խմբային թերապիա և դեբրիֆինգ՝ քննարկում ուսանողական խմբերում,

· ֆիզիկական ակտիվություն՝ սուբլիմացիա ակտիվ ֆիզիկական կյանքով:

Աշխատանքի ընդհանուր համակարգում զգալի տեղ է հատկացվել դեբրիֆինգի մեթոդին: Խմբային թերապիան, խմբերում հոգեբանական գիտելիքների տարածումը հուզական հակազդեցությունների շտկման զգալի ներուժ ունեն:

Անորոշության զգացման հաղթահարման ուղղությամբ համագործակցություն է ծավալվել ռուս խաղաղապահ ուժերի մասնագետ-հոգեբանների հետ [9]: Արդյունքում, ուսանողներն ու դասախոսները սկսեցին արդյունավետ հաղթահարել սթրեսային հակազդցությունները, դադարեցին վերապրել սարսափի տեսարանները:

Արժեհամակարգային, գոյաբանական խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքում մասնագետները եզրակացրել են, որ առավել արդյունավետ է ռացիոնալիզացիայի ինքնապաշտպանական մեխանիզմի ակտիվացման եղանակով հաղթահարել մեղքի զգացումը, մարդուն հնարավորություն տալ, որ բարձրաձայն արդարանա, թեթևացնի ծանր հիշողությունները: Աշխատանք է կատարվել նաև նրանց հետ, ովքեր իրենց սոցիալական կարգավիճակի վերակառուցման պահանջ են ունեցել, օրինակ, ազատվել են ուսանողության շարքերից: Նման մարդիկ սովորաբար ձգտում ավելի բարձր սոցիալական կարգավիճակի, քան ունեցել են մինչև պատերազմը:

Գրականություն

1. https://www.primeminister.am /hy/interviews-and-press-conferences/ item /2021/01/04// դիտված է 01.04.2021թ,
2. https://hy.wikipedia.org/wiki/ Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ 2020:
3. https://www.facebook.com /gegham.stepanian դիտված է 07.07.2021թ.:
4. **Караяни И.Г., Сыромятников И.В.**, Прикладная военная психология-СПб., Питер, 2006., 480 стр.
5. **Анцупов А.Я, Шипилов А.И.,** Конфликтология, -М., 2001.

6. **Մարգարյան Վ.Հ.**, Մարտական գործունեության հոգեբանություն, Եր. 2009, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 436 էջ:
7. **Մարգարյան Վ.Հ.,** Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը, Եր. 2009, 284 էջ:
8. **Соловьев И.О.**, Постравматический стрессовый синдром: причины, условия, последствия, оказание психологической помощи и психореабилитация-М., 2000.
9. https://armeniasputnik.am/russia/25261787/rusastany-hraparakec-erakoxm-haytararutyan-pashtonakan-pastatuxty.html) դիտված է 10.11.2020թ.:
10. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողով (զեկուցումներ և հոդվածներ), Երևան, 2013թ., 275 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ. Յարամիշյանը:

ՀՏԴ 796/799
Ֆիզիկական դաստիարակություն

Սուսաննա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի վարիչ, մ.գ.թ.

Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի դասախոս

Ռուզաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի դասախոս

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՆ

Սույն հոդվածում ներկայացված են մեր կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքի արդյունքները: Փորձարարական աշխատանքներն իրականացվել են՝ ապացուցելու համար վարկածն առ այն, որ ֆիզիկական վարժություններն ու ակտիվությունը նպաստում են դպրոցականների ներդաշնակ զարգացմանը: Բարելավում են ինչպես ֆիզիկական առողջության ցուցանիշները, այնպես էլ կատարում են հոգեկարգավորիչ գործառույթ:

Բանալի բառեր՝ *դպրոցականներ, անտրոպոմետրիկ ցուցանիշներ, ֆիզիկական զարգացում, ֆիզիկական վարժություններ, ակտիվություն:*

С.Айрапетян, А.Петросян, Р. Григорян

ФИЗИЧЕСКИЕ УПРАЖНЕНИЯ КАК ПРИОРИТЕТНЫЙ ФАКТОР ГАРМОНИЧНОГО РАЗВИТИЯ ШКОЛЬНИКОВ

В данной статье представлены результаты нашей исследовательской работы. Экспериментальная работа была проведена для подтверждения гипотезы о том, что физические упражнения и активность способствуют

гармоничному развитию школьников. Улучшают как показатели физического здоровья, так и выполняют психорегулирующую функцию.
Ключевые слова: *школьники, антропометрические показатели, физическое развитие, упражнения, активность*

S. Hayrapetyan, A. Petrosyan, R. Grigoryan

PHYSICAL EXERCISES AS A PRIORITY FACTOR OF HARMONIOUS DEVELOPMENT OF SCHOOLCHILDREN

This article presents the results of our research work. Experimental work was carried out to confirm the hypothesis that physical exercises and activity contribute to the harmonious development of schoolchildren. They improve both indicators of physical health and perform a psychoregulatory function.
Key words: *schoolchildren, anthropometric indicators, physical development, exercises, activity.*

Անձի ձևավորման և զարգացման գործընթացում, օրգանիզմի բուռն վերակառուցմանը զուգընթաց, փոփոխություններ են տեղի ունենում նաև անձի հոգեհուզական ոլորտում: Անձի ֆիզիկական և հոգեկան զարգացումը պայմանավորված է ինչպես հոգեբանաֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալական գործոններով: Վերջին ժամանակներում այդ գործոնների ձևաորման վրա նշանակալի ազդեցություն ունեցող գործունեության բնագավառների շարքին են սկսել դասել նաև ֆիզկուլտուրան և սպորտը: Գոյություն ունի վարկած, որ դեռահասության տարիքում ֆիզիկական ակտիվությունը և սպորտային պարապմունքները նպաստում են դեռահասների ֆիզիկական զարգացմանը, ֆիզիկական առողջության ամրապնդմանը և հոգեկան կայունությանը՝ նվազագույնին հասցնելով զգացմունքային լարվածությունը[1]:

Շատ հեղինակներ հակված են այն տեսակետին, որ դժվարությունների հաղթահարման ամենազդեցիկ և արդյունավետ մեթոդներից են պարբերաբար, հետևողական և ջանասիրաբար իրականացվող ֆիզիկական վարժությունները:

Ֆիզիկական վարժությունների ֆիզիոլոգիական օգուտները հետևյալն են՝

● արյան և գլխուղեղի օքսիգենացիայի բարձրացում, որը նպաստում է կենտրոնացվածությանն ու կայտառությանը,

---

[1] *Տես՝ **Ֆիրյան Ա., Յարամիշյան Վ.**, Ֆիզիկական վարժությունների և սպորտի ազդեցությունը դեռահասների ազրեսիվ վարքի վրա, 2014թ. էջ 440-441:*

● էնդորֆինների աճի խթանում, որոնք իրենց հերթին բարձրացնում են ինքնազգացողությունը, տրամադրությունը,

●արյան շրջանառության բարելավում,

●մարսողության և սննդի յուրացման բարելավում,

●կենսագործունեության պրոդուկտների հեռացումը մաշկից, աղիներից, թոքերից և այլն,

●խոլեստերինի մակարդակի նվազում,

● արյան ճնշման նվազում,

●ազատում ավելորդ քաշից,

●արյան մեջ շաքարի վերահսկողության բարելավում[1]:

Նկատի ունենալով վերոհիշյալ դիտարկումները՝ դպրոցականների առողջության ամրապնդման և ֆիզիկական ներդաշնակ զարգացման խնդիրը կարելի այժմեական համարել : Հենց այդ խնդիրների լուծմանն էլ միտված է մեր սույն հոդվածը:

Դպրոցականներին՝ ըստ ֆիզիկական ակտիվության գործոնի, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբերի.

ա. երեխաներ, որոնք հաճախում են սպորտային մարզումների,

բ. երեխաներ, որոնց շարժողական ակտիվության հիմնական աղբյուրը ֆիզիկական կուլտուրայի դասաժամերն են:

Ֆիզիկական առողջության մակարդակը կարելի որոշել մի շարք, միմյանց հետ փոխկապված գործոնների համադրությամբ, որոնք բնութագրում են օրգանիզմի ֆիզիկական վիճակը:

Դրանք են՝

1. ֆիզիկական զարգացման մակարդակ (քաշը, հասակը, կրծք ավանդակի շրջանագիծը),
2. օրգան-համակարգերի ֆունկցիոնալ վիճակը (թոքերի կենսական տարողություն, ճնշում, սրտի կծկումների հաճախականություն),
3. ֆիզիկական պատրաստության և շարժողական հատկությունների զարգացման աստիճան (արագաշարժություն, ուժ, ճարպկություն, ճկունություն, դիմացկունություն):

Ինչպես Արցախի Հանրապետությունում, այնպես էլ այլ երկրներում, ազգաբնակչության տարբեր տարիքային խմբերի զանգվածային հետազոտությունների ժամանակ անհատի ֆիզիկական զարգացման գնահատումը հիմնականում իրականացվում է երկու կազմաբանական ցուցանիշներով՝ մարմնի զանգվածի և հասակի: Դպրոցականների ֆիզիկական զարգացման որակական ցուցանիշների վերծանմանը միտված հետազոտությունների արդյունքները և դրանց վերլուծությունը վկայում են,

---

[1] *Տես՝ **Բեգոյան Ա.**, Տագնապամարիչ, 2020թ. էջ 183:*

որ վերջին տարիներին զգալի փոփոխության են ենթարկվել ֆիզիկական զարգացման թե՛ որակական, և թե՛ քանակական ցուցանիշները: Առանձնապես ուշադրության է արժանի այն իրողությունը, որ նկատելի է դարձել աճող սերնդի ֆիզիկական զարգացման մակարդակի նվազման միտումը: Այն հիմնականում արտահայտվում է մարմնի զանգվածի պակասով կամ ավելցուկով, իսկ ավելի հաճախ՝ ֆիզիոմետրիկ ցուցանիշների (դաստակի ուժ, թոքերի կենսական տարողություն և այլն) իջեցմամբ:

Դիտարկումների ընթացքում մեզ հայտնի դարձավ, որ Հայաստանի Հանրապետության տարբեր բնակլիմայական գոտիներում բնակվող դպրոցականների շրջանում ավելացել է դիսհարմոնիկ ֆիզիկական զարգացմամբ երեխաների թիվը:

Թե տղաները, թե աղջիկները ֆիզիոմետրիկ ցուցանիշներով զիջում են 1962թ. իրենց հասակակիցներին:Այդուհանդերձ, ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 21-րդ դարում ծնված երեխաներն ունեն աճի մեծ էներգիա, ուղեղը, սիրտն և այլ օրգաններ ավելի արագ են զարգանում, օրինակ՝ ներկայումս 6 տարեկան տղայի սիրտը կշռում է այնքան, որքան 1901թ. 12 տարեկանինը[1]:

Սակայն այս գործընթացն ընթանում է ֆիզիկական ունակությունների վատթարացման համայնապատկերում, մինչդեռ արագ աճող ներքին օրգաններն ունեն ամբողջ օրգանիզմի ֆիզիկակական ակտիվության կարիքը:

Ստեփանակերտ քաղաքի համար 7 և համար 2 դպրոցներում մեր կողմից դպրոցականների (13-15 տարեկան) շրջանում իրականացվել է ուսումնասիրություն, որը միտված է հետազոտվողների ֆիզիկական զարգացման և օրգանների ու համակարգերի ցուցանիշների բացահայտմանը: Հավաքագրված տվյալները վկայում են, որ այն դեռահասները, որոնք ընդգրկված են սպորտային պարապմունքներում (խումբ 1), իրենց անտրոպոմետրիկ ցուցանիշներով, շնչառական և սրտանոթային համակարգերի աշխատանքի տվյալներով գերազանցում են նրանց, որոնց շարժողական ակտիվության հիմնական աղբյուրը ֆիզկուլտուրայի դասերն են (խումբ 2):

Փորձարարական խմբերում ընդգրկված դպրոցականների ֆիզիկական առողջության մակարդակը ստույգ որոշելու համար հետազոտության առաջին փուլում իրականացվել է դպրոցականների անտրոպոմետրիկ ցուցանիշների գնահատում (մարմնի հասակ, քաշ, կրծքավանդակի

---

[1] *Տես՝ **Հայրապետյան Ս.Ս., Ֆիրյան Ա.Ռ.**, Ֆիզիկական ակտիվության ազդեցությունը դեռահասների առողջության վրա, 2015թ. էջ 164:*

շրջանագիծ): Մարմնի զանգվածի և հասակի հարաբերությունը որոշվել է բելգիացի սոցիոլոգ Ադոլֆ Կետլեի մեթոդով[1]:

Առաջին խմբի համար Կետլեի գործակիցը կազմել է 18,9 կգ/մ², երկրորդ խմբի համար՝ 19,46 կգ/մ²: Ըստ Կետլեի գնահատման սանդղակի՝ այս ցուցանիշները երկու խմբերում էլ գտնվում են թույլատրելիի սահմանում, որը խոսում է բավարար ֆիզիկական զարգացման մասին, իսկ Ռոբինսոնի և Սկիբինսկու գործակիցները, որոնք գնահատում են օրգանիզմի սրտանոթային համակարգի կարգավորման վիճակը և օրգանիզմի կայունությունը հիպոքսիայի հանդեպ, առաջին խումբը Ռոբինսոնի՝ լավ (80,46), Սկիբիսկու՝ միջին (1012) արժեքներով, պատկանում է առողջ խմբին, այն դեպքում, երբ երկրորդ խումբը՝ Ռոբինսոնի և Սկիբինսկու՝ միջին (85,7) և միջինից ցածր (798) արժեքներով, դասվում է ռիսկի խմբին[2]:

Դիտարկման երկրորդ փուլում իրականացված սրտանոթային և շնչառական համակարգերի գործառութային հնարավորությունների ուսումնասիրությունները փաստում են, որ այն դպրոցականները, որոնց շարժողական ակտիվության հիմնական աղբյուրը ֆիզկուլտուրայի դասաժամերն են (խումբ 2), նկատվում են սրտանոթային և շնչառական համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների նվազում և հիպոքսիայի հանդեպ օրգանիզմի ցածր դիմադրողականություն:

Խմբերի միջև առողջության բնութագրիչների տատանումները ակնհայտ են:

Մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ֆիզիկական ակտիվ գործունեությունը մարդու համար այնպիսի կենսական անհրաժեշտություն է, ինչպես քնելը, սնվելն ու հանգիստը: Ֆիզիկական սահմանափակ գործունեությունը խիստ բացասաբար է անդրադառնում դպրոցականների բնականոն և ներդաշնակ զարգացման վրա:

Անկասկած, արդի ժամանակաշրջանում ֆիզիկական կուլտուրան և սպորտը ձեռք են բերել սոցիալական մեծ կարևորություն դրանք ոչ միայն մարդու առողջության ամրապնդման, պահպանման և ֆիզիկական զարգացման արդյունավետ միջոց են, այլև ազդում են բարոյական ու մտավոր հատկանիշների ձևավորմանը:

Ա. Բեգոյանը իր աշխատանքներում նշել է նաև, որ պարբերաբար, հետևողական և ջանասիրաբար իրականացվող ֆիզիկական վարժությունները ամենաազդեցիկ մեթոդներից են՝ գերհույզով

---

[1] Տես՝ ***Адолф Кетле***, *Социальная система и законы, ею управляющие, 2020г. стр 314.*

[2] Տես՝ ***С. Уилкс***, *Математическая статистика:монографиа, стр.421.*

պայմանավորված նյարդայնական մարմնաձևային խանգարումների հաղթահարման գործում:

Պարբերաբար և հետևողական իրականացվող ֆիզիկական վարժություններն անմիջականորեն ազդում են տագնապը պայմանավորող ֆիզիոլոգիական գործոնների վրա:Վարժությունները նպաստում են մկանային լարվածության թուլացմանը, որը մեծապես պատասխանատու է լարվածության և անհանգստության զգացումի համար[1]:

Ֆիզիոլոգիական փոփոխությունները բերում են հետևյալ դրական փոփոխություններին.

- ինքնազգացողության լավացում,
- անքնության նվազում,
- ուշադրության և հիշողության բարելավում,
- դեպրեսիայի նվազում,
- ինքնավստահության բարձրացում:

Հաշվի առնելով վերոգրյալ բոլոր հանգամանքները՝ անհրաժեշտ է հավելյալ աշխատանքներ տանել դպրոցներում՝ սպորտի քարոզման, երեխաներին խմբակային մարզումների ներգրավման գործում:

Գրականություն

1. **Ֆիրյան Ա., Յարամիշյան Վ.**, Ֆիզիկական վարժությունների և սպորտի ազդեցությունը դեռահասների ագրեսիվ վարքի վրա, 2014թ.:
2. **Բեգոյան Ա.**, Տագնապամարիչ, 2020թ.:
3. Հայրապետյան Ս.Ս., Ա Ֆիրյան.Ռ., Ֆիզիկակական ակտիվության ազդեցությունը դեռահասների առողջության վրա, 2015թ.:
4. **Адолф Кетле**, Социальная система и законы, ею управляющие, 2020г.
5. **Уилкс С.,** Математическая статистика:монография.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ. Յարամիշյանը:

[1] ***Ա.Բեգոյան**, Տագնապամարիչ, 2020թ. էջ 183:*

ՀՏԴ 159,96

Հոգեբանություն

Գայանե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
բ/գ.թ., դոցենտ
E-mail: gayanca@yahoo.com

Վիկտորյա ՍԱՐՋԱՆՅԱՆ
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
E-mail: viktorya.sarjanyan@isec.am

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Հոդվածում ներկայացվում է բարձր որակավորում ունեցող մասնագետների աշխատանքը արտակարգ իրավիճակներում, որտեղ առկա են բազում սթրեսային գործոններ և որի պայմաններում գործում են սոցիալ-հոգեբանական հարմարման օրինաչափությունները:
Սթրեսային գործոնների նկատմամբ մասնագետների սթրեսակայունությունը որոշվում է անհատական հոգեֆիզիոլոգիական բնութագրերով, սթրեսի դիմադրության մակարդակով և աշխատանքային փորձով:
Հայտնի է, որ արտակարգ իրավիճակը կարող է դառնալ համոզմունքների, ապրելակերպի և փոփոխությունների մեկնարկային կետ, հոգեվիճակների և զգացմունքների փոփոխության պատճառ:
Արտակարգ իրավիճակներում աշխատող հոգեբանը պետք է օժտված լինի մասնագիտական գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համալիր կիրարկման ընդունակությամբ, սթրեսակայուն և պաշտպանական վարքագծով, ինչը հնարավորություն

կընձեռի նրան մասնագիտական աջակցություն ցուցաբերել դրա կարիքն ունեցող անձանց:
Բանալի բառեր՝ *արտակարգ իրավիճակներ, մասնագիտական զգայություն, սթրես, տագնապ, վախ:*

Г. Григорян, В. Сарджанян

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ЭКСТРЕМАЛЬНЫХ СИТУАЦИЙ

В статье представлена работа высококвалифицированных специалистов в чрезвычайных ситуациях, где присутствуют имманентные стрессогенные факторы и при которых действуют паттерны социально-психологической адаптации.
Стрессоустойчивость специалистов к стрессовым факторам определяется индивидуальными психофизиологическими особенностями, уровнем стрессоустойчивости и стажем работы.
Известно, что чрезвычайная ситуация может стать отправной точкой для изменений убеждений, образа жизни и образа жизни, поводом для изменения психических состояний и чувств.
Психолог, работающий в чрезвычайных ситуациях, должен обладать умением применять профессиональные знания, умения и навыки, стрессоустойчивым и защитным поведением, что позволит ему оказывать профессиональную поддержку нуждающимся в ней людям.
Ключевые слова: *экстремальные ситуации, профессиональная чуткость, стресс, тревога, страх.*

G.Grigoryan, V. Sarjanyan

PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF EMERGENCY SITUATIONS

This article presents the work of highly qualified specialists in emergency situations where there are a huge number of stress factors and in whose conditions there are social-psychological adaptation patterns.
The stress-resistance of specialists is determined by individual socio-physiological descriptions, stress-resistant level, and work experience.
The specialist's susceptibility to stressful factors is determined by individual psychophysiological characteristics, the level of stress resistance, work experience.

It is known that an emergency situation can be the starting point for changes in beliefs, lifestyle, and a cause of changes in psychological states and feelings.
A psychologist working in emergency situations should possess comprehensive knowledge, professional skills, should be stress-resistant, which will enable him to show professional support to those who are in need of it.
Key words : *emergency situations, professional sensitivity, stress, alarm, fear.*

Ներածություն

Արտակարգ իրավիճակների հոգեբանությունը կիրառական հոգեբանության ամենակարևոր բաժիններից է և ներառում է սթրեսային իրավիճակներում մարդու վարքագծի գնահատման, կանխատեսման և օպտիմալացման հետ կապված մի շարք խնդիրներ:

Արտակարգ իրավիճակների հոգեբանությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական կիրառություն, մասնավորապես՝ հոգեբանական աջակցության ուղղություններով, տեխնիկաներով ու մեթոդներով, հոգեշտկմամբ, խորհրդատվությամբ և հոգեթերապիայով:

Արտակարգ իրավիճակների հոգեբանությունը տեսական առումով զգալի ուշադրություն է դարձնում տարբեր հոգեկան երևույթների բացահայտմանը, վերլուծությանը և դասակարգմանը: Պահանջվում է հոգեբանական օգնություն՝ վարքագծի և հոգեսոմատիկ խանգարումների կանխարգելման համար: Այն ենթադրում է հոգեկան վիճակի նորմալացում՝ բացասական փորձի համահարթեցմամբ:

Հոգեբանական օգնության հիմնական խնդիրը անհատի հարմարվողական և փոխհատուցող ռեսուրսների ակտուալացումն է և հոգեբանական ներուժի մոբիլիզացումը՝ արտակարգ իրավիճակների բացասական հետևանքները հաղթահարելու համար[1]:

«Վտանգավոր մասնագիտություններ» ունեցող աշխատողների գործունեության մեջ կան երկու տեսակի պայմաններ, որոնց դեպքում աշխատանքը դառնում է ծայրահեղ.

1) ամենօրյա լարված գործունեություն, որի դեպքում վտանգը ներկայացվում է որպես հնարավոր իրադարձություն,

2) միջադեպեր, որոնց ժամանակ աշխատակիցները բախվում են մարդկային զոհերին և նյութական կորուստներին՝ վտանգելով սեփական կյանքն ու առողջությանը:

---

[1]Տես՝ ***Семенова И.А.,*** *Психология экстремальных ситуаций. Ульяновск: УВАУ ГА(И), 2012. с. 41, 138 с.*

Մարդու հոգեկանի վրա ծայրահեղ գործոնների ազդեցությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունը հանգեցրել է հոգեբանական գիտության և պրակտիկայի նոր ոլորտի ակտիվ զարգացման[1]:

Արտակարգ իրավիճակների հոգեբանությունը հոգեբանական գիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է մարդու կյանքի և գործունեության ընդհանուր հոգեբանական օրինաչափությունները՝ գոյության փոփոխված կամ անսովոր պայմաններում:

Այս ոլորտում հետազոտությունների խնդիրն է բարելավել հոգեբանական ընտրությունն ու պատրաստվածությունը՝ աշխատանքի համար գոյության անսովոր պայմաններում, ինչպես նաև հոգեոգեն գործոնների տրավմատիկ ազդեցություններից պաշտպանվելու համար:

Արտակարգ իրավիճակների հոգեբանության ուսումնասիրության առարկան մարդու վրա ծայրահեղ գործոնների ազդեցության մեխանիզմներն են, արձագանքի և փորձի օրինաչափությունները, հնարավոր հետևանքներն ու դրանք շտկելու ուղիները:

Հատուկ և ծայրահեղ պայմաններում գործունեության հոգեբանական ուսումնասիրությունը կարող է իրականացվել հետևյալ սխեմայով.

ՓՈՐՁ			
ծայրահեղ գործոններ	մարդու հոգեկան վիճակ	անհատականության հոգեկան հատկությունները	գործունեության արդյունք

Արտակարգ իրավիճակների պայմաններում գործունեության ուղղակի ուսումնասիրությունը միշտ չէ, որ հնարավոր է ինչպես բարոյական, էթիկական և տնտեսական նկատառումներից ելնելով, այնպես էլ գործունեության արդյունքների և մարդու վիճակի ամրագրման տեսանկյունից: Ուստի ծայրահեղ պայմաններում մարդու գործունեությունն ուսումնասիրելու հիմնական մեթոդաբանական տեխնիկան գործունեության մոդելավորումն է:[2]

Սթրեսային իրավիճակների մոդելները պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին.

· մոտիվացիոն որոշակի կողմնորոշումների առկայություն, որոնք համարժեք են իրական գործունեության պայմաններին,

---

[1] *Տես՝ Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных / под ред. Ю.С. Шойгу. М.: Смысл, 2007. с. 201, 315 с.*

[2] *Տես՝ **Hakobyan N., Khachatryan A.**, Post-War Anomie in the Field of Management Leadership and Anomie Overcoming Models, - 2022, 6(2), 94-102.*

· սուբյեկտների կողմից պայմանների և առաջադրանքների ընկալում՝ որպես իրականություն,

· բարոյական և էթիկական չափանիշների պահպանում:

Արտակարգ իրավիճակներն առաջանում են հանկարծակի՝ անձի կողմից սուբյեկտիվորեն ընկալվելով որպես կյանքի, առողջության, անձնական ամբողջականության և բարեկեցության սպառնալիք[1]:

Արտակարգ իրավիճակների ծայրահեղությունը բնութագրվում է վերահսկողության կորստով: Իրավիճակի ծայրահեղությունը որոշվում է այն գործոններով, որոնց մարդը դեռ հարմարված չէ և չի կարող գործել դրանց համապատասխան: Ծայրահեղության աստիճանը որոշվում է առաջադրված գործոնների ուժով, տևողությամբ, նորությամբ և դրսևորմամբ:

Սակայն իրավիճակի ծայրահեղության աստիճանը որոշվում է ոչ այնքան նրա վտանգավորությամբ, որքան մարդկանց վերաբերմունքով՝ կատարվածի նկատմամբ: Յուրաքանչյուր անձի կողմից նույն իրավիճակի ընկալումն անհատական է, ինչի կապակցությամբ «իրավիճակի ծայրահեղության» չափանիշը, անհատի ներքին, հոգեբանական արձագանքն է[2] :

Որպես ծայրահեղության որոշիչ կարելի է դիտարկել հետևյալ գործոնները.

1. տարբեր հուզական ազդեցություններ՝ կապված իրավիճակի վտանգի, դժվարության, նորության և պատասխանատվության հետ,
2. անհրաժեշտ տեղեկատվության բացակայություն կամ հակասական տեղեկատվության ակնհայտ ավելցուկ,
3. մտավոր, ֆիզիկական և հուզական սթրեսի առկայություն,
4. կլիմայական անբարենպաստ պայմանների ազդեցությունը՝ շոգ, ցուրտ, թթվածնի պակաս և այլն,
5. սովի և ծարավի առկայություն:

Արտակարգ իրավիճակները կամ այլ կերպ ասած, առողջության և կյանքի կորստի սպառնալիքը, զգալիորեն խախտում են մարդու հիմնական անվտանգության զգացումը և այն համոզմունքը, որ կյանքը կազմակերպված է որոշակի կարգի համաձայն և կարող է վերահսկվել և հանգեցնել տրավմատիկ սթրեսների, ինչպես նաև այլ նևրոտիկ և հոգեկան խանգարումների:

---

[1] *Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных / под ред. Ю.С. Шойгу. М.: Смысл, 2007. с. 198, 315 с.*

[2] ***Hakobyan N., Khachatryan A., Vardanyaan N.**, Marginality and Ethno-Cultural Environment, - Paradigmata Poznani, 2018, 3, 44-51.*

Հոգեբանական ծայրահեղ իրավիճակը կարելի է սահմանել հետևյալ տեսանկյունից.

· **Խթան՝** որպես անձի վրա ազդեցության արտանորմատիվ օրինաչափություն՝ առաջացնելով նրա մոտ որոշակի ռեակցիա։

· **Ռեակտիվ՝** որպես իրավիճակ, որտեղ ազդեցության պահանջը գերազանցում է անհատի հարմարվողական ներուժը, ռեսուրսները կամ հնարավորությունները։

· **Անձնավորված՝** որպես իրավիճակ, որը մեկնաբանվում, գնահատվում ընկալվում է որպես գերվտանգավոր։

· **Ինտերակտիվ՝** որպես գործոնների և անհատականության ամբողջական գործառույթ։

· **Գործարքային՝** որի ժամանակ արտակարգ իրավիճակը բնութագրվում է որպես սպառնացող գործոնների փոխազդեցության իրավիճակ[1]։

Հոգեբանական սահմանումը հնարավորություն չի տալիս տարբերակել առօրյա ծայրահեղությունը ոչ առօրյա ծայրահեղությունից։ Ծայրահեղ իրավիճակների շարքին դասվում են այն աղետները, կյանքին վտանգ սպառնացող այն արտակարգ իրավիճակները, որոնք շտապ պահանջում են լուծում, աղետի կանխարգելում, հետևանքների վերացում, ինչպես նաև օգնություն աղետից տուժածներին։[2]

Գոյություն ունեն արտակարգ իրավիճակների մի շարք դասակարգումներ՝ ըստ տարբեր չափանիշների։ Այդ չափորոշիչների շարքին դասվում են.

- ըստ կոնֆլիկտի աստիճանի
- ըստ տարածման արագության
- բաշխման առումով
- ըստ ծագման աղբյուրի

Ըստ կոնֆլիկտի աստիճանի՝ արտակարգ իրավիճակները լինում են *կոնֆլիկտային և առանց կոնֆլիկտների*. օրինակ՝ ռազմական բախումներ, տնտեսական ճգնաժամեր, սոցիալական պայթյուններ, ազգային և կրոնական հակամարտություններ, մոլեգնող հանցագործություն, ահաբեկչական գործողություններ, արտակարգ իրավիճակներ առաջացնող տեխնոգեն, բնապահպանական և բնական երևույթներ

Ըստ տարածման արագության արտակարգ իրավիճակները լինում են՝

---

[1] Տես՝ *Психология. Словарь / Под общ. ред.* ***А.В. Петровского, М.Г. Ярошевского****. М.: Политиздат, 1990. с. 345, 494 с.*

[2] Տես՝ ***Hakobyan N., Dabaghyan A., Khachatryan*** *A., Strategies of Post-War Anomie's Overcoming in the Field of Social Interactions and Business, - 2022, 6(3), 105-112.*

· *հանկարծակի*՝ տեխնածին վթարներ, ահաբեկչական հարձակումներ, բնական աղետներ (երկրաշարժեր, հրաբխային ժայթքումներ),

· *արագ տարածվող*՝ ռազմական, կրոնական և ազգային հակամարտություններ, բնական աղետներ (տորնադոներ, ցունամիներ, անտառային հրդեհներ, ձնահոսքեր),

· *չափավոր տարածվող*՝ վարակիչ հիվանդություններով մարդկանց զանգվածային հիվանդացումներ (համաճարակներ), գյուղատնտեսական բույսերի զանգվածային ոչնչացում հիվանդությունների կամ վնասատուների կողմից, բնական աղետներ (ջրհեղեղներ, երաշտ),

· *դանդաղ տարածում*՝ ջրային ռեսուրսների և կենսոլորտի վիճակի փոփոխություն, հողի դեգրադացիա, չվերականգնվող բնական ռեսուրսների սպառում, մթնոլորտի օզոնային շերտի ոչնչացում, ջրային ռեսուրսների սպառում, կենդանական և բուսական տեսակների վերացում և այլն՝ մարդու գործունեության արդյունքում:

Բաշխման առումով՝

· *Տեղական*՝ արտակարգ իրավիճակներ, որոնց հետևանքով տուժել է 10-ից ոչ ավելի մարդ, կամ խախտվել են ոչ ավելի, քան 100 մարդու կենցաղային պայմաններ, կամ նյութական վնասը կազմել է նվազագույն աշխատավարձի 1000- ից ոչ ավել մասը:

· *Տեղային*՝ արտակարգ իրավիճակներ, որոնց հետևանքով տուժել է ավելի քան 10, բայց ոչ ավելի, քան 50 մարդ, կամ խախտվել են 100-ից ավելի, բայց ոչ ավելի, քան 300 հոգու կենցաղային պայմաններ, կամ նյութական վնասը կազմել է 1000-ից ավելի, բայց ոչ ավել 5000-ից:

· *Տարածքային*՝ արտակարգ իրավիճակներ, որոնց հետևանքով տուժել է ավելի քան 50, բայց ոչ ավելի, քան 500 մարդ, կամ խախտվել են ավելի քան 300, բայց ոչ ավելի, քան 500 հոգու կենցաղային պայմանները, կամ նյութական վնասը 5000-ից ավելի է, բայց ոչ ավելի քան 0,5 միլիոն նվազագույն աշխատավարձ այն օրը, երբ տեղի է ունեցել արտակարգ դրությունը:

· *Տարածաշրջանային*՝ արտակարգ իրավիճակներ, որոնց հետևանքով տուժել է ավելի քան 50, բայց ոչ ավելի, քան 500 մարդ, կամ խախտվել է ավելի քան 500, բայց ոչ ավելի, քան 1000 մարդու կենցաղային պայմանները, կամ նյութական վնասը կազմել է ավելի քան 0,5 միլիոն:

· *Դաշնային*՝ արտակարգ իրավիճակներ, որոնց հետեւանքով տուժել է ավելի քան 500 մարդ, կամ խախտվել են ավելի քան 1000 մարդու կենցաղային պայմանները, կամ նյութական վնասը կազմել է ավելի քան 5 մլն:

· *Միջսահմանային՝* արտակարգ իրավիճակներ, որոնց վնասակար գործոնները դուրս են գալիս սահմաններից, կամ արտակարգ դեպքերը տեղի են ունեցել արտերկրում, բայց դրանց վնասակար գործոնները տարածվել են նաև այլ երկրի սահմաններում:

Ըստ ծագման աղբյուրի՝

· *Տեխնածին արտակարգ իրավիճակներ՝* տրանսպորտային պատահարներ և աղետներ, հրդեհներ, պայթյուններ կամ դրանց սպառնալիք, վտանգավոր քիմիական, ռադիոակտիվ, կենսաբանական նյութերի արտանետումներով սպառնալիքներ, կառույցների և շենքերի ավերածություններ, ինժեներական ցանցերի վթարներ և այլն:

· *Բնական արտակարգ իրավիճակներ, բնական աղետներ՝* վտանգավոր երկրաբանական, օդերևութաբանական, հիդրոլոգիական ծովային և քաղցրահամ ջրերի երևույթներ, հողի կամ ստորգետնյա դեգրադացիա, բնական հրդեհներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, ցունամիներ, հրաբխային ժայթքումներ, ժայռերի անկումներ, սողանքներ, ձնահոսքեր, սելավներ, փոթորիկներ, տոռնադոներ, հորդառատ հրդեհներ, տոռնադոներ, երաշտ և բնական պատճառներով առաջացած այլ երևույթներ:

· *Էկոլոգիական և կենսաբանական արտակարգ իրավիճակներ՝* վարակիչ հիվանդություններով մարդկանց զանգվածային համաճարակներ, գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ կամ վնասատուների կողմից գյուղատնտեսական բույսերի զանգվածային վնաս, ջրային ռեսուրսների և կենսոլորտի վիճակի փոփոխություն, նստեցում, սողանքներ, հողի դեգրադացիա, չվերականգնվող բնական ռեսուրսների սպառում:

· *Սոցիոգեն արտակարգ իրավիճակներ՝* ահաբեկչություն, պատանդառություն, անկարգություններ, ռազմական գործողություններ:

Այսպիսով, յուրաքանչյուր իրավիճակ ունի իր առանձնահատկությունը և յուրաքանչյուր մարդու կողմից բնութագրվում և ընկալվում է յուրովի: Շատ առումներով, այս փորձի արդյունավետության կապված է հենց անձի անհատականությունից, նրա ներքին ռեսուրսներից և հաղթահարման մեխանիզմների հետ[1]:

Եզրակացություն

Արտակարգ իրավիճակների հոգեբանության արդի խնդիրների շարքին պատկանում է աղետների հոգեբանական հետևանքների

---

[1] *Տես՝ Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных / под ред. Ю.С. Шойгу. М.: Смысл, 2007. с. 209, 315 с.; Hakobyan N., Khachatryan A., Socio-Cultural Interpretation pf Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues of Pedagogy and Psychology, 2020, 17(1), 65-82.*

ուսումնասիրությունը, դրա ազդեցությունը բնակչության հոգեկան առողջության վրա և հետևանքների՝ նվազագույնի հասցնելու մեթոդների մշակումը:

Արտակարգ իրավիճակներ են առաջանում մարդկային կյանքի բոլոր ոլորտներում. յուրաքանչյուր մարդ իր կյանքում հայտնվում է մի շարք իրավիճակների մեջ, որոնք համարվում են ոչ սպասելի և չպլանավորված նրա համար: Օրինակ՝ հրշեջները մասնագետներ են, որոնց մասնագիտական պարտականությունը դժվարության մեջ գտնվող մարդկանց օգնելն է: Կարևոր է, որ մասնագետը, ով հանդիպում է ողբերգական իրավիճակ ապրող մարդու, իմանա, թե ինչ է կատարվում նրա հետ և ինչպես կարող է օգնել նրան:

Մասնագիտական գործունեության դժվարին պայմաններում մասնագետի համար նույնքան կարևոր է կարողանալ պահպանել սեփական ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

Այսպիսով, արտակարգ իրավիճակներին նվիրված հոգեբանության ընթացքում բացահայտվում են երկու տեսական ասպեկտներ, որոնք թույլ են տալիս հասկանալ այդ իրավիճակների առանձնահատկությունները, դրանց նշանակությունը մարդու համար, ինչպես նաև գործնական, կիրառական ասպեկտները. տրավմատիկ սթրեսի հաղթահարման հատուկ ուղիներ և դրանց մասնավոր ձևեր, դիտարկվում է այնպիսի վարքագիծ, որը թույլ է տալիս հաղթահարել արտակարգ իրավիճակը:

Տրվում են հատուկ առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել այն մասնագետներին, որոնց մասնագիտական գործունեությունը կապված է տուժածներին օգնելու և արտակարգ իրավիճակների սեփական փորձի և նրանց արդյունավետ գործունեության պլանավորման հետ:

Գրականություն

1. **Маклаков А.Г.**, Психология и педагогика. СПб.: Питер, 2005. 464 с.
2. Психология. Словарь / Под общ. ред. А.В. Петровского, М.Г. Ярошевского. М.: Политиздат, 1990. 494 с.
3. Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных / под ред. Ю.С. Шойгу. М.: Смысл, 2007. 315 с.
4. **Семенова И.А.**, Психология экстремальных ситуаций. Ульяновск: УВАУ ГА(И), 2012. 138 с.
5. **Hakobyan N., Khachatryan A.**, Socio-Cultural Interpretation pf Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues of Pedagogy and Psychology, 2020, 17(1), 65-82.

6. **Hakobyan N., Dabaghyan A., Khachatryan A.**, Strategies of Post-War Anomie's Overcoming in the Field of Social Interactions and Business, - 2022, 6(3), 105-112.
7. **Hakobyan N., Khachatryan A., Vardanyaan N.**, Marginality and Ethno-Cultural Environment, - Paradigmata Poznani, 2018, 3, 44-51.
8. **Hakobyan N., Khachatryan A.**, Post-War Anomie in the Field of Management Leadership and Anomie Overcoming Models, - 2022, 6(2), 94-102.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը։

ՀՏԴ 159.6

Հոգեբանություն

Արայիկ ՖԻՐՅԱՆ
ԱրՊՀ ՖԴ և ՆԶՊ ամբիոնի ավագ դասախոս, հ.գ.թ.
E-mail: ara.firyan@mail.ru

Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի դասախոս
E-mail: petrosyanartur11@asu.am

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդվածում շոշափվում են ուսումնական գործունեության հուզական բաղադրիչին վերաբերող հարցեր: Առաջադրված հարցերը մեկնվում են մի քանի դիտանկյունից: Եթե դրանք դիտարկենք տրանզակտ վերլուծության հայեցակարգի շրջանակում, ապա կարող ենք տեսնել արծարծվող խնդիրների վերաբերյալ՝ երեխա-Ես-ի (աշակերտի), ծնող-Ես-ի (ուսուցչի) և մեծահասակ-Ես-ի (հոգեբանի) դատողությունները:

Բանալի բառեր՝ *դպրոց, աշակերտ, հույզեր, ուսումնական գործունեություն:*

А. Фирян, А. Петросян

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ИНТЕРПРЕТАЦИИ УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

В статье рассматриваются вопросы, связанные с эмоциональной составляющей учебной деятельности. Выдвинутые вопросы интерпретируются с нескольких аспектов. Если рассматривать их в контексте концепции трансактного анализа, то можно увидеть суждения по затронутым вопросам: ученика (ребенок-Я), учителя (родитель-Я) и психолога (взрослый-Я).

Ключевые слова: *школа, ученик, эмоции, учебная деятельность.*

A.Firyan, A. Petrosyan

A PSYCHOLOGICAL INVESTIGATION OF THE LEARNING PROCESS

The article addresses several issues related to the emotional component of the learning process. The questions under

discussion are considered from a variety of aspects. Specifically, if they are given consideration in the context of transactional analysis, the following observations are to be made: pupil (child-Ego), teacher (parent-Ego), and psychologist (adult-Ego).
Key words: *school, pupil, emotions, learning activities.*

Ներածություն

Դպրոցում, բացասական առումով, փոփոխության են ենթարկվում «ուսուցիչ-աշակերտ» հարաբերությունները. ուսուցչի և աշակերտի միջև անկեղծ, իրական հուզական կապերի ձևավորման փոխարեն ի հայտ են գալիս «մասնավոր ուսուցիչ-պոտենցիալ աշակերտ» հարաբերությունները, ուսուցչի կողմից երեխային քաջալերելը, աջակցելը, նրա կյանքով և խնդիրներով հետաքրքրվելը, առանձին դեպքերում, մարդկային հարաբերությունների հարթությունից տեղափոխվում են ֆինանսական դաշտ: Մինչդեռ, ինչպես և ընտանիքում, ուսուցչի և աշակերտի միջև հուզական ջերմ հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն երեխայի զարգացման, ինքնագնահատականի ձևավորման, որպես անհատ կայացման համար: Ուսուցչի անձով է հաճախ պայմանավորված դպրոցում երեխայի առաջադիմությունը. առարկայով երեխայի հետաքրքրվածությունը մեծանում է, եթե այն դասավանդող ուսուցչի և երեխայի միջև կա փոխադարձ հարգանք, համակրանք, դրական տրամադրվածություն[1]

Մեփական դիտարկումներից կարող ենք ենթադրել հետևյալը՝ մանկավարժներից շատերի մոտ արմատավորվել է այն հայեցակետը, որ երեխաները պարտավոր են իրենց սիրել կամ առնվազն հարգել: Մինչդեռ, անգամ մոր հանդեպ տածած սերը էգոիստական հենք ունի: Երեխան սիրում է մորը, քանզի առանց նրա խնամքի չի կարող պահպանել իր գոյությունը: Հետևաբար, ուսուցիչը կարող է ունենալ ազդեցության լծակ, այն դեպքում, երբ կարժանանա աշակերտի վստահությանը և կվաստակի ազդելու իրավունքը:

Հիմնական դիտարկումները և դրանց մեկնությունը

Ես երկու անգամ եմ դպրոց մտել: Նախ՝ որպես աշակերտ, ապա՝ որպես ուսուցիչ: Հետևաբար, հնարավորություն եմ ունեցել կրթական գործունեությանը հարող երևույթներին երկու դիտանկյունից նայելու: Երբ առաջին անգամ գնացի դպրոց, 7 տարեկան էի: Դպրոցում աշխույժ և անհոգ մթնոլորտ էր տիրում, բայց ուսերիցս կախված աշակերտական ծանր

---

[1] *Տես՝ **Մարգարյան Ա.Ռ.**, Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Հայրապետ», 2017թ., էջ 256:*

պայուսակը կարծես ակնարկում էր, որ պետք չէ շատ ուրախանալ, ինձ դեռ շատ ծանր օրեր են սպասում: Թեպետ հարևանությամբ ավելի ճոխ ու շքեղ շինություններ կային, բայց նույնիսկ դրանց համայնապատկերին դպրոցն առանձնանում էր իր գեղեցկությամբ: Տարիների հետ միայն ինձ հայտնի դարձավ, որ գեղեցկությունը կախվածության մեջ է իր առաքելությունից: Հիշում եմ՝ ինչպես ծնողներիս ուղեկցությամբ մտա դասարան, որտեղ մեզ դիմավորեց մեր դասվարը: Իր ներածական խոսքում նա, չգիտեմ ինչու, ասաց, որ իբր այսուհետ դպրոցը մեր երկրորդ տունն է, իսկ ինքը՝ մեր երկրորդ մայրիկը: Վերջին միտքը՝ կապված երկրորդ մայրիկի հետ, ներսումս անհասկանալի ու անծանոթ ապրումներ արթնացրեց. փաստորեն այսպես է սկսվում 7 տարեկանի ճգնաժամը, իսկ այդ միտքը նշված ճգնաժամի նորագոյացությունն է, որը Լ. Վիգոտսկին չնկատեց կամ չցանկացավ նկատել: Ծանոթությանը հաջորդած օրերը որոշ ծնողների մոտ խորհրդանշվեցին որպես իրենց երեխաների համար արևի տակ տեղ զբաղեցնելու շրջան: Դե, նկատի ունեմ, որ նրանք անում էին ամեն ինչ, միայն թե իրենց երեխաները գրատախտակին մոտ նստարաններին հանգրվանեն:

Երբ այս խառնակ շրջանն ավարտվեց, սկսեցինք նորմալ դաս անել: Ընդհանուր առմամբ, ինձ դուր եկավ սովորելը: Լավ ուսուցիչներ ունեի: Սակայն հետադարձ հայացք ձգելով ուսումնառությանս տարիներին՝ նկատեցի, որ այդ ընթացքում մեզ հազվադեպ էին հարցնում մեր որպիսության մասին, հետաքրքրվում մեր տրամադրությամբ, հարցնում՝ ինչ ենք զգում՝ այս կամ այն երևույթի հետ կապված: Այս առիթով Վարդգես Պետրոսյանը շատ դիպուկ է արտահայտվել. «Մեզ սովորեցրել են բազմապատկել, բայց ոչինչ չեն ասել բաժանման տխրության մասին»[1]: Այս երևույթն իր արտահայտությունն ունի ոչ միայն դպրոցում, այլև մեր ազգի կոլեկտիվ մոտեցման մեջ: Մեզ վաղ տարիքից սովորեցնում են ուշադրություն չդարձնել սեփական հույզերի վրա, որոշ դեպքերում էլ ընդհանրապես մղում են դրանց ճնշմանը: Երևի նկատել եք, որ երբ տղա երեխա է լացում, առաջինը, ինչ անում ենք, ասում ենք՝ մի՛ լացիր, տղաները չեն լացում, աղջիկների դեպքում, նույն տրամաբանության շրջանակում, մեկ այլ խոսույթ ենք գործածում՝ բա տենց սիրուն աղջնակը լաց կլինի՞, մի՛ լացիր, քեզ չի սազում: Ոչ մեկին կարծես չի հետաքրքրում այն հույզը, որը մարդուն կարող է ստիպել հեկեկալ կամ ծիծաղել: Բայց ամեն բան, այդ թվում՝ ուսումնական գործունեությունը, հույզերից է կախված: Հիմք ընդունելով «Եռակի ուղեղի» տեսությունը՝ կարող ենք համարձակորեն պնդել, որ Լիմբիկ համակարգը, որը պատասխանատու է մեր ապրումների հետ կապված հույզերի համար, ձևավորվել է շատ ավելի վաղ, քան

[1] *Տես՝* ***Պետրոսյան Վ.,*** *Ապրած և չապրած տարիներ, 1967թ.:*

նեոկորտեքսը, որը պատասխանատու է սովորելու, կշռադատելու, հիշելու, իմացական բարդ վերլուծություններ անելու համար[1] [2]:

Երբեմն էլ մարդիկ, որոնք գրական ու պատմական պերսոնաժների օրինակով անկեղծության և ազնվության դասեր էին տալիս մեզ, կարող էին փորձ անել մեր մեջ արթնացնելու ինչ-որ ստանդարտ հուզական արձագանք՝ անտեսելով կամ սխալ համարելով մեր իրական զգացմունքները: Մինչդեռ կարելի սխալ մտածել, սխալ հասկանալ, բայց երբեք չի կարելի սխալ զգալ:

Ճիշտ է, երբեմն դպրոցում էլ են անդրադառնում զգացմունքներին: Դպրոցը ամենալավն է վերծանում ամոթի զգացումը: Այդ բառով շատ նախադասություններ ենք լսել՝ Ամո՛թ քեզ, նստի՛ր: Ամո՛թ քեզ, դո՛ւրս գնա դասարանից: Ամո՛թ քեզ, երկու...

Շատ դեպքում ուսուցիչները «տաբուներ» են սահմանում աշակերտների համար՝ չի կարելի դասերից փախչել, չի կարելի կռվել, չի կարելի հայհոյել, չի կարելի ծխել, ոգելից խմիչքներ օգտագործել, չի կարելի խոսել, երբեմն անգամ չի կարելի սեփական կարծիքն ունենալ, և այսպես բազմաթիվ տաբուներ ու չիկարելիներ, որոնց գոյացման պատճառն, այն է, որ մանկավարժական կոլեկտիվը շատ վատ է պատկերացնում՝ ինչ պետք է անել աշակերտների կողմից այդ «չիկարելիների» խախտման դեպքում: Իրականում այդ «չիկարելիները» թեթևացնում են ուսուցչի աշխատանքը:

Երբ երկրորդ անգամ գնացի դպրոց, 22 տարեկան ամաչկոտ տղա էի: Դպրոցականներին երկրորդ պապա լինելու համար կարծես շատ էի երիտասարդ: Երկրորդ մամայի տարբերակն էլ գլխովս անցավ, բայց հետո մտածեցի, որ այդ մեկն արդեն շատ դաժան կլինի երեխաների հանդեպ: Եվ որոշեցի նրանց համար ընկեր լինել. չէ՞ որ մեզ հենց այդպես էլ դիմում են՝ *ընկեր*....: Փաստորեն, ամեն ինչ վաղուց որոշված էր, և մնում էր միայն համապատասխանել: Ընկեր լինելը և՛ ճիշտ էր, և՛ հարմար. եթե մի օր աշակերտները որոշեին կյանքի կոչել բոլոր ժամանակների իրենց սպառնալիքը (խոսքը դպրոցը պայթեցնելու կամ ուսուցչանոցը կրակ տալու մասին է), դուք հաստատ կլինեք այն ուսուցիչների շարքում, որոնք կզգուշացվեն սպասվող արհավիրքի մասին:

Իսկ ինչ վերաբերում է գնահատմանը, որոշեցի, որ երբ ստիպված լինեմ անբավարար գնահատական նշանակել, երբեք այն չեմ ուղեկցի. «ամո՛թ քեզ» նախատական արտահայտությամբ, որպեսզի իմ գնահատականը չվերածվի երեխաների ինքնագնահատականի:

---

[2] ***Бессел ван дер Колк***, *Тело помнит все, 2020г. стр-19*

[2] *https://hy.warbletoncouncil.org/teoria-cerebro-triuno-maclean-6393*

Սեփական դիտարկումներից կարող ենք ենթադրել, որ «ամենավատ» աշակերտները, որոնց դպրոցը մերժում է, հաճախ ցուցաբերում են մարդկային հրաշալի հատկանիշներ՝ խորաթափանցություն, իմաստություն, արդարամտություն, քաջություն, ստեղծագործական ունակություն: Դա միանգամայն շփոթեցնում է: Նրանք դա անում են այնքան հաճախ, որ սկսում ես մտորել՝ հնարավո՞ր է արդյոք, որ դպրոցում նման որակներն ամենևին պահանջված չեն, ավելին, դպրոցը դրանք ճնշում է՝ երեխաներից բոլորովին այլ բան պահանջելով:

Անհրաժեշտ է ավելի շատ ժամանակ տրամադրել երեխաներին՝ ոչ թե նրանց վիրավորելու, պատժելու և նախատելու, այլ նրանց հետ աշխատելու, նրանց խնդիրներով և անհանգստություններով անկեղծ տարվելու համար: Աշակերտի հանդեպ ուսուցչի վերաբերմունքը չպիտի պայմանավորված լինի աշակերտի բարձր կամ ցածր առաջադիմությամբ, լավ կամ բավարար վարքագծով, պասիվությամբ կամ չարաճճիությամբ: Չէ որ, սեփական երեխաներին մենք սիրում ենք առանց որևէ նախապայմանների ու պահանջների:

Որպես վերջաբան

Հիշողությանս մեջ վառ է մնացել մի դիպված դպրոցական տարիներից: Առաջին դասարանում էինք սովորում: Աշնանային անձրևոտ օր էր: Մեր դասարանի Ռուբենը, նայելով պատուհանից դուրս տեղացող անձրևին, ասաց, որ իր հայրը կարող է քայլել անձրևի տակ առանց թրջվելու. նա կարողանում է անցնել երկնքից թափվող կաթիլների արանքով: Եվ հավաստիացրեց՝ երբ մեծանա, ինքը նույնպես կհաջողի այդ գործում:

Նկատե՞լ եք, թե ինչ հավատով ու սպասումներով ենք լցված կյանքի նկատմամբ, երբ դեռ փոքր ենք: Հավատում ենք, որ կյանքը անպայման կընթանա մեր սիրած հեքիաթների սցենարով, որտեղ բարու և չարի կռիվներում միշտ հաղթում է առաջինը: Հավատում ենք արդարությանն ու ազնվությանը, թեև քիչ բան գիտենք դրանց մասին: Վստահ ենք, որ լավ բժիշկ կդառնանք ու կամոքենք մեր ծնողների բոլոր ցավերն ու հիվանդությունները: Կապրենք անհոգ ու երջանիկ կյանքով :

Ո՞վ կամ ի՞նչը կարող է մեզ խանգարել: Նույնիսկ անձրևները մեզ չեն թրջի:

Կարծում եմ՝ դպրոցն այն վայրն է, որտեղ կարող են օգնել իրագործելու երազանքները, բայց և կարող են սպանել դրանք:

Ռուբենը այդպես էլ չսովորեց քայլել անձրևի տակ առանց թրջվելու:

Գրականություն

1. Մարգարյան Ա.Ռ., Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան Հայրապետ 2017թ.:
2. **Պետրոսյան Վ.,** «Ապրած և չապրած տարիներ», 1967թ.:
3. **Бессел ван дер Колк**, Тело помнит все, 2020г., стр 19.
4. https://hy.warbletoncouncil.org/teoria-cerebro-triuno-maclean-6393

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Ըարամիշյանը:

ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Արայիկ ՖԻՐՅԱՆ
ԱրՊՀ ՖԴ և ՆԶՊ ամբիոնի ավագ դասախոս, հ.գ.թ.
E-mail: ara.firyan@mail.ru

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների քննությունը բացահայտում է սահմանամերձ գոտու ազգաբնակչության կենսակայունության մակարդակի արդիականացման հիմնախնդիրը: <<Հոգեբանական պաշտպանական մեխանիզմ>> - <<կենսակայունության մակարդակ>> - <<արժեհամակարգ>> շղթայի բաղադրատարրերը գտնվում են փոխազդեցության մեջ: Այլ խոսքերով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հնարավոր է ներկայացնել ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների միջոցով և դիտարկել արժեքային համակարգի կառուցվածքում:

Բանալի բառեր՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմ, արժեհամակարգ, կենսակայունության ցուցանիշ, հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդել:

А.Фирян

ФУНКЦИОНАЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА КУМУЛЯТИВНОЙ МОДЕЛИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ

Рассмотрение механизмов психологической защиты раскрывает проблему модернизации уровня устойчивости жизнедеятельности национального населения приграничной зоны. Все компоненты «Механизма психологической защиты» находятся во взаимодействии. Иными словами, механизмы психологической защиты

можно представить через показатели жизнестойкости населения и проследить их в структуре системы ценностей.

Ключевые слова: психологический защитный механизм, система ценностей, индекс биоустойчивости, кумулятивная модель психологической защиты.

A.Firyan

FUNCTIONAL CHARACTERISTICS OF THE CUMULATIVE MODEL OF PSYCHOLOGICAL PROTECTION

Consideration of the mechanisms of psychological protection reveals the problem of modernization of the level of sustainability of the life of the national population of the border zone. All components of the "Psychological Defense Mechanism" are in interaction. In other words, the mechanisms of psychological protection can be represented through indicators of the resilience of the population and can be traced in the structure of the value system.

Key words: psychological defense mechanism, value system, bio-resilience index, cumulative model of psychological defense.

Հետևելով մի շարք հեղինակների կողմից ներկայացված ներգրավվածության, վերահսկողության և վտանգի ստանձնման կենսակայունության ցուցանիշների տարբերակման փորձին՝ ներկայացնենք մեր դիտարկումները այդ ցուցանիշների և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների փոխկապվածության մասին[1]:

Մադդիի կողմից տրվել է ներգրավվածության հետևյալ սահմանումը՝ որպես համոզմունք առ այն, որ ներկա սոցիալական գործունեության մեջ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս անձին գտնելու հետաքրքիր և սոցիալապես արժևորվող որևէ զբաղմունք[2]: Այսինքն՝ ներգրավվածության ցուցանիշի առկայության դեպքում անձը հաճույքով է

---

[1] *Տես՝ **Ղարագուլյան Ա. Լ.**, Ազատության հիմնախնդիրը փոխակերպվող հասարակությունում, անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ, պրակ 5, Երևան, 2008, էջ 23-35;*
*Տես՝ **Hakobyan N., Khachatryan** A., Structure of Person's Psychological Resources in Emergency Situations (April 4, 2018). Proceedings of the 9th International RAIS Conference on Social Sciences and Humanities, Available at SSRN: https://ssrn.com/abstract=3179044 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3179044*

[2] *Տես՝ **Maddi, S.R**. Personality theories: a comparative analysis Homewood, Ill: Dorsey Press, 1968.*

իրականացնում իր սոցիալական գործունեությունը և բացի դրանից՝ իրեն մասնակից և պատասխանատու է զգում հանրային կայունության ապահովման գործում: Այս խնդրին անդրադարձել են նաև մի շարք հեղինակներ, որոնք ներկայացրել են հիմնախնդրի առանձնահատկությունները սոցիալական անոմիայի համատեքստում[1]:

Վերահսկման ցուցանիշը ներկայացնում է կենսակայունության ընդհանուր համակարգի կամային բաղադրիչը, այն է՝ անձի կողմից ձևավորվում է համոզմունք առ այն, որ ինքը ունակ է դիմակայելու արտաքին միջավայրի անցանկալի կամ շրջադարձային պայմաններին և կառուցելու գործունեության սեփական ռազմավարությունը: Նշենք Ջ. Ռոթերի տեսության հետ այս ցուցանիշի հարակից լինելը: Այն դեպքում, երբ Ջ. Ռոթերը ներկայացնում է վերահսկողության արտաքին և ներքին ուղղվածության տարատեսակները (լոկուսները)՝ որպես անձի գործունեության արդյունքների նկատմամբ արտաքին (սոցիալական) կամ ներքին (սեփական) ուժերի պատասխանատվության դրսևորում, կենսակայունության համակարգի բաղադրիչ հանդիսացող վերահսկման ցուցանիշն իր մեջ է ներառում այդ երկու գաղափարները միաժամանակ: Մանրամասնենք այդ դիտողությունը:

Ջ. Ռոթերի թեզը միավորում է վերհսկողության և պատասխանատվության եզրույթները, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում առանձնացնել դրանց արտաքին և ներքին տեսակները, իսկ մեր կողմից մատնանշվող վերահսկողության եզրույթը ներկայանում է, առաջին հերթին, անձի կամային դրսևորումներոով, ինչի արդյունքում կարելի է շեշտը դնել անձի հոգեբանական կայունության՝ որպես կենսակայունության արտահայտություններին և վերահսկողության գաղափարը դիտարկել անձի արժեքային համակարգի ենթատեքստում[2]:

Վտանգի ստանձնման ցուցանիշն առավել արդիական է սահմանամերձ գոտու ազգաբնակչության կենսակայունության բնութագրման տեսանկյունից: Այդ ցուցանիշն արտահայտվում է անձի կենսափորձից դուրս բերվող այն գիտելիքի և հմտությունների կուտակման մեջ, որը կարևորվում է անձի զարգացման և արտաքին միջավայրային

---

[1] *Տես՝ **Hakobyan N., Gevorgyan S., Petrosyan L., Khachatryan A.**, The Problem of Personal Development in the Context of Social Anomie Wisdom. 22 (2), 7-14.*

[2] *Տես՝ **Աղուզումցյան Ռ. Վ., Ամիրյան Ս. Ս., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Խաչատրյան Ն. Գ., Հովհաննիսյան Հ. Ռ., Հարությունյան Ն. Ա., Սարգսյան Դ. Յ.**, Հոգեկան հուսալիության հետազոտման մեթոդաբանական մոտեցում: Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը, Երևան, 2009, էջ 113-131:*

պայմաններին հարմարման գործընթացում: Հատկանշական է, որ անձի կենսակայունության բարձրացման տեսանկյունից կարևորվում է ինչպես դրական, այնպես էլ բացասական փորձի առկայությունն ու արժևորումը:

Այժմ ներկայացնենք սահմանամերձ գոտում ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների արդյունավետ մոդելի ձևավորման առանձնահատկությունները, որոնք նպաստում են կենսակայունության ցուցանիշների ամրապնդմանն ու արժեքային համակարգում դրանց ամրակայմանը: Մեր կողմից մեխանիզմների գործարկման այդ մոդելը բնութագրվում է արտահայտման կումուլյատիվ բնույթով. այն դրսևորվում է երկար ժամանակահատվածում արժեքային համակարգի վրա հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ազդեցության կուտակման և կենսակայունության ցուցանիշների միջոցով արտահայտման մեջ: Այդ երևույթը մեր կողմից նկատվել է ներքոնշյալ մեթոդների, հարցազրույցի և դիտարկումների իրականացման ու վերլուծման ընթացում, այն է՝ հոգեբանական պաշտպանության որոշ մեխանիզմների դրսևորումները նպաստում են կենսակայունության մակարդակի արտահայտմանը, ինչն իր հերթին արտահայտվում է արժեհամակարգում: <<*Հոգեբանական պաշտպանության մեխանիզմ կենսակայունության մակարդակ արժեհամակարգ*>> շղթայի բաղադրատարրերը գտնվում են փոխազդեցության մեջ, այսինքն՝ արժեհամակարգում ազգային կոնսոլիդացիայի, անկախության և վերահսկման դրսևորումները, որոնք նախկինում հոգեբանական պաշտպանության որոշ մեխանիզմների և կենսակայունության ցուցանիշների արտահայտության արդյունք էին, տարիների ընթացքում իրենց հետքն են թողնում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վրա՝ էլ ավելի ուժեղացնելով դրանց հետագա ազդեցությունը շղթայի մյուս բաղադրատարրերում: Մեր կարծիքով, կումուլյատիվ մոդելի շղթայաձև փոխկապվածությունը նպաստում է, որ Արցախի ազգաբնակչության շրջանում տարիների ընթացքում նկատելի դառնա ազգային ինքնագիտակցության, հոգեբանական ընդհանուր նկարագրի կառուցվածքում դրական կոնստրուկտների կուտակման երևույթը:

Նշենք նաև մոդելի կոմպենսատորային բնույթի մասին: Կոմպենսացիան այն հոգեբանական մեխանիզմն է, որն արտահայտվում է անձի գործունեության որոշակի ուղղվածությամբ՝ որպես անձի թերությունների և թույլ կողմերի քողարկման և ուժեղ կողմերի ներկայացման ռազմավարություն: Սահմանամերձ գոտում կոմպենսացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի դրսևորումների քննությունը

թույլ է տալիս եզրակացնելու կոմպենսացիայի ցուցանիշի կուտակման հետևյալ եղանակների մասին՝

1. գործունեության այն բնագավառներում, որոնք առնչվում են վտանգի արդիականացմանը (օրինակ՝ զինծառայության ժամանակահատվածը, հակամարտության հնարավոր վերսկսման ակնկալիքը), նկատվում է դիմադրությունն ու պաշտպանությունը ապահովող միջոցների հասանելիության և կատարելագործման միտվածություն;
2. գործունեության վերոնշյալ բնագավառների պարագայում ուժեղանում է սոցիալական ինստիտուտների կարևորությունը, որոնց վրա է դրվում վտանգին դիմակայելու պատասխանատվությունը, ինչի արդյունքում անձը հոգեբանորեն ձերբազատվում է ինքնապաշտպանության մեխանիզմների իրագործումից և իր ակտիվությունն ուղղում դեպի սոցիալական կամ մասնագիտական գործունեության այլ բնագավառներ[1]:

Նշված վարքագծային տարբերակներից երկուսի դեպքում էլ նկատվում է պաշտպանական հատկանիշների ուժեղացման ռազմավարությունը՝ տարբեր ուղղվածությամբ[2]: Առաջին դեպքում պաշտպանական հատկանիշների ուժեղացումն արտահայտվում է ուղղակիորեն՝ վտանգին դիմակայելու միջոցների կատարելագործման շնորհիվ: Այդ եղանակը գիտակցվում է անձի կողմից, արտահայտվում է պաշտպանական ունակությունների կուտակմամբ՝ զբաղմունք ուժային սպորտաձևերով, զենքի տիրապետման գիտելիքի ձեռքբերում, հակամարտ կողմի վերաբերյալ տեղեկատվության նկատմամբ հետաքրքրության աճ, <<որքան շատ գիտես թշնամու մասին, այդքան ավելի պաշտպանված ես>> սկզբունքի կիրառում և այլն: Երկրորդ եղանակի կիրառման պարագայում պաշտպանական հատկանիշների ուժեղացումն արտահայտվում է անուղղակի միջոցներով. սեփական պաշտպանական ակտիվությունը փոխարինվում է պետական կառույցների արդիականացմամբ և ժողովրդավարական ինստիտուտների առաջնահերթության գիտակցմամբ [3]:

Ինչպես ցույց տվեցին փորձարարական հետազոտության արդյունքները, Արցախի սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում առավել արտահայտված է կոմպենսացիայի պաշտպանական մեխանիզմի

---

[1] *Տես՝* ***Чешев В. В****. Поведенческая и деятельностная адаптация: общее и особенное // Вестн. Томского гос. пед. ун-та (Tomsk State Pedagogical University Bulletin). 2012. Вып. 4. с. 230–234.*

[2] *Տես՝* ***Hakobyan N., Khachatryan A.****, Socio-Cultural Interpretation of Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues Of Pedagogy And Psychology, 2020, 17(1), 65-82.*

[3] *Տես՝* ***Леонтьев Д.А.****., Современная психология мотивации, М., 2002, 343 с.*

կուտակման երկրորդ եղանակը, երբ հոգեբանական անվտանգության և պաշտպանության բարձր մակարդակը ձեռք է բերվում ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման արդյունքում և հետևանք է հասարակության ընդհանուր ժողովրդավարացման և պետական կառույցների ամրապնդման գործընթացների[1]: Այս եղանակի արտահայտություններից են նաև անձի արժեքային համակարգում հոգեբանական պաշտպանության ինստիտուցիոնալ դրսևորումները, որոնք արձանագրվում են պետության նկատմամբ վստահության ամրապնդման, ուժային կառույցների գործունեության դրական գնահատականի և բարեկեցության մակարդակի բարձրացման տվյալներով:

Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի կառուցվածքն է (Գծապատկեր 1)՝

Գծապատկեր 1. Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ սպիրալաձև մոդելի կառուցվածքը



Ներկայացնենք հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի բաղադրիչները (Աղյուսակ 1).

[1] *Hakobyan N., Khachatryan A., Vardanyan N., MARGINALITY AND ETHNO-CULTURAL ENVIRONMENT, - Paradigmata poznani, 2018, 3, 44-51.*

Աղյուսակ 1.Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի բաղադրիչները

Հոգեբանական պաշտպանության մեխանիզմներ (ըստ Ռ. Պլուտչիկ-Հ. Քելլերմանի դասակարգման)	**Կենսակայունության ցուցանիշներ (ըստ Դ.Ա. Լեոնտև-Ե. Ի. Ռասկազովայի դասակարգման)**	**Արժեքային համակարգի բաղադրիչներ (ըստ Մ. Ռոկիչի դասակարգման)**
Պրոյեկցիա	Վտանգի ստանձնում	**Տերմինալ արժեքներ**
Իրականության ժխտում	Ներգրավվածություն	Կոնկրետ / վերացական
Արտամղում	Վերահսկում	Մասնագիտական ինքնառեալիզացիայի / անձնական
Ռացիոնալիզացիա		**Ինստրումենտալ արժեքներ**
Ռեակտիվ կազմավորում		Էթիկական / հաղորդակցման / աշխատանքային
Ռեգրեսիա		Անհատական / կոնֆորմիստական / այլտրուիստական
Տեղափոխում		Ինքնահաստատման / այլակենտրոն
Կոմպենսացիա		

Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ներկա պատկերն ունի որոշակի յուրահատկություններ թե՛ արտահայտման միջոցների և թե՛ արժեքային համակարգում արտահայտվածության առումներով: Վերջին 10 տարիների ընթացքում մեր կողմից անցկացված ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու այն մեխանիզմները, որոնք վկայում են ազգաբնակչության կենսակայունության մասին և առավել հաճախ են ներկայանում արժեքային համակարգի բաղադրիչների շարքում: Այդ մեխանիզմների <<գործառութային երկարակեցությունը>> կրում է կումուլյատիվ բնույթ, քանի որ այդ մեխանիզմների արդիականությունը ձեռք է բերվում

սահմանամերձ միջավայրում հոգեբանական պաշտպանության ձևերի ժամանակագրական կուտակման շնորհիվ, ինչի արդյունքում պաշտպանության մեխանիզմները ոչ միայն վերածվում են ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների, այլև ամրապնդվում են արժեքային համակարգում:

Այսպես, 2015-2018 թթ. ընթացքում կատարած դիտարկումների և հավաքագրված նյութերի հանրագումարը թույլ է տալիս խոսելու հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից ռեգրեսիայի և ռեակտիվ կազմավորման դրսևորումների տարածվածության մասին: Արդեն այդ տարիներին գրանցված արդյունքները, սակայն, ցույց տվեցին կոմպենսացիայի և ռացիոնալիզացիայի գործառության նկատվող աճը: Իսկ 2014-2019 թթ. ընթացքում իրականացված հոգեբանական հետազոտությունը բացահայտեց ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի ամրակայման միտվածությունն ու այդ մեխանիզմների գործարկման պայմաններում կենսակայունության ցուցանիշներից վտանգի ստանձնման, ներգրավվածության և վերահսկման կայուն դրական զարգացումը: Բացահայտվեց նաև Արցախի Հանրապետության տարածքում (անկախ պետական սահմանին մոտ կամ հեռու գտնվելու տարածական տարբերություններից) բնակվող արցախահայության գնահատականներում հանրապետության ողջ տարածքը սահմանամերձ գոտի համարելու միտումը, ինչը բացատրվում էր գերազանցապես պատերազմի մասին կուտակված հիշողություններով և ապագայում հավանական պատերազմի վերսկսման պարագայում հանրապետության բնակչության համընդհանուր մոբիլիզացիայի մտավախությամբ:

Արցախի Հանրապետության ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության պատկերն աչքի է ընկնում տարիների ընթացքում կուտակված մեխանիզմների այնպիսի համադրմամբ, որոնք առավելագույնս նպաստում են սահմանամերձ գոտու պայմաններում կենսակայունության պահպանմանն ու ամրապնդմանը[1]: Ուստի կենսակայունության ցուցանիշները դրսևորվում են ոչ միայն պաշտպանության մեխանիզմների միջոցով, այլև կազմում են արժեքային համակարգի բովանդակային մասը: Պաշտպանության մեխանիզմների գործառութային երկարակեցության այսպիսի պատկերին մենք տվել ենք *հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդել* անվանումը. այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

---

[1]Տես՝ ***Հակոբյան Ն. Ռ.,*** *Մարգինալություն և հոգեբանական հարմարում, Երևան, 2009 թ.:*

1. սահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից առավել արտահայտված են կոմպենսացիան, ռացիոնալիզացիան և ռեակտիվ կազմավորումը:

2. հոգեբանական պաշտպանության մեխանիզմների գործարկումն ուղեկցվում է, մի կողմից, կոնֆլիկտային իրավիճակում ներգրավվածության գիտակցմամբ, մյուս կողմից՝ խաղաղ աշխատանքի մեջ ներգրավվածությամբ:

3. հոգեբանական պաշտպանության մեխանիզմները սահմանամերձ գոտում կրում են գերազանցապես կոմպենսատորային բնույթ:

4. վերը նշված ներգրավվածության հատկանիշի երկակի ընկալումը բնորոշ է սահմանամերձ գոտում ազգաբնակչության կենսակայունության պատկերին:

5. կենսակայունության ցուցանիշներից ներգրավվածության ընկալման երկակիությունը համադրվում է կենսակայունության մեկ այլ՝ վտանգի ստանձման ցուցանիշի հետ այնպես, որ խաղաղ աշխատանքի մեջ ներգրավվածությունը միաժամանակ շարունակում է աճել վտանգի արդիականության հետ մեկտեղ:

6. կենսակայունության վերը նկարագրված ցուցանիշների արտահայտություններն ուղեկցվում են վերահսկման լոկուսի տիրապետմամբ: այլ խոսքերով, սահմանամերձ գոտու ազգաբնակչության մեջ կենսակայունության առավել արտահայտիչ ցուցանիշը վերահսկումն է, որն ինքնին հանդես է գալիս որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ:

7. սահմանամերձ գոտու ազգաբնակչության արժեքային համակարգի բաղադրիչներից առավել կայուն արտահայտված են ինքնավերահսկման և անկախության արժեքները:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Արցախի Հանրապետության անկախության ստեղծման պատմական փաստով նախանշված սոցիալ-հոգեբանական իրավիճակի և տարիների ընթացքում սահմանամերձ գոտում գոյատևելու կուտակված փորձի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու հոգեբանական պաշտպանության համապատասխան մեխանիզմների մոդել, որը նպաստելու է սոցիոմետ դիրքորոշումների զարգացմանն ու վարքագծի արտահայտմանը: Սահմանամերձ գոտում բնակվող արցախահայության հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն ազգաբնակչության կենսակայունության ընդհանուր պատկերի մաս են կազմում և առանձնանում են արժեքային համակարգում համապատասխան ցուցանիշների կումուլյատիվ դրսևորմամբ:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ. Վ., Ամիրյան Ս. Ս., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Խաչատրյան Ն. Գ., Հովհաննիսյան Հ. Ռ., Հարությունյան Ն. Ա., Սարգսյան Դ. Յ.**, Հոգեկան հուսալիության հետազոտման մեթոդաբանական մոտեցում: Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը, Երևան, 2009:
2. **Հակոբյան Ն. Ռ.**,Մարգինալություն և հոգեբանական հարմարում, Երևան, 2009 թ.:
3. **Ղարագուլյան Ա. Լ.**, Ազգատության հիմնախնդիրը փոխակերպվող հասարակությունում,-Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, պրակ 5, Երևան, 2008:
4. **Hakobyan N., Gevorgyan S., Petrosyan L., Khachatryan A.**, The Problem of Personal Development in the Context of Social Anomie Wisdom. 22 (2).
5. **Hakobyan N., Khachatryan A.**, Socio-Cultural Interpretation of Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues Of Pedagogy And Psychology, 2020, 17(1), 65-82.
6. **Hakobyan N., Khachatryan A.**, Structure of Person's Psychological Resources in Emergency Situations (April 4, 2018). Proceedings of the 9th International RAIS Conference on Social Sciences and Humanities, Available at SSRN: https://ssrn.com/abstract=3179044 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3179044
7. **Hakobyan N., Khachatryan A., Vardanyan N.**, MARGINALITY AND ETHNO-CULTURAL ENVIRONMENT, - Paradigmata poznani, 2018, 3.
8. **Maddi S.R.**, Personality theories: a comparative analysis Homewood, Ill: Dorsey Press, 1968.
9. **Блюм Г.**, Психоаналитические теории личности М., 2000.
10. **Ãëàäêèõ À.Ã.** Ñâÿçü æèçíåñòîéêîñòè ñ ðàçëè÷íûì âèäàìè èíòåëëåêòà // Ïñèõîëîãèÿ XXI âåêà: Ìàòåðèàëû X Ìåæäóíàð. Ìåæâóçîâñêîé íàó÷.-ïðàêò. êîíô. / Ïîä ðåä. Á.Â. ×åñíîêîâà. ÑÏá., 2007.

11. **Леонтьев Д.А.,** Современная психология мотивации, М., 2002.
12. **Чешев В. В.**, Поведенческая и деятельностная адаптация: общее и особенное // Вестн. Томского гос. пед. ун-та (Tomsk State Pedagogical University Bulletin). 2012. Вып. 4.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը։

ՀՏԴ 159,97

Հոգեբանություն

Արայիկ ՖԻՐՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի ավագ դասախոս, հ.գ.թ.

Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի դասախոս

Ռուզաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի դասախոս
e-mail: grigoryanruzanna11@asu.am

ՈՒՇԱՑԱԾ ԱՊՐՈՒՄՆԵՐ, ԿԱՄ ԴԵՌ ՓՈՔՐ ԵՄ. ՀԵՏՈ ԿՀԱՍԿԱՆԱՄ

Հոդվածում շոշափվում են մանկական տրավմաների հետ կապված հետաքրքիր դիտարկումներ: Առաջ է քաշվում տեսություն, որի համաձայն հոգեբանական պաշտպանական մեխանիզմները կարող են ուղղվել ինչպես դեպի արտաքին օբյեկտներն ու իրադարձությունները, այնպես էլ դեպի անձի ներսը՝ թիրախավորելով անձին վաղ տարիքում:

Բանալի բառեր՝ *հոգեթերապիա, պաշտպանական մեխանիզմներ, այցելու, հոգեբան, ուշացած ապրումներ, տրավմա:*

А.Фирян, А. Петросян, Р. Григорян

ЗАПОЗДАЛЫЕ ЧУВСТВА ИЛИ ЕЩЕ МАЛЕНЬКИЙ-ПОЙМУ ПОТОМ

Статья состоит из наблюдений, связанных с психологической травмой, приобретенной в раннем возрасте, на основе которых можно выдвинуть теорию о том, что защитные механизмы личности могут быть направлены как на внешние факторы и события, так и на наш опыт, поведение и способность реагирования на

психотравмирующую ситуацию, заложенную в нас природой.
Ключевые слова: *психотерапия, защитные механизмы, посетитель, психолог, запоздалые переживания, травма.*

A.Firyan, A. Petrosyan, R.Grigoryan

BELATED FEELINGS, OR I AM STILL IMMATURE: I WILL UNDERSTAND IT IN TIME

The article touches upon some interesting observations connected to child trauma. A theory is proposed according to which psychological defense mechanisms can be both directed towards external objects and events as well as toward inside of ourselves, targeting us at an early age.
Key words: *psychotherapy, defense, mechanisms, visitor, psychologist, belated feelings, trauma.*

Անձի հոգեբանական պաշտպանության մեխանիզմների քննարկումը կարևորագույն գիտական խնդիր է, որը վերաբերում է անձի հոգեբանական առողջության ամբողջ համակարգին:

Անձի՝ պաշտպանական մեխանիզմներով հագեցած վարքագծի հիմնախնդիրը հանդիպում է ամենուրեք. այն արդիական է ինչպես կլինիկական հոգեբանության, այնպես էլ սոցիալական ու զարգացման հոգեբանության ոլորտներում, ներկայացված է թե՛ տեսական ուղղություններում և թե՛ կիրառական հոգեբանության շրջանակներում:

Ժամանակակից հոգեբանական գիտակարգում պաշտպանության մեխանիզմների հայեցակարգը այս կամ այն առումով ներկայացված է տարբեր հոգեբանական դպրոցներ և ուղղություններ ներկայացնող հետազոտողների կողմից[1]: Հոգեվերլուծաբանները սահմանում են հոգեբանական պաշտպանության եզրույթը որպես անձի ներքին կամ արտաքին տրավմատիկ վիճակները նվազեցնող մեխանիզմների մի ամբողջություն:

<<Հոգեբանական պաշտպանություն>> եզրույթն առաջին անգամ կիրառել է Զ. Ֆրեյդը 1894 թ. <<Պաշտպանական նեյրոպսիխոզներ>> աշխատությունում: Հետագայում հեղինակը այդ եզրույթով մատնանշում է կոնֆլիկտային իրավիճակում Ես-ի կողմից օգտագործվող բոլոր միջոցները [2]: Նույն հեղինակի կողմից այդ եզրույթն սկսեց պարբերաբար փոխարինվել

---

[1] *Տես՝* ***Ананьев Б.Г.*** *Человек как предмет познания. СПб: Питер, 2001. -228с.;* ***Асмолов А.Г.*** *Психология личности. М.: Изд-во МГУ, 1990. - 367 с.-25;* ***Леонтьев А.А.****, Психология общения, Тарту, 1974, с.93.*

[2] ***Долгова В. И., Кондратьева О. А.****, Психологическая защита, Москва, 2014, с.139.*

<<արտամղում>>-ով՝ որպես գիտակցությունից դեպի անգիտակցականը սթրեսածին տեղեկատվության տեղափոխում և պաշտպանություն անընդունելի իրողության գիտակցության մեջ թափանցելուց:

Հոգեբանական պաշտպանության մասին տեսական մշակումների զարգացումները կապված են Ա. Ֆրեյդի անվան հետ: Կախված սպառնալիքի աղբյուրից՝ Ա. Ֆրեյդը տարբերում է բնազդից և աֆեկտից առաջացող պաշտպանության տեսակները: Առաջին դեպքում պաշտպանության գործընթացը նպատակ ունի կանխելու բնազդային գաղափարները, և որոնք վտանգ են ներկայացնում Ես-ի առողջության համար: Աֆեկտից առաջացող պաշտպանության գործարկումը պայմանավորված է վտանգավոր ցանկությունների և աֆեկտների գիտակցության մեջ ներթափանցման հնարավորությամբ: Բացի դրանից, Ա. Ֆրեյդը նշանակել է պերմանենտ պաշտպանական երևույթը, որը բնութագրում է «անցյալում շատ ուժեղ պաշտպանական գործընթացների մնացորդները, որոնք դուրս են եկել իրենց նախնական իրավիճակների ենթատեքստից և վերածվել մշտական բնույթ ունեցող բնավորության հատկությունների»: Ա. Ֆրեյդը ձևակերպեց պաշտպանական մեխանիզմների առաջին սահմանումը. «Պաշտպանական մեխանիզմներն են «Ես»-ի գործունեությունը, որը սկսվում է այն ժամանակ, երբ «Ես»-ը ենթարկվում է իմպուլսների չափազանց մեծ ակտիվությանը կամ նրա համար վտանգավոր ազդեցություններին: Դրանք սկսում են գործել ավտոմատ կերպով»[1]:

Ա. Ֆրեյդի աշխատությունները հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն հոգեբանական պաշտպանության առաջին տեսության առաջքաշման, այլև օնտոգենեզում պաշտպանիչ մեխանիզմների ձևավորման հաջորդականության ուսումնասիրության և պաշտպանական մեխանիզմների դասակարգման չափանիշների ձևակերպման տեսանկյուններից: Ա. Ֆրեյդը զարգացրեց Զ. Ֆրեյդի գաղափարը՝ պաշտպանական միջոցների և պաթոլոգիական խանգարումների փոխկապակցվածության, ինչպես նաև՝ անհատական զարգացման նորմատիվ և պաթոլոգիկ դրսևորումներում պաշտպանիչ մեխանիզմների առանձնահատկությունների մասին:

Հոգեբանության տարբեր ուղղությունների ներկայացուցիչները, անշուշտ, զարգացրին հոգեբանական պաշտպանության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

---

[1] ***Долгова В. И., Кондратьева О. А.***, *Психологическая защита,Москва, 2014, с.139.*

Այժմ մանկական տրավմաների համատեքստում կփորձենք ներկայացնել հոգեբանական պաշտպանական մեխանիզմների դրսևորման որոշ առանձնահատկություններ և նոր հետաքրքիր դիտարկումներ:

Վերջերս այցելուներիցս մեկը, որը տագնապային խանգարում ունի, խոսել է այն մասին, որ իրեն մեղավոր է զգում հանգուցյալ հոր հետ ոչ պատշաճ շփումների և վերաբերմունքի համար: Մեջբերեմ նրա պատմությունից մի հատված. «Դեռահասության տարիքում հարաբերությունները հորս հետ պարբերաբար լարվում էին: Ես նրա հետ քիչ էի խոսում ինձ անհանգստացնող թեմաներից, քանի որ վստահ չէի, որ ինձ կհասկանա: Ինքս էլ բավականաչափ տեղյակ չէի նրա կյանքի առաջնահերթություններից ու ապրումներից: Ամեն անգամ, երբ հանդգնում էի հակաճառել նրան, նա կրկնում էր՝ դեռ փոքր ես, կգա ժամանակը, ամեն ինչ կհասկանաս, բայց ուշ կլինի»:

Վերլուծելով վերջին պարբերությունը՝ համարձակվեմ համոզմունք հայտնել, որ հենց «ուշ կլինի» արտահայտությունն է կանխորոշել իմ այցելուի ներկայիս (ուշացած) տհաճ ապրումները. երբ նա ժամանակին կոպտում էր հորը և արհամարհում վերջինիս կարծիքը, նրա մեջ մեղքի զգացում չէր արթնանում, ընդհակառակը, նա իրեն լավ ու բավարարված էր զգում և միայն այսօր, նայելով անցյալի դեպքերին նոր եղելությունների պրիզմայով (հոր մահը) և դիտարկելով դրանք ամբողջ կատարվածի համատեքստից դուրս, նոր որակումներ է տալիս սեփական գործողություններին և ապրում տհաճ զգացումներ:

Նման օրինակներն անթիվ են: Այցելուներից շատերը, հոգեբանի ուղղորդմամբ կամ ինքնուրույնաբար անդրադառնալով անցյալի դեպքերին, կարող են մանկական տարիքում իրենց վերագրել այնպիսի տրավմատիկ զգացումներ, որոնք ժամանակին չեն ունեցել ու չեն ապրել: Այդ արհեստական տրավմաներից էլ նրանք բխեցնում են իրենց ներկայիս տհաճությունները, դեպրեսիաներն ու տագնապները:

Դիտարկենք հետևյալ օրինակը:

Այցելու. Վերջերս ինձ տանջում է այն միտքը, որ ինձ կարող են փակել:

Հոգեբան. Ի՞նչ նկատի ունեք:

Այցելու. Դե, ինձ անհանգստացնում է բանտարկված լինելու վախը:

Հոգեբան. Կա՞ն պատճառներ անհանգստանալու համար:

Այցելու. Ես օրենքի հետ ոչ մի խնդիր չունեմ, բայց ամեն անգամ, երբ մենակ եմ լինում, սկսում եմ մտածել, որ իմ գլխին մի բան կսարքեն:

Հոգեբան. Կարո՞ղ եք մանրամասնել:

Այցելու. Դե, օրինակ, աշխատավայրում մի բան պակասի, ինձ վրա դնեն, մի տեղ սպանություն լինի, վկաներից մեկը կեղծ ցուցմունք տա ու ինձ ճանաչի: Գիտեմ՝ անհեթեթ բաներ եմ ասում, բայց ոչինչ անել չեմ կարող:

Հոգեբան. Դուք երբևէ եղե՞լ եք անազատության մեջ:

Այցելու. Չէ՛, չհաշված մի դեպք:

Հոգեբան. Կարո՞ղ եք պատմել այդ դեպքի մասին:

Այցելու. Ես փոքր էի՝ 8 կամ 9 տարեկան: Մենք սեփական տուն ունեինք, իսկ տանը կից բացօթյա տաղավար էր կառուցած, որտեղ հաճախ բարեկամներով հավաքվում էինք: Ինչ-որ առիթ էր. հավաքվել էինք: Ես ինչ-որ անկարգություն էի արել, և մայրս որոշեց ինձ փակել նկուղում՝ բոլորի աչքից հեռու: Չեմ հիշում, որ հատուկ դիմադրած լինեի: Այնտեղ մի քանի ժամ եմ անցկացրել: Այնուհետև, երբ բոլորը գնացին, ես ստացա իմ <<ամնիստիան>>:

Այցելուի ներկայիս խնդիրները պայմանավորված են արդյոք մանուկ հասակում նրա հետ կատարված դեպքի հետ, թե՞ դա անցյալի իրադարձությունների անիրական մեկնություն է, և նա այսօր այնքան տագնապած է, որ ճանաչում է վախեր, որոնք ժամանակին չի ունեցել:

Ուստի վերոգրյալից հետևում է, որ ուշացած կարելի է համարել անցյալի իրողությունների հետ կապված բոլոր այն հույզերը, որոնք պայմանավորվա՞ծ են նոր իրադարձությունների թելադրանքով: Ինչն իր հերթին նշանակում է, որ այդ աղճատված ապրումները չեն կարող ներկայիս խնդիրների օբյեկտիվ պատճառ լինել:

Դեպքերն այս դիտանկյունից ուսումնասիրելով՝ կարելի է ենթադրել, որ բավարար չափով արդյունավետ չեն հոգեթերապևտիկ այն ուղղությունները, որոնց հիմքում դրված է այն համոզմունքը, որ անհատական զարգացումն կանխորոշվում է մանկության ժամանակների իրադարձություններով, իսկ հասուն անձի հիվանդություններն էլ կապված են մանկական ապրումների հետ: Իհարկե, հոգեվերլուծության, տրանսակցիոն հոգեթերապիայի և սցենարային վերլուծության կողմնակիցները կարող են խիստ քննադատության ենթարկել առաջ քաշված տեսակետը[1]: Այդ իսկ պատճառով դիտարկենք ևս մեկ օրինակ:

Այցելու. Աշխատավայրում իմ գործընկերները հաճախ իրենց բաժին աշխատանքը ինձ վրա են դնում: Ինձ համար այդ ամենը անդուր է, բայց մերժել, առարկել չեմ կարող:

Հոգեբան. Դուք ասացիք, որ այդ ամենը անդուր է, կարո՞ղ եք ասել՝ ուրիշ էլ ի՞նչ եք զգում:

---

[1] ***Զ.Ֆրոյդ****, Հոգեբանական հետազոտության ներածություն, 1917թ.:* ***Է.Բեռն****, Մարդիկ, ովքեր խաղեր են խաղում: Խաղեր, որոնք խաղում են մարդիկ, 1964թ.:*

Այցելու. Դե, բարկանում եմ, վրդովվում, լարվում, բայց փորձում եմ ցույց չտալ:

Հոգեբան. Ինչո՞ւ:

Այցելու. Չգիտեմ: Երևի այդպես եմ դաստիարակվել: Ծնողներս միշտ ասում էին, որ բարեկիրթ մարդիկ պետք է զուսպ լինեն:

Հոգեբան. Ծնողները ճնշե՞լ են Ձեր հուզական դրսևորումները:

Այցելու. Հա: Երևի այդպես էլ կա:

Հոգեվերլուծության պաշտպանները կարող են այս դեպքը ներկայացնել որպես վկայություն այն բանի, որ այցելուն, մեծանալով այնպիսի ընտանիքում, որտեղ ծնողները ճնշել և վերահսկել են վերջինիս հուզական դրսևորումները, չափահաս դառնալով, նույնպես շարունակել է ճնշել սեփական հույզերը, ինչն էլ նպաստել է նրա մոտ լարվածության, անհանգստության և վախի առաջացմանը: Սակայն եթե վերջին ու դրան նախորդած դեպքերը դիտարկենք հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հայեցակարգի շրջանակում, ապա կնկատենք, որ երկու դեպքերում էլ այցելուն, նախ դրսևորելով ճնշման հոգեբանական պաշտպանական մեխանիզմը, թույլ չի տալիս ճանաչել պատասխանատվությունը իր ներկայիս թույլ, վախեցած ու անօգնական վիճակի համար, այնուհետև դիմելով տեղափոխման պաշտպանական մեխանիզմին, շեղում է իրենից այժմյան տհաճ զգացումները դեպի ավելի ընդունելի կամ ավելի քիչ վտանգավոր փոխարինողը: Եվ այդ փոխարինողը ինքն է փոքր տարիքում: Ով կարող է մեզանից ավելի թույլ, վախեցած ու անօգնական լինել, քան մենք մանուկ ժամանակ:

Հավատալով այս վարկածի գոյությանը, որը, ինչ խոսք, ունի հավելյալ հիմնավորման և մշակման անհրաժեշտություն, կատարենք ևս մեկ համարձակ ենթադրություն. հոգեբանական պաշտպանական մեխանիզմները կարող են ուղղվել ինչպես դեպի արտաքին օբյեկտներն ու իրադարձությունները, այնպես էլ դեպի մեր ներսը՝ թիրախավորելով մեզ վաղ տարիքում:

Համառոտեմ միտքս.

Երբեմն մանկական տրավմաները ոչ այլ ինչ են, քան վաղ տարիքում մեզ հետ կատարված սովորական դեպքեր, որոնք, սակայն, աննկարագրելի շատ են համեմվել չափահասության անհանգստություններով:

Գրականություն

1. **Ֆրոյդ Զ.**, Հոգեբանական հետազոտության ներածություն, 1917թ.:
2. **Բեռն Է.,** Մարդիկ, ովքեր խաղեր են խաղում: Խաղեր, որոնք խաղում են մարդիկ, 1964թ.:
3. **Ананьев Б.Г.**, Человек как предмет познания. СПб: Питер, 2001.
4. **Асмолов А.Г.**, Психология личности. М.: Изд-во МГУ, 1990.
5. **Леонтьев А.А.**, Психология общения, Тарту, 1974.
6. **Долгова В. И., Кондратьева О. А.**, Психологическая защита Москва, 2014.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.99

Հոգեբանություն

Լեվոն ՍԱՐԳՍՅԱՆ, Լիլիթ ԼԱՉԻՆՅԱՆ, Արմեն ԱԲԳԱՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան,
E-mail: sargsyan1985L@rambler.ru, fil-hog@mail.ru, abgaryanarmen23@aspu.am

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածը վերաբերվում է իրավական հոգեբանության ամենակարևոր հարցին մեկի՝ դատապարտյալների հոգեբանական խնդիրների ուսումնասիրությանը: Վերլուծվում են տարբեր հեղինակների մոտեցումները: Հոդվածում նկարագրված են դատապարտյալին բնորոշ մի շարք խնդիրներ՝ հոգեբանական սթրես, վերակառուցում, հարմարում քրեակատարողական հիմնարկությունում, մեղքի զգացում, հարաբերություններում դժվարություններ և այլն: Ազատությունից զրկելու առանձնահատկություններից ելնելով՝ ներկայացվում են դատապարտյալների հոգեբանական վիճակի փոփոխությունները, ինչպես նաև այն դժվարությունները, խոչընդոտներն ու հակասությունները, որոնք առաջանում են այս ժամանակահատվածում:

Բանալի բառեր՝ *դատապարտյալ, հոգեբանական վիճակ, հանցանք, պատիժ, մեղքի գիտակցում, հարմարում, հուզական հակազդումներ, սոցիալ-հոգեբանական խնդիրներ:*

Л.Саргсян, Л.Лачинян, А.Абгарян

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОСУЖДЕННОГО

Статья относится к самому важному вопросу в юридической психологии: изучения психологических проблем заключенных. Анализируются подходы разных

авторав. В статье описана ряде задач характерно осужденного: психологический стресс, реконструкций, адаптация уголовно-исполнительного учреждения, чувство вины, трудности в отношениях, и т.д. Обусловлены особенностями лишения свободы представлены изменения психологического состояние осужденных а так же те трудности, препятствия и противоречия, которые встречаются в этом периоде.

Ключевые слова: *осужденный, психологические состояния, преступление, наказание, сознание греха, адаптация, эмоциональные реакции, социально-психологические проблемы.*

L.Sargsyan, L.Lachinyan, A.Abgaryan

SOCIAL PSYCHOLOGICAL PROBLEMS THE CONVICTED

The article refers to the most important question in legal psychology: study of psychological problems of prisoners. Analyzes the approaches of different authors. This article describes a number of problems characteristic of the convicted person: stress, reconstructions, adaptation penitentiary, guilt, difficulty in relationships, etc. Conditioned by the particularities of imprisonment are presented the changes of psychological mood for convicted persons, as well as the difficulties, the obstacles, the contradictions which they face during this period.

Key words: *condemned, psychological states, adaptation, the crime, punishment, consciousness of sin, emotional reactions, social psychological problems.*

Իրավաբանական հոգեբանության բնագավառի ուսումնասիրության կարևոր խնդիրներից է համարվում դատապարտյալի անձի ուսումնասիրությունը և համապատասխանաբար քրեակատարողական համակարգի հոգեբանության տեսամեթոդաբանական համակարգի ձևավորման հարցերը: Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել իրավաբանական հոգեբանության, մասնավորապես՝ քրեակատարողական համակարգի հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացում: Քրեակատարողական համակարգի վերջին շրջանի հոգեբանական

ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են դատապարտյալների վերահարմարման գործընթացին [14]: Այս բնագավառի որոշ ուսումնասիրություններ փորձում են ձևավորել քրեակատարողական համակարգի հոգեբանության ուսումնասիրության հիմնական խնդիրները, դատապարտյալի անձի ուսումնասիրությունը, քրեակատարողական հիմնարկում հոգեբանական աշխատանքի համակարգը [6]: Մասնավորապես խոսքը վերաբերվում է քրեակատարողական համակարգի հոգեբանության բնագավառում հոգեբանական հետազոտությունների, տեսությունների, հայեցակարգերի համակարգմանը: Քրեակատարողական համակարգին վերաբերվող հոգեբանական հետազոտություններում կարելի է հանդիպել նաև դատապարտյալի անձին վերաբերող որոշ հետազոտությունների, որոնք մասնակի անդրադարձ են կատարում դատապարտյալների հոգեբանական խնդիրներին և չեն ամբողջացնում առկա խնդիրները որպես մեկ ընդհանուր համակարգ:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրներին անդրադառնալիս հարկ է նշել վերածննդի դարաշրջանում հանցավորության հիմնախնդրի ուսումնասիրություններում հատուկ ուշադրության արժանի անգլիացի մտածող Թ. Մորի [10] ուսումնասիրությունները: Հեղինակն իր «Ուտոպիա» աշխատության մեջ խոսում է հանցագործության նախազգուշացման մասին, ըստ որի՝ երբ հանցագործության պատճառներն անփոփոխ են լինում, անփոփոխ են նաև դրանց հետևանքները: Մորը կարծում է, որ մահապատժի փոխարեն պետք է նշանակել ուղղիչ բնույթի աշխատանքներ, ինչը ժամանակի համար պատժի նոր ձև էր հանդիսանում:

18-րդ դարից սկսած հանցավորության վերաբերյալ փիլիսոփայական միտքն առանձնացավ նախկինում տիրող թեոլոգիական տրակտատներից: Լայն տարածում գտան հանցագործության և պատժի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները, որոնցից առանձնահատուկ ուշադրության են արժանի Չ. Բեկկարիայի [5], Չ. Լամբրոզոյի [11], Ս. Պոզնիշևի [13] աշխատությունները:

Իտալացի հոգեբույժ Չեզարե Լամբրոզոն հանցագործությունը դիտարկում է որպես բնական երևույթ՝ նշելով, որ հանցավորությունը գոյություն ունի մարդկության հետ միասին՝ մարդկության ծագմանը զուգահեռ և շարունակվում է մինչ օրս: Նա զարգացրեց հանցավորության կենսաբանական հիմքի գաղափարը՝ առաջադրելով «բնածին հանցագործ» հասկացությունը: Լամբրոզոն համարում է, որ բնածին հանցագործին հնարավոր չէ ուղղել, քանի որ այս դեպքում հանցավոր վարքն ունի կենսաբանական հիմք [11]: Այս գաղափարը բավական մեծ ազդեցություն

ունեցավ հանցավորության խնդրի հետագա ուսումնասիրությունների համար:

18-րդ դարի ականավոր իրավաբան Չեզարե Բեկկարիան, իր «Հանցագործությունների և պատժի մասին» [5] աշխատությունում քննարկելով պատժի երևույթը, կարևորում է մարդու իրավունքների պաշտպանության և այդ իրավունքների սահմանափակման «հոգեբանական» խնդիրը: Նա նշում է, որ պատժի կիրառումն իրենից չպետք է ներկայացնի տառապանք, դաժան վերաբերմունք հանցագործի նկատմամբ, այլ պետք է ուղղված լինի նոր հանցագործությունների կանխարգելմանը: Այդ իսկ պատճառով պետք է կիրառել պատժի այնպիսի ձևեր, որոնք, համապատասխանելով հանցագործությանը, հանցագործին չպատճառեն ֆիզիկական տառապանք, անարգանք՝ հոգեկանում թողնելով անդառնալի հետքեր:

Ռուս իրավաբան Ս. Պոզնիշևի ուսումնասիրություններն ուղղված են քրեագիտության, իրավաբանական հոգեբանության, ուղղիչ իրավունքի ոլորտներում հանցավորության, հանցագործի անձի, հանցագործների տիպաբանության պարզաբանմանը: Համաձայն հեղինակի տեսության, հանցագործությունն ունի երկու հիմք. առաջինը հանցագործ անձի հատկություններն են, երկրորդը՝ արտաքին հանգամանքները: Այն տարրերը, որոնցով պայմանավորված է հանցագործության անձնային հիմքերը, Պոզնիշևն անվանեց ներծին (էնդոգեն), իսկ անձին հանցագործության դրդող տարրերը՝ արտածին (էկզոգեն) [16, էջ 5]:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ուսումնասիրության համար կարևոր է ուշադրություն դարձնել դատապարտյալի կատարած արարքի բնույթին ու վտանգավորության աստիճանին, ըստ որի հանցարարքները դասակարգվում են ոչ մեծ, միջին, ծանր և առանձնապես ծանր տիպերի [3]:

Դատապարտյալի անձի մասին դեռևս Ֆյոդոր Դոստոևսկին, ով հրաշալի կերպով էր դատում մարդու հոգեվիճակների ու ապրումների մասին, (հոգեբաններ Զ. Ֆրոյդն ու Վ. Ֆրանկլը նշում են, որ ժամանակին մեծապես ազդվել են ռուս մեծ մտածողի գործերից), իր՝ <<Նամակներ մեռյալ տնից>> գրքում գրում է, որ բանտային կյանքը, ռեժիմը բազմաթիվ սահմանափակումներից բացի ենթադրում է նաև հարկադիր համակեցություն, որը, թերևս տանջանքներից մեծագույնն է, քանզի անազատության պայմաններում են հայտնվում այնպիսի անձինք, որոնց հետ քչերը կցանկանային գոյակցել ազատության պայմաններում [7]:

Ռուս ականավոր իրավաբանական հոգեբանության ներկայացուցիչներից Վ.Ն. Կուդրյավցևը նշում է, որ հանցագործությունը ոչ

միայն հասարակայնորեն վտանգավոր, անօրինական գործողություն կամ արարք է, այլ ավելի լայն հասկացություն է, որն ընդգրկում է դրա ակունքները, դրդապատճառների առաջացումը, նպատակադրումը, միջոցների ընտրությունը, սուբեկտի կողմից հանցագործության տարբեր որոշումների ընդունումը և այլն [11]: Այդուհանդերձ, հանցավորությունը պետք է դիտել ոչ միայն որպես գործողություն, քանի որ այն կապի մեջ է գտնվում ինչպես արտաքին գործոնների հետ, այնպես էլ այն ներհոգեկան գործընթացների ու վիճակների, որոնք պայմանավորում են արարքի կատարումը՝ տալով որոշակի ուղղվածություն:

Профилактические мероприятия, осуществляемые с целью сохранения и укрепления здоровья населения, являются одной из приоритетных и важнейших задач системы здравоохранения любой страны мира. Население, ведущее здоровый и благополучный образ жизни, является серьезной гарантией в процессе экономического развития данной страны. Одним из основных направлений системы здравоохранения является управление и финансирование, реформы которого должны быть проведены на первом этапе, что положительно скажется на качестве системы, как с точки зрения медицинского работника, так и граждан. Медицинские работники должны получать стимулы и справедливое вознаграждение, а также должны быть внедрены такие механизмы, которые будут обеспечивать полноценное государственное заказное медицинское обслуживание, исключающее явления теневой оплаты. Что касается управления, то оно касается всех направлений системы, и необходимо как можно быстрее прояснить существующие проблемы и приступить к реализации институциональных реформ.

Ключевые слова: *(система здравоохранения, медицинская помощь, система финансирования, система страхования, медицинский персонал, средний медицинский персонал, профиль, обслуживание, количество кроватей, государственные расходы).*

Ya. Lalayan

Preventive measures implemented in order to maintain and improve the health of the population are one of the priority and most important tasks of the health care system of any country in the world. A population living a healthy and prosperous life is a serious guarantee in the economic

development process of the given country. One of the main directions of the healthcare system is management and financing, the reforms of which should be carried out in the first stage, which will positively affect the quality of the system, both from the perspective of the healthcare worker and the citizens. Medical workers should receive incentive and fair remuneration, and such mechanisms should be introduced that will ensure full state-ordered medical care, excluding the phenomena of shadow payment. As for management, it is related to all directions of the system, and it is necessary to clarify the existing problems as quickly as possible and proceed to the implementation of institutional reforms.

Key words: *(health care system, medical care, financing system, insurance system, medical personnel, paramedical personnel, profile, service, number of beds, government spending).*

Առողջապահության համակարգի առաջնային խնդիրներից է միջգերատեսչական համագործակցությունը, որը հնարավորություն կընձեռի կենտրոնական և մարզային մակարդակներում արդյունավետ կառավարման, մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման, ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործման, հանրային առողջապահության ծառայությունների կատարելագործման և այլ ուղղություններով կյանքի կոչելու բնակչության առողջությանն առնչվող ռազմավարական ծրագրերի իրականացումը:

ԱՀ կառավարության քաղաքականության առաջնային գերակայություններից մեկն է առողջապահության համակարգի գործունեության բարելավումը և բնակչության հարաճուն պահանջի պայմաններում դրա արդյունավետության բարձրացումը ՝ թելադրված ժամանակի հրամայականով և բնակչությանը որակյալ բժշկական ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:

Արցախի Հանրապետությունում բժշկական օգնության և սպասարկման իրականացման ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա. հատկացումները ԱՀ պետական բյուջեից.

բ. ապահովագրական հատուցումները.

գ. մարդկանց անմիջական վճարումները.

դ. ԱՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

ԱՀ կառավարությունը պետական բյուջեով նախատեսված հատկացումներով իրականացնում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման երաշխավորված ֆինանսավորում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:

Առողջապահության համակարգը ԱՀ-ում կարգավորվում է հետևյալ օրենքներով[1].

1. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին, ընդունված է 2012 թ.,

2. Հոգեբուժական օգնության մասին, ընդունված է 2011 թ.,

3. Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին, ընդունվել է 2003թ.,

4.Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին, ընդունվել է 2003թ.,

5. Լիցենզավորման մասին, ընդունված է 2002 թ.,

6. Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին, ընդունված է 2002 թ.,

7.Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին, ընդունված է 1998թ.,

8. Դեղերի մասին, ընդունված է 1998թ.,

9. Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին, ընդունված է 1998թ.:

Բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորումն ապահովագրական հատուցումներով իրականացվում է կնքված ապահովագրական պայմանագրերի համաձայն:

Բժշկական ապահովագրությունը մեծմասամբ կոչված է լուծելու հետևյալ խնդիրները՝

●յուրաքանչյուր քաղաքացու համար համապատասխան քանակի և որակի բժշկական ծառայության դիմաց ֆինանսական ապահովման պակասուրդի լրացում,

●ֆինանսավորման համակարգի ստեղծում, որը կշահադրդի բժշկական ծառայողներին բարելավել սպասարկման որակը,

●ծառայողներին բարելավել սպասարկման որակը,

●ապահովագրված անձանց համար երկրի ցանկացած մասում մատչելի բժշկական ծառայությունների ապահովում:

ՊԲԱ համակարգի կիրառումը Արցախում կլուծի ոչ միայն առողջապահական,այլ նաև մի շարք սոցիալական խնդիրներ, որոնցից են.

---

[1] *Տես՝ http://mohnkr.am/?page_id=18611*

●բյուջետային միջոցների սահմանափակ ներգրավմամբ առողջապահության ֆինանսավորման էական ընդլայնում,

●առողջապահության բնագավառի աշխատողների աշխատավարձերի բարձրացում,

●առողջապահության համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն,[1]

●բնակչության սոցիալապես անապահով խավի համար բժշկական սպասարկմանսոցիալական երաշխիքներ,[2]

●բնակչության համընդհանուր մասնակցություն առողջապահության բնագավառում[3]:

ՊԲԱ համակարգի ներդրմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև պայմաններ ստեղծել կամավոր բժշկական ապահովագրության (ԿԲԱ) համակարգի զարգացման համար: Անհրաժեշտ է մշակել այնպիսի միջոցառումներ, որոնք կհանգեցնեն ապահովագրական ընկերությունների ռիսկի նվազմանը, առաջարկվող ծառայությունների փաթեթի ընդլայնմանը: Հետևապես, ժամանակակից պայմաններում անգնահատելի է առողջապահական ոլորտի կառավարման կատարելագործման դերն ու նշանակությունը:

ԱՀ բնակչության առողջական վիճակը և առողջապահական խնդիրները բնութագրելու համար վերլուծենք հետևյալ ցուցանիշները.

§ բոլոր մասնագիտությունների բժիշկների թվաքանակը և միջին բժշկական անձնակազմի թվաքանակը 10 000 բնակչի հաշվով,

§ բնակչության ապահովվածությունը բժիշկներով՝ ըստ առանձին մասնագիտությունների,

§ բնակչության ապահովվածությունը միջին բժշկական անձնակազմով ըստ առանձին մասնագիտությունների,

§ բնակչության ապահովվածությունը հիվանդանոցային մահճակալներով, ըստ մասնագիտացման,

§ պետական բյուջեում առողջապահական ծախսերի բաժինը:

Բժշկական ծառայությունների մատչելիությունը, բնակչության ընդգրկվածության աստիճանը բուժծառայություններում և որակը մեծապես կախված են որակյալ բժշկական կադրերի առկայությունից (դիագր. 1): Բժիշկների և միջին բուժանձնակազմի ապահովվածության ցուցանիշները ԱՀ-ում բարձր են ԱՀԿ անդամ պետությունների համապատասխան ցուցանիշներից: Այսպես, Արցախում բոլոր մասնագիտությունների

---

[1] ***Бочкарева В.***, *"Есть ли перспективы у обязательного медицинского страхования в России?"*

[2] *База данных "Здоровье для всех" (БД ЗДВ), Копенгаген, Европейское региональное бюро ВОЗ:*

[3] *http://arlexis.am › DocumentV.*

բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով 2020 թ. կազմել է 21,5, միջին բժշկական անձնակազմի թվաքանակը 10000 բնակչի հաշվով՝ 92,9: Հարկ է նշել, որ ԱՀԿ անդամ պետությունների ավելի քան 65%-ը, 2020 թվականի դրությամբ, հայտնում է, որ 10000 բնակչությանը բաժին է ընկնում 20-ից պակաս բժիշկ, իսկ ԱՀԿ անդամ պետությունների ավելի քան 55%-ը հայտնում է, որ 10 000 բնակչին բաժին է ընկնում 50-ից պակաս բուժքույրական և մանկաբարձական անձնակազմ[1]:



Դիագրամ 1. Բոլոր մասնագիտությունների բժիշկների և միջին բժշկական անձնակազմի թվաքանակը

Դիտարկենք բնակչության ապահովվածությունը բժիշկներով՝ ըստ պրոֆիլների (10000 բնակչի հաշվով).



Դիագրամ 2. Բնակչության ապահովվածությունը բժիշկներով՝ ըստ պրոֆիլների

[1] *https://www.who.int/data/gho/data/themes/topics/indicator-groups/indicator-group-details/GHO/medical-doctors*

Այստեղ պարզ երևում է, որ թերապևտիկ պրոֆիլի բժիշկների քանակը 2016թ. կազմել է 15.5 միավոր (10000 բնակչի հաշվով)՝ 2020թ. հասնելով մինչև 17.2 միավոր, մանկաբուժական պրոֆիլի բժիշկների թիվը 2016թ. կազմել է 15.8 միավոր, 2020թ. այն աճել է 0.6 միավորով՝ հասնելով 16.4-ի: Այսինքն 2016թ. համեմատ 2020թ. նկատելի աճել է տարբեր պրոֆիլների բժիշկների թիվը ԱՀ բժշկական հաստատություններում: Նույնը չի կարելի ասել բնակչության միջին բժշկական անձնակազմի մասին՝ ըստ առանձին մասնագիտությունների (դիագրամ 3):



Դիագրամ 3. Բնակչության միջին բժշկական անձնակազմն ըստ առանձին մասնագիտությունների

Դիագրամ 3-ից երևում է, որ բժշկական հաստատություններում բուժակների թիվը նվազել է 0.1 միավորով՝ 2020թ. 0.3-ից հասնելով մինչև 0.2 միավոր (10 000 բնակչի հաշվով): Մանկաբարձների թիվը 2016թ. կազմել է 15.8 միավոր, 2020թ. այն նվազել է 1.6 միավորով՝ հասնելով մինչև 14.2: Նույն տոկոսային հարաբերության իջեցումն է նկատվում նաև բոլոր մնացած միջին բժշկական անձնակազմի մասնագիտությունների հագեցվածության ոլորտում:

Հասարակական առողջության վրա ազդող ևս մեկ գործոն է հանդիսանում բժշկական հաստատությունների հիվանդանոցային մահճակալների թիվը,

որը 2020թ. տարեվերջի դրությամբ կազմել է 40,3 միավոր, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 8,1 միավորով (**դիագրամ 4**):



Դիագրամ 4. Հիվանդանոցային և հիվանդ երեխաների համար մահճակալների թիվը՝ 10000 բնակչի հաշվով[1]

ԼՂՀ առողջապահության պետական ծախսերի (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ առողջության պահպանման ծախսերը ցածր են, և 2020 թվականին այն կազմել է 2,7%, որի աճը, 2019 թվականի համեմատ, կապված է ինչպես տարվա առաջին կիսամյակում համավարակի տարածմամբ, այնպես էլ 44-օրյա պատերազմի հետ:



Դիագրամ 5. ԱՀ առողջապահության պետեկան ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում

ԱՀ առողջապահության ծախսերի մասնաբաժինը պետության բյուջեի ընդհանուր ծախսերում (Դիագրամ 9) 2020թ. կազմում է 11,3 %, որը գրեթե երկու անգամ բարձր է նախորդ տարվա նույն ցուցանիշից, այն նաև բարձր է

[1] *Տես՝ http://www.stat-nkr.am/*

ԱՊՀ այլ երկրների համապատասխան ցուցանիշի մակարդակից: Նշենք, որ ԱՀ 2021թ. պետական բյուջեից առողջապահության հատկացումների մեծ մասը՝ 34%-ը՝ արտահիվանդանոցային ծառայություններին և 28%-ը հիվանդանոցային ծառայություններին ուղղված ծախսերն են:

Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների փոխհատուցման կարգը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Առողջապահության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման համար իրականացվող բարեփոխումներն ուղղված են համակարգի արդիականացմանն ու բնակչության առողջության բարելավմանը, ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում առաջացած բեռի նվազեցման նպատակով սիրտանոթային հիվանդությունների, արյունաբանության և ուռուցքաբանության ասպարեզում բժշկական օգնության ու սպասարկման որակի բարելավմանն ու ենթակառուցվածքների ստեղծմանը, չարորակ նորագոյացությունների, շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման ու վերահսկման միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև առողջ ապրելակերպ խթանելու, առողջ ընտանիք ձևավորելու և ամրապնդելու նպատակով բնակչության առողջապահական կարիքների գնահատմանը:

Ակնհայտ է, որ վերը նշված միջոցառումները չեն կարող իրականացվել առանց պետության ակտիվ միջամտության, քանի որ սոցիալական և ժողովրդագրական ցուցանիշների բարելավումն անմիջականորեն կապված է մատուցվող բժշկական ծառայությունների որակի և մատչելիության հետ:

Պետական կարգավորման անհրաժեշտությունը առողջապահության ոլորտում պայմանավորված է ազատ շուկայի ինքնակարգավորման գործիքների անարդյունավետությամբ կամ, այսպես կոչված, շուկայի «ձախողումներով», որոնք են՝

1.Ազատ շուկայի մասնակիցներ են հանդիսանում սպառողները, ովքեր ձևավորում են պահանջարկը, և վաճառողները, ովքեր ձևավորում են առաջարկը:Սակայն առողջապահության ոլորտում սպառողը չի ձևավորում պահանջարկ կոնկրետ ծառայության նկատմամբ, այլ պահանջարկ՝ առողջապահական ծառայությունների նկատմամբ ընդհանրապես:

2.Առողջապահական մի շարք ծառայություններ առավել շատ օգուտ են բերում հասարակությանը ամբողջությամբ վերցրած, քան անհատին (պատվաստումները, հակահամաճարակային միջոցառումները): Դրանց

հասցրած վնասները չափազանց ծանր են՝ բուժումը յուրաքանչյուր քաղաքացու հայեցողությանը թողնելու համար:

3.Հասարակության բոլոր անդամների համար երաշխավորված նվազագույն բուժսպասարկման ծառայությունների ապահովում: Այստեղ շեշտադրումը կատարվում է բարոյական սկզբունքների վրա, որոնք տնտեսական սկզբունքներին հակասում եմ:

4.Մրցակցության սահմանափակվածությունը:

Ըստ տվյալների՝ աշխատունակ տարիքի բնակչության մահացության մակարդակը այնպիսի հիվանդություններից, որոնց բուժումը հայտնի է և կիրառվում է բժշկական պրակտիկայում, 80%-ով կախված է բժշկական ծառայության մատուցման ժամանակից, մակարդակից և որակից:

Վերլուծելով ԱՀ առողջապահության համակարգում ֆինանսավորման իրական վիճակը, համակարգում շրջանառվող ֆինանսական միջոցների անկառավարելի փաստը, համապատասխան ռազմավարական ծրագրով հատկացվելիք ֆինանսական միջոցների ծավալները՝պարզ է դառնում, որ օրինականացված բազմաղբյուր ֆինանսավորման բացակայության պայմաններում դժվարանում է իրական ֆինանսական հոսքերի հայտնաբերումն ու կառավարումը:

Առողջապահական համակարգի գործունեության բարելավման և արդյունավետ կառավարման համար խիստ անհրաժեշտ է էլեկտրոնային միասնական առողջապահական տեղեկատվական համակարգի ներդրումը՝ թափանցիկ և ճշգրիտ[1] տվյալների հավաքագրման և գնահատման համար, որն առանցքային կարևորություն կունենա հետագա բարեփոխումների, հստակ միջոցառումների ռազմավարության և քաղաքականության մշակման համար:

Գրականություն

1.«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ԱՀ օրենք՝ ընդունված 12.12.1998թ. (http://mss.nkr.am ›):

2.Здравоохранение. Учебник. Под ред. А.Г. Грязновой, Е.В. Маркиной. Финансы истатистика, 2004:

[1] Տես՝ http://mss.nkr.am ›

3.Бочкарева В., “Есть ли перспективы у обязательного медицинского страхованияв России?” (1991г.)

4.База данных “Здоровье для всех” (БД ЗДВ), Копенгаген, Европейскоерегиональное бюро ВОЗ (1980г.).

5. http://www.stat-nkr.am/

6. *http://arlexis.am* › DocumentV.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 336.663

Տնտեսագիտություն

Գոհար ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Հոդվածում ներկայացված են կազմակերպությունների իրացվելիության և վճարունակության կառավարման հիմնական մեթոդները, սահմանված են կազմակերպության իրացվելիության և վճարունակության գնահատման չափանիշները, ինչպես նաև առաջարկված է կազմակերպության ֆինանսական կառավարման իրականացման սխեման:

Բանալի բառեր՝ *իրացվելիություն, վճարունակություն, իրացվելիության կառավարում, ֆինանսական վերլուծություն, վերլուծության մեթոդներ, ընթացիկ իրացվելիության գործակից:*

Г. Саркисян

СОВЕРШЕНСТВОВАНИЕ МЕТОДОВ УПРАВЛЕНИЯ ЛИКВИДНОСТЬЮ И ПЛАТЕЖЕСПОСОБНОСТЬЮ ОРГАНИЗАЦИИ

В статье представлены основные методы управления ликвидностью и платежеспособностью организаций, определены критерии оценки ликвидности и платежеспособности организации, а также предложена схема осуществления финансового управления организацией.

Ключевые слова: *ликвидность, платежеспособность, управление ликвидностью, финансовый анализ, методы анализа, коэффициент текущей ликвидности.*

G. Sargsyan

IMPROVING THE METHODS OF MANAGING THE LIQUIDITY AND SOLVENCY OF THE ORGANIZATION

The article presents the main methods of managing of the liquidity and solvency of organizations, defines the criteria for assessing the liquidity and solvency of the organization, and also proposes a scheme for financial management of the organization.

Key words: *liquidity, solvency, liquidity management, financial analysis, analysis methods, current liquidity ratio.*

Իրացվելիության կառավարումը իրացվելիության մակարդակի վրա կազմակերպության ղեկավարության համակարգված, գիտակցված, նպատակաուղղված ազդեցության գործընթաց է՝ հիմնված ճանաչողության, օբյեկտիվ օրինաչափությունների և առաջադեմ միտումների օգտագործման վրա՝ ի շահ կազմակերպության արդյունավետ գործունեության և ընդհանուր զարգացման ապահովմանը[1]:

Իրացվելիության կառավարումն, անշուշտ, դիտվում է որպես մտավոր աշխատանքի տեսակ, որն իրենից ներկայացնում է հաջորդական կառավարչական գործառույթների, պարբերաշրջանների, գործընթացների համակարգ, որոնք ապահովում են կազմակերպության վճարունակության մակարդակի համակարգումը և կարգավորումը:

Կազմակերպության իրացվելիության կառավարման գործընթացում կարևոր նշանակություն ունի իրացվելիության վերլուծությունը, որը թույլ է տալիս նախնական տվյալներ ստանալ նրա վիճակի մասին: Վերլուծական գործընթացում արված եզրակացությունները թույլ են տալիս, իրենց հերթին, որոշել առկա հիմնախնդիրների լուծման ուղիները:

Ֆինանսական կայունությունը և ընթացիկ իրացվելիությունը կարևորագույն ֆինանսական ցուցանիշներ են, որոնք գտնվում են կազմակերպության ղեկավարի և ֆինանսական ծառայության ուշադրության ներքո: Դրանք օգտագործվում են կազմակերպության ֆինանսական վիճակի, նրա տնտեսական հուսալիության, վարկունակության, մրցունակության, սնանկացման հնարավորության գնահատման ժամանակ և ծառայում են որպես կառավարչական որոշումներ մշակելու գործիք:

Վճարունակության և իրացվելիության կառավարումն անց է կացվում առնվազն երկու ուղղություններով՝ իրացվելիության բարձրացում և չվճարումների կանխարգելում (նվազում): Կազմակերպության

---

[1] *Տես՝* ***Баранов А.Н.*** *Управление ликвидностью и платежеспособностью предприятия, "Экономика и социум" No 6 (37) 2017.*

վճարունակությունը կարելի է բարձրացնել՝ պարբերաբար անցկացնելով տարբեր միջոցառումներ, որոնք վերացնում են վճարունակությունը նվազեցնող պատճառներն ու գործոնները, ինչպես նաև նպաստում են ակտիվների իրացվելիության բարձրացմանը: Դրանք են՝ ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի աճը ընդհանուր ակտիվների կազմում, իրացվելիք ընթացիկ ակտիվների մասնաբաժնի բարձրացումը, ակտիվների իրացվելիության արագացումը: Կազմակերպության վճարունակությունը կարելի է ամրապնդել նաև՝ բարձրացնելով արտադրանքի որակը, կենտրոնացնելով աղբյուրները, որոնք թուլացնում են ֆինանսական լարվածությունը՝ մշակելով կազմակերպության առողջացման տարբեր ձևեր և այլն: Զգալի նշանակություն ունի կազմակերպության ֆինանսական դիրքը, որը թույլ է տալիս որպես հաշվարկների միջոց օգտագործել առևտրային (ապրանքային) մուրհակները: Բարձրացնելով վճարունակությունը՝ կազմակերպությունը միաժամանակ ապահովում է չվճարումների նվազեցումը և կանխարգելումը: Միշտ արդիական է վճարային հոսքերի նկատմամբ հսկողության ուժեղացումը: Այդ նպատակով ցանկալի է կազմել դրամական միջոցների մուտքերի և ելքերի պլաններ, վարել վճարային օրացույց: Գնորդների կողմից չվճարման կանխարգելման ձևերից են հանդիսանում կանխավճարները, ֆինանսապես հուսալի (վստահելի) կառույցների (կայուն բանկերի, խոշոր ապահովագրական, ֆինանսական, ներդրումային ընկերությունների, պետական մարմինների և այլնի) կողմից ակրեդիտիվների, տարբեր տեսակի երաշխավորությունների օգտագործումը, ինչպես նաև գրավով գործարքների իրականացումը:

Ժամանակակից շուկայական պայմաններում կազմակերպության վճարունակությունը որոշվում է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարմամբ:

Կազմակերպության իրացվելիության կառավարումը ենթադրում է կազմակերպության ֆինանսների այնպիսի տեղաբաշխում, որը թույլ կտա անհրաժեշտության դեպքում արագ մարել պարտավորությունները:

Համաձայն «Экономика и право» բառարանի[1], գոյություն ունեն իրացվելիության կառավարման մի շարք մեթոդներ.[2]

Ø **միջոցների բաշխման ընդհանուր մեթոդ**, որի էությունը կայանում է համախմբված ներգրավված և սեփական միջոցները ըստ անհրաժեշտ ուղղությունների բաշխելու մեջ,

---

[1] *Տես՝ http://economics.niv.ru/doc/dictionary/economy-and-law/fc/slovar-211-2.htm Экономика и право: словарь-справочник Статьи на букву "У" (часть 2, "УПА"-"УСП").*

[2] *Տես՝ **Гавриленко В.Г.**, Капитал. Энциклопедический словарь. – Минск: Право и экономика, 2009. - 858 с.*

Ø **ակտիվների բաշխման** (միջոցների փոխարկման) **մեթոդ**, որի էությունը կայանում է կարճաժամկետ պարտավորությունների ժամկետներին համապատասխան ակտիվների տեղաբաշխման մեջ (օրինակ, մինչև մեկ տարի ժամկետային ավանդները ուղղվում են մինչև մեկ տարի վարկերի տրամադրմանը),

Ø **գիտական կառավարման մեթոդ**, որի դեպքում միջոցների բաշխումն օպտիմալացնելու համար օգտագործվում է գծային ծրագրավորման գործիքակազմ:

Ռուսական և այլ արտասահմանյան տնտեսագետների կողմից առաջարկվող իրացվելիության կառավարման հիմնական մեթոդներն ընդհանրացված են գծապատկեր 1-ում: Նշենք, որ դրանք վերաբերում են բանկերի իրացվելիության կառավարմանը:



Գծապատկեր 1. Իրացվելիության կառավարման հիմնական մեթոդները*

Նշված մեթոդները հիմնականում կիրառելի են նաև արտադրական կազմակերպությունների համար: Մասնավորապես, մեր կողմից առաջարկվել է կիրառել ակտիվների կառավարման, պասիվների կառավարման և իրացվելիության ցուցանիշների մեթոդները:

Իրացվելիության կառավարման գործընթացում առավել մեծ ուշադրություն պետք է հատկացվի դեբիտորական պարտքերի կառավարմանը:

---

* *Կազմված է հեղինակի կողմից:*

Գործնականում դեբիտորական պարտքերի կառավարումը միջոցների շրջանառելիության վերահսկողություն է: Դեբիտորական պարտքերի ավելի արդյունավետ կառավարումը ենթադրում է՝

Ø կետանցված և ժամկետանց դեբիտորական պարտքերի պարբերաբար մոնիտորինգ և ժամկետների նկատմամբ ընթացիկ հսկողություն,

Ø հաճախորդների բազայի դիվերսիֆիկացիա. որքան փոքր է մեկ գնորդի մասնաբաժինը վաճառքի ծավալի մեջ, այնքան լավ,

Ø կանխավճարների, կարճ ժամանակահատվածում վճարումների դեպքում զեղչային համակարգի կիրառում,

Ø դեբիտորական պարտքերի պլանավորում՝ ձգտելով հասցնել դրանք նվազագույն արժեքի,

Ø նվազագույնի հասցնել կամ հնարավորինս բացառել ոչ դրամային հաշվարկների ձևերը, ինչպիսիք են փոխանակումը, հաշվանցումները և այլն:

Ընթացիկ ակտիվների արդյունավետ օգտագործումն ուղղված է դրանց շրջանառելիությունը արագացնելուն, այսինքն՝ պտույտների թվի ավելացմանը և մեկ շրջապտույտի տևողության կրճատմանը: Պաշարների կառավարման շրջանակներում պետք է օպտիմալացնել մատակարարման ժամկետները, ընտրել կարգապահ, հուսալի մատակարարների, պաշարների շրջանառելիության տևողությունը կրճատելու համար կիրառել արտադրական գործընթացների կազմակերպման առաջադեմ մեթոդներ, խթանել իրացումը՝ ապրանքային մնացորդների ավելացումը կանխարգելելու համար:

Շարադրվածի հիման վրա սահմանվում են կազմակերպության իրացվելիության և վճարունակության գնահատման չափանիշները.

Ø ***Խումբ 1***՝ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում, ոլորտի ռիսկայնություն.

Ø ***Խումբ 2***՝ արտադրության և իրացման դինամիկան, իրացման շուկայի մասշտաբները, արտադրանքի տեսականու բազմազանություն, շուկայի սեգմենտների գրավչություն, համապատասխան շուկաներում մասնաբաժիններ, հաճախորդների և մատակարարների բազաների դիվերսիֆիկացում.

Ø ***Խումբ 3***՝ հիմնական միջոցների մաշվածություն, հիմնական միջոցների բարոյական հնացում, հիմնական միջոցների օգտագործվող տեխնոլոգիաների արդիականություն, պատրաստի արտադրանքի և առանցքային հումքի տեղափոխման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի առկայությունը, տարածաշրջանային ենթակառուցվածքների այլ գործոնները.

Ø ***Խումբ 4***՝ ընկերության լրացուցիչ մրցակցային առավելություններ՝

ընկերության բրենդի համբավը, բացառիկ իրավունքները, լիցենզիաները, արտոնագրերը և այլն.

Ø ***Խումբ 5***՝ կառավարման գնահատում, ղեկավարների փորձը և գործարար համբավը.

Ø ***Խումբ 6***՝ ֆինանսական ցուցանիշների գնահատումը, գործառնական շահույթի դինամիկան, կապիտալի եկամտաբերությունը, իրացման շահութաբերությունը, ընթացիկ իրացվելիության գործակիցը, դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը, դեբիտորական պարտքերի կառուցվածքը, ժամկետանց դեբիտորական պարտքի առկայությունը, կրեդիտորական պարտքերի կառուցվածքը, ժամկետանց կրեդիտորական պարտքի առկայությունը, կրեդիտորական պարտքերի շրջանառելիության տևողությունը, պաշարների շրջանառելիության տևողությունը, սեփական կապիտալի և ակտիվների հարաբերության դինամիկան, ներդրումների կառուցվածքը, ներդրումների ճկունությունը:

Այսպիսով, իրացվելիության և վճարունակության կառավարումը ցանկացած կազմակերպության ֆինանսական մենեջմենթի կարևոր բաղադրիչ է: Իրացվելիության հետ կապված խնդիրները կարող են բավականին լուրջ հետևանքներ ունենալ ընկերության համար, ընդհուպ մինչև սնանկացում: Կազմակերպության իրացվելիությունը և վճարունակությունը բարձրացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է իրականացնել կազմակերպության ֆինանսական գործունեության վերլուծություն:

Ուստի կազմակերպության իրացվելիության կառավարման կարևորագույն բաղադրամասերից մեկը ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունն է: Վերլուծությունն ընթանում է մի քանի ուղղություններով՝ հորիզոնական, ուղղահայաց, թրենդային[1]:

Հետազոտության հորիզոնական մեթոդը հաշվետվության յուրաքանչյուր կետի համեմատությունն է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալների հետ: Այն ոչ միայն թույլ է տալիս հետևել փոփոխություններին, այլև կանխատեսել աճի կամ նվազման միտումները: Ուղղահայաց վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշելու ծախսի այս կամ այն հոդվածների տեսակարար կշիռը տվյալ ժամանակաշրջանի հաշվետվություններում: Հետազոտության թրենդային մեթոդը հաշվետվությունների յուրաքանչյուր դիրքի ուսումնասիրության միջոցով թույլ է տալիս բացահայտել ընդհանուր զարգացման միտումները և կատարել կանխատեսում: Իրականացվում է նաև գործակիցների հաշվարկ,

---

[1] *http://fb.ru/article/10288/upravlenie-likvidnostyu-predpriyatiya Автор: Анастасия Давыдова 24 Марта, 2012.*

որը թույլ է տալիս կատարել համեմատական վերլուծություն ըստ դիրքերի:

Ներկայումս Արցախում ֆինանսական վերլուծությունը և կազմակերպության իրացվելիության կառավարումը ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հատվածում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, ինչը բացատրվում է տեղական մասնագետների ոչ բավարար կրթությամբ և պետությունում, ընդհանուր առմամբ, ֆինանսական վերլուծության ոչ մեծ փորձով:

Մեր կողմից առաջարկվում է կազմակերպության ֆինանսական կառավարումն իրականացնել հետևյալ սխեմայով (գծապատկեր 2).



Գծապատկեր 2. Կազմակերպության իրացվելիության կառավարման հիմնական փուլերը*

Կազմակերպության իրացվելիության ֆինանսական կառավարման գործում առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ընթացիկ իրացվելիության կառավարմանը: Կազմակերպության ընթացիկ

* *Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:*

իրացվելիության բարձրացումը ֆինանսատնտեսական վիճակի բարելավման չափազանց կարևոր խնդիր է: Դրա լուծումը պետք է հանդիսանա ֆինանսական առողջացման ռազմավարության բաղկացուցիչ մասը:

Այս խնդրի լուծումն իրականացվում է կազմակերպության կառուցվածքի կատարելագործման, դրա կորուստների կրճատման, նոր տեխնոլոգիաների, նյութերի ներդրման, ավելորդ գույքից ազատմանն ուղղված կազմակերպատնտեսական առանձին միջոցառումների իրականացման միջոցով: Այդ միջոցառումների կազմը շատ լայն է: Օրինակ՝ նյութական ծախսումների կրճատում, վառելիքաէներգետիկ ռեսուրսների ծախսումների կրճատում, արտադրական բանվորների վարձատրության գումարի նվազեցում, վերադիր ծախսերի կրճատում, սոցիալական օբյեկտների ծախսերի կրճատում[1]:

Գրեթե բոլոր այդ միջոցառումներն ուղղված են կազմակերպության ծախսումների կրճատմանը, նրա գույքի և պարտավորությունների կառուցվածքային բարելավմանը: Հետևաբար, դրանք կարող են օգտագործվել նաև ընթացիկ իրացվելիության բարձրացման նպատակով:

Գրականության մեջ ներկայացված ընթացիկ իրացվելիության կառավարման մեթոդների կազմը սահմանափակվում է հետևյալով.

- ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքի բարելավում՝ ակտիվների կառուցվածքի և հաշվապահական հաշվեկշռի պասիվների փոփոխության միջոցով.
- ընթացիկ իրացվելիության գործակցի նորմատիվ արժեքի հաշվարկ.
- կազմակերպության ֆինանսական վիճակի ախտորոշում՝ ըստ ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքի:

Տնտեսագիտական գրականության մեջ բացակայում է ընթացիկ իրացվելիության գործակցի նորմատիվային արժեքը սահմանելու վերաբերյալ միատեսակ մոտեցում: Աղբյուրների մեծամասնությունում առաջարկվում է ընդունել այն հավասար 2-ի:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը հաշվարկելու և կառավարելու նպատակով մեր կողմից առաջարկվել է կիրառել հետևյալ մոտեցումը. ցուցանիշը հաշվարկել ոչ թե պահային տվյալներով, այլ օգտագործել միջինները, այսինքն.

$$Գ_{ընի} = \frac{\overline{ԸԱ}}{\overline{ԸՊ}} \qquad (1):$$

[1] Տես՝ https://cyberpedia.su/11xd6bb.html *Данилин Валерий Федорович Современные методы управления текущей ликвидностью предприятия. 63-68*

Այս դեպքում հաշվի է առվում նաև ժամանակի մեջ ցուցանիշի փոփոխությունը:

Այնուհետև առաջարկվել է իրականացնել ընթացիկ իրացվելիության գործոնային մոդելում փոփոխություններ՝ համարիչը և հայտարարը բաժանելով արտադրանքի իրացումից հասույթի վրա և բազմապատկելով ժամանակաշրջանի օրերի թվով: Արդյունքում կստանանք հետևյալ բանաձևը.

$$Գ_{ընի} = \frac{\overline{ԸԱ}}{\overline{ԸՊ}} = \frac{\overline{ԸԱ} \cdot Օ:Հ}{\overline{ԸՊ} \cdot Օ:Հ} = \frac{Տ_{շրջ.ԸԱ}}{Տ_{շրջ.ԸՊ}}, \qquad (2),$$

որտեղ՝ $Տ_{շրջ.ԸԱ}$-ն՝ ընթացիկ ակտիվների շրջանառելիության տևողությունն է, օրերով,

$Տ_{շրջ.ԸՊ}$-ն՝ ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության տևողությունն է,

Օ-ն՝ հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվն է,

Հ-ն՝ հաշվետու ժամանակաշրջանի իրացումից հասույթն է:

Այստեղից պարզ է դառնում, որ ընթացիկ իրացվելիության գործակիցը կախված է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիությունից: Մասնավորապես, առաջարկված մոդելը թույլ է տալիս կառավարել ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ նշված ցուցանիշների տևողությունը կարգավորելու միջոցով:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվում է կիրառել իրացվելիության կառավարման հետևյալ մեթոդները՝ ակտիվների կառավարման, պասիվների կառավարման և իրացվելիության ցուցանիշների: Կազմակերպության ֆինանսական կառավարման ընթացքում առաջարկվում է իրականացնել կազմակերպության գնահատումը իրացվելիության տեսանկյունից, կատարել հաշվեկշռի իրացվելիության գնահատումը, իրականացնել իրացվելիության վրա ազդող գործոնների վերլուծությունը, ակտիվների և պասիվների կառուցվածքի վերլուծությունը, դրանց կառավարման համակարգի արդյունավետության գնահատումը, իրացվելիության գործակիցների հաշվարկը և վերլուծությունը և մշակել առաջարկություններ իրացվելիության հետագա կառավարման համար:

Գրականություն

1. **Баранов А.Н.**, Управление ликвидностью и платежеспособностью предприятия, "Экономика и социум" No 6 (37) 2017.
2. http://economics.niv.ru/doc/dictionary/economy-and-law/fc/slovar-211-2.htm Экономика и право: словарь-справочник Статьи на букву "У" (часть 2, "УПА"-"УСП").
3. **Гавриленко В.Г.**, Капитал. Энциклопедический словарь. – Минск: Право и экономика, 2009. - 858 с.
4. http://fb.ru/article/10288/upravlenie-likvidnostyu-predpriyatiya Автор: **Анастасия Давыдова** 24 Марта, 2012.
5. https://cyberpedia.su/11xd6bb.html **Данилин Валерий Федорович**, Современные методы управления текущей ликвидностью предприятия.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 336.663

Տնտեսագիտություն

Գոհար ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.

ՀԱՇՎԵԿՇՌԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ներկայացված են ակտիվների՝ ըստ դրանց իրացվելիության անկման, և պարտավորությունների՝ ըստ դրանց մարման ժամկետների ավելացման աստիճանի դասակարգման որոշ մոտեցումներ՝ ակտիվները և պարտավորությունները բաժանելով 4 խմբի: Հաջորդիվ ներկայացվում է հաշվեկշռի իրացվելիության վերլուծության գույքային մոտեցումը՝ դրա հետագա գնահատմամբ, ինչպես նաև ֆունկցիոնալ մոտեցումը:

Բանալի բառեր՝ *հաշվեկշռի իրացվելիություն, ակտիվների և պասիվների դասակարգում, գույքային մոտեցում, ֆունկցիոնալ մոտեցում:*

Г. Саркисян

АНАЛИЗ ПОДХОДОВ К ОЦЕНКЕ ЛИКВИДНОСТИ БАЛАНСА

В статье представлены некоторые подходы к классификации активов по мере уменьшения их ликвидности и пассивов – по степени увеличения сроков их погашения с разделением активов и пассивов на 4 группы. Далее представлен имущественный подход анализа ликвидности баланса с последующей оценкой, а также функциональный подход.

Ключевые слова: *ликвидность баланса, классификация активов и пассивов, имущественный подход, функциональный подход.*

G. Sargsyan

THE ANALYSIS OF APPROACHES TO ASSESSING THE LIQUIDITY OF THE BALANCE SHEET

The article presents some approaches to the classification of assets as their liquidity decrease, and liabilities – according to the degree of increase in their maturity, with the division of assets and liabilities into 4 groups. The following is a property approach to analyzing the liquidity of the balance sheet with subsequent evaluation, and a functional approach.

Key words: *balance sheet liquidity, classification of assets and liabilities, property approach, functional approach.*

Տնտեսվարող սուբյեկտների մեծամասնության համար որպես տեղեկատվական աղբյուր հանդես են գալիս տնտեսվարող սուբյեկտի գործունեության վերաբերյալ տարեկան և եռամսյակային հաշվետվությունները (Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը):

Ինչպես նշում է Լ.Վ. Էյխլերը[1], վճարունակության գնահատումն, ըստ հաշվեկշռի, իրականացվում է ընթացիկ ակտիվների իրացվելիության բնութագրման հիման վրա, որը որոշվում է դրանց՝ դրամական միջոցների վերածվելու համար անհրաժեշտ ժամանակով: Որքան քիչ ժամանակ է պահանջվում տվյալ ակտիվի հավաքագրման համար, այնքան բարձր է դրա իրացվելիությունը: Հաշվեկշռի իրացվելիությունը տնտեսվարող սուբյեկտի ունակությունն է վերածել ակտիվները կանխիկի և մարել իր վճարային պարտավորությունները, ինչպես նաև այն կազմակերպության վճարային պարտավորությունների ծածկման աստիճանն է իր ակտիվներով, որոնց կանխիկի վերածվելու ժամկետը համապատասխանում է վճարային պարտավորությունների մարման ժամկետին: Այն կախված է ունեցած վճարային միջոցների մեծության՝ կարճաժամկետ պարտքային մեծությանը համապատասխանելու. աստիճանից:

Ըստ Ա.Դ.Շերեմետի[2], հաշվեկշռի իրացվելիությունը որոշվում է որպես ակտիվներով կազմակերպության պարտավորությունների ծածկման աստիճան, որոնց դրամական ձևի վերածման ժամկետը համապատասխանում է պարտավորությունների մարման ժամկետին: Հաշվեկշռի իրացվելիության վերլուծության էությունը կայանում է ըստ իրացվելիության աստիճանի խմբավորված ու դրանց նվազման կարգով համախմբված կազմակերպության միջոցների (ակտիվների) և ըստ մարման

---

[1] Տես՝ ***Эйхлер Л.В.***, *Финансовый менеджмент: актуальные вопросы управления финансами предприятий\: учебное пособие Омск: СибАДИ 2013, стр. 32.*

[2] Տես՝ ***Шеремет А.Д.***, *Комплексный анализ хозяйственной деятельности. – М, 2006, стр.320.*

ժամկետների խմբավորված ու աճման կարգով ներկայացված պարտավորությունների (պասիվների) համեմատության մեջ:

Ներկայացնենք կազմակերպության ակտիվների իրացվելիության աստիճանից, այսինքն՝ դրամական միջոցների վերածվելու արագությունից կախված, և պասիվների՝ ըստ դրանց մարման հրատապության խմբերի դասակարգման որոշ մոտեցումները:

Ամենապարզ տարբերակը՝ ըստ Ա.Զ. Սարգսյանի և Կ.Ա. Առաքելյանի[1], ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Ակտիվների և պասիվների դասակարգումը՝ ըստ Ա.Զ. Սարգսյանի և Կ.Ա. Առաքելյանի /ավանդական մոտեցում/

Խումբը		Հոդվածները
Ա1	առավել իրացվելի ակտիվներ	դրամական միջոցներ և համարժեքներ
Ա2	արագ իրացվելի ակտիվներ	դեբիտորական պարտքեր
Ա3	դանդաղ իրացվելի ակտիվներ	պաշարներ
Ա4	դժվար իրացվելի ակտիվներ	ոչ ընթացիկ ակտիվներ
Պ1	առավել հրատապ պարտավորություններ	կրեդիտորական պարտքեր
Պ2	կարճաժամկետ պասիվներ	ընթացիկ ֆինանսական պարտավորություններ
Պ3	երկարաժամկետ պասիվներ	ոչ ընթացիկ պարտավորություններ
Պ4	մշտական պասիվներ	սեփական կապիտալ

Ինչպես տեսնում ենք, ակտիվներն ու պասիվները դասակարգված են պարզ եղանակով՝ հիմնվելով հաշվեկշռի (ֆինանսական վիճակի մասին հաշվետվության) խոշորացված հոդվածների վրա՝ առանց լրացուցիչ ճշգրտումների:

Ա.Հ. Բայադյանի[2] մոտեցումը ներկայացված է աղյուսակ 2-ում: Ի տարբերություն վերը բերված դասակարգման, Ա.Հ. Բայադյանն առաջարկել է, օրինակ, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները դասել ոչ թե դժվար իրացվելի ակտիվների շարքում, այլ դանդաղ իրացվելի:

Աղյուսակ 2.

Ակտիվների և պասիվների դասակարգումը՝ ըստ Ա.Հ. Բայադյանի

Խումբը	Հոդվածները

[1] *Տես՝ **Սարգսյան Ա.Զ., Առաքելյան Կ.Ա.,** Տնտեսական գործունեության վերլուծություն, Եր.: Տնտեսագետ, 2005թ, էջ 348-349:*

[2] *Տես՝ **Բայադյան Ա.Հ.**, Ֆինանսական վերլուծություն. ուս. ձեռնարկ: Եր. «Լիմուշ», 2013, էջ 193-195:*

Ա1	***Ամենաշատ իրացվելի ակտիվներ***	դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները՝ արժեթղթերի տեսքով
Ա2	***Արագ իրացվելի ակտիվներ***	դեբիտորական պարտքեր (վճարումներ, որոնք պետք է կատարվեն հաշվետու պահից 12 ամսվա ընթացքում) և այլ ընթացիկ ակտիվներ
Ա3	***Դանդաղ իրացվելի ակտիվներ***	արտադրական պաշարները, անավարտ արտադրության ծախսերը, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները, դեբիտորական պարտքերը (վճարումներ, որոնք պետք է կատարվեն հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո), ապրանքանյութական արժեքների ձեռքբերման գծով ավելացված արժեքի և ակցիզային հարկերը
Ա4	***Դժվար իրացվելի ակտիվներ***	ոչ ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ երկարաժամկետ ֆինանսական ներդրումների
Պ1	***ամենահրատապ պարտավորություններ***	կրեդիտորական պարտքերը (առևտրական կրեդիտորական պարտքերը, կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին և այլն), շահաբաժինների գծով կանխավճարները, այլ կրեդիտորական պարտքերը, որոնք սահմանված ժամկետում չեն վճարվում
Պ2	***Կարճաժամկետ պասիվներ***	բանկերի կարճաժամկետ վարկերն ու փոխառությունները, վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները, ինչպես նաև այլ ընթացիկ պարտավորությունները, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից 12 ամսվա ընթացքում
Պ3	***Երկարաժամկետ պասիվներ***	երկարաժամկետ բանկային վարկերը և փոխառությունները, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները, հետաձգված հարկային պարտավորությունները և այլ ոչ ընթացիկ պարտավորությունները, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո
Պ4	***Կայուն (հաստատուն) պասիվներ***	սեփական կապիտալից՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարը, լրացուցիչ կապիտալը, վերագնահատումից տարբերությունները, կուտակված շահույթը, պահուստները (բացի շահաբաժինների գծով կանխավճարներից), ինչպես նաև ոչ ընթացիկ պարտավորություններից՝ նպատակային ֆինանսավորումն ու մուտքերը և գալիք ժամանակաշրջանի ծախսերի ու վճարումների պահուստները

Լ.Վ. Էյխլերի[1] կողմից առաջարկվել է ակտիվների և պասիվների դասակարգման հետևյալ մոտեցումը (աղյուսակ 3)

Աղյուսակ 3.

Ակտիվների և պասիվների դասակարգումը՝ ըստ Լ.Վ. Էյխլերի

Խումբը		Հոդվածները
Ա1	առավել իրացվելի ակտիվներ	դրամական միջոցների բոլոր հոդվածներով գումարները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները
Ա2	արագ իրացվելի ակտիվներ	դեբիտորական պարտքերը (որոնցով վճարումները սպասվում են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում), այլ ընթացիկ ակտիվները
Ա3	դանդաղ իրացվելի ակտիվներ	պաշարներ, դեբիտորական պարտքեր (որոնցով վճարումները սպասվում են հաշվետու ամսաթվից 12 ամսից հետո), ձեռքբերված արժեքներով ԱԱՀ
Ա4	դժվար իրացվելի ակտիվներ	ակտիվներ, որոնք նախատեսված են տնտեսական գործունեության ընթացքում համեմատաբար երկար ժամանակահատվածում օգտագործելու համար
Պ1	առավել հրատապ պարտավորություններ	կրեդիտորական պարտքեր, հաշվարկներ շահաբաժիններով, այլ կարճաժամկետ պարտավորություններ, ինչպես նաև ժամանակին չմարված փոխատվություններ (ըստ հաշվապահական հաշվեկշռի կից ծանոթագրությունների տվյալների)
Պ2	կարճաժամկետ պասիվներ	կարճաժամկետ փոխառու բանկային վարկեր և այլ փոխառություններ
Պ3	երկարաժամկետ պասիվներ	երկարաժամկետ փոխառու վարկեր և այլ երկարաժամկետ պասիվներ
Պ4	մշտական պասիվներ	սեփական կապիտալը

Հաշվեկշռի իրացվելիությունը (*գույքային մոտեցմամբ*) որոշելու համար անհրաժեշտ է համադրել բերված խմբերի հանրագումարներն ըստ ակտիվների և պասիվների: Հաշվեկշիռը համարվում է բացարձակ իրացվելի, եթե՝

$$Ա1 \geq Պ1,\ Ա2 \geq Պ2,\ Ա3 \geq Պ3 \text{ և } Ա4 \leq Պ4:$$

Առաջին երեք անհավասարումների կատարումը բերում է չորրորդ անհավասարման կատարմանը, ուստի էական է ակտիվների և պասիվների առաջին երեք խմբերի համադրումը: Չորրորդ անհավասարումը կրում է հաշվեկշռող բնույթ և, միևնույն ժամանակ, ունի խորը տնտեսագիտական իմաստ. դրա կատարումը վկայում է ֆինանսական կայունության նվազագույն պայմանի պահպանման՝ կազմակերպության մոտ սեփական շրջանառու միջոցների առկայության մասին:

[1] Տես՝ ***Эйхлер Л.В.,*** *Финансовый менеджмент: актуальные вопросы управления финансами предприятий\: Учебное пособие Омск: СибАДИ 2013, стр. 32.*

Այն դեպքում, երբ մեկ կամ մի քանի անհավասարումներ ունենում են նշան, որը հակադարձ է օպտիմալ տարբերակում նշվածից, հաշվեկշռի իրացվելիությունը քիչ թե շատ տարբերվում է բացարձակից:

Մասնավորապես, համաձայն Լ.Հ. Գրիգորյանի և Ն.Է.Միրզոյանի[1], *Ա1 < Պ1, Ա2 ≥ Պ2, Ա3 ≥ Պ3, Ա4 ≤ Պ4* պայմանի կատարման դեպքում իրացվելիությունը գնահատվում է նորմալ, *Ա1 < Պ1, Ա2 < Պ2, Ա3 ≥ Պ3, Ա4 ≤ Պ4* պայմանի կատարման դեպքում իրացվելիությունը գնահատվում է խախտված, իսկ *Ա1 < Պ1, Ա2 < Պ2, Ա3 < Պ3, Ա4 > Պ4* դեպքում՝ կրիտիկական:

Առավել իրացվելի միջոցների և արագ իրացվող ակտիվների համադրումը առավել իրացվելի պարտավորությունների և կարճաժամկետ պասիվների հետ թույլ է տալիս պարզել ընթացիկ իրացվելիությունը: Ընթացիկ իրացվելիությունը վկայում է ուսումնասիրման պահին առավել մոտ ժամանակահատվածում կազմակերպության վճարունակության (կամ անվճարունակության) մասին: Հեռանկարային իրացվելիությունն իրենից ներկայացնում է վճարունակության կանխատեսում՝ հիմնված ապագա մուտքերի և վճարումների վրա:

Նշված սխեմայով իրականացվող հաշվեկշռի իրացվելիությունը մոտավոր է, քանի որ ակտիվների իրացվելիության աստիճանի և պարտավորությունների մարման ժամկետների համապատասխանությունը նախանշված է մոտավորապես: Դա պայմանավորված է տեղեկատվության սահմանափակությամբ, որին տիրապետում է հաշվապահական հաշվետվության հիման վրա արտաքին վերլուծություն իրականացնող վեր-լուծաբանը:

Առավել հստակ, հաշվեկշռի իրացվելիությունը կարելի է գնահատել հաշվառման տվյալների օգտագործման հիման վրա, այսինքն՝ ներքին ֆինանսական վերլուծության շրջանակներում[2]: Այդ դեպքում ակտիվների և պասիվների առաջին խմբերից որևէ մեկում (Ա1–Ա3 և Պ1–Պ3) ընդգրկված յուրաքանչյուր հաշվեկշռային հոդվածով գումար բաժանվում է մասերի, որոնք համապատասխանում են ակտիվների համար՝ դրամական միջոցների վերածվելու ժամկետներին, պասիվների համար՝ պարտավորությունների մարման տարբեր ժամկետներին՝ մինչև 3 ամիս, 3-6 ամիս, 6-12 ամիս, 1 տարուց ավել:

Հաշվեկշռի իրացվելիության *ֆունկցիոնալ մոտեցումը* հիմնվում է նույն սկզբունքների վրա, սակայն ունի որոշակի առանձնահատկություններ: Այս

---

[1] ***Գրիգորյան Լ.Հ., Միրզոյան Ն.Է.***, *Կազմակերպությունների ֆինանսական վերլուծություն և վարկանշում, Եր., «Տնտեսագետ», 2018, էջ 23:*

[2] *Տես՝* ***Шеремет А.Д.***, *Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятиа: учебник /А.Д. Шеремет, 2-е изд., доп., М., ИНФРА, М, 2017, стр 306.*

մեթոդիկայով հաշվեկշիռը համարվում է իրացվելի հետևյալ պայմանների պահպանմամբ՝

Ա1 + Ա2 > Պ2, Ա3 > Պ1, Ա4 < Պ4 + Պ3:

Ֆունկցիոնալ մոտեցմամբ ձևափոխվում է ոչ այնքան ռացիոնալ հարաբերակցությունը, որը պետք է կատարվի հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը գույքային մոտեցմամբ իրականացնելիս, դա դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների գերազանցումն է կրեդիտորական պարտքերին (Ա1>Պ1): Դրա պահպանումը բարձրացնում է ինֆլյացիոն կորուստների ռիսկը՝ կապված կազմակերպությունում դրամական միջոցների արժեզրկման հետ:

Ֆունկցիոնալ մոտեցմամբ կրեդիտորական պարտքերը պետք է համապատասխանեցվեն պաշարներին: Դրանք հանդիսանում են վերջիններիս ֆինանսավորման աղբյուրը (Ա3>Պ1): Այս հարաբերակցությունը տրամաբանական է այն տեսանկյունից, որ հումքի, նյութերի, ապրանքների ձեռքբերումն իրականացվում է մատակարարների միջոցով: Սակայն այդ հարաբերակցությունը հակասության մեջ է մտնում ֆինանսական կայունության վերլուծության տիպային (բացարձակ մեծություններով) մեթոդիկայի հետ, որտեղ ենթադրվում է, որ կազմակերպության գործառնական պարբերաշրջանը պետք է ֆինանսավորվի այսպես կոչված «նորմալ» աղբյուրներով՝ սեփական ընթացիկ միջոցներով, ոչ ընթացիկ պարտավորություններով, կարճաժամկետ վարկերով և փոխառություններով:

Այսպիսով, մեր կարծիքով կազմակերպության հաշվեկշի վերլուծության և գնահատման ֆունկցիոնալ մոտեցումն առավել ընդունելի է, քանի որ նկարագրում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում ակտիվների և դրանց ֆինանսավորման աղբյուրների միջև ֆունկցիոնալ հավասարակշռությունը:

Գրականություն

1. **Բայադյան Ա.Հ.** Ֆինանսական վերլուծություն. Ուս. ձեռնարկ: Եր. «Լիմուշ», 2013, 293 էջ:
2. **Գրիգորյան Լ.Հ., Միրզոյան Ն.Է.** Կազմակերպությունների ֆինանսական վերլուծություն և վարկանշում. – Եր.: Տնտեսագետ, 2018, 156 էջ:
3. **Սարգսյան Ա.Զ., Առաքելյան Կ.Ա.** Տնտեսական գործունեության վերլուծություն, Եր., «Տնտեսագետ», 2005թ. , 446 էջ:

4. **Истомин В.С.**, Анализ ликвидности баланса: подходы и особенности. Вестник Амурского государственного университета. Серия: Естественные и экономические науки. 2010. № 51. с. 95-102.
5. **Шеремет А.Д.**, Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности пред-приятия: учебник /А.Д. Шеремет, 2-е изд., доп., М. ИНФРА-М, 2017, 374 с.
6. **Шеремет А.Д.**, Комплексный анализ хозяйственной деятельности, М., ИНФРА-М, 2006, 415с.
7. **Эйхлер Л.В.**, Финансовый менеджмент: актуальные вопросы управления финансами предприятий\: учебное пособие Омск: СибАДИ 2013, 154 с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 331.5

Տնտեսագիտություն

Ирина ИШХАНЯН
доцент кафедры экономической теории и управления АрГУ, к.э.н.

Григорий ИШХАНЯН
старший преподаватель кафедры экономической теории и управления АрГУ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ МЕЖДУНАРОДНОГО РЫНКА ТРУДА: СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ И НОВЫЕ ВЫЗОВЫ

Ի.. Իշխանյան , Գ. Իշխանյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Այս հոդվածում քննվում են աշխատանքի միջազգային շուկայի, համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի պայմաններում համաշխարհային աշխատաշուկայի զարգացման էվոլյուցիան, միջազգային աշխատաշուկայի հիմնական տեսական հասկացությունները, դրանց գործառույթներն ու առանձնահատկությունները, զարգացման միտումները, ինչպես նաև համաշխարհային աշխատաշուկայի ձևավորման վրա ազդող գործոնները: Մանրամասն քննվում է աշխատանքի շուկաների ձևավորման վրա համաճարակի ազդեցությունը և դրա հետևանքները՝ համաշխարհային մասշտաբով և առանձին տարածաշրջաններում:

Բացահայտվել են համաշխարհային աշխատաշուկայի առանձնահատկություններն ու հիմնական խնդիրները գլոբալիզացման, ավտոմատացման, համակարգչային գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների և

«ռոբոտային» աշխարհի զարգացման ներկա պայման-ներում:
Վեր լուծվել է համաշխարհային աշխատաշուկայի ներկայիս վիճակը և տրվել հեռանկարում դրա զարգացման վերլուծական կանխատեսում, ուրվագծվել է պետությունների քաղաքականությունը այս խնդրի կարգավորման ոլորտում:

Բանալի բառեր՝ աշխատուժ, համաշխարհային աշխատաշուկա, ազգային աշխատաշուկա, գլոբալացում, աշխատանքի միջազգային շուկայի ձևավորում, արհեստական ինտելեկտ, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, զբաղվածություն, գործազրկություն, գենդերային խտրականություն:

В статье рассматриваются понятия международного рынка труда, эволюция развития мирового рынка труда в условиях глобализации мировой экономики, основные теоретические понятия международного рынка труда, его функции и особенности, тенденции развития, а также факторы, влияющие на формирование мирового рынка труда. Подробно рассмотрены влияние пандемии и ее последствий на формирование рынков труда в мировом масштабе и в отдельных регионах.
Выявлены особенности и основные проблемы мирового рынка труда в сложившихся в условиях развития глобализации, автоматизации, компьютерной науки и информационных технологий и «роботизированного» мира.
Проведен анализ современного состояния мирового рынка труда и дан аналитический прогноз его развития в перспективе, излагается политика государств в области регулирования данного вопроса.

Ключевые слова: труд, мировой рынок труда, национальный рынок труда, глобализация, формирование международного рыка труда, искусственный интеллект, Международная организация труда, занятость, безработица, гендерная дискриминация.

I. Ishkhanyan G.Ishkhanyan

THE MAIN PROBLEMS OF THE INTERNATIONAL LABOR MARKET: CURRENT STATE AND NEW CHALLENGES

This article discusses the concepts of the international labor market, the evolution of the development of the world labor market in the context of the globalization of the world economy, the basic theoretical concepts of the international labor market, its functions and features, as well as factors influencing the formation of the world labor market. The influence of the pandemic and its consequences on the formation of labor markets on a global scale and in individual regions is considered in detail. The features and main problems of the world labor market in the current conditions of the development of globalization, automation, computer science and information technology and the «robotic» world are revealed.

The analysis of the current state of the world labor market is carried out and an analytical forecast of its development in the future is given, the policy of states in the field of regulation of this issue is outlined.

Key words: labor, global labor market, national labor market, globalization, formation of the international labor market, artificial intelligence, International Labor Organization, employment, unemployment, gender discrimination.

Актуальность исследуемой темы обусловлена особенностями современного мира, в котором на формирование международного рынка труда, на уровень и качество занятости оказывают влияние такие факторы, как процесс глобализации мировой экономики, прогресс информационных технологий, новые методы стратегии бизнеса и др.

